ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 15 (624)
15 ՕԳՈՍՏՈՍԻ 2024Թ.

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ISSN 1829-3468

Կապանը՝ Սյունիքի թագավորության մայրաքաղաք

Սյունյաց թագավորության վեհության ու փառքի տաճար Վահանավանքը

ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶԸ



ԹԱՐԳՄԱՆՄԱՆ 48 ԱՄԻՍԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍ

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

Այստեղ են հողին հանձնվել Սյունիքի առաջին թագավոր Սմբատը և նրան հաջորդած Վասակ թագավորը: Սյունիքի թագավորության տարիներին վանքը համալրվել է նոր շինություններով, մասնավորապես կառուցվել է գավիթ-սրահը (1043 թ.), արևելյան դարպասը, որի վրա՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին (1087 թ.): Իսկ 1139 թ. մեծ երկրաշարժից հետո խոնարհվել էր Առաքելոց եկեղեցու գմբեթը՝ վնասելով նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, որոնք վերականգնվեցին ավելի ուշ:

ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ՏԱՃԱՐ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

ԹԱՎԱԿՈՐՈՒԹՅԱՆ 48 ՎԱՆՔԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

1086 Թ. ՇԻՆՎԵՑ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿՐԿՆԱՀԱՐԿ ԵԿԵՂԵՑԻՆ, *որ գտնվում է մեծ տաճարից (Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց) մոտ 70մ հեռավորության վրա:*

ՎԱՀԱՆԱՎԱՆՔ

մայրաքաղաք Կապանի կենտրոնական սրբավայրը

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՎԱԿԱՏԻՔԸ 911 ԹՎԱԿԱՆԻՆ: *Գեղանկարը՝ Ռոբերտ Կամոյանի: Կտավ, յուղաներկ, 200 X 140, 2011 թ.: Պատվիրատու՝ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն:*

Սյունի վանքից պահպանված

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

եկեղեցին, որ նաև Սուրբ Հովհաննես է կոչվում

Գեղեցկակերտ եւ վայելչաձեւ վանքը Վաղատնո կամ Որոտնա, որ ուխտական վայր դարձավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից, ապա վերաշինվեց Սյունյաց թագավոր Սմբատի հրամանով ու Շահանդուխտ թագուհու ջանքով:

ԹԱՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ 48 ՎԱՆՔԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

ԵՐԻՑՎԱՆՔ.

Նաև Կարմիր վանք է կոչվում, Նոր Երուսաղեմ, Սուրբ Նախավկա

Երիցվանք, 5-11-րդ դարերի ճարտարապետական հուշարձան: Գտնվում է Հայաստանի Կապանի շրջանի Արծվանիկ գյուղից արևելք, բարձր սարահարթի վրա: Հիմնադրել է Սյունյաց մետրոպոլիտ Երիցակը 5-րդ դարում:

ՄԵԾ ԱՌԱՔԻՆԱՐԱՆ ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔԸ

Մատենագիտության մեջ նաև՝ Թանահատաց վանք, Թանահատի վանք, Թանատ, Թանատավանք, Թանատաց վանք, Թանատի, Թանատեի վանք, Թանատի անհանգստից վանք, Թանատի վանք, Կարմիր վանք, Ղըզըլ վանք: Գտնվում է Սիսիանի տարածաշրջանի Արեւիս գյուղի մոտ, Որոտան գետի աջակողմյան վտակ Սիսիանի վերին հոսանքի շրջանում՝ գետի աջ ափին, բարձրադիր, տափարակ վայրում: Վանքի հիմնադրումը վերագրվում է 5-6-րդ դարերին:

ԲՂԵՆՈ ՆՈՐԱՎԱՆՔ

Բղեն գավառի սրբավայրերի պսակը

Այունիքի միջնադարյան վանական համալիր, որը գտնվում է Բարձրավան գյուղից 3 կմ հեռավորության վրա, Շուռնուխ տանող ճանապարհից ձախ, անտառապատ կիրճերով շրջապատված եռանկյունաձև հրվանդանի վրա: 935/6 թ. Ստեփանոս եպիսկոպոսի ջանքերով և Այունյաց Հրահատ իշխանի օժանդակությամբ կառուցվել է Ս.Ստեփանոս Նախավկա եկեղեցուց, գավթից, սրահից բաղկացած հուշարձանախումբը: Երկրորդ շինարարական շրջանը վերաբերում է XI դ. առաջին կեսին. Այունիքի մետրոպոլիտ Հովհաննեսը վերակառուցեց եկեղեցին (1058 թ.), որի մահից հետո այն վերածվեց վերջինի դամբարանի:

Այունիքի մարզի Մեղրի քաղաքի Մեծ թաղի հյուսիս-արևմտյան հատվածում է գտնվում Ստեփանոս Օրբելյանի կողմից հիշատակված Մեղրո վանքը, որը հետագայում կոչվել է Անապաստանաց վանք, որից մնացել են միայն XVII դարում կառուցված Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և կիսաքանդ նախասրահ-գավիթը:

ԱՆԱՊԱՍՏԱՆԱՑ ՎԱՆՔ

ԽՈՍՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Կապան մայրաքաղաքը՝ «ի բնե ամուր և արվեստաշեն»

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
Կապան համայնքի ղեկավար

Կապան համայնքի զարգացումը, որ դժվարին մեր ժամանակներում գերխնդիր է արժանապատիվ համերկրացիներիս համար, ընթանում է մի քանի ուղղությամբ:

Սահմանապահ բնակավայրերի ամրապնդման, քաղաքաշինական խնդիրների պատշաճ լուծման, հոգևոր-մշակութային կյանքի ակտիվացման հետ մեկտեղ չափազանց կարևոր է հայրենատիրության գաղափարն ու ոգին արթուն պահելը:

Ճշմարիտ խոսք կա՝ դարերով փորձված, հայրենատիրությունը, հայրենասիրությունը սկիզբ են առնում փոքր հայրենիքից՝ բնօրրան-ծննդավայրից, հայրենական տնից: Ուստի և՝ առանց մեր երկրամասի պատմության իմացության, առանց մեր փառապանծ նախնիների գործերին ծանոթանալու, անհնար է այդ ամենը պատկերացնել:

Հենց այդ նպատակով էլ կարևորեցինք Սյունիքի թագավորությանն այսկերպ անդրադառնալը՝ փորձելով ի մի հավաքել 200 տարի ընդգրկող պատմական այդ շրջափուլի վերաբերյալ հիմնական նյութերը՝ ակնկալելով, որ թերթային համարը (ամբողջության մեջ) յուրօրինակ սկզբնաղբյուր կհանդիսանա բոլոր նրանց համար, ովքեր կկամենան ծանոթանալ կամ հայացք ձգել Սյունիքի ու նրա մայրաքաղաք Կապանի պատմության այդ էջին:

Սյունիքի թագավորություն... Կոչվել է նաև Կապանի թագավորություն կամ Բաղաց թագավորություն, որ պատմական թատերաբեմում է եղել 970-ից մինչև 1170 թվականը:

Հայոց պատմագրությունը միշտ չէ, որ միանշանակ է գնահատել Սյունիքում անկախ պետության ստեղծման փաստը՝ շրջանցելով ակնհայտ իրողությունը, որ Բագրատունիների կենտրոնական իշխանությունը տվյալ ժամանակաշրջանում այլևս կտրված էր Սյունիքից, իսկ Սյունիքը պարտավոր էր իրեն պաշտպանել:

12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սյունիքի թագավորություն.
մի քանի դրվագ պատմությունից, որոնցից արժեր դասեր քաղել

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սյունյաց աշխարհի զավակներ, իմ հայրենակիցներ...

Այս անգամ խոսելու ենք մեր երկրամասի պատմության մի շրջափուլի մասին, որը ներառում է 970-ից մինչև 1170 թվականը. դա Սյունիքի թագավորության շրջանն է:

Ժամանակները խիստ հակասական էին, բայց և բախտորոշ, ուստի և անհրաժեշտություն կա նախևառաջ ու շատ համառոտ բնութագրել պատմական տվյալ էպոխան: Այլապես չի հասկացվի, թե ինչու և ինչ շարժառիթների արդյունքում՝ Բագրատունիների թագավորության օրերում, պատմական ասպարեզ իջավ Սյունիքի թագավորությունը:

Եվ ուրեմն՝ մեզ հետաքրքրող դարաշրջանում տարածաշրջանում խոշոր խաղացողներ էին Արաբական խալիֆայությունը, Բյուզանդական կայսրությունը, ապա և Սելջուկյան իշխանությունները:

Խալիֆայության թուլացման (որ նկատելի էր 9-րդ դարից) և հայերի մղած ազատագրական պայքարի շնորհիվ առաջացավ Բագրատունիների հայոց թագավորությունը (885-1045 թթ.):

Պետական այդ միավորումն ի սկզբանե ձգտում էր ի մի համախմբել ոչ միայն Հայաստանի մյուս իշխանությունները, այլև Աղվանքը, Վրաստանը և Աբխազիան:

Եթե սկզբնական փուլում դա որոշ չափով հաջողվեց, ապա հետո ի հայտ եկան ներքին պառակտումներ ու արյունահեղ խռովություններ:

Հայկական իշխանությունների ներքին երկպառակություններից օգտվում էին Բյուզանդական կայսրերը, Արաբական խալիֆայությունը, ապա և թուրք-սելջուկները: Նրանք, բնականաբար, չէին կարող հանդուրժել Հայաստանի զորեղացումը:

Ուստի և քաջալերում էին կենտրոնախույս ուժերին և իրենց հովանու ներքո առնում խռովարար, ըմբոստ իշխաններին:

13

Բովանդակություն

Ահա և սկիզբը. Սիսիակ նահապետը՝ Հայկից սերված ↘16

Թագավորության բերդերը ↘ 64

Ասբապատում. արքան Հին Կապանի ավերակներում է ↘ 115

Կապանի ավերման ու բերդերի գրավման պատճառը. Բաղաց թագավորության իսպառ վերացումը և Սիսական տոհմի վերջը ↘22

Կատրանիդե թագուհին, ով Հայոց շահնշահ Գագիկ Ա Բագրատունու կինն էր, Կապանա տան չքնաղ դուստրը ↘74

Սյունիքի թագավորության քարտեզը 2

≡ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ 48 ՎԱՆՔԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

Տաթևի վանք 3

Վահանավանք. մայրաքաղաք Կապանի կենտրոնական սրբավայրը..... 4

Սյունի վանքից պահպանված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որ նաև Սուրբ Հովհաննես է կոչվում..... 5

Որոտնավանք 5

Երիցվանք. նաև Կարմիր վանք է կոչվում, Նոր Երուսաղեմ, Սուրբ Նախավկա..... 6

Մեծ Առաքինարան Թանահատի վանքը..... 6

Բղենո Նորավանք (Բղեն գավառի սրբավայրերի պսակը) 7

Անապաստանաց վանք..... 7

≡ ԽՈՍՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Կապան մայրաքաղաքը՝

«ի բնե ամուր և արվեստաշեն» (Գևորգ Փարսյան)..... 8

≡ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սյունիքի թագավորություն. մի քանի դրվագ պատմությունից, որոնցից արժեր դասեր քաղել (Սամվել Ալեքսանյան)..... 9

≡ ՍԿՀԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հատված Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» 16

Հատված Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունից» 16

Սյունյաց իշխանների (հաջորդական) կարգը և նրանց թագավորելը վերջին ժամանակներում. ամփոփ տեղեկություններ (Ստեփանոս Օրբելյան) 18

Սյունիքի թագավորները (Ստեփանոս Օրբելյան).....20

Կապանի ավերման ու բերդերի գրավման պատճառը. Բաղաց թագավորության իսպառ վերացումը և Սիսական տոհմի վերջը (Ստեփանոս Օրբելյան).....22

≡ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հատված Ղևոնդ Ալիշանի «Սիսական» կոթողային գործից 25

Սյունիքի թագավորության կազմավորումը, անունը և սահմանները (Թադևոս Հակոբյան).27

Սյունիքի թագավորությունը. X-XII դարեր (Գրիգոր Գրիգորյան) 33

Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում (Տաճատ Սահակյան) 38

Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը (Բաբկեն Հարությունյան).....43

Սյունիքի թագավորությունը (Բաբկեն Հարությունյան).....47

Սյունիքի թագավորությունը. 970/87-1170 (Աշոտ Մանուչարյան) 52

Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատը Սահակի՞ որդին է, թե՞ Վասակի (Աշոտ Մանուչարյան).....55

Սյունիք-Արցախ պատմական առնչությունները. IX-XII դդ. (Աշոտ Մանուչարյան).....59

≡ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԴԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ, ԳՅՈՒՂԵՐԸ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Թագավորության բերդերը 64

Թագավորության վանքերը 67

Թագավորության գյուղերը 69

Թագավորության ճանապարհները 69

≡ ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ

Կատրանիդե թագուհին, ով Հայոց շահնշահ Գագիկ Ա Բագրատունու կինն էր, Կապանա տան չքնաղ դուստրը.....74

Սյունյաց Գրիգոր Բ արքայի անվանակիր սարկոֆագը (Արսեն Հարությունյան).....76

Հայոց կաթողիկոս Տեր-Սարգսի շրջաբերական գրությունը Սյունիքի ամբողջ թեմին կամ թե ինչպես Սյունյաց առաքելադիր աթոռին վերադարձվեց իր նախնական պատիվը (հատված Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկից) ...81

Սյունիքի թագավորության առաջին թագուհին՝ Շահանդուխտ Ա (Ռոբերտ Էջանանցի) 84

Շահանդուխտ Բ՝ թագուհի Սյունյաց (Ռոբերտ Էջանանցի).....85

≡ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Առաջին գրավոր հիշատակությունը Կապանի մասին (ըստ Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմության» երկի).....87

Պատմական Կապան քաղաքի տեղադրության հարցի շուրջ (Թադևոս Հակոբյան).....87

Ղափան (Ռոմիկ Սարդարյան) 87

Կապանի համառոտ ֆիզիկաաշխարհագրական բնութագիր (Հայկ Հակոբյան) 88

«Կապան» տեղանվան ստուգաբանություն (Գայանե Ալավերդյան).....90

Գահանիստ Կապանի հոգևոր կենտրոնը (Սամվել Ալեքսանյան)....91

Ոչ միայն Վահանավանք (Վահանի վանք), այլև՝ Հովհաննավանք (Հովհաննու վանք).....93

Դիվան Բաղաբերդի (Ռոբերտ Էջանանցի).....96

Ամրոցը, որ մերձակից է Բաղքի երկնքին (վարկած) 97

Գտնվել է Սյունյաց թագավորության «արքայական դղյակը» (Լևոն Մկրտչյան).....99

Բաղաբերդ ամրոցը. պատմաճարտարապետական ակնարկ (Արա Զարյան) 101

≡ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Չորթմանի արշավանքը (հատված Սերգեյ Ումառյանի «Բաղաբերդ» վիպակից).....106

Հին Կապանի վերջին աշունը (Ավանդավեպ: Լրագրային տարբերակ) 110

Ասքապատում. արքան Հին Կապանի ավերակներում է 115

Ողբ ի Ս. Կաթողիկէն (հատված Ստ. Օրբելյանի համանուն քնարական-էպիկական պոեմից) 117

≡ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ ՄԵԾ ՀՈՉԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԲԵՐԴԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

Բաղաբերդ.....119

Մեղրու բերդ.....119

Հաբանդի կամ Զագեձորի բերդ.....120

Բղենո բերդ.....120

Որոտնաբերդ 121

Սյունյաց բերդի ավերակներ 121

Կապան. ամենանորը դու նորերի մեջ և հների մեջ ամենահինը 122-125

Կապանի օրհներգը՝ «Իմ Կապան» (երաժշտ. և խոսքը՝ Գառնիկ Խաչատրյանի).....126

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Գրանցման վկայական՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 16 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000: Ստորագրված է տպագրության 06.08.2024թ.:

ԽՈՍՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ



Լուս. Նվեր Հեյայի

Կապան մայրաքաղաքը՝ «ի բնե ամուր և արվեստաշեն»

8

Թագավորության ստեղծմանը բացասաբար վերաբերվողներին ի սկզբանե էր պատասխանել Սյունյաց տան մեծ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը՝ նշելով՝ *Սիսական տոհմը, որ սերում է Հայկից, երբեք չի ըմբոստացել հայրենի իշխանությունների դեմ: Պարզապես իր երկրին տեր է կանգնել, երբ դրա կարիքը եղել է: Իսկ Սյունիքի թագավորության անկումը համարել է պատմական մեծ ողբերգություն, ինչն իմանում ենք նրա հայտնի «Ողբից»:*

Եվ երբ հետադարձ հայացքով ու գիտական բարեխղճությամբ ամփոփվել ու ամփոփվում են 10-12-րդ դարերում Սյունիքում և երկրամասի շուրջ տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունները, բազմաթիվ հայագետներ արդարացիորեն հանգել են եզրակացության՝ *չլիներ Սյունիքի թագավորությունը, չլինեին նրա վեհանձն և քաջարի թագավորներն ու իշխանական, հոգևոր դասի առաջատար դեմքերը, հայոց Սյունիքը դուրս կմղվեր պատմության ընթացքից և կմնար իբրև հիշողություն, չէր փոխանցվի հետագա դարերին ու գալիք սերունդներին:*

Սյունիքի թագավորության երկուհարյուրամյա պատմությունը, հիրավի, երևելի գործերի, երկրամասը շենացնելու, զինական հզոր ուժ կազմակերպելու, թագավորների ու ամբողջ երկրի իրական ինքնիշխանության ու ինքնակալության ժամանակաշրջան էր:

Դարերի հեռվից ծանոթանալով այդ ժամանակների անցուդարձին՝ հպարտություն ենք ապրում՝ իմանալով, որ Սյունիքի զորական ուժերը լավագույնն էին տարածաշրջանում: Հպարտություն ենք ապրում, որ Սյունիքը երկու դար շարունակ, շնորհիվ կայուն պետական համակարգի, անառիկ ու աննվաճ ամրոց է եղել հայոց համար: Հպարտություն ենք ապրում, երբ ծանոթանում ենք Սյունիքի թագավորների վարքին (բացի վերջին թագավորից՝ Հասան Գեռաբռեցուց), ովքեր պետական մտածելակերպի, քաջության, Սյունիքի շահերին անմնացորդ նվիրվածության խորհրդանիշ են եղել ու մնացել ընդօրինակման արժանի՝ առ այսօր:

Սյունիքի թագավորության պատմությունը մեզ համար հետաքրքիր է մեկ այլ առումով նույնպես:

Թագավորության մայրաքաղաքը Կապանն էր՝ Բաղաբերդ անմատչելի միջնաբերդով: Դեռևս 5-րդ դարից (գրավոր աղբյուրներում) հիշատակվող մեր բնակավայրը 9-րդ դարում Հայաստանի նշանավոր քաղաքների թվում էր: Բաբկեն Առաքելյանը «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.» գրքում նշում է (Երևան-1958, էջ 90)՝ *«9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի սկզբներին Կապանն աճում, քաղաք է դառնում: Այստեղ նկատելի շինարարություն է կատարվում...»:*

Իսկ Ղևոնդ Ալիշանն այդ ժամանակների Կապանն այսպես է բնութագրում՝ *«Ի բնե ամուր և արվեստաշեն»:*

200 տարվա ընթացքում Կապանը քանիցս հերոսաբար հետ մղեց հարևան թշնամական երկրների զորագնդերին:

Հին Կապանի նորօրյա շարունակությունն է մերօրյա քաղաքը, որի տեսարժան վայրերից մի քանիսը՝ լուսանկարների տեսքով, ներկայացվում է ընթերցողին:

Գնահատելի է նաև, որ հին Կապանի ու ընդհանրապես Կապանի մասին տեղեկատվական բնույթի բազմաթիվ նյութեր են տեղ գտել համարում:

Սյունիքի թագավորությունը և նրա մայրաքաղաք Կապանը նորովի ներկայացնելու սույն նախաձեռնությունը նաև կիրառական, գործնական խնդիր ու նշանակություն ունի: Ինչպես արդեն ասացինք՝ աճող սերնդի հայրենագիտական դաստիարակություն, Սյունիքի պատմության այդ շրջափուլի վերաբերյալ հիշողությունների արթնացում, մեր նախնյաց հայրենասիրական ու երկրաշեն ավանդույթները շարունակելու պատրաստակամության և վճռականության ձևավորում:

Մի հանգամանք էլ. Սյունիքի թագավորությունը՝ Կապան մայրաքաղաքով, պատմական թատերաբեմում էր այն ժամանակ, երբ հարևան կոչվող երկիրն ու ժողովուրդն ասպարեզ պիտի գային դրանից յոթ–ութ դար հետո միայն: Եվ առնվազն անլուրջ է (եթե ոչ ցնորամտություն) ադրբեջանաթուրքական կեղծարարների բարբաջը՝ միտված Սյունիքի պատմության աղավաղմանը, Սյունիքի հետ իրենց փոխկապակցմանը:

Այդ ամենը նկատի ունենալով ողջունում եմ «Սյունյաց երկիր» թերթի սպասված այս համարի հրատարակումը: *Շնորհակալություն եմ հայտնում ողջ խմբագրակազմին՝ մեր պատմության այդ կարևոր էջը յուրովի հավերժացնելու, թեմային առնչվող առկա նյութերը շատ թե քիչ ամբողջական ներկայացնելու համար: Լիահույս եմ՝ «Սյունյաց երկիրը» կշարունակի մեր քաղաքի պատմության հերոսական և հիշարժան դրվագները հետազոտելու և հանրահռչակելու ուղղությամբ կատարվող աշխատանքները:*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սյունիքի թագավորություն. մի քանի դրվագ պատմությունից, որոնցից արժեր դասեր քաղել

9

Այդ ամենի հետևանքով էր, որ 908 թ. Վասպուրականն անջատվեց Բագրատունիների թագավորությունից՝ վերածվելով առանձին թագավորության: Հետագայում իշխանական այլ տներ նույնպես անջատվեցին Բագրատունիներից:

1045 թ. Բյուզանդական կայսրը խաբեությամբ Կ. Պոլիս հրավիրեց Գագիկ Բ Հայոց թագավորին և պահեց գերության մեջ, որով և վերջ դրվեց Բագրատունիների թագավորությանը:

Դրանից առաջ՝ դեռևս 1022-ին, Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձը համաձայնություն կնքեց, որով Բագրատունի թագավորի մահվանից հետո թագավորությունը պիտի անցնի Բյուզանդական կայսրությանը:

Իհարկե, հնարավոր չէ առանց ցավի ու ափսոսանքի վերհիշել մեր պատմության այդ շրջանը, երբ հնարավոր էր ապահովել վերահաստատված միասնական հայկական պետության հարատևությունը, բայց երկպառակությունները, օտար ուժերի միջամտությունները, դավաճանությունները ցաքուցրիվ արին հայոց պետականությունը:

Պատմական այդ խառնակ ու բախտորոշ ժամանակում էլ ծնվեց Սյունիքի թագավորությունը:

* * *

Ցավալի մի իրողություն կա, որը, կարծեք, չի շրջանցում Սյունիքի թագավորության պատմությունն ուսումնասիրող ոչ մի գիտնական: Բոլորը, ասես միաբերան, Սյունիքի թագավորության ստեղծումը համարում են Բագրատունիների հայկական կենտրոնական իշխանությունից խույս տալու դրսևորում և անջատողականություն:

Այդ մեղադրանքին ժամանակին պատասխանել է Ստեփանոս Օրբելյան պատմիչը, որը, մասամբ, պատշաճ ենք համարում հիշել:

Ահա՝ *«Ո՛վ պատվական ընթերցող, այժմ լսիր ինձ, և ես քեզ կպատմեմ պանծալի բաներ, քանի որ Սիսական տոհմը, որ սերվում է Հայկից, մի ժամանակ միավորված էր Արշակունի և Պահլավիկ թագավորական ցեղին, երբեմն առնչվում էր Խազիրների թագավորության, իսկ ամենից հետո՝ Բագրատունիների հետ, երբեք չըմբոստացավ հայրենի իշխանությունների դեմ: Իսկ երկար ժամանակ անց, երբ դուռ բացեցին նախ Արծրունիները՝ թագադիր լինելով ընդդեմ հայոց թագավոր Սմբատի, թագադիր եղան նաև Վրաց բդեշխ Ատրներսեհն ու Աղվանից Համամը, Ափշինը մեծարանքով (առաջարկեց) թագադիր լինել Վասակ Սյունիին, բայց սա չկամեցավ ապստամբի անուն վաստակել: Ապա, երբ թուլացավ Բագրատունիների իշխանությունը, և ուժեղացավ արաբական բռնությունը, տրոհվելով անջատվեցին երկրի բոլոր նախարարական գահերը՝ Վասպուրականինը, վրացականը, աղվանականը, Կյուրիկյան կոչված ձորագետցիները, ինչպես նաև Կարս-Վանանդինը, որ Բասյանք է կոչվում:*

... Այն ժամանակ Բագրատունիներն իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչև Գեղարքունիք, Ուխտիք, Կարին, Վասպուրականի սահմանը, Ձորագետ ու Գարդման, իսկ Սյունիքը կտրված էր նրանցից: Այդ պատճառով էլ Սմբատը քրեական մեղք չհամարեց: Եթե Բագրատունիները, որ գերեվարությամբ բերված էին Հրաչեից, արժանի գտնվեցին դրան, ապա որքա՜ն առավել արժանի էին սրանք, որ Հայկից ակնհայտ հարազատությամբ, որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել-հասել են մինչև այժմյան ժամանակները: Արդ՝ Սմբատը թագավորելով՝ ճոխ ու երևելի փառքով կազմակերպում է թագավորությունը՝ ինքնակալ թագավորների ձևով» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի թագավորություն, Երևան 1986, էջ 256-257):

Հիմնավոր, փաստարկված այդ խոսքից ևս մեկ անգամ համոզվում ենք՝ Սյունիքի անջատումը և ինքնիշխան թագավորության ձևավորումը պատմական անհրաժեշտություն էին, ժամանակի հրամայականը և թելադրված էին բացառապես Սյունիքի անվտանգության, լինելիության ապահովման գերակա շահով:

Սյունիքի իշխանական տան և Բագրատունիների միջև այնպիսի ջերմ հարաբերություններ կային, որ ազնիվ չէր լինի թագավորության ձևավորումն ընդվզում կամ ապստամբություն որակել՝ ընդդեմ Բագրատունիների թագավորության: Ավելին, Սյունիքը խիստ դժգոհեց, բայց չընդվզեց Բագրատունիների դեմ նույնիսկ այն ժամանակ, երբ 902 թ. Սմբատ Ա Բագրատունի թագավորը Նախճավան քաղաքը՝ իր շրջակայքով հանդերձ, հանձնեց Վասպուրականին: Եվ դա այն դեպքում, երբ Արշակունիների ժամանակ ու դրանից հետո այդ տարածքները Սյունիքին էին պատկանում ու ռազմավարական կարևոր նշանակություն ունեին:

Սյունիքը խիստ դժգոհեց, բայց չընդվզեց, երբ Բագրատունիների նախաձեռնությամբ չապացուցված մեղքեր վերագրեցին Վահան Ա Սյունեցի Ամենայն հայոց կաթողիկոսին՝ բոլոր ժամանակների ամենանշանավոր կապանցիներից մեկին, և 969 թ. կաթողիկոսական աթոռից զրկեցին նրան: Բագրատունի Աշոտ Ողորմած թագավորի կողմից հետապնդվող և փախուստի մատնված Վահան կաթողիկոսը հանգրվանեց Վասպուրականում, այնտեղ էլ մահկանացուն կնքեց 973-ին, թաղվեց Ձորովանքում՝ Գևորգ Գառնեցի և Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսների մոտ:

Իհարկե, նման իրադարձությունները չեն կարող չանդրադառնալ Սյունիքի իշխանական տան և Բագրատունիների հարաբերություններին, բայց երբեք չէին կարող անջատումի պատճառ լինել:

* * *

Սյունիքի թագավորները...

Երկու հարյուր տարվա ընթացքում ունեցանք յոթ թագավոր, ովքեր երկու հարստության (դինաստիայի) ներկայացուցիչներ էին: Ընդ որում՝ առաջին դինաստիան, որ կոչում ենք Սյունիների կամ Սիսակյանների դինաստիա, ներկայացնում էին երկու ընտանիք:

Առաջին ընտանիքը Սահակյաններն էին կամ Վասակյանները, ովքեր սերում էին Սյունյաց մեծ նահապետ Վասակից:

Ըստ Ստեփանոս պատմիչի՝ *«... Մեր Սիսական աշխարհում առաջինը թագավորեց քաջարի, հզոր և բարեպաշտ արքա Սմբատը»: Թագավորեց 987-998 կամ 970-998 թվականներին: «Եվ շատ ճոխություններից ու արքունական երևելի գործերից հետո վախճանվում է: Նրա դին թաղվում է Տաթևի վանքում՝ աստվածաբնակ աթոռի մեծ սրբարանում՝ համաժողովրդական մարդաշատ հանդեսով»* (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 257):

Դարձյալ ըստ Ստեփանոս պատմիչի՝ *«Սմբատից հետո թագավորում է նրա որդի Վասակը՝ հաճելի, աստվածասեր և բոլոր գործերի մեջ հաջողակ մի մարդ, որը քրոջը կնության էր տվել Աշոտին՝ նույն Սիսական տոհմից»:* Թագավորեց 998-1040 թվականներին, վերջնական

հանգրվանը գտավ Տաթևի վանքում՝ հոր կողքին:

Վասակ թագավորը ժառանգ չուներ, ուստի և *թագավոր դարձրին Սյունիների (Սիսակյանների) հարստության մեկ այլ՝ Ավագ Աշոտյանների ընտանիքի ներկայացուցչին՝ Սմբատ երկրորդին (1043-1051 թթ.):*

Ավագ Աշոտյանները Ծղուկի տերերն էին: Սմբատ Բ-ն իր նախորդի՝ Վասակ թագավորի քրոջ որդին էր: Նույն Սմբատ արքան, ըստ Ստեփանոս Օրբելյանի, *«...Առավել հաճելի էր ու հեզահամբույր, սակայն ահարկու՝ շրջակա բոլոր ժողովուրդների համար»:* Նա հողին հանձնվեց Վահանավանքում կամ Հովհաննու վանքում (գերեզմանը՝ տապանաքարով, հայտնաբերված է):

Սմբատ երկրորդին փոխարինում է իր եղբայրը՝ Գրիգորը (Գրիգոր Ա), ով թագավորեց 1051-1072 թթ.:

Գրիգորի Ա-ի մահվանից հետո (նա նույնպես հողին է հանձնվել Հովհաննու տաճարի դռանը) Սյունիքի թագավորության գահին հայտնվում է Առանշահիկների (Եռանշահիկների) ներկայացուցիչը (Առանշահիկ նշանակում է Առանի տիրակալ):

Առանշահիկները Կուր և Երասխ գետերի միջև տարածված Աղվանքի ժառանգական կառավարիչներն էին: Նրանք Խաչենի իշխաններն էին, ովքեր 9-րդ դարում Աղվանքի տեր հռչակվեցին և կրում էին «Թագավոր Աղվանից» տիտղոսը:

Առանը, ըստ Մովսես Խորենացու, Սյունյաց նախահայր Սիսակի սերնդից էր, հայկազուն էր: Բայց Առանի սերունդը 6-րդ դարում դուրս մղվեց պատմական թատերաբեմից: Ասել է՝ խաչենցի Առանշահիկները Սիսական Առանից չէին սերում: Ինչևէ, *Սյունիքի թագավոր Գրիգոր Ա-ի մահվանից հետո թագավորության մեջ տեղի ունեցավ դինաստիական փոփոխություն:*

Ինչու և ինչ հանգամանքների արդյունքում տեղի ունեցավ այդ փոփոխությունը: Ըստ Ստեփանոս պատմիչի՝ *«Գրիգորն իրեն կին էր վերցրել ամենաօրհնյալ, խորահավատ բարեպաշտուհի Շահանդուխտին՝ Աղվանից տնից. նրանց թագավորազն մեծ իշխան Սևադայի դստերը: Նրանք անզավակ էին, և թագավորությունը մնալու էր առանց ժառանգորդի: Ապա իշխանների հետ խորհուրդ անելով՝ Աղվանքից բերում են նույն Շահանդուխտի եղբայր, թագավորազն մանուկ Սենեքերիմին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլև՝ աստծուց երկյուղած»* (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 268):

Սենեքերիմ Սևադյանը թագավորեց 1072-94 թվականներին: Նա դավադրության զոհ դարձավ: *«Եվ եկան մեծամեծերն ու (սպանվածի) որդիները, մեծ լացուկոծ արին նրա վրա և վերցրին-տարան Վահանի սուրբ վանքը, այնտեղ գերեզման դրեցին ուրիշ թագավորների շիրիմների մոտ»* (Ստ. Օրբելյան, նույն տեղում, էջ 270): Ի դեպ, Սենեքերիմ արքայի գերեզմանը չի հայտնաբերվել:

Սենեքերիմից հետո Սյունիքի թագավորական գահն անցավ նրա որդուն՝ Գրիգորին (Գրիգոր երկրորդ), ով թագավորեց 1094-1116 թվականներին (որոշ տեղեկություններով՝ 1103-1166 թթ.):

Գրիգոր երկրորդ արքան նույնպես ժառանգ չունեցավ: Ուստի և՝ *«Բերել տվեց Խաչենի իշխաններից, գեռաբարեցի մի կտրիճի՝ Հասան անունով, իր դուստր Կատային նրան կնության տվեց ու դարձրեց իր թագավորության ժառանգ... Իսկ երբ սելջուկներն ուզեցին բերդը գրավել, Հասանը բերդապահներ նշանակեց, ինքն էլ վերցրեց կնոջն ու ընտանիքի մյուս անդամներին, գիշերը բերդից դուրս եկավ և անցավ գնաց Խաչեն՝ իր գավառն ու տունը»* (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 270):

Ահա, թե ինչպիսի անփառունակ վարք դրսևորեց Գրիգոր երկրորդ արքային հաջորդած Հասան Գեռաբարեցի թագավորը, ով էլ եղավ Սյունյաց թագավորության վերջին արքան. դա 1170 թվականին էր:

Ի դեպ, Գրիգոր երկրորդ արքայի աճյունը հողին հանձնվեց (ամենայն հավանականությամբ) Սիսիանի Շաքի գյուղի մերձակայքի սրբարաններից մեկում (հետագայում գտնվել է նրա քարե սարկոֆագը, որ ներկայումս պահպանվում է Սիսիանի քարադարանում):

* * *

Սյունիքի թագավորության պատմությունը, հիրավի, հերոսականության և հայրենատիրության, արժանապատվության և ինքնիշխանության համար համառ պայքարի երկդարյա ժամանակաշրջան է:

Երկիրը ոչ միայն արժանապատվորեն էր դիմակայում հարևանների արշավանքներին, այլև խաղաղության ամենափոքր ժամանակաշրջանը կարողանում էր ծառայեցնել ստեղծագործ աշխատանքին, թագավորության հզորացմանը, բանակի ուժեղացմանը, կորսվածը վերականգնելուն:

Հարկ ենք համարում հիշել ու հիշեցնել խոշոր պատերազմները, որոնք խնդիր ունեին երկիրը պաշտպանել օտար նվաճողներից:

Այսպես՝ 1064 թ. սելջուկյան զորքերն արշավանք կազմակերպեցին Սյունիքի դեմ: Բազմապատիկ անգամ գերազանցող ուժերին թագավորության բանակն արժանապատվորեն դիմագրավեց: Այդուհանդերձ թագավորության որոշ տարածքներ ասպատակության ենթարկվեցին Մելիքշահի ու նրա վեզիր Նիզամ ալ-Մուլքի զորքերի կողմից: Արդյունքում ձեռք բերվեց հաշտություն: Պայմանները ծանր էին, մի քանի գավառ խլվեցին իրենց բնիկ տերերից:

Նոր պատերազմ տեղի ունեցավ 1094 թ.: Գանձակի սելջուկյան կուսակալությունը, կամենալով վերջ տալ Սյունիքի թագավորությանը, արշավանք կազմակերպեց դեպի մեր երկրամաս: Պաշարեցին Կապանը, բայց սյունեցիների հերոսական պաշտպանության շնորհիվ նրանք հաջողության չհասան: Հանդիպելով համառ դիմադրության՝ թշնամին դիմեց նենգ միջոցի. Գրիգոր Ապիրատյան իշխանի միջնորդությամբ Սենեքերիմ թագավորը հրավիրվեց բանակցությունների, որի ժամանակ էլ սպանվեց: Չնայած դրան, սելջուկները հաջողության չհասան ու նահանջեցին:

Դրամատիկ իրադարձություններով լեցուն էր 12-րդ դարը: Գտնվելով սելջուկյան օղակման մեջ՝ Սյունյաց թագավորությունը ստիպված եղավ շուրջ յոթ տասնամյակ համառ պայքար մղել թշնամու դեմ:

Առաջին մեծ բախումը (այդ ընթացքում) տեղի ունեցավ 1103 թվականին: Թուրք–սելջուկները՝ Չորթմանի առաջնորդությամբ, գրավեցին, կողոպտեցին և ավերեցին Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանը:

Այո, 1103 թվականին կորստյան մատնվեց Կապան քաղաքը, որը մարդկանց համար անառիկ էր:

1104-ին թշնամու ձեռքն ընկավ Որոտն ամրոցը, որը թագավորության հյուսիսային դարպասն էր:

1105-ին թշնամին գրավեց Բղենը: Այդ կռիվների ժամանակ գերվեց Սյունյաց Խոսրովիկ իշխանը:

1126 թվականին սելջուկները կրկին փորձեցին վերջ տալ Սյունյաց թագավորությանը: Այդ ժամանակ Հարոն ամիրան նորից հարձակվեց Կապանի և Արևիք գավառի վրա՝ գրավելով Կաքավաբերդն ու Բաղակու քարը: Ընդ որում՝ վերջինս վանք էր, որտեղ կուտակված էին մեծ հարստություններ, նաև ձեռագրեր: Եվ, այդուհանդերձ, հայկական ուժերը կարողացան Կաքավաբերդն ու Բաղակու քարը վերադարձնել Սյունիքի թագավորությանը:

1151-52 թթ. Ատրպատականի Ելտկուզ Աթաբեկի զորքերը հարձակվեցին Սյունիքի վրա: Հանդիպելով լուրջ դիմադրության՝ նրանք ամրապնդվեցին միայն Շլորուտ բերդի մերձակայքում:

1157 թ. Ատրպատականի զորքերը հարձակվեցին Մեղրու վրա և գրավեցին այն:

1162 թ. Ատրպատականի Ելտկուզ Աթաբեկի զորքերը կրկին շարժվեցին դեպի Սյունիք: Մի քանի տարի տևած ռազմական գործողություններից հետո՝ *1166-69 թթ., թշնամին կարողացավ գրավել թագավորության նշանավոր բերդե-*

ոից Գրիամը, Գեղին և Կաքավաբերդը:

1170 թ. սելջուկները պաշարեցին թագավորության վերջին հենակետը՝ Բաղաբերդը, որտեղ գտնվում էր Հասան թագավորը: Որոշ ժամանակ անց Բաղաբերդի վիճակը դարձավ օրհասական: Թագավորը հեռացավ բերդից ու ճանապարհվեց դեպի Խաչեն՝ իր հայրենական կալվածք:

Դրանից շատ չանցած՝ սելջուկները խաբեությամբ տիրացան Բաղաբերդին և մեծ կոտորած կազմակերպեցին:

Տերության ամենաանառիկ այդ ամրոցում էին պահվում թագավորության բազմաթիվ հարստություններ և մեծարժեք իրեր: Այդտեղ էին նաև Տաթևի եպիսկոպոսական աթոռի մասունքները, որոնց թվում՝ 10 հազարի հասնող ձեռագիր:

Բաղաբերդի անկումից հետո թագավորության մյուս բերդերը ստիպված էին հանձնվել թշնամուն:

* * *

Սյունիքի թագավորության գոյության ճանապարհին տեղ են գտել դեպքեր և իրադարձություններ, որոնցից այսօր հետևություններ անելու, դասեր քաղելու կարիք ունենք...

Սյունիքի թագավորության գլխավոր ամրոցը՝ Բաղաբերդը, որ աննվաճ է եղել դարեր շարունակ, ընկավ 1170 թվականին (ինչպես նշեցինք վերևում):

Անառիկ այդ ամրոցը բոլորի ապավենն ու ապաստարանն էր: Իսմայելցիների բազմաքանակ զորքերը երբեք չեն կարողացել նվաճել Բաղաբերդը: Ուստի և գործի դրեցին խաբեությունը, սուտ խոստումներով խաբեցին մերձակայքում գտնվող Աչաղու գյուղի պարզամիտ հայ քրիստոնյա մարդկանց ու նրանց օգնությամբ գիշերը մտան Բաղաբերդ, որտեղ էլ սաստիկ կոտորած սարքեցին: Եվ առաջինը սրի քաշեցին այն հայերին, որոնց օգնությամբ կամ որոնց դավաճանությամբ խուժել էին բերդի տարածք:

Այդպես ընկավ Սյունյաց թագավորության մայրաքաղաքի գլխավոր ամրոցը...

Տեղի հայ բնակչության մի փոքր մասը հավատացել էր թուրք-սելջուկներին, հավատացել, որ նրանք երջանկություն ու ապահովություն կբերեն Սյունիքին, բայց...

Թագավորության ողբերգական անցքերից մեկը, անշուշտ, Սենեքերիմ արքայի սպանությունն էր և այդ դավադրությանը հայերի ակտիվ մասնակցությունը: Սենեքերիմ արքան, ինչպես Սյունիքի պատմիչն է արձանագրում, *«Երևելի փառքով թագավորեց Բաղաց տանը, ընդարձակեց իր տերության սահմանները, իր թագավորությունը հաճելի և խաղաղ կյանքով վարեց բազում տարիներ»* (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 269):

Իսմայելականները նախանձով էին լցված Բաղքի գեղեցիկ և ամուր թագավորության հանդեպ ու այն իրենց համար մեծ խոչընդոտ էին համարում:

Եվ Գանձակի ամիրան մեծ զորքով եկավ Սենեքերիմի դեմ: Որքան էլ զարմանալի է, Սենեքերիմի դեմ պատերազմին (թշնամու կողմից) մասնակցում էր Շիրակի իշխան Գրիգորը՝ Ապիրատի որդին: Բայց համոզվելով, որ ռազմի դաշտում չեն կարողանում հաղթել Սենեքերիմի զորքերին, դիմեցին դավի: Բագրատ Ուլուբաբյանն իր «Խաչենի իշխանությունը X-XVI դդ.» մենագրության 111-րդ էջում նշում է. *«Աղբյուրները վկայում են, որ Գանձակի Փադլունյաններին օժանդակում էին հայ իշխանները, ինչպես «Վասակ Պահլավ՝ որդի Գրիգոր Մագիստրոսի», որի առաջնորդությամբ Գանձակի ամիրա Փադլունը պաշարում է Բաղաց Կապանը, դավով սպանում Սենեքերիմ թագավորին»:*

Շատ ցավալի ու սոսկալի է, որ Սյունիքի թագավորի և թագավորության դեմ ձեռք էր բարձրացրել Շիրակի հայոց իշխանությունը:

Պատկերացնո՞ւմ եք, Կապան մայրաքաղաքի մատույցներում (սելջուկների հետ ձեռք ձեռքի տված) կռիվ էր տալիս անեցի իշխան Գրիգոր Ապիրատը (որոշ տեղեկություններով՝ Վասակ Պահլավունին): Ավելին, հենց նրանցից մեկն էր, ով խաբեությամբ, սուտ երդումներով Սենեքերիմին համոզեց ու տարավ ամիրայի մոտ, որտեղ էլ սպանվեց մեր թագավորը:

Այդպես է եղել. մենք՝ մեր դեմ: Այդպես՝ մեզ պառակտելով, միմյանց դեմ հանելով ջլատել են հայոց ուժերը: Ու միշտ էլ մեզանում գտնվել են ուժեր, անհատներ, ովքեր զինվորագրվել են մեր թշնամիներին, ներսից թուլացրել, քանդել հայոց պետականությունը:

Չափազանց ամոթալի դրվագ էր Սյունիքի վերջին թագավորի՝ Հասան Գեռաբարեցու փախուստը պաշարված Բաղաբերդից, ինչին անդրադարձանք վերևում: *Միգուցե և այլ ելք ունենար Բաղաբերդի պաշտպանությունը, եթե թագավորը, ասել է թե՝ սյունիքյան զորքերի գլխավոր հրամանատարը, մնար ու գլխավորեր ամրոցի պաշտպանությունը: Նա կարող էր և պարտավոր էր դա անել: Միգուցե և մնար ու հերոսաբար զոհվեր՝ այդկերպ իր տեղը գտնելով Սյունյաց աշխարհի սուրբ նահատակների պանթեոնում: Կամ՝ կամավոր գերության հանձնվեր՝ իր հպատակներին փրկելու պայմանով, ինչպես վարվեցին սյունիքյան իշխանական տների բազմաթիվ ներկայացուցիչներ, բայց... Ինքը փախավ, քանզի Սյունիքն իր համար հայրենիք չէր, այլ թագավորելու-վայելելու երկիր...*

Այո, միշտ էլ Սյունիքը չափազանց թանկ է վճարել, երբ ինչ–որ թյուրիմացություն, պատահականություն և թշվառական եկել է գլխավորելու մեր երկրամասը...

Քանիցս ապացուցված այդ ճշմարտությունից նույնպես դասեր չենք քաղում:

* * *

Ամփոփենք. Սյունիքի թագավորությունը բացառիկ մեծ նշանակություն ունեցավ հայոց մեր երկրամասի լինելիության և անվտանգության ապահովման գործում: Դժվար չէ կռահել, թե ինչ կկատարվեր Սյունիքի հետ, եթե այստեղ անկախ պետական միավորում չձևավորվեր:

Ավելին, Սյունիքի թագավորությունը, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է նշում իր «Ողբ»-ում, Հայոց ազգի աջ բազուկն էր երկու դար շարունակ: Եվ թագավորության կործանումով այրիացավ մեր երկրամասը: Ու պահանջվեցին տասնամյակներ, նույնիսկ դարեր, մինչև Սյունիքը վերագտավ իրեն:

Սյունիքի թագավորության պատմությունը, ճակատագիրը երիցս հուշում են ապրողներիս ու գալիք սերունդներին՝ արժանապատիվ տերը լինել մեր երկրի, մեր պետության, այլապես ամեն մի կորուստ (առավել ևս՝ տարածքային) դժվարությամբ է վերականգնվում, եթե, իհարկե, վերականգնվում է:

Երախտապարտ սյունեցիներն իրենց նախնիների պատմությունը, իրենց փառապանծ հերոսներին ու առաջնորդներին գնահատել–արժևորել, սրբագործել գիտեն: Դրա վկայությունն է նաև Դավիթ Բեկի, Զորավար Անդրանիկի, Գարեգին Նժդեհի, Պողոս Տեր-Դավթյանի, ֆիդայական-հայդուկային շարժման առաջնորդների, ինչպես և Արցախյան գոյամարտի նահատակների հիշատակի հավերժացումը:

Արդարացի կլիներ, եթե (գոնե ուշացումով) հավերժացնեինք Սյունիքի վեց թագավորների հիշատակը (գուցե և մոնումենտալ արվեստի մեկ բարձրաճաշակ գործ ստեղծելով), չէ՞ որ 200 տարի շարունակ նրանք են ապահովել Սյունիքի արժանապատիվ լինելիությունը:

Կարևոր ենք համարում մեր պատմության այդ շրջանն աճող սերնդին ճանաչելի դարձնելը, գլխավոր ռազմաքաղաքական իրադարձությունները հանրայնացնելը, պետական ու զորական նշանավոր դեմքերին հանրությանը ներկայացնելը. այդ նպատակն է հետապնդում «Սյունյաց երկրի» սույն համարը:

Անհրաժեշտ է նաև Սյունիքի թագավորության՝ գոնե պաշտպանական խոշոր ամրոցների, մայրաքաղաք Կապանի վերջնական ու ամբողջական տեղորոշման ուղղությամբ կատարվող աշխատանքների ակտիվացումը, որն առանց պետական աջակցության հնարավոր չի լինի գլուխ բերել: //

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ահա և սկիզբը. Սիսակ նահապետը՝ Հայկից սերված

■ Ծնվել է մ.թ.ա. 2100թ.:

Մովսես Խորենացի
«Հայոց պատմություն» (հատված)

... Իսկ Գեղամը տարիներ անցնելուց հետո... գնաց արևելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետևի կողմը, մի ծովակի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները Գեղարքունի, ինչպես կոչվում է նաև ծովը: Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեգ ու թիկնավետ, վայելչակազմ, կորովախոս գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ մարդիկ իրեն ծառա և նրա ժառանգության սահման է կտրում ծովից դեպի արևելք մինչև դաշտ, որտեղ Երասխը, սեպացած լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով ահագին շառաչյունով թափվում է դաշտը: Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով և աշխարհը իր անունով կոչում է Այունիք: Վերջերը Վաղարշակ, հայոց առաջին թագավորը, գտնելով սրա սերունդներից անվանի մարդիկ՝ այս աշխարհին տեր է նշանակում, որ Սիսական ցեղն է:

Ստեփանոս Օրբելյան
«Այունիքի պատմություն»
(հատված)

Ծագման և նախնական կազմավորման մասին, թե որտեղից սերվեց Սիսական նախարարական տոհմը՝ Ադամից հետո:

Աստվածապատվեր հրամանով կաշկանդված պրպտող ժամանակագիրների (համար) անվիճելի օրենքով, որ ասում է՝ «ձեզ չի վերաբերում իմանալ ժամերն ու ժամանակները, որ հայրը սահմանեց իր իշխանության մեջ», միայն հետագա (մարդկանց) անուններին ու ծննդաբանությանը հետամուտ կլինենք ստույգ շարադրանքով՝ մարդկության սկզբնավորումից մինչև Սիսական տոհմի նահապետության սկիզբը: Եվ սա նրա համար, որ չկարծես, թե այս տոհմի մարդիկ խառնիճաղանջ ամբոխներից են կամ ինչ-որ առաջադիմության պատճառով և կամ պատահաբար են ստացել նախաթոռ նահապետությունը, այլ աստվածաստեղծ մարդու նախասկզբնական ազնիվ տոհմից սկսած ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով հասան նախարարության:

Այունյաց աշխարհի սահմանների ցուցադրումը. նաև՝ թե մարդկանց պետքերի համար ինչ հարստություն ունի, որքան են գավառներն ու անառիկ բերդերը:

Ունի տասներկու գավառ. առաջինը, որի մեջ հենց «Այունյաց իշխանների և հայրապետների գահն է, Ծղուկ գավառն է՝ անվանված Ծղուկ գավառապետի (անունից): Երկրորդը Վայոց ձորն է, որ ընդհանուր աղետից, ողբ ու վայնասուններից կոչվեց Վայոց ձոր: Երրորդը՝ Գեղարքունին, որ Հայկյան Գեղամի (անունից) կոչվեց Գեղարքունի: Չորրորդը՝ Սոթք գավառը, որ մշտական բուքերի և ցրտաշունչ եղանակների պատճառով կոչվեց Սոթք: Հինգերորդը՝ Աղահեճ գավառը, որ այժմ կոչվում է Քաշաթաղ և Խոժոռաբերդ: Վեցերորդը՝ Հաբանդ գավառը: Յոթերորդը՝ Բաղք գավառը, որ այժմ կոչվում է Աճեն, դա Բաղակի անունից այդպես (անվանվեց): Ութերորդը՝ Կովսական գավառը, որն այժմ Գրիամ են կոչում: Իններորդը՝ Արևիք գավառը, որ այժմ կոչվում է Տաշտոն և Մեղրի: Տասներորդը՝ Ձորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, և այժմ

4108 տարի հետո Սիսակ նահապետի նկարը, առաջին անգամ, ստեղծագործել է կապանցի գեղանկարիչ Ռուբեն (Ուբակ) Կոստանդյանը՝ «Այունյաց երկիր» թերթի պատվերով (թուղթ, ակրիլ, տեմպերա, պաստել, բրոնզ, 45X57, գրաֆիկական աշխատանք):

կոչվում է Կապան: Տասնմեկերորդը՝ Երնջակ գավառը և Գողթնը: Տասներկուերորդը՝ Ճահուկ գավառը, որը և Շահապոնք կոչվող ձորն է:

Ահա սրանք են Սյունիքի տասներկու գլխավոր գավառները: Բայց ունի ուրիշ շատ գավառներ էլ, որոնք չհիշատակեցինք: Կան գավառներ, որոնց անունները փոխված են, ուրիշներն էլ այլ և այլ գավառների են բաժանված: Իսկ այստեղ (գտնվող) անառիկ ամրոցները, որ անհասանելի են մարդկանց մուտքին, և միայն տերը կարող է մատչելի դարձնել (հետևյալներն են)՝ Բաղաբերդ. դա այն է, որ Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառն ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար, բերդն ամրացնում է և անվանում Բաղաբերդ. և գավառն էլ իր անունով կոչվեց Բաղաց գավառ: Իսկ նույն (Սիսակի սերնդի) նահապետների կանանցից մեկը՝ Երնջիկ անունով, շինում է խիստ անմատչելի Երնջակ ամրոցը, և իր անունով գավառն ու բերդը կոչվում են Երնջակ: Բերդում տեղադրում են նաև նահանգի գանձերի և հարկերի տունը: Մարդկանց մեքենայությունների հանդեպ անսասան ու հաստատուն մյուս ամրոցները՝ Հայրաբերդ, Գրհամ, Մայրի, Շլորուտ, Կքեբերդ, Բարկուշատա բերդ, Անդոկա բերդ, Գեղարքունվո բերդ, Բղենո բերդ, Վանանդա բերդ, Բորոդանա բերդ, Հանբադա բերդ, որը Սիսակի նույն տոհմի Ձագ նահապետը շինեց մի գետի վրա և իր անունով ձորը կոչեց Ձագեձոր, բերդն էլ Ձագեձորո բերդ, Քաշեթաղուց բերդ, Խոժոռաբերդ, Որոտն բերդ, Սյունյաց բերդ, Բորտո բերդ, Շահապոնից բերդ՝ շինված և նույն ձորն էլ իր անունով Շահապոնից ձոր անվանված պարսիկ Շահապի կողմից, որ գաղթի պատճառով եկել էր Սյունյաց նահապետների մոտ: Իսկ Վայոց ձորում՝ Կապույտ բերդ, Հրասեկա բերդ՝ կառուցված Հրասեկի կողմից, չափազանց ամրություններով և աստվածաստեղծ պարիսպներով ամրացված. Սուլեմա բերդ Սուլեմ տանուտերի կողմից շինված, և ուրիշ շատերը, որոնք ավելորդ համարեցինք հիշատակել: Ունի Նախիջևան մայրաքաղաքը:

Եվ ահա այսքանը որպես տեղեկություն քեզ համար՝ մեր Սիսական աշխարհի բնական հարստությունների, սահմանների, բերդերի և գավառների մասին:

Սիսական տոհմի նախապատմության մասին, թե ինչպես սահմանվեց հայոց թագավոր Վաղարշակի կողմից:

Մեզ համար այժմ փափագելի է թողնել հների դատարկաբան առասպելները և ձեռք զարկել միայն Սյունյաց վեհափառ տերերի ու Սիսակի ցեղի երջանկավետ բարեբախտություններին և նախաթոռ տիրապետություններին, որովհետև չարչարանքները շատ են, բայց ոչ մի օգուտ

չկա. (ուստի) անօգուտից հեռու պահենք մեր մտքի ձգտումը, որ պիտանիները միայն մեջտեղ գալով կերպարանավորվեն մեզ համար:

Եվ այսպես, սկսած նախնի Սիսակից՝ այս նահապետության իշխանությունը ակներև հարազատությամբ որդիները հայրերից հաջորդաբար փոխանցեցին երկար ու ձիգ ժամանակներով: Բազմաթիվ ու մեծամեծ քաջագործություններ ցույց տվեցին հայոց թագավորների (մղած) պատերազմներում և բազում ու մեծամեծ պարգևներով և գահերով մեծարվեցին պարսից, հայոց, այլև հունաց իսկ թագավորների կողմից: Եվ այնքան անվանի եղան, որ մինչև անգամ արտոնվեց նրանց արծաթե գահույք ունենալ և մարգարտե վարսակալ օգտագործել ու վարազագիր մատանին դնել, նաև կարմիր կոշիկ (հագնել) ու բռնել ոսկե գավազան՝ վրան նշված տոհմի անունը և պատվաստիճանը: Եվ այսպես հասան մինչև Վաղարշակին, որին իր եղբայր Արշակը հայոց վրա թագավոր դարձրեց՝ Հայաստանում Արշակունյաց ցեղի թագավորության սկզբնավորման ժամանակ: Սա Վաղարշակ Առաջինն էր, որը չկամեցավ խառնակ ձևով ու ոչ տոհմիկ մարդկանցով վարել իր թագավորությունը, որովհետև մինչև այն ժամանակ նախնիներից ոչ մեկը հոգ չէր տարել կարգ ու կանոնի և թագավորական օրենքների գեղեցիկ հարմարեցման մասին, այլ ըստ հաջողության ու դիպվածի ամեն ոք բարձրանում էր և ամեն ոք նսեմանում:

Սա կարգ ու կանոն է սահմանում՝ գեղեցիկ կարգավորումներով ու գովելի օրենքներով, նախ սկսելով գլխից՝ Բագրատունիներին առաջարկում է թագադիր լինել, ու նրանց անվանում է ասպետներ, շնորհում է գրավել առաջնակարգ բարձ՝ բոլորից վերև: Եվ ապա սրանց հետ Ձեռեսին քանանացիների սերնդից, Գնթունիների ցեղից, կարգում է իրեն զգեստներ հագցնող և դնում արքունի հանդերձների վրա: Սրանց նման էլ ուրիշներին նույնպես (նշանակում է) ըստ արքունի տան կարիքների: *Իսկ արևելյան կողմից սահմանում է մեծ և առաջին Սիսական տոհմի նահապետությունը, սրա հետ էլ Կադմյանը: Եվ հրաման է տալիս Սիսականներին՝ լինել հրամանատար արքունի բոլոր զորքերին ու իր թագավորության երկրորդը և պատերազմով շարունակ դեմ կանգնել հոնաց դռանը:* Այս նահապետության առաջին (նահապետի) անունը Սիսակ էր: Իսկ սրանց սերնդից ընտրելով մի շատ քաջ, գեղեցիկ ու քաղցրաբարո մարդու՝ Եռան (Առան) անունով, նահապետ է կարգում Առանա մեծ դաշտի վրա, Երասխից մինչև Հունարակերտ: Եվ քաղցր բարքի պատճառով նրան Աղու էին կանչում, որտեղից էլ աշխարհը նրա անունով Աղվանք կոչվեց: *Ահա սա էլ մի փոքր տեղեկություն քեզ, որ իմանաս, թե սրանից ոչ միայն սյունեցիները, այլև աղվանները ևս ունեցել են նախնի՝ նրանցինի պես հնագույն:* ■

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Սյունյաց իշխանների [հաջորդական] կարգը և նրանց թագավորելը վերջին ժամանակներում. ամփոփ տեղեկություններ

Սյունյաց առաջին իշխաններին, ըստ հաջորդականության, ծանոթացանք ու հիշատակեցինք այս գրքում, սկսեցինք Անդոկից ու [հասցրինք] մինչև վերջինը՝ Քուրդոն, ապա անծանոթ մնացինք երկու կամ երեք իշխանների: Իսկ այնուհետև դարձյալ գահակալեցին Սյունի իշխանները: Դրանցից առաջինը Վասակն[840] էր՝ Սյունյաց մեծ նահապետը, ապա՝ նրա երկու որդիները՝ Փիլիպեն ու Սահակը, և մյուս իշխանը՝Գրիգորը[841], նույն ցեղից, որը ժառանգության մաս ուներ հայրենի տիրույթներից: Թեպետ և հայկական իշխանական շատ ցեղեր ու տոհմեր կային, բայց մենք ուշադրություն դարձրինք միայն գլխավոր գահակալ իշխանների վրա: Ըստ այդմ էլ այստեղ շարադրեցինք նրանց մասին, որոնց և արժանի համարեցինք:

Վասակից հետո հայրենի ժառանգական իրավունքը միմյանց միջև բաժանում են նրա որդիները՝ Փիլիպեն ու Սահակը: Փիլիպեն դառնում է Սյունիքի գահերեց իշխան, իսկ Սահակը բաժին է ստանում ամբողջ Գեղամա գավառը: Փիլիպեն մեռնում է՝թողնելով երեք որդիներ՝ Բաբկենին, Վասակին ու Աշոտին: Քիչ ժամանակ անց Սահակն սպանվում է Հոլ ամիրայի պատերազմի ժամանակ[842], Հուրազդան գետի ափին, Կավակերտ ավանի[843] մոտ: Նա իրեն հաջորդ է թողնում Սուփան կոչված իր Գրիգոր որդուն: Ապա օրեր անց հայրենի տիրույթների նկատմամբ եղած ինչ-որ չնչին պատճառով միմյանց հետ կռվում են Փիլիպեի ավագ որդի Բաբկենը և Սահակի որդի Գրիգորը: Բաբկենը Գրիգորին հաղթելով դիաթավալ է անում: Դրա համար էլ նա Կայենի բաժինն է ժառանգում, շուտով անհետանում է կյանքից՝ թողնելով Վահան անունով մի որդի, որը և ժառանգում է Փիլիպեի իշխանությունը: Իսկ Գրիգորը երկու որդի է թողնում՝ Գաբուռ կոչված Վասակին և Հրահատին: Բայց նա ուներ և երկու եղբայր՝ Հրահատն ու Գագիկը: Նրա իշխանությունը ժառանգեց Վասակ Գաբուռը, որը փեսայացավ Աշոտ Բագրատունուն, որը Հայաստանի առաջին [Բագրատունի] թագավորը դարձավ, կնության վերցրեց նրա դուստր Մարիամին: Իսկ Փիլիպեն վախճանվելով ժառանգ թողեց Բաբկենին, որը և մեռավ, ու Իշխանիկ կոչված Վասակին: Մեռավ և Վասակը, որի իշխանությունը ժառանգեց իր եղբայր Աշոտը: Սա երկար ժամանակ ապրեց, ապա մեռնելով թողեց չորս որդի՝ Սմբատին, Սահակին, Բաբկենին և Վասակին: Նրանք իրենց ժառանգությունը բաժանեցին: Սմբատը վերցրեց ամբողջ Վայոց ձորը և Շահապոնքը, որը ճահուկ գավառն է: Իսկ Սահակն ու մյուս եղբայրներն ստացան Սյունիքը, Բաղքը և այլ տեղեր: Մեծ Վասակը Փիլիպե անունով մի որդի ուներ, որը տիրում էր Շնհերին[844] ու Համբանդին[845]:

Գրիգոր Ա թագավորի տապանաքարը

Մեռնում է նաև Վասակ Գաբուռը՝ Գրիգոր Սուփանի որդին՝ թողնելով երեք որդիներ՝ Գրիգորին, որը ևս Սուփան կոչվեց, Սահակին ու Վասակին: Նրա իշխանությունը ժառանգեց Գրիգոր Սուփանը, որն աստվածային ինչ-որ վերահասությամբ զբաղվում էր եկեղեցիների շինարարությամբ ու հոգևոր գործերի [կարգավորումով]: Իսկ Սմբատի եղբայր կրտսեր Վասակն սպանվում է Գողթնի ամիրայի դեմ մղած պատերազմում, Երնջակի ամրոցի մոտ: Ինքը՝ Սմբատը, ստանձնելով գահերեց իշխանությունը և հոգևոր ու աշխարհիկ բազմաթիվ գործեր ցույց տալով, հաջորդ է թողնում իր ժառանգած իշխանությանը իր որդի Վասակին: Իսկ Սմբատի Սահակ եղբայրը Սմբատ անունով որդի ուներ: Սահակը մեռնում է, ու նրա իշխանությունն ստանձնում է իր Սմբատ որդին: Բաղքում էլ սույն ցեղից Ջեվանշեր անունով իշխան կար, որը Ձագիկ իշխանի որդին էր: Իսկ Գրիգոր Սուփանը բազում քաջագործություններից և [ուրիշ] երևելի գործերից հետո մեռնում է՝թունավորվելով Նսրից, և Նրա իշխանությունը ժառանգում է իր եղբայր Վասակը: Մեռնում է Սահակը ու թաղվում Նորատուքի եկեղեցու բակում: Իսկ Սմբատի որդի Վասակը երկար իշխելուց ու շատ գովելի գործեր կատարելուց հետո մեռնում է, և մեր Սիսական համայն աշխարհին տիրում է Սմբատը՝ Սահակի որդին, գահերեց իշխանությամբ:

Ո՛վ պատվական ընթերցող, այժմ լսիր ինձ, և ես քեզ կպատմեմ պանծալի բա-



Մեհերիրիմ թագավորի մանկահասակ որդու՝ Կյուրիկեի տապանաքարը մեծ տաճարի գավթում

ներ. քանի որ Սիսական տոհմը, որ սերվում է Հայկից, մի ժամանակ միավորված էր Արշակունի և Պահլավիկ թագավորական ցեղին, երբեմն առնչվում էր Խազիրների թագավորության, իսկ ամենից հետո՝ Բագրատունիների հետ, երբեք չըմբոստացավ հայրենի իշխանությունների դեմ: Իսկ երկար ժամանակ անց, երբ դուռ բացեցին նախ Արծրունիները՝ թագադիր լինելով[846] ընդդեմ հայոց թագավոր Սմբատի[847], թագադիր եղան նաև Վրաց բդեշխ Ատրներսեհն ու Աղվանից Համամը, Ափշինը մեծարանքով [առաջարկեց] թագադիր լինել Վասակ Սյունիին, բայց սա չկամեցավ ապստամբի անուն վաստակել:

Ապա, երբ թուլացավ Բագրատունիների իշխանությունը, և ուժեղացավ արաբական բռնությունը, տրոհվելով անջատվեցին երկրի բոլոր գլխավոր նախարարական գահերը՝ Վասպուրականինը, վրացականը, աղվանականը, Կյուրիկյան կոչված ձորագետցիներինը[848], ինչպես նաև Կարս-Վանանդինը[849], որ Բասյանք է կոչվում:

Ապա Աշոտի որդի Սահակի որդի Սմբատը[850], որ ամուսնացած էր Աղվանից մեծ ու փառաբանված իշխան Սևադայի Շահանդուխտ անվամբ դստեր հետ, իր թոռ Կատրամիդեին՝ իրենից հետո թագավոր դարձած իր Վասակ որդու դստերը, կնության էր տվել Աշոտի որդի Գագիկ թագավորին[851], որը և կառուցեց Անիի մեծ կաթողիկե սբանչելի, հոյաշեն եկեղեցին[852]: Սմբատը կապված է Ատրպատական աշխարհի Թավրիզի մեծ աթաբեկի, Դերբենդի կիրճին[853] տիրող Ռան ամիրայի, ինչպես նաև Աղվանքի իշխանների հետ: Սրանք բոլորով [իրենց տածած] առավել սիրուց ծանուցում են Խորասանի[854] մեծ սուլթանին, ստանում նրա թույլտվությունը և թագադրում այն գեղեցկահասակ ու վայելչագիսակ հայկազուն մարդուն՝ Սյունյաց իշխան Սմբատին: Այն ժամանակ Բագրատունիներն իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչև Գեղարքունիք, Ուխտիք[855], Կարին[856], Վասպուրականի սահմանը, Ձորագետ[857] ու Գարդման[858], իսկ Սյունիքը կտրված էր նրանցից: Այդ պատճառով էլ Սմբատը քրեական մեղք չհամարեց: Եթե Բագրատունիները, որ գերեվարությամբ բերված էին Հրաչեից, արժանի գտնվեցին դրան, ապա որքան առավել արժանի էին սրանք, որ Հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել-հասել են մինչև այժմյան ժամանակները: Արդ՝ Սմբատը թագադրվելով ճոխ ու երևելի փառքով կազմակերպում է թագավորությունը՝ ինքնակալ թագավորների ձևով: Եվ շատ ճոխություններից ու արքունական երևելի գործերից հետո վախճանվում է: Նրա դին թաղվում է Տաթևի աստվածաբնակ աթոռի



Սմբատ Բ թագավորի տապանաքարը

մեծ սրբարանում՝ համաժողովրդական մարդաշատ հանդեսով:

Նրա իշխանությունը ժառանգում է իր կտրիճ որդի Վասակը, որը և մեծահանդես համախմբությամբ, ազատակույտ բազմությամբ օծվում է Սյունիքի ու Բաղքի թագավոր[359]՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Գրիգորի ձեռքով: Նա իր Սևադա եղբորը դարձնում է իր ազատակույտ զորքերի իշխանաց իշխան: Սրանց մայրը՝ երանելի թագուհի Շահանդուխտը, [դեռ] կենդանի էր: Սա, աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղատնի գեղեցկակերտ ու վայելչաձև վանքը[860], որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետև այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, որը կարծեմ նրա կողմից էլ հիմնադրված էր, հետո [վերա] շինված Ստեփանոս հոր և սուրբ ճգնավորի կողմից: Այն բուժում էր թունավոր օձերից խայթվածներին, ինչպես որ Փարպու եկեղեցին է բուժում մարդու և անասունի անբուժելի կատաղի ցավը: Այստեղ հենց այժմ էլ տեսնում ենք անպատմելի հրաշքներ. թունավոր [զեռուններից] խայթված, սևացած ու պայթելու աստիճան ուռածներին հանում են բարձրադիր լեռները, ցույց են տալիս վանքը և կամ եկեղեցուց մի քիչ հող են հասցնում, մակարդված թույնն իսկույն քայքայվում է, ու հիվանդը՝ բուժվում:

Այդ պատճառով մեծ բարեպաշտ Շահանդուխտը կոփածո քարերով եկեղեցի է շինում՝ սուրբ Նախավկա Ստեփանոսի անունով, հայոց չորս հարյուր քառասունինը թվականին[861], այնտեղ հաստատում է կրոնավորների ու վանքի բազմաթիվ սպասավորների տուն: Եկեղեցու բակում շինում է նաև աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաև պահեստներ, արհեստանոցներ, և վանքը շրջափակում պարսպով: Վանքի համար սահմաններ է առանձնացնում Վաղատնից, նրան է հանձնում Գոմեր ագարակը[862]: Զանազան զարդերով պայծառապես զարդարում է եկեղեցին: Ինքն էլ վախճանվելով թաղվում է նույն սրբարանի բակում: Ապա որոշ տարիներ անց, չորս հարյուր հիսունհինգ թվականին[863], Սևադան՝ նույն Շահանդուխտի որդին և Վասակ թագավորի եղբայրը, մեծ ջանքերով կառուցում է մի եկեղեցի՝ խիստ պայծառ, գեղեցկակերտ, գմբեթահարկ՝ սուրբ Կարապետի անունով, նրա բակում էլ՝ մի գավիթ: Նույն բակում իրենք են հանգչում: Նրանց հիշատակն օրհնությամբ լինի, և վարձը՝ բյուրապատիկ մեր Քրիստոս աստծուց:

Ծանոթագրություններ

840. Այս նահապետ իշխանաց Վասակն ապրել է մինչև 9-րդ դարի 1-ին քառորդը, մեռել է 821 թվականին: Հմմտ. նաև ծան. 410: (էջ 254):

841. Տես ծան. 443, 444, 596: (էջ 254):

842. Այս պատերազմը տեղի է ունեցել 824 թվականից հետո և 833 թվականից բավական առաջ: Հմմտ. նաև ծան. 433: (էջ 255):

843. Հմմտ. ծան. 439: (էջ 255):

844. Շնհերի մասին տես ծան. 431: (էջ 255):

845. Ս. Օրբելյանի երկում այս անունը հանդիպում է Հաբանդ կամ Համբանդ ձևերով: (էջ 255):

846. Խոսքը վերաբերում է Հայաստանի կենտրոնական թագավորությանը հակադիր Վասպուրականի Արծրունյաց թագավորության հիմնադրմանը, (էջ 256):

847. Խոսքը վերաբերում է Սմբատ 1-ին Բագրատունի թագավորին (890-914 թթ.): (էջ 256):

848. Հայոց Սմբատ 2-րդ Բագրատունի թագավորի (977-990 թթ.) ժամանակ նրա եղբայր Գուրգենը, որ իշխում էր իրեն բաժին ընկած Լոռիում, ըմբոստացավ Անիի թագավորության դեմ և Գուգարքն անջատեց նրանից: Սրա որդի իշխան Դավիթը (Անհողին) 989 թվականին իրեն հայտարարեց թագավոր: Այսպիսով հիմք դրվեց Գուգարքի թագավորության, որն սկզբում կոչվում էր Ձորագետի կամ Լոռու, հետագայում՝ նաև Կյուրիկյան թագավորություն: (էջ 256):

849. Բասյանքի (Կարս-Վանանդի) թագավորությունը հիմնադրեց

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Սյունիքի թագավորները

Այսպես. մեր Սիսական աշխարհում առաջինը թագավորեց քաջարի, հզոր և բարեպաշտ արքա Սմբատը[902]՝ Սմբատի եղբայր Սահակի որդին: Վերջիններս Իշխանիկ կոչված մեծ Վասակի[903] եղբայր բարեպաշտ Աշոտի որդիներն էին: Իսկ Վասակ-Իշխանիկն ու Աշոտը երանելի Փիլիպեի[904] որդիներն էին: Փիլիպեն էլ եղբայրն էր Սահակի, որն սպանվեց Դվինում Հոլ ամիրայի դեմ մղված պատերազմում[905]: Իսկ այս Փիլիպե ու Սահակ եղբայրները Սյունյաց մեծ նահապետ Վասակի որդիներն էին:

Սմբատից հետո թագավորում է նրա որդի Վասակը[906]՝ հաճելի, աստվածասեր և բոլոր գործերի մեջ հաջողակ մի մարդ, որը քրոջը կնության էր տվել Աշոտին[907]՝ նույն Սիսական տոհմից: Վերջինս այս ամբողջ թագավորության իշխանաց իշխանն էր. ուներ երկու որդի՝ Սմբատ և Գրիգոր: Ապա վախճանվում է Վասակ թագավորը և թաղվում իր հայր Սմբատի կողքին: Իսկ քանի որ նա իր իշխանության համար ժառանգ չուներ, ուստի թագավոր են դարձնում Աշոտի որդի Սմբատին[908]. հոր փոխարեն էլ սրա Գրիգոր եղբորը կարգում են մեր Սիսական աշխարհի իշխանաց իշխան: Այս Սմբատը, որ առավել հաճելի էր ու հեզահամբույր, սակայն ահարկու՝ շրջակա բոլոր ժողովուրդների համար, որոշ տարիներ թագավորելով, վախճանվում ու թաղվում է Հովհաննու վանքում[909], տաճարի դռանը: Թագավորությունն ստանձնում է նրա եղբայր Գրիգորը[910]: Սրանք երկուսով մեծ Աշոտի որդիներն էին, որտեղից էլ կոչվում են Ավագ Աշոտյանք:

Գրիգորը իրեն կին էր վերցրել ամենաօրհնյալ, խորահավատ բարեպաշտուհի Շահանդուխտին՝ Աղվանից տնից, նրանց թագավորազն մեծ իշխան Սևադայի դստերը: Նրանք անզավակ էին, և թագավորությունը մնալու էր առանց ժառանգորդի: Ապա իշխանների հետ խորհուրդ անելով՝ Աղվանքից բերում են նույն Շահանդուխտի եղբայր, թագավորազն մանուկ Սենեքերիմին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլև՝ Աստծուց երկյուղած: Սրան դարձնում են իրենց թագավորության ժառանգորդ: Որոշ տարիներ մնալով՝ մեռնում է նաև [Գրիգոր] թագավորը:

Այն ժամանակ բարձրացել ու զորացել էր տաճիկների[911] իշխանությունը, և ամբողջ աշխարհը ենթարկված ու հարկատու էր նրանց: Այդ պատճառով էլ մեր Սիսական աշխարհի շատ գավառներ խլեցին իրենց բնիկ տերերի ձեռքից: Սուլթանության աթոռին նստած էր Մելիքշահը[912]՝ բարի վարքով ու խաղաղասեր մի մարդ, որից թագավորական պատվով մեծարվում էր Սենեքերիմը, որը և երևելի փառքով թագավորեց[913] Բաղաց տանը, ընդարձակեց իր տերության սահմանները. իր թագավորությունը հաճելի ու խաղաղ կյանքով վարեց բազում տարիներ, մինչև Մելիք սուլթանի մահը, որը տեղի ունեցավ հինգ հարյուր քառասունմեկ թվականին[914]: Այնուհետև սկսեց խախտվել խաղաղությունը, և խափանվել աշխարհիս ողջ նորոգությունը, որի մասին իր տեղում կպատմեմ:

Սենեքերիմը երեք որդի ուներ՝ Գրիգորը, Սմբատը, Սևադան և մի դուստր: Նրա մահն էլ այսպիսի պատճառով եղավ: - Մելիքշահից հետո յուրաքանչյուր ոք, գլուխը վեր պահած, ինքնիշխան դարձավ. և մեկը մյուսի դեմ ելնելով՝ ով որ կարողանում էր, ավերում էր երկիրը, թալանում ու հափշտակում: Այդ պատճառով անհիշյալ իսմայելականները, որ

19

Աշոտ 3-րդ թագավորի եղբայր Մուշեղը: Սա Հայաստանի սպարապետն էր: Երբ 962 թվականին արքունիքը Կարսից փոխադրվեց Անի, Մուշեղը չենթարկվեց թագավորին, մնաց Կարսում և իրեն հայտարարեց թագավոր՝ իշխելով մինչև 984 թվականը: Նրան հաջորդեց իր որդի Աբասը: (էջ 256):

850. Հմմտ. ծան. 830: (էջ 256):

851. Գագիկ 1-ին Բագրատունի թագավորն է, Աշոտ 3-րդ Ողորմածի որդին է, որը հաջորդեց իր եղբայր Սմբատ 2-րդ թագավորին և իշխեց 990-1020 թթ.: (էջ 256):

852. Ս. Գրիգոր անունով կոչված այդ հռչակավոր եկեղեցին կառուցվել է 1000 թվականին, նրա առաջ դրված է եղել Գագիկի արձանը: (էջ 256):

853. Սա այժմ ընդգրկված է Դաղստանի տարածքի մեջ: (էջ 257):

854. Խորասանը Պարսկաստանի ընդարձակ նահանգներից մեկն է՝ երկրի հյուսիս-արևելյան մասում: Ժամանակին այստեղ էր նստում մեծ սուլթանը: (էջ 257):

855. Ուտիք անվան տակ պատմիչը նկատի ունի Տայքը, որը մեծ Հայքի 14-րդ նահանգն էր: Ուտիք անունը պահպանվել է այժմյան Օլթի քաղաքի անվան մեջ: Օլթին եղել է նահանգի կենտրոնը (այժմ՝ Թուրքիայում): (էջ 257):

856. Կարինը Բարձր Հայքի 9-րդ գավառն էր՝ համանուն կենտրոնով: Այժմյան Էրզրումի սանջակը Թուրքիայում: (էջ 257):

857. Ձորագետը այժմյան Դեբեդ գետի շրջակա տարածքն է՝ գետի հին անվամբ: Հետագայում սխալմամբ Ձորագետ են անվանել Տաշրա ջուր գետը (տես Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», էջ 63): (էջ 257):

858. Տես ծան. 461: (էջ 257):

859. Սյունյաց Սմբատ 1-ին թագավորի որդի այս Վասակ 1-ինը Սյունիքի երկրորդ թագավորն էր, որ գահ էր բարձրացրել մոտավորապես 998 թ.: Սա էր Գագիկ 1-ին Բագրատունի թագավորի աները. նրան կնության էր տրվել իր դուստր Կատրամիդեին դեռ Սմբատի կենդանության օրոք: (էջ 257):

860. Վաղատնի (Վաղադնի) վանքը, որ կոչվում է նաև Որոտնավանք, գտնվում է այժմյան Սիսիանի շրջանի Վաղուդի գյուղից 2 կիլոմետր հարավ, Որոտան գետի ձախ ափի քարափի վրա: Հնուց այստեղ եկեղեցի է եղել: Այս վանքում 1000 թվականին Շահանդուխտը եկեղեցի է կառուցել ս. Ստեփանոսի անվամբ, ինչպես տեղեկացնում է նույն պատմիչը: Այնպես որ Շահանդուխտը այնտեղի մեկ եկեղեցու կառուցողն է և ոչ թե ամբողջ վանքի: Այստեղ է նաև Շահանդուխտի որդի Սևադայի 1006 թվականին կառուցած եկեղեցին: Այժմ այդ երկու եկեղեցիներն էլ զգալի չափով քանդված են: Կատարվում են վերանորոգման աշխատանքներ (մեր վերջին այցելությունը՝ 1984 թվականի ապրիլի 22): (էջ 257):

861. Այսինքն՝ ընդհանուր 1000 թվականին: (էջ 258):

862. Այս Գոմերը հարկացուցակում հիշատակված է Ծղուկ գավառում՝ 7 միավոր հարկաչափով: (էջ 258):

863. Այսինքն՝ ընդհանուր 1006 թվականին: (էջ 258):

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ
«ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»,
ԵՐԵՎԱՆ, 1986, ԷՋ 254-258

նախանձով էին լցված Բաղքիս գեղեցիկ ու ամուր թագավորության նկատմամբ՝ այն իրենց համար մեծ խոչընդոտ համարելով, [նույնպես գլուխ բարձրացրին]. ու Պարտավի[915], Առանի[916] ու Գանձակի [917] ամիրան բազմամարդ զորքերով ելավ-եկավ պատերազմելու Սենեքերիմի դեմ: Նրա հետ էր Շիրակի իշխան Գրիգորը՝ Ապիրատի որդին: Սենեքերիմն այդ իմանալով՝ նահանգի ամբողջ բնակչությունն ամրացրեց անառիկ ամրոցներում: Եվ ապա անհիծյալ ամիրան, գալով ու տեսնելով, որ անհնարին է մարդկանց

եկան մեծամեծներն ու [սպանվածի] որդիները, մեծ լաց ու կոծ արեցին նրա վրա և վերցրին-տարան Վահանի սուրբ վանքը, այնտեղ գերեզման դրեցին ուրիշ թագավորների շիրիմների մոտ: Նրանից հետո նրա իշխանությունն ստանձնեց իր որդի Գրիգորը[918]՝ թագավորելով քիչ և թույլ: Բայց այս Սենեքերիմն ու իր քույր Շահանդուխտը բազում արդյունավետ գործեր կատարեցին, երևելի շինարարություններ արեցին Հովհաննու վանքում, նաև բազմաթիվ պարգևներ ու տիրույթներ ընծայեցին Տաթևի սուրբ կենտրոնական աթոռին...

հիշատակված է Տաթևի վանքի 1019 թվականի կալվածագրում: Հմմտ. սույն երկում գլ. ԾՁ: (էջ 268):

911. Նկատի ունի սելջուկ-թուրքերին: (էջ 269):
912. Մելիքշահը Ալփասլանին հաջորդած սուլթանն էր: Իշխել է 1072-1092 թթ.: (էջ 269):
913. Սյունյաց Գրիգոր 1-ին թագավորին հաջորդած այս Սենեքերիմ թագավորը իշխեց մինչև 1094 թվականը: (էջ 269):
914. Այսինքն՝ ընդհանուր 1092

Սյունյաց Գրիգոր Ա թագավոր (1051-1072 թթ., դեմքի վերականգնումը՝ պրոֆեսոր Ճաղարյանի)

[ուժով հաղթահարելը], անեցի իշխան Գրիգորին, որն ինչ-որ պատճառով իր մոտ էր գտնվում ուղարկեց Սենեքերիմ արքայի մոտ՝ ասելով. *«Երդմամբ համոզիր նրան, որ գա ինձ մոտ, միմյանց հետ բարեկամանանք, և իրեն մեծամեծ պարգևներով հետ կուղարկեմ, իսկ եթե չհամաձայնեցնես, այդ դեպքում գլուխդ կկտրեմ»:* Ապա Գրիգորն ընթացավ այն չար ճանապարհով. մտնելով Սենեքերիմի մոտ՝ մեծամեծ երդումներով համաձայնեցրեց նրան՝ գալու ամիրայի մոտ: Եվ նրանք միասին եկան: Չարաթույն գազանը, Սենեքերիմին տեսնելով, իր պայմանը դրժեց, մռլտոցով հարձակվելով թագավորի վրա՝ սպանեց նրան, իսկ ինքն անցավ-գնաց իր աշխարհը: Ահա այսպես մարեց քրիստոնյաների ճրագը, որ մնացել էր Բաղքի ամուր տեղում: Եվ

Ծանոթագրություններ

902. Հմմտ. ծան. 830: (էջ 268):
903. Տես ծան. 459, 460: (էջ 268):
904. Խոսքը Փիլիպե 1-ինի մասին է: (էջ 268):
905. Տես սույն երկում գլ. ԼԷ, ԾԵ, այլև՝ ծան. 433: (էջ 268):
906. Տես ծան. 859: (էջ 268):
907. Հմմտ. ծան. 879: (էջ 268):
908. Սա Սյունյաց Սմբատ 2-րդ թագավորն է: Իբրև իշխան հիշված է 1017, 1019 թվականներին, իբրև թագավոր՝ 1043, 1058 թվականներից՝ արձանագրություններում: (էջ 268):
909. Այսինքն՝ Վահանավանքում: (էջ 268):
910. Սա Սյունիքի 4-րդ թագավորն է: Առաջին անգամ իբրև վկա

թվականին: (էջ 269):

915. Տես ծան. 801: (էջ 269):
916. Առանը նախապես այն երկրամասն էր Մեծ Հայքի կազմում, որ ընդգրկում էր Խաչեն և Տրտու գետերի միջին ու ստորին ավազանները, Արցախի Մեծառանք և Ուտիքի Առանռոտ ու Առանձակ գավառները: Հետագայում Առանը դարձավ աշխարհագրական ավելի լայն հասկացություն: (էջ 269):
917. Այժմ՝ Կիրովաբադ քաղաք, Ադրբ. ՍՍՀ-ում: (էջ 269):
918. Սա դարձավ Սյունյաց Գրիգոր 2-րդ թագավորը: (էջ 270):

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ», 1986

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Կապանի ավերման ու բերդերի գրավման պատճառը. Բաղաց թագավորության իսպառ վերացումը և Սիսական տոհմի վերջը

Այն տարում, երբ հայոց հինգ հարյուր հիսուներկու թվականն էր[951], եղավ Կապան գավառի և Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների և իշխանների տիրապետության վերացման սկիզբը, որի մասին կարդացինք ու իմացանք Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի[952] թղթից, որ գրել էր հոյակապ Անի քաղաքում՝ Մխիթար քահանայի[953]՝ քաղաքի ավագ երեցի և սուրբ կաթողիկեի փակակալի խնդրանքով:

Մեծ կոտորածի պատճառն էլ այս էր: – Սենեքերիմ թագավորը գնում է Պարսկաստանի մայրաքաղաք Սպահան՝ Մելիքշահ սուլթանին տեսակցության: Հանդիպելով նրան՝ բարձրագույն փառքով մեծարվում է ու նստեցվում վերևի տեղում: Սուլթանը խիստ սիրված մի ծառա ուներ՝ Չորթման անունով, որը նրա մոտ մատռվակություն էր անում: Ճաշի ժամանակ սա գինով խիստ նեղում է Սենեքերիմ թագավորին, որը թեև շատ պարգևներ է խոստանում նրան, բայց նա ուշադրություն չի դարձնում: Ապա խոստանում է Չորթմանին տալ իր դուստրը, որի համար իրենց սովորության համաձայն Չորթմանը հանգույց է դնում Սենեքերիմի գոտու վրա՝ որպես նշան այդ խոստման, ու տանում, ցույց է տալիս սուլթանին: Դրանից հետո կատակով ասված այն խոսքերը Չորթմանը խորամանկությամբ պահում էր իր մտքում՝ խժդժություն առաջ բերելու նպատակով: Ապա հասնելով բարձր դիրքի և իշխանության՝ Սենեքերիմից պահանջում է խոստացած աղջիկը: Իսկ նա խիստ խոսքերով է պատասխանում՝ ծաղրելով նրա պահանջը: Այն ժամանակ, երբ Չորթմանն իմացավ թագավորի կարծիքը, ըստ որի՝ իր պահանջի կատարումն անհնարին էր, սկսեց դաժան հալածանքներով ու տեսակ-տեսակ նեղություններով կեղեքել և ավերել նրա ամբողջ տերությունը: Բայց հինգ հարյուր քսանհինգ թվականին[954] շեն էին Կապանի գավառները, վանքերը ծաղկած էին պաշտամունքային արարողություններով ու լուսավորությամբ: Իսկ հինգ հարյուր քառասունմեկ թվականին[955], երբ Մելիքշահ սուլթանը մեռավ, մեկ ամբողջ տարի նրանք բոլորն առհասարակ ահ ու դողի մեջ գտնվեցին: Ապա Մելիքշահի որդի Բեկիարուխի իշխանության ժամանակ յոթ տարի մի փոքր խաղաղություն տիրեց: Իսկ հինգ հարյուր քառասունութ թվականին[956], երբ Բեկիարուխը մեռավ, նրանք դարձյալ դառնապես ցնցվեցին: Եվ երբ տասնմեկ հիսնյակը և երկու թիվը լրացավ, այսինքն՝ հինգ հարյուր հիսուներկու թվականին[957], մի օր, երբ քաղաքացիներն անհոգ դրության մեջ էին, տերը [կորստյան] մատնեց մարդկանց համար անառիկ Կապան քաղաքը. անիծյալ Չորթմանն իր վրեժը [լուծելու] համար անսպասելիորեն հարձակվեց քաղաքի վրա: Նախ՝ բազմաթիվ հետևակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը և հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված



չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից: Նրանք բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր Խնձորոգլխին[958]: Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ: Սակայն բերդի նկատմամբ ոչինչ չկարողացան ձեռնարկել և ետ դարձան իրենց տեղը:

Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը. և այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ ու ապա վերացավ: Այն ուներ իրեն ենթակա քառասուներեք բերդ, որոնցից տասներկուսն անվանի էին, քառասունութ վանք, հազար ութ գյուղ, մայրաքաղաքն էլ Կապանն[959] էր: Դա Բաղքի թագավորությունն էր:

Ապա մեկ տարի անց, հինգ հարյուր հիսուներեք թվականին[960], գրավվեց Որոտնը[961], իսկ հինգ հարյուր հիսունչորս թվականին[962]՝ Բղենը[963], և գերի բռնվեց Խոսրովիկ իշխանը[964]: Բազմաթիվ քրիստոնյաներ սրի քաշվեցին: Բոլորովին ավերվեց Բաղաց երկիրը: Վանքերի բոլոր միաբանությունները լռեցին պաշտամունքային արարողություններից: Թանձրամած խավարը պատեց հայաստանյան ժողովրդին: Սաստիկ սգի մեջ ընկան Հայաստանի բոլոր եկեղեցիներն ու քրիստոնյաները: Բայց Բաղաբերդը[965], Գեղին[966], Կաքավաբերդը[967], Շլորուտը[968], Կարճևանը[969], Մեղրին[970], Գրհամը[971] մնացին Աշոտի թոռների՝ Գրիգոր թագավորի[972] ու Սմբատի[973] իրավունքին: Վերջիններս Աշոտի թոռներն էին և անզավակ, միայն Գրիգորը մի դուստր ուներ՝ Կատա անունով[974]: Իսկ հինգ հարյուր վաթսունհինգ թվականին[975] մեծ ճգնությամբ վախճանվեց սուրբ թագուհի Շահանդուխտը՝ Սենեքերիմ թագավորի քույրը: Նույն տարում վախճանվում է նաև աստվածային

բազմերանելի այր, սուրբ եպիսկոպոս Տեր-Գրիգորը[976]:

Հինգ հարյուր յոթանասունհինգ թվականին[977] եկավ ամիր Հարոնը և բնաջնջեց Կապանի տունն ու Արևիք գավառը, գրավեց Կաքավաբերդն ու Բաղակաքարը[978]. վերջինս վանք էր, որտեղ հավաքված կային բազմաթիվ սրբություններ՝ խաչեր, նահատակների մասունքներ, ոսկի, արծաթ, կտակարաններ, որոնք փոխադրվել էին գավառներից: Այս բոլորը գերության մատնվեցին:

Ապա երբ լրացավ վեց հարյուր թվականը[979], և սկսվեց առաջին տարին, Շլորուտ բերդը կողոպտեց թուրքերի ճարպիկ ցեղը, վեց հարյուր վեց թվականին[980] էլ Մեղրին հափշտակեցին: Վեց հարյուր տասնինը թվականին[981] Աստված կրկին բարկացավ մեր Բաղաց աշխարհի ու Սյունյաց նահանգի վրա և բոլորի ապավեն ու ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց Իսմայելի՝ անիծյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետև խաբեական խոսքերով խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը[982], ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց և Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած կատարեց: Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթևի փարթամ ու հարուստ աթոռի անհամար և աննման սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե և արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով: Այնտեղ ամբարված էին շատ կտակարաններ՝ թվով ավելի քան տասը հազար: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին և ցիր ու ցան եղան երկրի երեսին: Մենք խղճահարության ու կարեկցանքի ենք արժանի, որովհետև մեր կորուստն ու ավերածությունը առավել եղան, քան Երուսաղեմինը՝ Նաբուգոդոնոսոր արքայից[983]. չէ՞ որ սա մի ժամանակ դարձ ու նորոգում ունեցավ Կյուրոսի կողմից[984], իսկ մեզ համակեց վերջին թշվառությունը՝ անդառնալիորեն ու հավիտենապես:

Ապա մինչ տերը մեզ դատապարտեց ու կամենում էր օրեցօր ոչնչացնել, մյուս բերդերն ու ամրոցներն ինքնակամ հանձնվեցին Ելտկուզ աթաբեկին[985], և ամենուրեք տիրեց տաճիկը[986]: Վրա հասավ դառն ու դժնդակ ժամանակը. ընդհանրապես երկիրն ու բնակելի վայրերը ավերվեցին և անմարդաբնակ դարձան: Բայց Գրիգորը, որ իշխում էր Բաղքում, բերել տվեց Խաչենի իշխաններից, գեռա-

քարեցի մի կտրիճի՝ Հասան անունով[987], իր դուստր Կատային նրան կնության տվեց ու դարձրեց իր թագավորության ժառանգ: Ինքն ու իր եղբայր Սմբատն էլ մեռան բերդի գրավումից առաջ, վեց հարյուր տասնհինգ թվականին[988]: Իսկ երբ [սելջուկներն] ուզեցին բերդը գրավել, Հասանը բերդապահներ նշանակեց, ինքն էլ վերցրեց կնոջն ու ընտանիքի [մյուս] անդամներին, գիշերը բերդից դուրս եկավ և անցավ-գնաց Խաչեն՝ իր գավառն ու տունը:

Մնացած Ջուրջ և Խոսրովիկ ազատները փոքր հասակում մեռան Նախիջևանում ու թաղվեցին Ճահուկում: Ջուրջի մի եղբորորդին՝ Մահևան անունով, փախավ-գնաց Անի քաղաքը: Իսկ մյուս իշխանը՝ Համտունը, որ Բաղքի մեծ իշխան Հասանի որդին էր ու ավագ Համտունի թոռը, գնաց Վայոց ձոր, իր փառաբանված եղբայր Տեր-Հովհաննեսի մոտ, որը բնակվում էր Նորավանք[989] կոչված խորհրդավոր անապատում, Հրաշկաբերդի[990] մոտ. այնտեղ կրոնավորություն անելով՝ մեռավ վեց հարյուր ութսուն թվականին[991]:

Ահա այսպես վերացավ Սյունիքի և Բաղքի իշխանությունը, եղավ Սիսակի տոհմի ու Սյունյաց նախարարության վախճանը, քանի որ բոլորը, որ կային շատ առաջ, Սմբատի և Սահակի ժամանակներում, ոմանք անզավակ մնացին, ոմանք անժամանակ մեռան, ոմանք էլ սպանվեցին ու գերեվարվեցին. մնացել էին միայն այս Գրիգորն ու Սմբատը[992], որոնք և այս ձևով վերացան:

Ծանոթագրություններ

951. Այսինքն՝ ընդհանուր 1103 թվականին: (էջ 277):
952. Խոսքը Սյունյաց Ստեփանոս 2-րդ եպիսկոպոսի մասին է, որը հաջորդեց Գրիգոր 4-րդին և աթոռակալեց 1116-1143 թթ.: Կյուրիկե 2-րդ թագավորի որդին էր: (էջ 277):
953. Սա 12-րդ դարի նշանավոր պատմիչ Մխիթար Անեցին է: (էջ 277):
954. Այսինքն՝ ընդհանուր 1076 թվականին: (էջ 278):
955. Այսինքն՝ ընդհանուր 1092 թվականին: (էջ 278):
956. Այսինքն՝ 1099 թվականին: (էջ 278):
957. Ընդհանուր 1103 թվականին: (էջ 278):
958. Ըստ այս նկարագրության՝ Կապանի շրջակայքում եղած բարձրադիր տեղերից մեկն է: (էջ 278):
959. Հմմտ. ծան. 228: (էջ 278):
960. Այսինքն՝ ընդհանուր 1104 թվականին: (էջ 279):
961. Որոտն բերդի մասին տես ծան. 54: (էջ 279):
962. Այսինքն՝ ընդհանուր 1105 թվականին: (էջ 279):
963. Բղեն բերդի մասին տես ծան. 46: Այլև հմմտ. ծան. 717: (էջ 279):
964. Բղեն գավառի այս Խոսրովիկ իշխանը, որ գերի է տարվել սելջուկ-թուրքերի կողմից, միայն այստեղ է հիշատակվում: (էջ 279):
965. Տես ծան. 27: (էջ 279):
966. Գեղի բերդը մտնում է Ձորք գավառի մեջ: Այժմ Ղափանի շրջանի տարածքում է: (էջ 279):
967. Կաքավաբերդը Արևիք գավառի (այժմյան Մեղրու շրջանի) տարածքում էր: Նրա ավերակները գտնվում են Մեղրագետի ակունքների շրջանում (Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 64): (էջ 279):
968. Շլորուտը Ձորք գավառում էր: Հմմտ. ծան. 41: (էջ 279):
969. Անունը պահպանվել է համանուն ավանի վրա՝ այժմյան Մեղրու շրջանում: (էջ 279):
970. Այժմ էլ երևում են բերդի ավերակները Մեղրի ավանի հյուսիսային մասում: (էջ 279):
971. Գրիամը գտնվում էր Կովսական գավառի տարածքում (այժմյան Ղափանի շրջանում): Հմմտ. նաև ծան. 39: (էջ 279):
972. Սա Բաղաց Գրիգոր 2-րդ թագավորն է: Գահակալել է Սենեքերիմ 1-ին թագավորից հետո: 12-րդ դարի գործիչ է: Վախճանվել է 1166թվականին: (էջ 279):
973. Այս Սմբատը, որ նույն Գրիգոր 2-րդ թագավորի եղբայրն էր, մեռավ նույն՝ 1166 թվականին: (էջ 279):
974. Բաղաց Գրիգոր 2-րդ թագավորի դուստր այս Կատան ամուսնացած էր Հասան իշխան Սակոյանց Խաչենացու հետ: Քանի որ Գրիգորը արու զավակ չուներ, և եղբայր Սմբատն էլ նույն տարում մեռել էր, իշխանությունն անցավ իր փեսա Հասան իշխանին, որը թուրքերի կողմից Բաղաբերդի գրավումից առաջ կնոջ հետ փախավ Խաչեն (1170 թ.): (էջ 279):
975. Այսինքն՝ ընդհանուր 1116 թվականին: (էջ 279):
976. Խոսքը Գրիգոր 4-րդ եպիսկոպոսի մասին է, որն աթոռակալել է 1058-1116 թթ.: (էջ 279):
977. Այսինքն՝ ընդհանուր 1126 թվականին: (էջ 279):
978. Բաղակաքարը, Բաղակի քարը կամ Բաղակու քարը գտնվում էր Ձորք գավառում (այժմյան Ղափանի շրջանում): Հմմտ. ծան. 34, 35: (էջ 279):
979. Այսինքն՝ ընդհանուր 1151 թվականը: (էջ 279):
980. Այսինքն՝ ընդհանուր 1157 թվականին: (էջ 279):
981. Այսինքն՝ ընդհանուր 1170 թվականին: (էջ 279):
982. Կկոց քարը (կամ Կկվո քարը) Բաղք (Ձորք) գավառի ամրոցներից էր: Գտնվում էր Բաղաբերդի մոտ, բարձր լեռան ժայռապատ գլխին, Գիրաթաղ գետակի ձախ կողմում (այժմյան Ղափանի շրջանում): (էջ 279):
983. Այստեղ պատմիչը համեմատություն է կատարում Երուսաղեմի հետ: Բաբելական թագավոր Նաբուգոդոնոսորը, որ սկսել էր թագավորել մոտ մ.թ.ա. 600 թվականին, մի շարք նվաճումներից հետո հարձակվում է հրեաների երկրի վրա, գերության է տանում բազմաթիվ մարդկանց, այդ թվում՝ և Հովակիմ թագավորին, Երուսաղեմի կենտրոնական տաճարի կողոպուտն է կազմակերպում, թանկարժեք իրերը տեղափոխում է Բաբելոն (Դ. Թագ., ԻԴ, Բ Մնաց., ԼԶ): (էջ 280):
984. Պարսկաստանի թագավոր Կյուրոսը մ.թ.ա. 558 թ. նվաճում է Բաբելոնը, գերությունից ազատում է հրեաներին ու վերադարձնում իրենց երկիրը: Պատմիչն այստեղ իր համեմատության համար օգտագործել է հրեաների դարձի այս փաստը: (էջ 280):
985. Սա Շամսադդին Ելտկուզ աթաբեկն է, որը Իրաքի սելջուկյան սուլթանության աթաբեկներից էր: 1147 թվականին Ատրպատականում և այլ նահանգներում հիմնադրել էր Ելտկուզյան ամիրայությունը: Իշխել է 1147-1175 թթ. (հմմտ. Ս.Վ. Բուռնազյան, «Հայաստանը և սելջուկները 11-12-րդ դդ.», Երևան. 1980, էջ 222): Հայտնի է իր ասպատակություններով: (էջ 280):
986. Այս դեպքում տաճիկ անվան տակ պատմիչը նկատի ունի սելջուկ-թուրքերին: (էջ 280):
987. Հմմտ. ծան. 974: (էջ 280):
988. Այսինքն՝ ընդհանուր 1166 թվականին: (էջ 280):
989. Նկատի ունի Վայոց ձորի Ամաղու գյուղից վեր գտնվող Նորավանքը: (էջ 281):
990. Ինչպես երևում է շարադրվածից, Հրաշկաբերդը (Հրասեկա բերդը) գտնվում էր Ամաղուի Նորավանքի մոտ: (էջ 281):
991. Այսինքն՝ ընդհանուր 1231 թվականին: Ղ. Ալիշանը «Սիսական»-ում նախ նշում է Համտուն 2-րդի մահվան այս թվականը (էջ 17), ապա փոփոխում և դարձնում է 1157 թվական (էջ 184). տես նաև նույն գրքի էջ 274-ի տողատակի ծանոթությունը: (էջ 281):
992. Հմմտ. ծան. 972, 973: (էջ 281):

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ,
«ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
ԵՐԵՎԱՆ, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»,
1986

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«...Ոչ միայն զորավոր էր Բաղաց բերդը, այլև ինքնըստինքյան ամուր էր Կապանը»

Հատված Ղևոնդ Ալիշանի «Սիսական» կոթողային գործից

11-րդ դ. վերջից 12-րդ դարի կեսերը Այունյաց թագավորության նվազման ժամանակ իշխանական փայլով աչքի է ընկնում Բաղքի Համտունյանների տոհմը, որի մեջ առաջինը Մեծ Համտուն հորջորջվածն է, իսկ նրա որդի Հասանը 12-րդ դարի սկզբում կոչվում է «Բաղաց մեծափառ իշխան, որ իր ձեռքերի մեջ պահում էր թագավորության բոլոր ազատներին»: Սրա որդին և ժառանգորդը Համտուն Բ-ն է և մյուս որդին՝ Հովհաննավանքի Հովհաննես եպիսկոպոսը, ով և աշխարհի ավերման պատճառով գնաց Վայոց ձոր և կառուցեց հռչակավոր Նորավանքը, ուր և առանձնացավ նաև իր եղբայրը՝ Համտունը, հրաժարվելով աշխարհից, և «այնտեղ կրոնավորելով նույն վայրում վախճանվում է ՈՁ (1231) թվականին»[21]:

Այլազգիները 1104թ. գրավեցին Այունյաց թագավորության ամրոցը՝ մայրաքաղաք Կապանը[22] ու մի առ մի մյուս ամրոցները և ապա թագավորության հզորագույն ամրոցն ու ապաստարանը՝ Բաղաբերդը 1170 թ.:

Բայց թագավորը կանխազգալով՝ փախչում է իր հայրենի Խաչեն, որով և վերացավ, կամ ըստ պատմիչի, մարեց նաև հայկական հարստության այս ջահը, և երկիրը Այունիքի մյուս գավառների նման կոխան և որս դարձավ օտարներին՝ չվայելելով ազատությունը, որ նվաճեցին նրանցից ոմանք՝ աշխարհակալ, աշխարհաշեն Զաքարյանները:

Բաղաց թագավորների իշխանության (որի սահմանները վերը հիշատակեցինք) ժամանակ, ըստ պատմիչի, կային 2000 կամ 1008 կամ ըստ այլ գրչագրերի ու Վարդան ավագագույն պատմիչի՝ 1400 գյուղ, 43 բերդ, որոնցից անվանի էին 12-ը և 48 վանք:

* * *

Ձորք-Կապանը եղավ վերջին խորհրդարանը Այունյաց թագավորական տան և թերևս հայ թագավորների վերջին գահը բնիկ Հայաստանում: Բոլոր կողմերից շրջափակված է վերոհիշյալ գավառներով՝ սահմանակցելով Կովսականին՝ արևելքից, Բաղքին՝ հյուսիս-արևմուտքից, Ծղուկին՝ հյուսիս-արևելքից, Երնջակի Պելև տարածքին՝ արևմուտքից և Արևիքին՝ հարավից: Ամբողջ երկիրը լեռնային և անտառային մի հովիտ է Կապան գետի համար, որ Չավնդուրին է միանում աջից, որին և խառնվում է Կովսականի սահմաններում: Ունի իրեն միացող գետակներ՝ աջից՝ արևելյան կողմից՝ փոքրիկ [գետակ], ձախից՝ արևմտյան կողմից՝ երկարը, որ Գեղվաձորի գետակն է: Հյուսիսային կողմից Ծղուկի տարածքի մեջ մտնող Լորաձորի և Տաթևի լեռների թիկունքից ընդունում է ոչ քիչ վտակներ, որոնցով և քաջապես ճշմարտվում է գավառի Ձորք անվանումը: Գեղվա գետակի աղբյուրները Ղազանգյոլի նշանավոր լեռներում են, որոնք գտնվում են Ձորքի և Պելևի մեջտեղում, որից սկսած դեպ հարավ արևելախառն գնալով՝ հիշյալ տարածքի Գողթան գավառի մեջտեղում են Ձորք գավառի հաջի դաղ [լեռը] ու բովանդակ Այունիքի լեռներից բարձրագույնը, և, ինչպես կարծվում է, հայոց երկրի բարձրագույն գագաթներից մեկը՝ Կապուջուղ կամ Ղափուջիղ (Կապուտջիղ) լեռն՝ իր որձաքար զույգ կատարներով՝ 12060 ոտնաչափ, որի հարավակողմում գտնվում է Այրայքալի (Արագլի՞) սրագագաթ լեռնասարը: Այսքան քիչ բան է ինձ հայտնի երկրի բնական դիրքի վերաբերյալ, որ հանքային և այլաբնույթ բարիքի չգոյության դեպքում իսկ արժանի էր քննության, գոնե տվյալ տարածքում տեղի ունեցած քաղաքական և ազգային անցուդարձի պատճառով՝ նկատի ունեմ Կապան քաղաքի և Բաղաբերդ ամրոցի՝ իբրև Այունիքի թագավորների վերջին բնակարան և նրանց խլյակների մեծահռչակ գահ լինելը:

Աներկբայելի է, որ այս աշխարհի շինության և բնակության սկզբում Բաղակ նահապետը, որից է Բաղաց գավառի անունը, այստեղ հաստատեց կամ կառուցեց իր բույնը՝ Բաղակի քարի վրա, որ հետո Բաղաբերդ կոչվեց, և դարձավ վերջին ապաստանը Այունյաց իշխանների: Եվ Չավնդուրի ամբողջ գոգահովիտը նրա տոհմին վիճակվեց: Այն հետո բաժանվեց երեք կամ չորս գավառի՝ Բաղք-Աճանան, Բաղք-Քաշունիք, Կովսական և Ձորք[69]: Վերջինը՝ բոլորից փոքրը, մյուսներից ավելի մեծարվեց թագավորական գահով, շնորհիվ իր ամրությունների, մինչև որ հետնորդները Ձորքի արքաներ կոչվեցին, և նրանց ամուր քաղաքի պատճառով ամբողջ գավառը Կապան անվանվեց 11-12-րդ դդ. և մինչև այժմ էլ նույնպես է անվանվում՝ միայն թե աղավաղ Ղափան ձևով: Բայց այս անունով [գավառի] սահմաններն ընդարձակորեն ձգվում են Կովսականի և Չավնդուրի գետահովտի մեծ մասի վրայով, որ նշանակում է վերադարձ Բաղակի տոհմի վաղնջական սահմաններին:

Ստույգ հայտնի չէ, թե երբ են Այունիքի թագավորներն իրենց աթոռը հաստատել գավառի ամրոցներում՝ Ծղուկի և Վայոց ձորի կողմերից տեղափոխվելով [այնտեղ], բայց հայտնի է, որ 11-րդ դարից մինչև 12-րդ դարի կեսն այնտեղ էին նստում, նաև Սենեքերիմի ժամանակ՝ 1070թ., քանի դեռ «Կապանի գավառնե-

րը շեն էին», ըստ պատմիչի, ով դրանով ճանաչում է ժամանակի Սյունյաց թագավորությունը՝ հիշատակված այն տասը գավառով և հինգ գավառին պատշաճող չորս բերդով, որոնք են Ծղուկքը, Ձորքը, Արևիքը և Կովսականը: Եվ ոչ մի տեղ չեն հիշվում Հաբանդը և Բաղքը, որոնց տիրում էին սկզբից: Եվ այդ թվականից հետո այլազգիները սկսեցին աստիճանաբար նվաճել գավառը և բերդերը ու ամենավերջում՝ 1170 թ., հզոր Բաղաբերդը, որից մի տարի առաջ իր հայրենի երկիր Խաչեն էր հեռացել վերջին արքան՝ Հասանը: Եվ այդ կողմերում իսպառ վերացավ Սյունիքի արքունական և արքունավայել իշխանությունը՝ անմոռաց թողնելով «Կապան» անունն իբրև հզոր վայրի խորհրդանիշ՝ նաև լեռների դժվարանցանելի կիրճերով, որոնցով հարկադրված են անցնել այդ տարածքով և Արևիքով երթևեկողները: Ու թերևս նեղ կածանների պատճառով բարձրագագաթ այն լեռն ըստ իմաստի Կապուտջուղ կոչվեց (Դռնակ), որովհետև ճանապարհներն անցնում են այն տեղով, ինչպես արձանագրել է տեղանքը հետազոտող մի անգլիացի գիտնական: Չգիտեմ, թե ինչպես էր հնում անվանվում, որովհետև պետք է որ այդպիսի բարձրությունն իր սեփական անունն ունենար: Թագավորության վերացումից հետո, մանավանդ երկրի՝ այլազգիներին ոտնակոխ լինելուց հետո, հայ իշխանները ևս հեռացան ուրիշ գավառներ, ուր տակավին խաղաղության մեջ էին ազգակիցները: Մերձակա գավառների նման Ձորքը նմանապես անցավ և ընկավ թուրքերի ու թաթարների բռնությունների տակ, որոնց սերունդները ցարդ սփռված են այս կողմերում: Բայց ինչպես նույն մերձակա գավառներում, այստեղ ևս անշեջ մնաց ազգության կրակի կայծը մինչև մեր դարը...

* * *

Բաղաց բերդն ապաստանի մեկ այլ օրինակ դարձավ 10-րդ դարի կեսին Սյունյաց վեհասիրտ Հակոբ եպիսկոպոսի (Հովհաննես Ձ կաթողիկոսի եղբորորդու) համար, ով փախչում էր Անանիա Մոկացի կաթողիկոսից՝ իրեն պաշտպան ունենալով Բաղաց իշխան և այս բերդի տեր Ջվանշերին տասը տարի, մինչև իր մահը: Այս մասին լսելով՝ կաթողիկոսը եկավ Սյունիք և Տաթևի քանդված եպիսկոպոսարանը կառուցելու հրաման տալուց հետո «գնաց Կապան քաղաքը: Նրան ընդառաջ գնալով բանադրված Ջեվանշեր իշխանը՝ զղջումով խոստովանեց իր մեղքերը: Նույնպես և եկավ Սյունյաց գահընկեց իշխան Վասակը... և գեղեցիկ խոստովանությամբ մեղա եկավ: Այսպիսով միասին [կաթողիկոսից] իրենց հանցանքների համար ներում ստանալով՝ նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա»[78]: Այնտեղ ձեռնադրեց Ջվանշերի որդի Վահանին Սյունիքի եպիսկոպոս և վերցնելով հավատարմության գիրը՝ գնաց: Այս խոսքից երևում է, որ այն ժամանակ Կապան քաղաքը լոկ Բաղաց իշխանի նստավայր էր և դրանից հետո Սյունյաց նահապետների ոստանը դարձավ, երբ հասան թագավորության պատվին, և մտածում էին այն դարձնել խաղաղ մի վայր, և, հիրավի, սրանից ավելի ապահով վայր չկար, որովհետև ոչ միայն զորավոր էր Բաղաց բերդը, այլև ինքնըստինքյան ամուր էր Կապանն ի բնե և արվեստաշեն, որի հանգամանքները փոքր-ինչ ներկայացնում է պատմիչը՝ խոսելով այլազգիների կողմից նրա մատնության և ավերման չարաշուք դեպքերի մասին 11-րդ դարի վերջին կամ 12-րդի սկզբին, [որ կատարվեց] Մելիքշահ սուլթանի սիրելիի՝ թուրքերի Չորթման ամիրայի քինախնդրությամբ. [բանն այն էր], որ երբ մի անգամ Սյունիքի Սենեքերիմ թագավորը նրա մոտ էր, այդ այլազգին աղաչեց նրան իր դստերը կնության տալ իրեն: Թագավորը չհամաձայնեց, այլ լռեցնելու համար նրա թախանձանքները, երեսանց խոստացավ, իսկ նա ստույգ համարելով՝ պահանջելով էր խնդրում: Եվ թագավորի կողմից մերժվելով՝ թշնամացավ, ապա Մելիքշահի և Բերկիարուխի մահից հետո՝ թափանցելով Սյունիքի սահմանները, սկսեց ավերել երկիրը, քանդել ամրոցները, և, ինչպես երևում է, սադրեց Գանձակի Փաթլուն ամիրային, և սրա հրամանով Շիրակի Գրիգոր Ապիրատյան իշխանը[79] Առանի ամբողջ զորքով եկավ Բաղքի և Կապանի ամրոցների մոտ, և «խաբեությամբ հնարքով մտան ներս, և սպանելով Սենեքերիմ հայկազուն արքային... այնտեղ մարեց ճրագը[80]: Ըստ Օրբելյանի՝ Գրիգոր Ապիրատյանը խաբվելով և հարկադրվելով (Փաթլուն) ամիրայից, որ նրան համոզում էր սիրո պատրվակով հրավիրել Սենեքերիմին և եթե չհամաձայներ՝ [սպառնում էր] կտրել Գրիգորի գլուխը: Եվ երբ թագավորը միամտաբար եկավ, «իր պայմանը դրժեց, մռլտոցով հարձակվելով թագավորի վրա՝ սպանեց նրան, իսկ ինքն անցավ-գնաց իր աշխարհը...: Եվ եկան մեծամեծերն ու [սպանվածի] որդիները, մեծ լաց ու կոծ արեցին նրա վրա և վերցրին-տարան Վահանի սուրբ վանքը և այնտեղ գերեզման դրեցին ուրիշ թագավորների շիրիմների մոտ»: Մոտ տասը տարի անց (1103), ավելացնում է նույն պատմիչը, «մի օր, երբ քաղաքացիներն անհոգ դրության մեջ էին, Տերը [կորստյան] մատնեց մարդկանց համար անառիկ Կապան քաղաքը. անհիծյալ Չորթմանն իր վրեժը [լուծելու] համար անսպասելիորեն հարձակվեց քաղաքի վրա: Նախ՝ բազմաթիվ հետևակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը և հեղեղատի մեծ հունով[81] իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից, ապա բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր Խնձորոգլխին: Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությունն առհասարակ: Սակայն բերդի նկատմամբ ոչինչ չկարողացան ձեռնարկել և հետ դարձան իրենց տեղը: Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը, և այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ և ապա վերացավ», որովհետև այլազգիները մի առ մի գրավեցին բերդերը և ամենավերջում՝ 1170 թ., «բոլորի ապավեն և ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց Իսմայելի անիծյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետև խաբեական խոսքերով խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց, ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը[82], ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց և Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած արեց: Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթևի փարթամ ու հարուստ աթոռի անհամար և աննման սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե և արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով: Այնտեղ ամբարված էին շատ կտակարաններ՝ թվով ավելի քան տասը հազար: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին և ցիր ու ցան եղան երկրի երեսին... Ապա մինչ Տերը մեզ դատապարտեց ու կամենում էր օրեցօր ոչնչացնել, մյուս բերդերն ու ամրոցներն ինքնակամ հանձնվեցին Ելտկուզ աթաբեկին[83], և ամենուրեք տիրեց տաճիկը»[84]: Բայց Սյունյաց թագավորների վերջին ժառանգներից Հասան Խաչենեցին, որ փեսայացել էր Գրիգոր թագավորի (+ 1166թ.) դուստր Կատային, բերդի գրավումից առաջ իր կնոջ հետ փախավ՝ ապահովություն գտնելով իր հայրենի Խաչենում: Թեպետ շատ չանցած աշխարհաշեն Զաքարյանները տաճիկներից «հերթով խլեցին աշխարհը՝ Կայենից մինչև Բաղաբերդ» և երկրի համար քիչ դյուրին չեղավ Օրբելյանների ժառանգորդության ժամանակ 13-րդ դարում: Բայց Կապանը և Բաղաբերդն այլևս չեն հիշվում, որովհետև երկրի ազատներն արքայազունների հեռանալուց հետո, ցրվելով գնացին տարբեր կողմեր՝ Համտունյաններն ու Մահևանյանները. Բաղաբերդի անունը մնաց և այսօր էլ մնում է լոկ իբրև վիճակ:

Ծանոթագրություններ

21. Օրբելյան, ԿԴ: Հայտնապես վրի-

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի թագավորության կազմավորումը, անունը և սահմանները



ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

10-րդ դարի երկրորդ կեսին՝ Բագրատունյաց թագավորությունը, ինչպես հայտնի է, մի շարք ներքին և արտաքին պայմանների շնորհիվ մասնատվեց երեք մասի՝ Անի-Շիրակի, Կարսի կամ Վանանդի և Լոռու կամ Տաշիր-Ձորագետի: Դրանից դեռ շատ առաջ Բագրատունիների մի ճյուղը հաստատվել էր Տայքում (հավանաբար Բյուզանդիայի հովանավորությամբ)՝ կազմակերպելով կյուրապաղատություն:

10-րդ դարի առաջին տասնամյակում (908/909 թ.) Վասպուրականի Արծրունյաց իշխանները, Ատրպատականի Յուսուֆ էմիրի անմիջական համաձայնությամբ և օժանդակությամբ, հիմնադրեցին իրենց թագավորությունը:

Բացի այս համեմատաբար խոշոր տերություններից, Հայկական լեռնաշխարհի տարբեր անկյուններում՝ կային բազմաթիվ հայկական մանր իշխանություններ, որոնք, անգամ սելջուկների արշավանքներից հետո, տեղ-տեղ պահպանեցին իրենց գոյությունը[1]:

Այդպիսի մանր իշխանություններ էին հաստատվել նաև լեռնային Արցախում, որը, մոտավորապես այդ ժամանակներից սկսած, հայտնի է դառնում Խաչեն անունով: Նրա հարավային մասում հաստատվել էր Աբու-Մուսեի փոքրիկ թագավորությունը, իսկ Վերին Խաչենում և նրա սահմանակից Փառիսոս գավառում՝ մի քանի այլ «արքայիկների հարստություններ»[2]:

10-րդ դարի երկրորդ կեսին Սյունյաց աշխարհում ևս կազմավորվում է մի թագավորություն: Նրա հիմնադրման ճշգրիտ թիվը հայտնի չէ: Օրբելյանն իր պատմության մեջ, ուր մի գլուխ (ԾԹ) ամբողջովին նվիրել է Սյունյաց թագավորների մասին տեղեկություններ հաղորդելուն, թագավորության կազմավորման թվականի մասին ոչինչ չի հիշատակում: Ենթադրվում է, որ այդ թագավորությունը հիմնադրվել է մոտավորապես 970 թվականին[3]: Առաջին թագավորի մասին Օրբելյանը գրում է. **«Արդ առաջին թագաւորեաց ի Սիսական աշխարհս արին և քաջն,** 28

պակներ կան թվերի մեջ, որովհետև սկզբից ասում է Հովհաննավանքում Հովհաննի եպիսկոպոս լինելու մասին ՇԾԴ (1105) թվին և նրա մահը դնում է ՈԿԳ թվին (1214), որ 110 տարի հետո է, իսկ եղբոր մահը՝ ևս 17 տարի հետո. բայց եպիսկոպոսը մահացել է հավանաբար 1164 թ., իսկ Համտունը՝ 1181-ին:

22. [Կապանը նվաճվեց 1103 թ. Մելիք-շահի երբեմնի մատռվակ Չորթմանի հրոսակախմբերի կողմից. տես Գ. Գրիգորյան, Նշվ. աշխ., էջ 207-208]:
69. Մեր հին պատմիչ Բուզանդը 4-րդ դարի երկրորդ կեսին հիշատակում է Ձորոց աշխարհի Գորութ իշխանին [Գ դպ., ԺԲ], որի անունը և նրան կից Գողթնյաց իշխանի հիշատակումը ենթադրել են տալիս, թե ակնարկը վերաբերում է այս գավառին, բայց քանի որ նրանց հետ հիշվում է նաև Կողբի իշխանը, հարկ է նրանց հետ այստեղ հիշված Ձորքը համարել Գուգարաց Ձորոփոր գավառը, թեպետ և չափազանց է թվում երկուսը միասին ընդարձակորեն աշխարհ անվանել: Ինչպես երկու տեղի Ձորք անունն անստույգ է դարձնում [անվան] հիշատակումը, նույնն էլ Կապանի [պարագան] է, որովհետև Փոքր Հայքում էլ համանուն քաղաք կա, և չգիտեմ, թե որտեղի՞ց էր Տիրանուն իմաստասեր վարդապետ Կապանեցին 11-րդ դարում [տես Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունն ու ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Եր., 1973, էջ 69, 118]:
78. [Օրբելյան, ԾԲ]:
79. Վարդանը (ԾԹ) և Մխիթար Այրիվանեցին Գրիգորի փոխարեն ասում են Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ:
80. [Օրբելյան, ԾԲ]:
81. [«Եվ իջին ընդ մեծաւարի»] բառերի վերաբերյալ Ալիշանը ծանուցում է]. Այսպես է գրված գրքի օրինակներից մեկում. ինչը քննելի է, բայց, թվում է, մատնացույց է անում հեղեղատի հունը կամ ձորը և կամ ակնարկում է վարարուն և շատաջուր լինելը:
82. [Կկոց քարը կամ Կկվո քարը Բաղք (Ձորք) գավառի ամրոցներից մեկն էր: Այն գտնվում էր Բաղաբերդի մոտ, բարձր լեռան գլխին, Գիրաթաղ գետակի ձախակողմում. Կապանի շրջանում. տես Ս. Օրբելյանի «Սյունիքի պատմության» Ա. Աբրահամյանի ծնթ. 982, էջ 488-489]:
83. [Սա Շամսադդին Ելտկուզ աթաբեկն է, որն Իրաքի սելջուկյան սուլթանության աթաբեկներից էր: Ատրպատականում և այլ նահանգներում 1147թ. հիմնադրել էր Ելտկուզյան ամիրայությունը: Իշխել է 1147-75թթ.: Հայտնի է իր ասպատակություններով. տես Ա.Աբրահամյանի ծնթ. «Սյունիքի պատմություն», էջ 489, ծնթ. 985]:
84. [Օրբելյան, ԿԲ]:

ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԽՄԲԱԳՐՈՒՄԸ՝ ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ (ԷՋԱՆԱՆՑՈՒ)

ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Կ հզօր և բարեպաշտ արքայն Սմբատ՝ որդի Սահակայ՝ եղբօրն Սմբատայ, որք էին որդիք բարեպաշտին Աշոտոյ՝ եղբօր մեծին Վասակայ որ Իշխանիկ կոչիւր. և սոքա որդիք երանելւոյն Փիլիպպէի՝ եղբօր Սահակայ որ ի Դվին սպանաւ ի պատերազմին Հաւլայ ամիրային, որդիք Վասակայ՝ մեծ նահապետին Սիւնեաց»[4]:

Ինչպես տեսնում ենք, առաջին թագավորը Սահակի որդի Սմբատն էր: Սահակը, ինչպես և իր եղբայր Սմբատը, Այունյաց գահերեց կամ գահագլուխ իշխանական տան սերնդից էին: Էմիրի այն կարծիքը, թե «Կապանում նստողը (Կապանում նստող թագավորը-Թ. Հ.) Գեղարքունիքի Հայկազուն իշխաններից էր»[5], պարզապես թյուրիմացության արդյունք է: Թվում է, թե Էմիրի մոտ այդ սխալը առաջացել է Վարդան վարդապետի հետևյալ հիշատակությունից. **«Ի հինգ հարիւր քառասուն և երեք (1094 թ.) թուին առաքեաց Փատլուն ամիրայն Գանձակայ զՎասակ Պահլաւ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, ամենայն զօրօքն Առանայ, յանառիկ յամուրսն Բաղաց և Կապանին, որ և խաբէութեամբ հնարեալ մտին անդր. և սպանեալ զՍենեքերիմ արքայն Հայկազնի, զի թագաւորքն որ անդ՝ հայկականք էին. և ոչ բարձաւ մինչ ի յետին աւուրս եղելոյ երկուց եղբարց անզաւակաց, Սմբատայ և Գրիգորոյ, որ առեալ զմանուկն Սենեքերիմ հայազարմ՝ եդին թագաւոր ժառանգորդ իւրեանց. զոր և սպանեալ հրամանաւ Փատլնոյ շիջաւ ճրագն որ անդ, և տիրեցին Պարսք»**[6]: Սրանից, սակայն, բնավ չի կարելի եզրակացնել, թե Սենեքերիմը Գեղամա լճի ավազանում տիրող Հայկազուն իշխանների սերնդից էր: Հավանաբար պատմիչը Սենեքերիմ արքային «Հայկազն» է անվանում միայն ցույց տալու համար, որ նա հայ էր, Հայկի սերնդից:

Այունիքում ստեղծված թագավորությունը տարբեր պատմիչների մոտ տարբեր կերպ է անվանվում: Մատթեոս Ուռհայեցին անվանում է «թագաւորն Կապանին»[7]: Այդ նշանակում է, որ պատմիչին թագավորությունը հայտնի է եղել նրա մայրաքաղաքի՝ Կապանի անունով: Վարդան վարդապետը չի հիշատակում թագավորության անունը, սակայն նրա անուղղակի ակնարկներից պարզ երևում է, որ նրան նույնպես թագավորությունը հայտնի էր Կապան մայրաքաղաքի անվամբ[8]: Այունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, որն ավելի տեղյակ է և ավելի շատ վկայություններ ունի Այունիքում ստեղծված թագավորության մասին, այն երբեմն անվանում է «Բաղաց», երբեմն էլ «Սիւնեաց», իսկ ամենից հաճախ՝ «Սիւնեաց և Բաղաց»:

Նկատի ունենալով, որ Կապանը մինչև վերջ չի մնացել որպես մայրաքաղաք, մենք ճիշտ ենք համարում՝ թագավորությունը կոչել Այունիքի կամ «Այունյաց և Բաղաց» թագավորություն:

Այունյաց թագավորության գրաված տերիտորիայի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները չափազանց անորոշ են:

Այունյաց թագավորությունը, կազմավորված լինելով Այունիք աշխարհում, իր գրաված տերիտորիայով, բնականաբար, պետք է համապատասխաներ կամ ամբողջ Այունիք աշխարհին, կամ թե, համենայն դեպս, նրա մի մասին:

Աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ թագավորության կազմավորման հենց սկզբից էլ նրա տերիտորիայից դուրս է մնացել Գեղամա երկիրը (Գեղարքունիք և Սոտք գավառները): Մեր այդ եզրակացությունն անառարկելի դարձնելու համար բերենք մի քանի փաստեր:

Օրբելյանը Այունյաց թագավորության հիմնադրման մասին գրում է.

«Եւ զի յայնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ. զի թէ Բագրատունիքն (որք) գերութեամբ իմն ածեալ էին Հրաչէէ՝ այնմ արժանի գտան, ապա քանի՞ ևս առաւել սոցա անկ էր որ ի Հայկայ երևելի հարազատութեամբ որդիք զհարս փոխանակելով՝ բնիկ տէրութեամբ՝ եկեալ, հասեալ էին մինչև ցայժմ: Արդ՝ թագ կապեալ Սմբատայ ճոխ և երևելի փառօք յարդարէր զարքայութիւնն ըստ օրինի ինքնակալ թագաւորաց»[9]:

Պատմիչը Այունյաց Սմբատ իշխանի անջատվելը և առանձին թագավորություն հիմնադրելը արդարացնելու համար ունի աչառու վերաբերմունք, ինչպես նշում է պրոֆեսոր Մ. Աբեղյանը[10]:

Նա Բագրատունյաց թագավորների տիրապետության շրջանների արևելյան սահմանը հասցնում է մինչև Գեղամա լեռները և Սմբատ իշխանի կենտրոնախույս գործողությունները արդարացնում նրանով, որ իբր Այունիքն անջատված էր Բագրատունիներից: Բերված վկայությունը, եթե իրոք միտումնավոր չլիներ, ապա առանց սխալվելու պետք է ասեինք, որ Գեղամա լճի շուրջը գտնվող գավառները կազմեցին Այունյաց թագավորության մասը: Սակայն հարցն ավելի պարզվում է, երբ դիմում ենք Օրբելյանի այն վկայություններին, որոնցում նա առանձին շահագրգռվածություն չուներ

Թադևոս Հակոբյան, «Այունիքի թագավորությունը», Երևան, 1966

կեղծելու իրական փաստերը: Այունյաց թագավորության վերաբերյալ խոսելիս նա որևէ ակնարկ չունի այն մասին, թե Գեղարքունիքն ու Սոտքը երբևէ եղել են թագավորության տերիտորիայի մեջ մտնող շրջաններ:

Թե՛ Վարդան վարդապետը և թե՛ Ստ. Օրբելյանը նշում են թագավորության մեջ մտնող մի շարք բերդեր[11], որոնցից և ոչ մեկը չէր գտնվում Գեղամա երկրում:

Ասողիկը, որ ժամանակակից էր Գագիկ Առաջինին, գրում է. **«Իսկ Գագիկ յաւուրս մանկութեան իւրոյ յորժամ շրջէր նա ի գաւառին Գեղամայ՝ տայ նմա (Սարգիս վանականին - Թ. Հ.) տեղի և վանս բնակութեան զվանսն, որ յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածայնոյ՝ Շողագայ անուանի: Եւ ապա ի թագաւորիլն բոլոր Հայաստանեայցս՝ դարձեալ ի նոյն տեղի սննդեան իւրոյ, ի վանս Սևանայ օծեալ՝ զհայրութեան և զառաջնորդութեան պատիւն նմա տալ: Որ և ամենայնիւ յամենայնի ընտիր գտեալ բարւօք վերակացութեամբ՝ հաճոյանար Աստուծոյ և մարդկան»**[12]: Ինչպես երևում է, 10-րդ դարի երկրորդ կեսում Բագրատունյաց թագաժառանգ Գագիկը մանկության հասակում Գեղամա երկրում շրջելիս Սարգիս վանականին տալիս է բնակութ-

յան տեղ: Դրանից դժվար չէ եզրակացնել, որ Գեղամա երկիրը (Գեղարքունիք և Սոտք գավառները) պատկանում էր Անի-Շիրակի Բագրատունյաց թագավորներին. այլապես Գագիկը չէր կարող այդ երկրից որևէ տեղ նվիրել այս կամ այն անձնավորությանը:

Մենք նախորդ գլխում տեսանք, որ 10-րդ դարի առաջին քառորդում Սյունյաց գահերեց իշխանական տան Սմբատ, Սահակ և Բաբգեն իշխանները, որոնք եղբայրներ էին, ամբողջ Սյունիքը, առանց Գեղամա լճի շուրջը գտնվող գավառների, բաժանել էին իրար մեջ: Սմբատին բաժին էր ընկել Վայոց ձոր և Ճահուկ գավառները, իսկ Սահակին և Բաբգենին՝ Ծղուկքը, Բաղքը և դրանց շուրջը գտնվող մյուս գավառները:

Այդ իշխանների կատարած գործերի և վախճանի մասին Սյունյաց տան պատմիչ Օրբելյանը ունի մի քանի հիշատակություններ, որոնցից մեջ բերենք հետևյալը. **«Իսկ Սմբատայ եղբայրն կրտսեր Վասակ մեռանի ի պատերազմին Գողթան ամիրային առ ամրոցին Երնջակայ. և ինքն Սմբատ առեալ զգահերէց իշխանութիւնն՝ բազում՝ ցուցեալ գործ գովելի հոգևոր և մարմնական վախճանի և թողու ժառանգ իւրոյ պայազատ տէրութեանն զորդի իւր Վասակ: Իսկ Սահակայ՝ եղբօր Սմբատայ, էր որդի Սմբատ անուն. մեռանի Սահակ և առնու զիշխանութիւնն իւր Սմբատ որդի իւր: Էր եւ ի Բաղս իշխան մի ի սոյն ցեղէ Ջեւանշէր անուն՝ որդի Ձագկայ իշխանին»**[13]: Քիչ հետո նա շարունակում է. **«Մեռանէր և Սահակն. դնէր ի դրան Նորատուսայ եկեղեցւոյն: Իսկ Վասակ՝ որդի Սմբատայ, յետ բազում իշխանութեանց և գովելի գործոց մեռանի. և տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ, գահերէց իշխանութեամբ»**[14]:

Բերված վկայության մեջ ասված է, որ Սյունյաց գահերեց իշխան Սմբատի մահից հետո (Ալիշանի հաշիվներով նա մահացել է 958 թ., «Սիսական», էջ 16) նրան հաջորդեց իր որդի Վասակը: Վերջինիս իշխանությունը տևում է մոտ հինգ տարի[15]: 963 թ. նրան հաջորդում է Սահակի որդի Սմբատը՝ գահերեց իշխանի իրավունքներով, տիրելով ամբողջ Սյունյաց աշխարհին: Բայց այդ վկայությունը որոշակի պատասխան չի տալիս այն հարցին, թե Վայոց ձորն ու Ճահուկը, որ բաժին էին ընկել Սմբատին, իսկ նրանից հետո էլ՝ նրա որդի Վասակին, նույնպե՞ս անցան Սահակի որդի Սմբատին, թե վերջինս Վասակի մահից հետո, ձեռք բերելով գահերեց իշխանի պատիվը, շարունակեց իշխել միայն Ծղուկք, Բաղք և սրանց շուրջը գտնվող գավառների վրա, որոնք կազմում էին հոր՝ Սահակի սեփականությունը, իսկ նրա մահից հետո անցան իրեն:

Սակայն պարզ է, որ երբ 963 թ. Սմբատը կարգվեց Սյունյաց թագավոր, Վայոց ձոր և Ճահուկ գավառները մտան նրա տիրապետության մեջ:

Ավելի ուշ շրջանին պատկանող վկայություններն արդեն հաստատ կերպով ասում են, որ Վայոց ձորը, ամենայն հավանականությամբ նաև նրա սահմանակից Ճահուկը, գրավվեց Գագիկ 1-ի (989-1020) կողմից: Ասողիկը, որ ժամանակակից էր Գագիկ թագավորին, այդ մասին հաղորդում է. **«Եւ տիրեաց նա (Գագիկը-Թ. Հ.) յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր. և ոչ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայսս մինչև ցօր գրելոյ իմոյ զբան յիշատակիս այսորիկ»**[16]:

Ասողիկը, ինչպես ինքն է ասում[17], իր պատմությունը գրել է 1004 թվականին: Իսկ Վայոց ձորը և Ճահուկը Գագիկի կողմից պետք է գրավված լինեին 1003 թվականից առաջ, որովհետև Ասողիկն իր պատմությունը վերջացնում է 1003 թ. դեպքերով, երբ Գագիկը բազմաթիվ բերդեր ու գավառներ էր գրավել Փառիսոսի և Խաչենի կողմերում[18]: Սրանց գրավումն անհնար կլիներ, եթե Գագիկը նախօրոք իր ձեռքը չվերցներ դեպի Փառիսոս ու Խաչեն տանող ճանապարհի վրա գտնվող Վայոց ձորը, նրա սահմանակից Ճահուկը, Ծղուկքի հյուսիսային մասն ու Աղահեճք գավառը:

Հետագայում, թագավորության գոյության ամբողջ ընթացքում, չկա որևէ հիշատակություն այն մասին, թե երբևէ Վայոց ձորն ու Ճահուկը միացված են եղել Սյունյաց թագավորությանը: Օրբելյանը լավ ծանոթ էր Վայոց ձոր և Ճահուկ գավառներին, սակայն նրա պատմության մեջ չկա որևէ ակնարկ դրանք թագավորության տերիտորիային միացնելու մասին: Թե՛ Օրբելյանի և թե՛ Վարդան վարդապետի հիշատակած պատմական վայրերը, որոնք այս կամ այն չափով կապված են եղել թագավորության պատմության հետ, գտնվում են միայն Ծղուկք, Ձորք, Արևիք, Կովսական, Բաղք և Հաբանդ գավառներում:

Թագավորության անկումից հետո (1170 թ.) որոշ իշխաններ ապաստան են գտնում Վայոց ձորում: Բերենք պատմիչի խոսքերը. **«Իսկ մնացեալ ազատքն Ջուրջն և Խոսրովիկն տղայ հասակաւ մեռան ի Նախջաւանի. և թաղեցան ի Ճահուկ և եղբօրորդի մի Ջուրջին գնաց փախստական ի քաղաքն Անի Մահևան անուն. և միւս իշխանն Համտուն որ էր որդի մեծ իշխանին Բաղաց Հասանայ, և թոռն աւագ Համտունայ, գնաց ի Վայոց ձոր առ փառաւորեալ եղբայրն իւր Տէր Յովհաննէս, որ բնակէր ի խորաձոր անապատին որ Նորավանս կոչի, մերձ Հրաշկաբերդոյն...»**[19]:

Բաղաբերդի գրավումից հետո Բաղաց Համտուն իշխանի՝ Վայոց ձորում ապաստան գտնելը ցույց է տալիս, որ վերջինս թագավորության՝ տերիտորիայի մասը չէր կազմում:

Նախորդ գլխում տեսանք, որ 10-րդ դարում Գողթնը, Նախիջևանը և Երնջակը չէին մտնում Սյունիքի մեջ: Դրանք, բնականաբար, դուրս էին նաև Սյունյաց թագավորության տերիտորիայի սահմաններից:

Այսպիսով, Սյունյաց թագավորությունից հյուսիս–արևմուտքում դուրս էին մնում նախկին Սյունյաց աշխարհի մասերը կազմող Գեղարքունի, Սոտք, Վայոց ձոր, Ճահուկ, Երնջակ գավառները, ինչպես նաև երբեմն նրա մեջ մտնող Նախիջևանն ու Գողթնը:

Այժմ հարց է առաջանում՝ ի՞նչ գծով էր անցնում արևմուտքում նրա սահմանը: Օրբելյանի մոտ հիշատակված Սյունյաց թագավորությանը պատկանող բերդերից ամենաարևմտյանները Կաքավաբերդ, Մեղրի և Շլորուտ բերդերն են[20]:

Կաքավաբերդի ավերակները գտնվում էին այժմյան Մեղրագետի ակունքների շրջանում: Մեղրի բերդի ավերակները նույնպես գոյություն ունեն և գտնվում են այժմյան Մեղրի ավանի հյուսիսային մասում, իսկ Շլորուտն էլ, ինչպես կտեսնենք Ձորք կամ Կապան գավառի մասին խոսելիս, համապատասխանում է այժմյան Վերին Հանդ գյուղի մոտ գտնվող տեղացիների անվանակոչությամբ «Շլրոտ» վայրին:

Հիշված բերդերը, մանավանդ նրանցից Մեղրին և Կաքավաբերդը, գրեթե կապած են Սյունյաց լեռների ջրբաժան շարին: Անկասկած՝ հենց Սյունյաց լեռներն էլ, որ ձգվում են միջօրեականի ուղղությամբ մինչև Երասխ, հանդիսացել են թագավորության գրաված տերիտորիայի արևմտյան սահմանը: Նրա սահմաններն այս մասում համընկնում են Արևիք, Ձորք և Ծղուկք գավառների արևմտյան սահմաններին[21]:

Ծայր հարավում թագավորության տերիտորիայի մեջ էին մտնում Արևիք և Գրհամ կամ Կովսական գավառները: Մեր այդ միտքը հաստատելու համար ունենք հետևյալ փաստերը. ա) Կաքավաբերդ, Մեղրի և Կարճևան բերդերը, որոնք հիշատակված են Վարդանի («Պատմութիւն տիեզերական», էջ 168) և Օրբելյանի («Պատմութիւն նահանգին Սիսական», էջ 335) մոտ, պատկանում են Արևիք գավառին: բ) Թագավորության անկման ժամանակների մասին խոսելիս Օրբելյանը գրում է. **«Ի 575 թուականին (1126 թ.) եկն ամիր Հարոնն և բնաջինջ արար զտուն Կապանին և**

զԱրևիՔ գաւառ... »[22]:

գ) Սյունյաց թագավորությանը պատկանող նշանավոր բերդերից էր Գրհամը[23]: Նախկին Կովսական գավառն այդ ժամանակներում կոչվում էր՝ գլխավոր բերդի անվամբ՝ Գրհամ (Օրբելյան, էջ 17):

Հիշված գավառների հարավային սահմաններն անցնում էին Երասխ գետով[24]: Նշանակում է՝ թագավորության հարավային սահմանը, Գողթն ավանից մինչև Աղավնո (Հագարի) գետի գետաբերանը, ևս կազմում էր Երասխ գետը:

10-րդ դարի առաջին քառորդում Սյունյաց իշխանները բուն Սյունիքը բաժանել էին իրար մեջ: Սահակ իշխանը ստացել էր արևելյան մասը՝ մինչև Հագարի գետը. **«...և զի հարթ և հաւասար վայելչութեամբ կային իշխանքն Սիւնեաց Սմբատ և Սահակ, և բաժանեալ էին զհայրենի ժառանգութիւնս աշխարհին, աւագն Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արևմուտս կողմն և զբոլոր Վայոց ձոր ունէր ի բաժնի. իսկ Սահակ՝ ընդ արևելս մինչ ի Հակարի. բայց փոքրիկն Բաբգէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի»**[25]:

Հայաստանում 10-րդ դարի առաջին քառորդի վերջերից սկսած համեմատաբար խաղաղ շրջանը վերաբերում է նաև նրա մի մասը կազմող Սյունիքին: Այդ խաղաղության հետևանքով Սյունիքն արևելյան կողմից մինչև 11-րդ դարի սկիզբը և դեռ նրանից հետո էլ տերիտորիալ փոփոխություններ չի կրել:

Այսպիսով, պարզվում է, որ Սյունյաց թագավորության գրաված տերիտորիայի սահմանն արևելքում ձգվում էր մինչև Հագարի գետը, որովհետև, ինչպես մենք սույն գլխի սկզբում տեսանք, թագավորությունը կազմավորվել էր Սահակ իշխանի բաժնում, որի սահմանն արևելքում անցնում էր Հագարի գետով:

Սյունյաց թագավորության արևելյան սահմանների վերաբերյալ մեր այդ ընդհանուր դիտողությունն անտարակուսելի դարձնելու համար դիմենք Ստեփանոս Օրբելյանի անուղղակի վկայություններին: Նրա մի ակնարկից երևում է, որ Բաղք գավառն ամբողջությամբ մտնում էր թագավորության տերիտորիայի մեջ. **«Եւ ի սուր սուսերի մաշեցան բազմութիւնք քրիստոնէից, և բնաւին յաւեր անցաւ տունն Բաղաց...»**[26]:

«Տունն Բաղաց» ասելով, անշուշտ, պետք է հասկանալ իշխանական տան հետ միասին նաև նրա գրաված տերիտորիան: Բաղաց տունը, տերիտորիալ իմաստով, ոչ այլ ինչ է, եթե ոչ ամբողջ Բաղքը, որն իր հերթին բաժանվում էր երկու գավառի՝ Աճեճի և Քաշունիքի, որոնց արևելյան սահմանն անցնում էր Հագարի գետով: Հետևապես և թագավորության տերիտորիայի սահմանը՝ Քաշունիք և Աճեճ գավառների ուղղությամբ, կազմում էր Հագարի գետը:

Բաղքից հյուսիս գտնվում էր Հաբանդ գավառը, որը համապատասխանում է գրեթե այժմյան Գորիսի շրջանին: Օրբելյանի հին վավերագրերից վերցված երկու հիշատակություններից դժվար չէ տեսնել, որ Հաբանդ գավառն ամբողջությամբ մտնում էր թագավորության տերիտորիայի մեջ: Ահա այդ հիշատակությունները. ա) **«Յանուն Աստուծոյ կամ եղև ինձ Շահանդխտոյ՝ դստեր Սևադայի, տալ ի Համբանդ գաւառի զանուանեալ շէնդ զՏեղ իւր ամենայն բոլոր սահմանովն, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք, զոր իմ թագաւորին Սմբատայ ինձ տուեալ էր, և իմ ի կորդոյ շէն դրեալ. և ես յետ ելից երանելի թագաւորին իմոյ յաստեացս՝ իւր հոգւոյն ի Տաթև ի սուրբ մայրաքաղաքն և ի սուրբ նշանն ետու ի ձեռն Տեառն Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի...»**[27]: բ) **«Իշխան մի Դլեն անուն՝ որդի Խաղբակայ, տայ իւր հայրենի ժառանգութեանցն զԽոտ գիւղն և զԽոտագետոյ մեծ այգին, եւ ի Վժանիս զԾաղկիկ որ է տեղի բազում անդաստանաց, վասն իւր հոգւոյն ի Տէր Յովհաննէս և ի սուրբ նշանն. և գրէ ինքեան կտակ վճռի...»**[28]:

Առաջին մեջբերումը վերաբերում է 998 թվականին և հանդիսանում է այն վավերագիրը, որ գրված է եղել Շահանդուխտ թագուհու հրամանով՝ իր որդի Վասակի ձեռքով: Երկրորդը՝ 1046 թվականին է վերաբերում:

Ինչպես տեսնում ենք, Տեղ և Խոտ գյուղերը մտնում էին թագավորության տերիտորիայի մեջ: Տեղը մինչև այժմ էլ գոյություն ունի, գտնվում է Հաբանդ գավառի հյուսիս-արևելյան մասում, գավառի սահմանագծին շատ մոտ և ոչ հեռու Հագարի գետից: Իսկ Խոտը, որը նույնպես այժմ կա, գտնվում էր Հաբանդի հարավ-արևմտյան մասում: Հետևապես՝ Հաբանդ գավառը մտնում էր Սյունյաց թագավորության մեջ: Ուրեմն թագավորության գրաված տերիտորիայի արևելյան սահմանը՝ Քաշունիք, Բաղք և Հաբանդ գավառների ուղղությամբ, անցնում էր Հագարի գետով:

Թագավորության հյուսիսային սահմանների վերաբերյալ մեր սկզբնաղբյուրներում տեղեկություններ չկան: Սյունյաց երկրի այդ մասը, որտեղ տարածվում էին Աղահեճք գավառն ու արևմուտքից նրան սահմանակից Ծղուկք գավառի հյուսիսային կեսը, առհասարակ քիչ է ծանոթ մեր պատմիչներին, այդ թվում և Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանին: Հյուսիսային սահմանի վերաբերյալ ուղղակի փաստեր չունենալու պատճառով ստիպված ենք բավարարվել չափազանց ընդհանուր դիտողություններով:

Աղահեճք գավառը տարածվում էր Հագարի գետի վերին հոսանքի շրջանում: Նա հարավում սահմանակից էր Հաբանդ գավառին: Աղահեճքում գտնվող բազմաթիվ բերդերից, վանքերից և բնակավայրերից ոչ մեկը սկզբնաղբյուրներում չեն հիշատակվում իբրև թագավորության տերիտորիայում գտնվող վայրեր, չնայած բազմաթիվ հարմար առիթների[29]: Հնարավոր է, որ սկզբնական շրջանում Աղահեճքը թագավորության մասը կազմած լիներ, բայց ինչպես քիչ հետո կտեսնենք, 1003 թվականից սկսած նա երբեք չէր կարող պատկանել Սյունյաց թագավորությանը, որի սահմանն այս մասում համընկնում էր Աղահեճք և Հաբանդ գավառների սահմանագծին:

Ալիշանը ենթադրում է[30], որ Ծղուկք գավառից թագավորության մեջ մտնում էր նրա մի փոքր մասը: Այդ ենթադրությունը, որի հետ մենք միանում ենք անվերապահորեն, ավելի հավանական դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել մի երկու անուղղակի փաստ, որոնք վրիպել են նշանավոր հայագետի ուշադրությունից:

Մեր պատմիչները Սյունյաց աշխարհի ավերման սկիզբը համարում են 1103 թվականը[31], երբ թշնամին կողոպտեց և տակնուվրա արեց Կապան մայրաքաղաքը: Հաջորդ տարին՝ 1104 թ., թշնամին գրավում է Որոտն բերդը (Օրբելյան, էջ 334), և եթե Կապան քաղաքն ավերելուց հետո Չորթմանի զորքերը թողնում ու հեռանում են իրենց տեղերը, ապա Որոտն բերդն ընդմիշտ մնում է նրանց ձեռքին: Որոտնը Սյունյաց թագավորության տերիտորիայում հիշատակված ամենահյուսիսային բերդն է: Նրա այդքան վաղ գրավումը թշնամու կողմից անկասկած ցույց է տալիս, որ բերդն այնքան հեռու չէր սահմանից:

Ասողիկը վկայում է. **«Յայսմ ժամանակի, ի ՆԾԲ թուականին (1103 թ.) իշխանքն Փառիսոսյ, որ ի Հայկազեան ազանց՝ բաւեալ մինչև ցՍենեքերիմ և ցԳրիգոր՝ սպառեցան մահուամբ: Զորոց զաշխարհն բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ և Փատլոն ամիրայն Գանձակայ»**[32]:

Ինչպես տեսնում ենք, Գագիկ առաջինը 1003 թ. Փառիսոսի կողմերում գրավել է որոշ շրջաններ: Նույն պատմիչը մի ուրիշ տեղ ասում է, որ Փառիսոսի հետ միասին Գագիկը գրավումներ է կատարել նաև Փառիսոսի թագավորների տիրապետության տակ գտնվող Խաչենում: Նախկին Արցախի մասերը կազմող Խաչեն և Փառիսոս[33] գավառներում գրավումներ կատարելու համար, ինչպես մենք մեկ անգամ արդեն ասացինք, Գագիկն անպայման պետք է նախօրոք տիրապետած լիներ Ծղուկքի հյուսիսային



մասին ու Աղահեճք գավառին: Այլապես Գագիկի տիրապետություններն այս մասում՝ կտրված կլինեին նրա պետության մասը կազմող Վայոց ձորից:

Հաշվի առնելով վերը բերված փաստերը՝ Սյունյաց թագավորության հյուսիսային սահմանը Ծղուկք գավառի շրջանում անց ենք կացրել (տես քարտեզը) Իշխանասար-Գզըլ-թեփե և Գզըլ-բողազ հրաբխային լեռներով, համարելով այն որպես ամենահավանական բնագիծը, որ Ծղուկքի հյուսիսային մեծ մասը բաժանում էր թագավորության տերիտորիայի մեջ մտնող հարավային փոքր մասից:

Ամփոփելով Սյունյաց թագավորության գրված տերիտորիայի սահմանների վերաբերյալ մեր ասածները, հանգում ենք հետևյալ եզրակացության.

Սյունյաց թագավորության տերիտորիան 11-րդ դարի սկզբներից իր մեջ ընդգրկում էր նախկին Սյունյաց աշխարհի հարավարևելյան մասը: Թագավորության սահմաններն արևմուտքում կազմում էր Սյունյաց լեռների հարավային մասը, հարավում՝ Երասխ (Արաքս) գետը, արևելքում՝ Աղավնո (Հակարի կամ Հագարի) գետը, իսկ հյուսիսում նրա սահմանն անցնում էր Հագարի գետի Աղօղլան վտակի և Որոտան գետի ջրբաժան լեռներով, ապա Իշխանասար, Գզըլ-թեփե և Գզըլ-բողազ հրաբխային գագաթների գծով դեպի արևմուտք՝ մինչև Սյունյաց լեռների հետ հատվելը: Սյունյաց թագավորության գրված տերիտորիան հիշյալ սահմաններում իր մեջ ընդգրկում էր Բաղք (Աճեն և Քաշունիք), Կապան կամ Ձորք, Արևիք, Գրհամ կամ Կովսական և Հաբանդ գավառներն ամբողջությամբ ու Ծղուկք գավառի հարավային մասը:

Նկարագրված սահմանները, որոնք վերաբերում են 11-րդ դարին, ներկայացնում են Սյունյաց թագավորության գրված տերիտորիայի մաքսիմումը՝ հաջորդ ժամանակների համեմատությամբ:

Աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված սահմանների մեջ ամփոփված ամբողջ տերիտորիան, մոտավորապես 10-րդ դարի վերջերից սկսած, կոչվել է «Սյունյաց և Բաղաց» աշխարհ: Ավելորդ չի լինի այստեղ բերել մեր այդ միտքը հաստատող մի քանի փաստեր.

«Եւ պայազատէ զտէրութիւն նորա (Սմբատ թագավորի-Թ. Հ.) մանուկ որդին իւր Վասակ, որ և սա մեծահանդէս ժողովով և ազատակոյտ բազմութեամբ օծանի թագաւոր Սիւնեաց և Բաղաց ձեռամբ Տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի»34: «Եւ բարեպաշտ և աստուածասէր թագաւորն Սիւնեաց և Բաղաց աշխարհիս Վասակ...»[35]: **«Եւ այս իսկ են գաւառք վիճակեալք հօտի նոցա (Սյունյաց եպիսկոպոսական թեմին պատկանող գավառները – Թ. Հ.) Սիւնիք, Բաղք, Արևեաց տունն, Որոդուատ, Արքուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ որքան Երասխայ գետն հատանէ, Ճահուկ, Վայոց ձոր խաչերոյ խոռովն, Գեղաքունի Կռզայ բակովն...»** և այլն[36]: **«Կամաւ կարող հզօրին Յիսուսի ես Սենեքերիմ՝ թագաւոր Հայոց, կացեալ ի Սիսական և Բաղաց աշխարհիս...»**[37], **«Ահա զայսօրինակ բարձաւ տէրութիւն Սիւ-**

նեաց և Բաղաց. և եղև վախճան տոհմին Սիսակայ և նախարարութեան Սիւնեաց...»[38]:

«Սյունյաց և Բաղաց» աշխարհ անունը առաջացել է Սյունյաց իշխանական տան այն երկու ճյուղերից, որ ժառանգաբար իշխում էին այդ կողմերում: Ծղուկքում և Հաբանդում իշխում էին գահերեց իշխանական ճյուղին պատկանող իշխանները, իսկ Բաղքում, Կովսականում, Ձորքում և, հավանաբար, նաև Արևիքում իշխում էր նույն իշխանական մյուս ճյուղը, որը բերված վկայությունների մեջ անվանված է «Բաղաց» իշխանական տուն[39]:

Ուրեմն «Սիւնեաց և Բաղաց» աշխարհ ասելով պետք է հասկանալ այն տերիտորիան, որում իշխում էին Սյունյաց և Բաղաց իշխանները:

Այն հայագետները, որոնք այս կամ այն առիթով ստիպված են եղել որոշ գաղափար տալ Սյունյաց թագավորության մասին, հատուկ ուսումնասիրությունների բացակայության պատճառով բավարարվել են միայն ընդհանուր դիտողություններով:

Թագավորության գրված տերիտորիայի վերաբերյալ համեմատաբար ավելի կոնկրետ մտքեր են արտահայտել Ալիշանն ու ակադ. Հ. Մանանդյանը, որոնց կարծիքները բերում ենք առանց կրճատումների:

«Եւ առ Սենեքերիմաւ յամի 1070 մինչդեռ «շէն էին գաւառք Կապանին», ըստ պատմիչին, որ այնու իմանայ զերկիր թագաւորութեանն Սիւնեաց ժամանակին, տասնեքին յիշատակեալ գաւառքն այնորիկ և բերդեան՝ չորեցուն հին գաւառացն պատշաճին, այսինքն են Ծղուկք, Ձորք, Արեւիք և Կովսական. և ոչ յիշի և ոչ մի տեղի Հաբանդայ և Բաղաց՝ որոց յառաջն տիրէին»[40]:

«Ստեփանոս Օրբելյան պատմագրի վկայությամբ այս թագավորության (Սյունյաց թագավորության – Թ. Հ.) իշխանության տակ էին գտնվում 43 բերդ, 48 վանք և 1008 գյուղ, իսկ նրա կենտրոնն էր Կապան մայրաքաղաքը: Որքան և մոտավոր լինեն այդ թվերը, Ստեփանոս Օրբելյանի այս և ուրիշ տեղեկություններից պարզ երևում է, որ Կապանի ընդարձակ թագավորությունը պարունակել է իր մեջ Սյունյաց և Բաղաց աշխարհի մեծագույն մասը»[41]:

Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Սյունյաց թագավորության մեջ մտնող գավառների վերաբերյալ Ալիշանի արած կողմնակի դիտողությունները հիմնականում ճիշտ են: Ինչ վերաբերում է ակադ. Մանանդյանի կարծիքին, ապա պետք է ասել, որ այն ունի բավականաչափ անորոշություններ:

Եթե «Սյունյաց և Բաղաց աշխարհ» ասելով անվանի գիտնականը նկատի ունի նախկին Սյունիքի Ծղուկք, Ձորք, Արևիք, Կովսական, Հաբանդ և Բաղք գավառները, ապա մենք միանում ենք նրա կարծիքին, որովհետև իրոք «Սյունյաց և Բաղաց աշխարհի մեծագույն մասը» մտնում էր այդ թագավորության տերիտորիայի մեջ, իսկ եթե «Սյունյաց և Բաղաց աշխարհ» ասելով նա նկատի ունի նախկին ամբողջ Սյունիքը, որը բաղկացած էր 12 գավառից, ապա մեր ուսումնասիրության արդյունքները չեն հաստատում այդ, հետևապես ընդունել չենք կարող:

Ծանոթագրություններ

1. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, ձեռագրի իրավունքով, Երևան, 1922, էջ 49:
2. Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1947, էջ 633:
3. Շահնազարյան, Սիւնիք (տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1859 թ., էջ 17): Էմիր, Տաթևի վանքը, («Արաքս», 1852 թ., գիրք 2-րդ, Ս. Պետերբուրգ, էջ 20): Ալիշան, Սիսական, էջ 16, և այլն:
4. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 317:
5. Էմիր, Տաթևի վանքը, («Արաքս», 1892 թ., գիրք 2-րդ, էջ 20):
6. Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 103:
7. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17, 231:
8. Տես Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան..., էջ 128 («ի սոյն ժամանակի առան և մնացեալ դղեակք Կապանին յայլազգիս...»), տես նաև նույն աշխ. 103 էջը:
9. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 300-301:
10. Տես Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 214-215:
11. Տես Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան..., էջ 128, Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 334-335:
12. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 259:
13. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298:
14. Նույն տեղում, էջ 298-299:
15. Տես Ալիշան, Սիսական, էջ 16:
16. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, 1885, էջ 256:
17. Տես նույն տեղը, էջ 285:
18. Տես նույն տեղը, էջ 283:
19. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 337:
20. Տես նույն տեղը, էջ 335:
21. Սյունյաց լեռներն ըստ երևույթին միշտ ծառայել են որպես սահմանային բնական գիծ բուն Սյունիքի և Գողթնի ու Երնջակի միջև: Մինչև այժմ էլ Օխչու ենթաշրջանի բնակիչները Գողթնի կողմերին անվանում են՝ «Սարին էն ղոլը» («սարի այն կողմը»):
22. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 335:
23. Տես Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, էջ 128. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 335:
24. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ-335, Ալիշանի «Սիսական»-ին կցված քարտեզը:
25. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 197:
26. Նույն տեղում, էջ 334:
27. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 291-292:
28. Նույն տեղում, էջ 3185:
29. Մենք նկատի ունենք Գանձակի աթաբեկության կողմից Սյունյաց թագավորության վրա կատարվող այն բազմաթիվ հարձակումները, որ տեղի են ունենում՝ գլխավորապես Աղահեճքի կողմերով:
30. Տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 273:
31. Տես Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, էջ 140-141, Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 334:
32. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 256:
33. Արցախի կենտրոնական մասը, որ գտնվում է Խաչեն գետի ավազանում, 10-11-րդ դարերից հայտնի է Խաչեն անունով: Սրան հյուսիս-արևմուտքից հարևան էր Փառիսոս գավառը, որը սահմանակցվում էր Ուտի աշխարհի Առանձնակ Ուտի գավառի հետ:
34. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 301:
35. Նույն տեղում, էջ 303:
36. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 310:
37. Նույն տեղում, էջ 322:
38. Նույն տեղում, էջ 337:
39. Այդ իշխանական տունը Ալիշանի մոտ անվանված է «Զագիկեանք»:
40. Ալիշան, Սիսական, էջ 291:
41. Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, 1922, էջ 50:

«ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ», ԵՐԵՎԱՆ, 1966

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի թագավորությունը. X-XII ԴԱՐԵՐ



ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միջնադարյան Հայաստանի քաղաքական կազմավորումների պատմության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում Սյունիքի ավատական թագավորությունը, որի հանդես գալու համար X դ. երկրորդ կեսին ստեղծվել էին մի շարք նախադրյալներ, որոնցից հիշատակելի են.

1. միջավատական հարաբերությունների հստակեցման մղումով առաջացած սուր ճգնաժամը,
2. իշխանական հզոր տոհմերի մրցապայքարը գերագահության համար և տարածքային հավակնությունները,
3. Բագրատունյաց թագավորության ժամանակավոր թուլացումը,
4. արտաքին ուժերի խանգարիչ գործոնը (միջամտությունը):

Ընդամենը 21 տարի էր անցել Հայկական պետականության վերականգնումից (885 թ.), երբ հայոց աշխարհի բնիկ տերերը սիրո և միաբանության նշանաբանով ժամանել էին Տաթև՝ ուրախությամբ նշելու Սյունյաց եպիսկոպոսական աթոռի մայր տաճարի՝ Պողոս-Պետրոս եկեղեցու նավակատիքը: 906 թ. օծման արարողություններին մասնակցում էին երկրի բոլոր հզոր տերերը՝ հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին, պատմիչ-կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Աղվանքի կաթողիկոս Սիմեոնը, Վասպուրականի և Արծրունյաց տեր Գագիկը, Գեղարքունիքի մեծ իշխան Գրիգոր Սուփանը, արցախական աշխարհի Եսայի և Ատրներսեհ իշխանները, Գարդմանա տեր Սահակ-Սևադան, Աշոտ և Վասակ Գնթունիները, Սյունյաց գահերեց և գահակալ իշխաններ Աշոտը, Ձագիկը, Հրահատը և բազմաթիվ այլ հյուրեր... Ամբողջ հայ ժողովուրդը ցնծության մեջ էր:

Սակայն չէր անցել նույնիսկ երկու տարի, երբ արտաքին ուժերի սադրանքով Գագիկ Արծրունին 908 թ. արաբական ոստիկան Յուսուֆի աջակցությամբ իրեն հռչակեց Հայաստանի թագավոր՝ առաջին սեպը խրելով հայոց միասնության մեջ: Այնուհետև աստիճանաբար բզկտվեց Հայաստանի քաղաքական քարտեզը գերագահության մարմաջով բռնված իշխանական հզոր տոհմերի միջև:

Առանձին թագավորություն ունենալու խմորումներ առաջացան նաև Սյունիքում, որի հզոր տերերից Վասակ Գաբուռն ամուսնացած էր Բագրատունյաց արքայադուստր, աշխարհաշեն Մարիամի հետ: Սյունյաց բարձրաստիճան հոգևորականությունը և հատկապես Վահան եպիսկոպոս (հետագայում՝ կաթողիկոս) Ջևանշերյանը՝ Բաղք-Ձորք գավառների գահակալ իշխան Ձագիկի թոռը, բացահայտորեն կամ ծածուկ նպաստում էր այդ գաղափարի իրականացմանը: Եվ, ահա, 970 թ. Սյունյաց գահերեց իշխան Աշոտի թոռը՝ Սահակի որդի Սմբատը, նույնպես արտաքին ուժերի սադրիչ միջամտությամբ իրեն հռչակեց Սյունիքի թագավոր:

Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, որ ընդհանուր առմամբ կողմնակից էր կենտրոնաձիգ իշխանության ամրապնդմանը, Սյունիքի հարցում խոտորվում է իր սկզբունքից՝ ջանալով ամեն կերպ արդարացնել Սյունյաց թագավորության առաջացումը պատմական թատերաբեմում: Այս մեծատոհմիկ իշխանազունը չէր երկմտում, որ ինչպես Սյունիքի, այնպես էլ Աղվանքի (Փառիսոսի), Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյանների), Կարսի (Վանանդ-Բասենի) և այլ փոքրիկ արքայիկների հանդես գալը խարխլում և բզկտում էր Հայաստանի միասնական պետության քաղաքական և տնտեսական հիմքերը, ինչին ձգտում էին օտար իշխանավորները, տվյալ դեպքում՝ Արաբական խալիֆայությունը: Մինչ այդ էլ արաբական կուսակալ Ափշինը ամեն կերպ գրգռում էր Վասակ իշխանին «թագ կապել» Սյունյաց աշխարհում, սակայն, ինչպես նույն պատմիչն է վկայում, այս հեռատես իշխանը «ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել»[1] և կտրականապես մերժեց նրան:

Սյունիքում առանձին թագավորություն հաստատելու փաստը Ստեփանոս Օրբելյանը հիմնավորում է Բագրատունյաց արքայատան ազդեցության ոլորտների նվազմամբ, ինչպես նաև նահանգի հեռավորությամբ, քանզի Բագրատունիներն իշխում էին Շիրակում, Այրարատում, Գեղարքունիքում, Կարինում, մինչև Ձորագետ, և Սյունիքը կտրված էր Բագրատունիներից: Նահանգի հեռավորության այս վարկածը տրամաբանական չէ, հետևաբար, անընդունելի է: Երկրորդ վարկածը բխում է տոհմական փառասիրությունից և ուղղված է Բագրատունիների ոչ հայկական ծագում ունենալու, այսինքն՝ իշխելու իրավական կարգավիճակի հիմնավորվածության խնդրին: Այդ ինչո՞ւ, գրում է Սյունյաց տոհմիկ պատմիչը, Հրաչեի կողմից գերեվարված Բագրատունիների ժառանգներից կարող են օծվել հայոց թագավորներ, իսկ Սյունյաց աշխարհից՝ ոչ: Չէ՞ որ «Ի Հայկայ երևելի հարազատութեամբ որդիք զհարս փոխանակելով և տերութեամբ եկեալ հասեալ էին մինչև ցայժմ»[2]: Սյունյաց աշխարհի իշխանները «երբեք ոչ ըմբոստացան ի հայրենի տերութեանցն», ուստի «քրեական մեղք» չի կարելի համարել Սմբատի գահակալությունը[3], բացականչում է Սյունյաց աշխարհի մտավորական գործիչը:

Հայաստանի քաղաքական այս կազմավորումը պատմագիտական գրականության մեջ կոչվում է Բա-

ղաց կամ Կապանի թագավորություն: Ըստ «Աշխարհացոյցի», նրա կազմի մեջ ընդգրկվել են նախարարական շրջանի 12 գավառներից 7-ը (Բաղք-Քաշունիքի հետ՝ 8)՝ ներկայացնելով հետևյալ պատկերը.

1. Ծղուկ - 1950 կմ² (այժմյան Սյունիքի մարզի Սիսիանի ենթամարզը, ըստ «Աշխարհացոյցի»՝ Սյունիքի 7-րդ գավառը),
2. Աղահեճք - 1402 կմ² (այժմյան Քաշաթաղի շրջանը, ըստ «Աշխարհացոյցի»՝ Սյունիքի 6-րդ գավառը)[4],
3. Հաբանդ - 1325 կմ² (այժմյան Գորիսի շրջանը, ըստ «Աշխարհացոյցի»՝ Սյունիքի 8-րդ գավառը),
4. Բաղք (Քաշունիքի հետ) - 925 կմ² (այժմյան Կապանի շրջանը, ըստ «Աշխարհացոյցի»՝ Սյունիքի 9-րդ գավառը),
5. Ձորք - 525 կմ² (այժմյան Կապանի շրջանի Գեղվաձորը, ըստ «Աշխարհացոյցի»՝ Սյունիքի 10-րդ գավառը),
6. Արևիք - 625 կմ² (այժմյան Մեղրիի շրջանը, ըստ «Աշխարհացոյցի» Սյունիքի 11-րդ գավառը):
7. Կովսական - 625 կմ² (նախկին Զանգեզանի և մասամբ Կապանի շրջանները, ազատագրումից հետո վերանվանված դարձյալ Կովսական: Ըստ «Աշխարհացոյցի»՝ Սյունիքի 12-րդ գավառը):

Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով՝ «Կապանի համեմատաբար ընդարձակ թագավորությունը պարունակել է իր մեջ Սյունյաց աշխարհի մեծագույն մասը»[5]: Պատմահամեմատական քննությունը ցույց է տալիս, որ նախարարական շրջանի 15237 կմ²-ից Սյունիքի թագավորության կազմում ընդգրկվել է 7377 կմ², հետևաբար, անընդունելի է այն վարկածը, ըստ որի՝ Սյունիքի թագավորությունն ունեցել է նախարարական շրջանի ընդհանուր տարածքի 1/3-ը, այսինքն՝ 5079 կմ²:

Թվարկված վարչատարածքային միավորների մեջ բացակայում են Գեղարքունիք (Մարտունու և Գավառի շրջաններ), Սոդք (Վարդենիսի շրջան) և Վայոց ձոր (Եղեգնաձոր և Վայք) ընդարձակ գավառները, որոնք տարբեր ժամանակներում միացվել էին Շիրակի Բագրատունյաց թագավորությանը:

Սյունիքի թագավորության զբաղեցրած տարածաշրջանի մեջ եղել են նաև այլ գավառակներ (Այլախ, Բղեն, Այլք), սակայն դրանք առաջացել էին նահանգի մեծ ու ընդարձակ գավառների ծայրամասերի տրոհումից, ուստի ներառվել են Ստեփանոս Օրբելյանի «Հարկացուցակի» մեջ:

Սյունիքի առաջին գահակալը՝ Սմբատ Սահակյանը վախճանվեց 998 թ. և ամփոփվեց Տաթևի վանքում: Գահը ժառանգեց որդի Վասակը (998-1040), որը «ազատակոյտ բազմութեամբ» թագավոր օծվեց Գրիգոր եպիսկոպոսի ձեռքով: Նրա կրտսեր եղբայր Սևադան դարձավ իշխանաց իշխան: Վասակ թագավորի միամորիկ դուստրը՝ Կատրանիդեն, որին ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին սխալմամբ կոչում է վրաց Գիորգի թագավորի դուստր[6], ամուսնացած էր Գագիկ Ա Բագրատունի թագավորի (989-1020) հետ և իր մոր՝ Սյունյաց թագուհի Շահանդուխտի նման զբաղված էր շինարարական լայն գործունեությամբ: Կատրանիդեն ավարտին հասցրեց Անիի Մայր տաճարի կառուցումը, որի մասին վկայում է պահպանված վիմագիր արձանագրությունը[7]: Վասակ թագավորի խնդրանքով և նրա դստեր՝ թագուհի Կատրանիդեի միջամտությամբ վերականգնվում է Սյունիքի մետրոպոլիտությունը, որը շնորհված էր նահանգի հոգևոր առաջնորդներին դեռևս IV դարում Ներսես Մեծի կողմից և վերացվել էր Անանիա Մոկացի կաթողիկոսի կոնդակով X դ. 60-ական թվականներին:

Պատմական որոշակի արժեք է ներկայացնում Սարգիս Սևանցի կաթողիկոսի 1006 թ. շրջաբերական նամակը՝ ուղղված Վասակ թագավորին և Սյունյաց Սևադա ու Աշոտ իշխաններին՝ Սյունիքի հոգևոր թեմին ենթակա հարկատու գավառների մասին: Ի թիվս այլ գավառների՝ այստեղ մտցված են Նախիջևանը, Ագուլիսը, Ջուղան, Օրդվատը (Օրդուբադը), Երնջակը, Ճահուկը և այլ բնակավայրեր[8]: Ինչպես տեսնում ենք, եկեղեցական վիճակների բաժանումն աշխարհագրորեն կարող էր չհամընկնել նահանգի վարչաքաղաքական բաժանվածության հետ:

Վասակ թագավորի գահակալության ժամանակ բարձրացավ ցուրաբերդցիների ապստամբության նոր ալիք: Նահանգի եպիսկոպոսի խնդրանքով այս գահակալը դաժանորեն ճնշեց «հին հայրենի տէրք» գյուղացիական համայնքների ելույթները՝ ավերակների վերածելով Ցուր գյուղը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սյունիքում դասական իմաստով ճորտատիրություն երբեք գոյություն չի ունեցել: Ազատ գյուղական համայնքը ղեկավարվել է գեղջավագով, որը հօգուտ աշխարհիկ ու հոգևոր տերերի գյուղի բնակիչներից հավաքել է պետական հարկերը և ավատին տրվող տուրքերը, ինչպես նաև եկեղեցական տասանորդը: Իրավական առումով՝ գյուղացին եղել է ազատ և ունեցել է տեղաշարժման իրավունք: Մեզ են հասել Վասակ թագավորի մի շարք հրամանագրեր ու կալվածագրեր, որոնք սկսվում են ընդունված բանաձևային կաղապարներով[9]. «Յանուն Աստուծոյ, այս իմ հրամանք է Վասակայ թագաւորիս...»[10] կամ՝ «Կամաւն Աստուծոյ, ես՝ Վասակ, որդի Սմբատայ թագաւորի...»[11]: Հրամանագրերը ստորագրում և վավերացնում էր անձամբ թագավորը[12]: Վասակ թագավորն իր քրոջն ամուսնացրել էր Բաղք-Ձորքի և Կապանի տիրակալ իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) հետ, որը երկրորդ դեմքն էր Սյունյաց թագավորությունում: Այս մասին հիշատակված ենք գտնում 1019 թ. կալվածագրերից մեկում. «Ես Սմբատ իշխան վկայ եմ քեռւոյս՝ աստուածապսակ թագաւորիս հրամանացս»[13]: Նույն կերպ է ստորագրել իբրև վկա հանդես եկած ապագա թագակիր Գրիգորը[14]:

Վասակ թագավորը գահակալեց ավելի քան 40 տարի: Նա վախճանվեց 1040 թ. և թաղվեց Տաթևի վանքի մայր տաճարի մուտքի առջև՝ «ընդ հօր իւրում Սմբատայ»[15]:

Վասակն արու ժառանգ չուներ, և Սյունյաց տերերը որոշեցին գահին բազմեցնել նրա քեռայր իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) ավագ որդի Սմբատին (1040-1051), իսկ կրտսեր եղբայրը հոր փոխարեն հռչակվեց «իշխանաց իշխան Սիսական աշխարհիս»[16]: Սմբատ Բ Սյունյաց արքան յուրայինների նկատմամբ եղել է «քաղցր և հեզահամբոյր», սակայն «շրջակայ ազգերը» նրանից սարսափել են[17]: Մատթեոս Ուռհայեցին գրում է, թե ինչպես Դվինի Աբուլսուար (Աբու-լ-Ասվար) Շեդադյան ամիրան, ցանկանալով իրեն ենթարկել Տաշիր-Ձորագետի թագավոր Դավիթ Ա Անհողինին (989-1048), 150-հազարանոց զորքով ներխուժեց Լոռի: Դավիթն օգնություն խնդրեց Անիի Հովհաննես-Սմբատ թագավորից, վերջինս էլ դիմեց Կապանի գահակալին, որը Լոռի եկավ 2000-ոց այրուձիով[18]: Կապանի գահակալը Սմբատ Բ թագավորն էր: 11 տարի թագավորելուց հետո (և ոչ՝ 4, ինչպես սխալմամբ նշված է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 3-րդ հատորում[19] և այլուր) նա վախճանվեց Կապան մայրաքաղաքում և թաղվեց Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում՝ Սյունյաց արքաների ու իշխանների դամբարանատանը: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Կապանի հնագիտական արշավախմբի կողմից հայտնաբերվել է նրա տապանաքարը, որի վրա փորագրված է.

«ՍՄՊԱՏ ԹԱԳԱՒՈՐ. Թ(ՈՒԱԿԱՆԻՆ) :Շ: (1051)[20]:

Քանի որ Սմբատ Բ արքան ժառանգ չուներ, Սյունյաց գահին են բազմեցնում նրա կրտսեր եղբայր Գրիգորին (Գրիգոր Ա Սյունյաց թագավոր՝ 1051-1072): Այս երկու գահակալ եղբայրներն իրենց հոր անունով կոչվում են «Աւագ Աշոտեանք»[21]: Գրիգոր Ա-ն ամուսնա-

ցած էր Արցախի ականավոր իշխան Սահակ-Սևադա Բ-ի դստեր՝ Շահանդուխտի հետ (Շահանդուխտ Բ Սյունյաց թագուհի, մահ. 1116 թ.): Նրանք նույնպես ժառանգ չունեին, որի փաստը արձանագրված է Վահանավանքի Ս. Աստվածածին կրկնահարկ եկեղեցու 1086 թ. վիմական բնագրում.

Ի :ՇԼԵ: (1086) ԹՎԱԿԱՆԻՆ, ԵՍ՝ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵԱԴԱ(Յ) Ի ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ և ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՈՐԴՒՈՅ ԱՇՈՏԿԱ, ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈՅ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ (Ը)ՍՏ ՄԱՐՄՆՈ...[22]:

Ի դեպ, նշենք, որ նախորդ ընթերցողներն այստեղ կարդացել են ԿԱՎԱՍՆ անձնանունը, որպիսին իրականում գոյություն չունի. նորահնար անձնանունն առաջացել է կապակցության սխալ բառանջատման հետևանքով[23]: Պետք է լիներ «...ԱՇՈՏԿԱ ՎԱՍՆ...», ինչպես ճիշտ նկատել են վիմագրագետներ Ս. Բարխուդարյանն[24] ու Ս. Ավագյանը[25]:

Սմբատ Բ և Գրիգոր Ա թագավոր-եղբայրները զբաղվել են շինարարական լայն աշխատանքներով: Աջակցել և «ամենայն պիտոյիւք» օգնել են Տաթևի վանքի[26], Վահանավանքի[27], Բղենո Նորավանքի[28] և հոգևոր-կրթական այլ կենտրոնների վերանորոգման աշխատանքներին: Նրանց գահակալության տարիներին առավել հարստացան Սյունիքի կրոնական օջախները, առանձնապես Տաթևի վանահայրությունը, որն ուներ միաբանության ավելի քան 1000 անդամ: Սմբատ արքայի և նրա եղբայր Գրիգորի անունների հիշատակությամբ Կապանի հնագիտական արշավախումբը Վահանավանքում հայտնաբերել է հետևյալ արձանագրությունը, որը, անշուշտ, ունի պատմագիտական կարևոր արժեք.

Թ(ՈՒԱԿԱՆԻՆ) :ՆՂԵ: (1046).

ՈՂՈՐՄԵԱ Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ և ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ

ԳՐԻԳՈՐՈ, ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ(Յ) ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՍՐԱՀԻՍ և ԺԱՄԱՏԱՆՆ.

ՈՐՔ ՄՏԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ, ՁՍՈՑԱ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ[29]:

21 տարի (և ոչ՝ 40, ինչպես սխալմամբ ընդունված է պատմագիտական գրականության մեջ[30]) թագավորելուց հետո Գրիգոր Ա-ն մահանում է և թաղվում Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում: Պեղումներով հայտնաբերվել է նաև նրա տապանաքարը՝ հետևյալ մակագրությամբ.

ԹՈՒԱԿԱՆ(ԻՆ) :ՇԻԱ: (1072). ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐ, ՈՐԴԻ ԱՇՈՏԿԱ[31].

Ուրեմն՝ վերջնականապես ճշտվում են Սյունյաց այս թագավորի գահակալության տարեթվերը՝ 1051-1072, ուստի և մերժվում է նրա՝ գահին բազմելու 1044-1084 թթ. վարկածը[32]:

Գրիգոր Ա-ի մահվանից հետո Սյունյաց ազնվականության որոշմամբ թագավոր է հռչակվում Շահանդուխտ թագուհու կրտսեր եղբայր Սենեքերիմը, որը պատմիչի վկայությամբ եղել է «յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ՝ հանճարեղ և իմաստուն» երիտասարդ[33]: Նա բարեկամական հարաբերություններ է հաստատում սելջուկյան սուլթան Մելիք-Շահի (1072-1092) հետ՝ ձգտելով վերադարձնել սելջուկ-թուրքերի բռնագրաված Սյունյաց գավառները: «Յոլով գաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս՝ ի ձեռաց բնիկ տերանցն»[34], – գրում է Ստեփանոս Օրբելյանը: Եվ պատահական չէ, որ օգտվելով Մելիք-Շահի բարյացակամ վերաբերմունքից, այս դիվանագետ թագավորը երբեմն նաև սրի միջոցով «ընդարձակեաց զամենայն սահմանս տէրութեան իւրոյ և բազում ամօք վարեաց զթագաւորութիւնն և խաղաղական կենօք մինչև ի մահ Մելիք սուլթանին, որ մեռաւ ի 541 (1092) թուականին»[35]: Իր հրամանագրերից մեկում Սենեքերիմը փառաբանում է Աստծուն իր հաջողությունների համար. «Աստուած անյիշաչար եղև առ յիս և ողորմեցաւ ինձ և կրկին հաստատեաց ի յիս զհայրենի տէրութեան իմոյ, որ խախտեալ էր ի ձեռն Իսմայէլականացն»[36]: Սենեքերիմը հաղթական պատերազմներ է մղել Սյունիքի Կովսական գավառ ներխուժած Փատլուն ամիրայի դեմ[37]:

Մատենագրական աղբյուրների համաձայն՝ Սենեքերիմն ունեցել է 3 ուստր (Գրիգոր, Սմբատ, Սևադա) և մեկ դուստր: Սակայն Վահանավանքի պեղումների ժամանակ մեծ տաճարի գավթի մեջ հայտնաբերվեց մի տապանագիր, որը վկայում է Սենեքերիմի՝ 4-րդ արու զավակ ունենալու փաստը.

ՁԿԻԻՐԻԿԷ՝ ՈՐԴԻ ՍԵՆԻՔԱՐԵՄ ԹԱԳԱՒՈՐԻ ԿԻՍԱՒՐԵԱ ՅԱՆԳՈՒՑԵԱԼ

ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ. Թ(ՈՒԱԿԱՆԻՆ) :ՇԽԸ: (1099)[38]:

Ինչպես տեսնում ենք, Սենեքերիմն ունեցել է Կյուրիկե անունով ևս մեկ որդի, որ վախճանվել է պատանի հասակում 1099 թվականին:

Սենեքերիմի մայրը՝ իշխանուհի Սոփիան, արձանագիր հիշատակարաններում կոչված է «Աղվանից թագուհի»: Սյունասրահի պեղումների ժամանակ հայտնաբերվել է նաև նրա տապանագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

ՍՈՓԻ՝ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳՈՒՀԻ, ՁՈՔԱՆՉ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՈՐԴՈՅ ԱՇՈՏԿԱՅ, ՄԱՅՐ ՇԱՀԱՆԴԽՏՈ: Թ(ՈՒԱԿԱՆԻՆ) :ՇԼ: (1081)[39]:

Նույն՝ 1081 թվականին, Շահանդուխտ թագուհին, «սրբասնունդ օրիորդ» Կատան՝ նրա քույրը, և Սենեքերիմ եղբայրը մոր հիշատակը հավերժացնելու նպատակով գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել մեծ տաճարի արևելյան սարալանջին: Վահանավանքի կրկնահարկ դամբարան-եկեղեցու գավթում է թաղված Աղվանից կաթողիկոս Տեր-Ստեփանոսը, որը Կապան էր եկել «նեղեալ ի Տաճկաց», այսինքն՝ սելջուկ-թուրքերից, հավանաբար, XI դ. 70-ական թվականներին[40]:

Մելիք-Շահի մահվանից հետո Սյունիքը եզերող մեծ ու փոքր ամիրայությունները մեծ ջանքեր էին գործադրում վերացնելու Սյունիքի թագավորությունը, «զոր խոչ մեծ համարէին ինքեանց...», սակայն իր թագավորի շուրջ համախմբված ժողովուրդը համառորեն պայքարում էր բազմաքանակ զորաբանակների դեմ և հաղթող էր դուրս գալիս շնորհիվ իր միաբանության ու անկոտրում կամքի:

Ի տարբերություն հարևան Վասպուրականի իշխողների, որոնք քրիստոնյա Բյուզանդիայի աջակցությամբ, փաստորեն, կործանեցին իրենց երկիրը՝ փոխանակելով այն Կեսարիայի հետ, Սյունիքի տերերը իրենց հեռատես և դիվանագիտական հմուտ քայլերի շնորհիվ բարեկամական հարաբերություններ հաստատեցին սելջուկ սուլթանների հետ ու պահպանեցին Սյունյաց աշխարհն ավերիչ ասպատակություններից: Այս առումով հատկապես առանձնանում է Սյունյաց արքա Սենեքերիմը, որն ազատ ելումուտ ուներ սուլթան Մելիք-Շահի արքունիքում: Եվ պատահական չէ, որ վերջինիս հովանավորությունն օգտագործելով, 1086 թ. նա ջախջախեց և դուրս վռնդեց Սյունիքի Կովսական գավառ ներխուժած ավարառուներին: Ուրեմն՝ իբրև սկզբունք, Սենեքերիմը չի ղեկավարվել կրոնական-դավանական առաջնայնության գաղափարով: Ընդհակառակը՝ օտար ներխուժումից երկիրը փրկելու համար նա համագործակցել է այլ օտար հզորի հետ՝ մյուս, սակայն առավել վտանգավոր օտարին ոչնչացնելու նպատակով: Այս նուրբ, ճկուն ու հեռատես քաղաքականությունը հետագայում որդեգրեցին հատկապես Օրբելյան և Պռոշյան իշխանները, երբ մոնղոլների աշխարհավեր արշավանքներից տարիներ հետո հարաբերական անդորրն ու կայունությունն օգտագործելով՝ Սյունյաց լեռնաշխարհի ապահով մի անկյունում հիմնադրեցին հանրահռչակ Գլաձորի ուսումնագիտական կենտրոնը: Ուրեմն՝ քաղաքական իրադրության թոհուբոհի մեջ ճիշտ կողմնորոշումը՝ հեռատես և ազգանպաստ դիվանագիտությունը, պահի զգացողությունը քաղաքական գործչի ամենաէական հատկանիշներն են, որոնցով օժտված էր Սյունիքի հայրենասեր գահակալ Սենեքերիմ արքան: Այդ հատկանիշները չեն կորցրել իրենց

արդիականությունն ու արժեքը նաև մեր օրերում:

Ինչպես վերն ակնարկեցինք, Սյունիքում իրավիճակը կտրուկ փոխվեց Մելիք-Շահի մահվանից հետո: 1094 (կամ 1096) թվականին խաղաղության դաշն կնքելու պատրվակով, միջնորդ ունենալով Շիրակի Գրիգոր Ապիրատյան իշխանին, Գանձակի ամիրան ժամանում է Կապան, որտեղ՝ Բաղաբերդ ամրոցում, ճակատամարտի էր պատրաստվում Սենեքերիմ արքան: Գրիգոր իշխան Անեցին, մտնելով ամրոց, համոզում է Սյունիքի թագավորին, որ Գանձակի տերը եկել է Սյունիք բարի առաքելությամբ՝ միայն խաղաղության դաշն կնքելու և բարեկամություն հաստատելու նպատակով: Հավատալով հայ իշխանի խոսքին՝ Սենեքերիմն իջնում է ամրոցից, սակայն բանակցությունները դեռ չսկսած՝ «չարաթոյն գազան» թուրք բռնապետը անսպասելիորեն «ստեաց ուխտին և յարձակեալ մռմռանօք ի վերայ [Սենեքերիմայ - Գր. Գր.] եսպան զթագաւորն»[41],- գրում է պատմիչը: Ապա՝ շարունակում է. «Այսպես շիջաւ ճրագն քրիստոնէից, որ կայր մնացեալ յամուրսն Բաղաց»: Սենեքերիմը նույնպես թաղվեց Վահանավանքի արքունական դամբարանատանը՝ «ի շիրմի ընդ այլ թագաւորսն»[42]:

Մեզ են հասել Սենեքերիմ թագավորի մի շարք հրամանագրերը, որոնցից մեկն սկսվում է այսպես. «Կամաւ կարող հզօրին Յիսուսի՝ ես՝ Սենեքերիմ թագաւոր Հայոց, կացեալ ի Սիսական և Բաղաց աշխարհիս...»[43]:

Սենեքերիմին հաջորդում է նրա ավագ որդի Գրիգորը (Գրիգոր Բ Սյունյաց թագավոր): Սա, անշուշտ, չուներ իր հոր մեծ հեղինակությունն ու դիվանագիտական կարողությունները, ուստի պատմիչը նրա մասին գրում է, որ այս Գրիգորը «նուազ և ընդ աղօտ թագաւորեալ»[44]:

1103 թ. սելջուկ-թուրքերը Մելիք-Շահի երբեմնի մատռվակ Չորթմանի գլխավորությամբ ներխուժում են Սյունիքի Բաղք գավառ: Նրանց հիմնական նպատակն էր գրավել Կապան մայրաքաղաքը[45], ոչնչացնել թագավորության զինական ուժը և վերջնականապես լուծել «Սյունյաց խոչընդոտի» հարցը: Չորթմանի հրոսակները կոտորածն սկսում են Կապանի Ջիտաթաղ կոչված[46] արվարձանից: Թշնամուն չի հաջողվում գրավել արքայանիստ Բաղաբերդ ամրոցը և կողոպտած հարուստ ավարով հեռանում է քաղաքից: Սելջուկյան գահին բազմած Բարկիարուխը՝ Մելիք-Շահի որդին, ի վիճակի չէր սանձահարել իր արյունռուշտ ցեղակիցներին, գուցե և ինքն էր նրանց հաղորդում Սպահանի իր արքունական պալատից:

Սյունիքի հզոր ամրոցներն[47] ու 1000-ից ավելի բնակավայրերը հեշտությամբ չէին կարող նվաճել, ուստի, Բաղք-Չորքը թողած, սելջուկները հարձակման սլաքն ուղղեցին Որոտն և Բղեն գավառներին: Կատաղի մարտերը տևեցին մեկ տարի: 1104 թ. նրանք ներխուժեցին Որոտն և Բղեն գավառ, որը գտնվում էր Հաբանդի (այժմյան Գորիսի շրջան) և Բաղքի (այժմյան Կապանի շրջան) միջնամասում: Գերվեց Բղենո Խոսրովիկ իշխանը: Ապա՝ Սյունիքը խաղաղության մեջ գտնվեց ևս 22 տարի: 1126 թ. Հարոն ամիրան գրավեց Արևիք գավառը (այժմյան Մեղրիի շրջանը): 1152 թ. թուրքերին հաջողվեց նվաճել Շլորուտի բերդը, իսկ հինգ տարի հետո՝ 1157 թ. ընկավ Մեղրիի բերդը:

1170 թ. թուրքերը Կապան քաղաքի մերձակա Աչաղու գյուղի «պարզամիտ քրիստոնյաների» մատնության պատճառով գրավեցին Սյունյաց աշխարհի «հոյս և ապաւէն» Բաղաբերդ ամրոցը: Կողոպտվեցին և ոչնչացվեցին այստեղ ամբարված ավելի քան 10 000 ձեռագիր մատյաններ, սրբություններ, Սյունյաց նահանգի արքունական գանձերը: Բաղաբերդի անկումը պատմիչը համեմատում է Նաբուգոդոնոսոր արքայի կողմից Երուսաղեմը կործանելու հետ: Ուսումնասիրողներից ոմանք համարում են, որ Բաղաբերդը Կապան քաղաքի միջնաբերդն էր[48], որպիսի վարկածը ընդունելի չէ, քանզի պատմական Կապան քաղաքը գտնվելիս է եղել Ողջի գետի աջ ափին, իսկ Բաղաբերդ ամրոցը՝ գետի ձախակողմյան սարալանջին՝ Բաղակու քարին հանդիպակաց: Կարծում ենք, Կապանի անկումից հետո Բաղաբերդը չի եղել Սյունիքի մայրաքաղաք, ինչպես համարում են Ղ. Ալիշանն ու հետագա ուսումնասիրողները[49]:

Սյունյաց Գրիգոր Բ թագավորը, որ իր միակ դստերը՝ Կատային կնության էր տվել Խաչենցի իշխանազն Հասան Գեռաքարեցուն, իր եղբայր Սմբատի հետ մահացել էր դեռևս 1166 թ.: Գեռաքարեցին՝ Հասան Խաչենցի թագավորը, անկարող գտնվեց կազմակերպել Սյունիքի պաշտպանությունը և, ընտանիքը վերցրած, հեռացավ Արցախ:

Սյունիքի վերջին թագակիրների մասին հատուկ հիշատակում է Ստեփանոս Օրբելյանն իր «Ողբք և հառաչանք ի դիմաց Կաթուղիկէին» քերթվածում, որը գրել է 1300 թ., իր գլաձորյան դասընկեր Խաչատուր Կեչառեցու խնդրանքով: Այստեղ, մասնավորապես, կարդում ենք.

« ...Որոյ (Սյունիքի թագավորության - Գր. Գր.) վերջին Սենեքերիմ,
Նաև Գրիգոր որդի նորին,
Ապա և զայս ի բարձ բարձին
Ի ժամանակս Ելտըկուզին,
Ազգն այլասեռ պարսկային,
Որք հրով զաշխարհ տոչորեցին,
Ի վեց հարիւր մեր թուականին
և տասն և հինգ յաւելուածին... »[50]:

Այսպիսով՝ պատմության ասպարեզից վերացավ Հայաստանի վերջին քաղաքական կազմավորումը (բուն Հայաստանում)՝ Սյունիքի թագավորությունը, որը համառորեն գոյատևեց 200 տարի շարունակ: Վիմագրական ու մատենագրական սկզբնաղբյուրների համադրությամբ այսօր, թերևս, կարելի է կազմել Սյունյաց արքաների գահացանկը և նրանց գահակալության տարիները.

Սմբատ Ա, որդի Սահակի
970 (987) 998[51],
Վասակ՝ որդի Սմբատ Ա-ի
998-1040,
Սմբատ Բ, որդի Աշոտի (Աշոտիկի)
1040-1051,
Գրիգոր Ա, որդի Աշոտի (Աշոտիկի)
1051-1072
Սենեքերիմ, որդի Սևադայի
1072-1094 (1096),
Գրիգոր Բ, որդի Սենեքերիմի
1096-1166,
Հասան Խաչենցի
1166-1170[52]:

Սյունիքի բոլոր յոթ թագավորներն էլ հանգչում են իրենց մայր հողում: Այդ մասին վկայում են մեր օրերը հասած նրանց խնկարկված շիրմաքարերը:

Ամփոփենք:

1. Սյունիքի, ինչպես նաև ավատական այլ փոքրիկ թագավորությունների հանդես գալը պատմականորեն չի արդարացվում, քանզի այդ կազմավորումները պառակտում, տարանջատում և, ի վերջո, կործանում էին միասնական պետության քաղաքական հիմքերը ու թուլացնում նրա տնտեսական և պաշտպանական համակարգերը:

2. Հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների ծալքերն ուսումնասիրելիս՝ ամենուր երևում է արտաքին ուժի ոչ այնքան ռազմական, որքան դիվանագիտական միջամտության քայքայիչ ազդեցությունը: Սյունիքը, լինելով Հայաստանի խոշոր և զինական տեսակետից հզոր նահանգներից մեկը, վաղնջական ժամանակներից ցայսօր մնում է մեր ժողովրդի հյուսիսարևելյան (ցավոք, այժմ միայն հարավային) սահմանների հուսալի պատվարն ու պահապանը:

Ծանոթագրություններ

1. Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան), Մոսկվա, 1861, էջ 212:
2. Նույն տեղում, էջ 220:
3. Նույն տեղում:
4. Հայաստանի պատմական աշխար-

հագրության հմուտ մասնագետ, երջանկահիշատակ Թ. Հակոբյանի կարծիքով՝ «Հնարավոր է, որ սկզբնական շրջանում Աղահեճքը [Սյունիքի - Գր. Գր./ թագավորության մասը կազմած լիներ... բայց... 1003 թվականից սկսած՝ նա երբեք չէր կարող պատկանել Սյունյաց թագավորությանը...» (տես Թ. Հակոբյան. Սյունիքի թագավորությունը պատմաաշխարհագրական առումով, Երևան, 1966, էջ 68): Ի դեպ, նկատենք, որ ուսումնասիրողներից ոմանք, հենվելով Ն. Ադոնցի, Գր. Ղափանցյանի և Ար. Ղարիբյանի ստուգաբանական վերլուծությունների վրա, նույնպես կարծում են, որ Սյունիքում նախահայկական շրջանում գոյություն են ունեցել 8-10 ցեղեր կամ ցեղախմբեր: Նրանց կարծիքով էթնիկական ծագում ունեն սյունիներ, սակեր, բաղեր, գելեր, վայեր, ծավդեացիներ, լահիճներ, քաշեր, արևներ և այլ եզրերը (տես նույն տեղում, էջ 167): Ենթադրում են նաև, թե Ձագեձորը ոչ թե Ձագ (Ձագիկ) նահապետի անվան հետ է աղերսվում, այլ՝ սակերի, և իբրև թե այդ անունը նախապես հնչել է Սակեձոր և ոչ՝ Ծակեձոր (ծակերի, քարանձավների ձոր), որին նույնիսկ կարելի էր համաձայնել (նույն տեղում, էջ 163, տես նաև 137, 159, 162 և այլ էջերը):
5. Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 76:
6. Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 6:
7. Դիվան հայ վիմագրության, պր. I, կազմեց Հ. Օրբելին, Երևան, 1966, էջ 35, արձ. 101:
8. Ստեփանոս Օրբելյան, էջ 227:
9. Նույն տեղում, էջ 224:
10. Նույն տեղում, էջ 223:
11. Նույն տեղում, էջ 224:
12. Նույն տեղում, էջ 225:
13. Նույն տեղում, էջ 224:
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում, էջ 233:
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում:
18. Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն, էջ 54:
19. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 124:
20. Գր. Գրիգորյան. Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից.- ՊԲՀ, 1980, № 2, էջ 159-162: Տես նաև նույնի՝ Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 207:
21. Ստեփանոս Օրբելյան, էջ 233:
22. Դիվան հայ վիմագրության, պր. II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1960, էջ 138:
23. Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 561: Տես նաև՝ Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 120:
24. Դիվան հայ վիմագրության, պր. II, էջ 138:
25. Ս. Ավագյան. Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 142-143:
26. Ստեփանոս Օրբելյան, էջ 230:
27. Գր. Գրիգորյան. Հայկական վիմագրություն, Երևան, 2000, էջ 97:
28. Դիվան հայ վիմագրության, պր. II, էջ 45:
29. Գր. Գրիգորյան. Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները.- ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, № 10, էջ 87-88:
30. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 125:
31. Գր. Գրիգորյան. Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 164-165:
32. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 125:
33. Ստեփանոս Օրբելյան, էջ 233:
34. Նույն տեղում, էջ 234:
35. Նույն տեղում:
36. Նույն տեղում, էջ 241:
37. Նույն տեղում, էջ 239- 240:
38. Գր. Գրիգորյան. Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, էջ 87:
39. Գր. Գրիգորյան. Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 162-163:
40. Գր. Գրիգորյան. Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, էջ 87:
41. Ստեփանոս Օրբելյան, էջ 235:
42. Նույն տեղում:
43. Նույն տեղում, էջ 236:
44. Նույն տեղում, էջ 235:
45. Սյունիքի մայրաքաղաք Կապանի ավերակները գտնվում են Կապան-Քաջարան մայրուղու ձախակողմյան սարալանջին, Ողջի գետի աջ ափին, այժմյան դպրոցական ճամբարների և Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի առողջարանային համալիրի տարածքում: Երբեմնի քաղաքը ծածկված է անտառային խիտ բուսականությամբ, սակայն հարավային մասում տեղ-տեղ երևում են պարսպապատերի մնացորդները՝ երբեմն 2-2,5 մ բարձրությամբ: Պրոֆ. Թ. Հակոբյանի կարծիքով Կապանի երկարությունը եղել է շուրջ 3 կմ՝ «Տանձու լենջի ջրից մինչև Բաղակի վանքի մոտերքը», իսկ լայնությունը՝ «150-700 մետր» (Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 129):
46. Ջիտաթաղ անունը ուսումնասիրողների կարծիքով նշանակել է ջհուդների - հրեաների թաղ (տես, օրինակ՝ Ս. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 41):
47. Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 114:
48. Տես Թ. Հակորյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 569:
49. Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ Սյունիքն ունեցել է 43 ամրոց, որոնցից 12-ը եղել են համեմատաբար առավել հզոր (տես Ստեփանոս Օրբելյան, էջ 245):
50. Ստեփանոս Օրբելյան. Ողբք և հառաչանք ի դիմաց կաթուղիկէին, Կալկաթա, 1846, էջ 17-18:
51. Բ. Հարությունյանի կարծիքով՝ Սմբատ Ա-ն 976-980 թթ. եղել է գահերեց իշխան, թագավորել է 987-988 թթ. (տես Բ. Հարությունյան. Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը.- «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, №1):
52. Գր. Գրիգորյան. Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 207:

//

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում

ՏԱՃԱՏ ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Բագրատունյաց ֆեոդալական թագավորությունն անկարող եղավ ստեղծել միասնական ուժեղ կենտրոնաձիգ իշխանություն: X դարում նրանից անջատվեցին Արծրունյաց, Վանանդի, Սյունյաց, Լոռիի ֆեոդալական իշխանությունները ու կազմեցին առանձին մանր թագավորություններ: Հայաստանի այդ մասնատումը, անշուշտ, բացասական դեր է խաղացել երկրի քաղաքական միասնության գործում: X դարում ֆեոդալական Հայաստանում մանր թագավորությունների կազմավորումը, որպես կենտրոնախույս ու հետադիմական մի երևույթ, լուրջ հարված է հասցնում հայկական պետության ռազմական հզորությանը, որի հետևանքով XI դարում Հայաստանը անկարող եղավ դիմադրել երկիրը ներխուժած բյուզանդական և սելջուկյան ուժերին և մասնատված ու ցաքուցրիվ գործող հայկական ռազմական ուժերը ջախջախվեցին բյուզանդացիների ու սելջուկների հարվածներից:

Սյունիքը X դարում գրավում էր լայնածավալ տերիտորիա: Ժամանակակից հայ մատենագիր Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, թե սկսած ավանդական Սիսակ նահապետից Սյունյաց նախարարությանը զբաղեցրել է **«ի ծովեզերէն (Սևանա լճից- Տ. Ս.) զհարաւակողմն արևելեան մինչ ի դաշտ ինչ, ընդ որ հատեալ գետն Երասխ՝ յորձանուտ խոխոջիւք վազս առեալ և թափ անկեալ ընդ և ընդ նուրբ խոխոմս քարանձաւի միոյ, որ այժմ ի բազմաց Քարաւազ անուանի»**[1]: Այսպիսով, միջնադարում Սյունիքի սահմանները հասել են Սևանա լճից մինչև Մուղանի դաշտավայրի սահմանները, մինչև Արաքս գետը՝ ընդգրկելով ընդարձակ տերիտորիա:

X դ. կեսերին ռազմաքաղաքական ու տնտեսական տեսակետից Սյունիքը Հայաստանի առաջնակարգ նահանգներից մեկն էր: Այս հանգամանքը նախադրյալ է հանդիսանում Սյունյաց իշխանների համար Բագրատունյաց թագավորությունից անջատվելու և առանձին թագավորություն հիմնելու:

X դ. երրորդ քառորդում Սյունիքում բացառիկ խոշոր դեր է խաղում Սմբատ II Սյունյաց իշխանը, որը Սյունյաց գահերեցությունն ստանձնել է 963 թ.: Իր ռազմավարչական, տնտեսական ու շինարարական աչքի ընկնող գործունեության համար նա մեծ հեղինակություն է ունեցել ոչ միայն Սյունիքում, այլ նաև նրա սահմաններից դուրս՝ Բագրատունյաց ու Աղվանից արքունիքներում: Նա բարեկամական կապերի մեջ է եղել Բագրատունի Աշոտ III-ի և Աղվանից թագավորների հետ:

X դարի երկրորդ կեսին Բագրատունյաց և Աղվանից թագավորությունների միջև սրվում են հակասությունները: Բագրատունիները ձգտում էին Աղվանից թագավորության հաշվին իրենց տիրապետությունը ընդարձակել հյուսիս-արևելքում: Այդ պատճառով Աղվանից թագավորները թշնամական դիրք էին գրավել Բագրատունիների նկատմամբ և, սերտորեն կապվելով Սյունյաց իշխանների հետ, ջանում էին վերջիններիս հանել Բագրատունյաց գերիշխանությունից:

Աղվանից թագավորի խորհրդով ու հորդորանքով, Սյունյաց Սմբատ իշխանը, ինչպես հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը, 970 թ. Սյունյաց իշխանությունը հայտարարում է Բագրատունյաց թագավորությունից անկախ թագավորություն և իրեն հռչակում թագավոր[2]:

Հաշվի առնելով Հայաստանում Սյունիքի ռազմաքաղաքական խոշոր դերը, արյունահեղության տեղիք չտալու համար, Բագրատունի Աշոտ III թագավորը հաշտվում է ստեղծված դրության հետ և ճանաչում Սյունյաց թագավորության անկախությունը: Սյունյաց թագավորությունը շարունակում է պահպանել իր նախկին բարեկամական ու վասալական կապերը Բագրատունյաց թագավորության հետ: Այսպես, օրինակ, երբ 974 թ. բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկը, պատերազմի գնալով արաբների դեմ, անցնում է Հայաստանով, վերջինիս դիմավորելու համար Աշոտ III-ի պահանջով իր զորագնդով ներկայանում է նաև Սյունյաց Սմբատ թագավորը:

Սյունյաց թագավորության անկախությունը ճանաչում են Պարսկաստանը (կամ Խորասանի էմիրությունը), Վրաստանը, Աղվանքը և այլն: Սիրաշահելով Սյունյաց Սմբատ թագավորին, Խորասանի էմիրը նրան ուղարկում է նաև արքայական թագ:

Սյունյաց թագավորության մայրաքաղաքը սկզբում եղել է Սյունյաց գահերեց իշխան Սմբատի գահանիստ Ծղուկ (կամ Սիսիան) գավառի Շաղատ բերդաքաղաքը, իսկ X դ. վերջերին կամ XI դ. սկզբներին մայրաքաղաքը տեղափոխվում է Բաղք գավառի անառիկ Կապան-Բաղաբերդը:

Սյունյաց Սմբատ թագավորի մասին Ստ. Օրբելյանը գրում է. **«Արդ թագ կապեալ Սմբատայ ճոխ և երևելի փառօք յարդարէր զարքայութիւնն ըստ օրինի ինքնակալ թագաւորաց: և ետ բազում երևելի արքունական գործոց վախճանի, և դնի ի մեծ սրբարանին Տաթևոյ բազում և աշխարհագումար հանգիսիւ:**

Եւ պայազատէ զտէրութիւն նորա

մանուկ որդին նորա Վասակ, որ մեծահանդէս ժողովով և ազատակոյտ բազմութեամբ օծանի թագաւոր Սիւնեաց և Բաղաց ձեռամբ տեառն Գրիգորի Սիւնեաց եպիսկոպոսի: և զեղբայր իւր զՍևադայ կացուցանէ իշխան իշխանաց ազատակոյտ զօրաց իւրոյ»[3]:

Սյունյաց Սմբատ թագավորը արքունիքին տվել է արտաքին վայելուչ տեսք՝ նմանվելով խոշոր ինքնակալ թագավորներին, ձևավորել է արքունի պալատական կարգերը, ձեռնարկել է պետական կարևոր նշանակություն ունեցող մի շարք գործեր. կարգավորել է թագավորական զորագնդերը, ամրապնդել բերդերը, ծավալել շինարարություն և այլն:

Սյունյաց Սմբատ թագավորը հանդիսացել է Բագրատունի Սմբատ II թագավորի վասալ-դաշնակիցը. ինչպես հաղորդում է Ստեփանոս Ասողիկ Տարոնացին, երբ Սմբատ II-ը կռիվներ էր մղում աբխազների թագավորի դեմ, այդ մարտերին մասնակցում են նաև Սյունյաց զորագնդերը»[4]:

Ստեփանոս Օրբելյանը իր «Ողբ»-ում այսպես է գովերգել Սյունյաց Սմբատ թագավորին.

Բայց միւս ևս այլ ջահս լուցին,
Ի տան Բաղաց Սիսականին:
Սըմբատ սեպուհն այն մեծ Սիւնին,
Ի հայկազանցն այն առաջին:
Աջոյ բազունք Հայոց ազգին,
Բարձր և հզօր անպարտելին:
Թագաւորեալք թագ կապեցին,
Ուժգին և խրոխտ ընդդէմ չարին:[5]

(Ընդգծումը մերն է - Տ. Ս.)

Սյունյաց Սմբատ թագավորի մահվան տարեթվի մասին մատենագրական աղբյուրները որոշակի տեղեկություններ չեն հաղորդում: 998 թ. թողած մի արձանագրության մեջ թագուհի Շահանդուխտը հայտնում է, թե իր ամուսին Սմբատի «հոգու փրկության» համար Տաթևի վանքին է նվիրում Հաբանդ գավառի Տեղ գյուղը[6]: Հայտնի է, որ հայկական սովորության համաձայն այս կամ այն հանգուցյալի «հոգու փրկության» համար վանքերին ու եկեղեցիներին մեծ մասամբ նվերներ են տվել հանգուցյալի թաղման օրը, կամ տարելիցին: Ուստի կարելի է ենթադրել, որ Սմբատ Սյունյաց թագավորը մահացել է 998 թ.:

Գործունյա Շահանդուխտ թագուհին, որը եղել է Աղվանից Սևադա թագավորի դուստրը, Սյունիքում կառուցել է տվել մի քանի գողտրիկ եկեղեցիներ. 1000 թ. ավարտվել է նրա նախաձեռնությամբ կառուցված Սիսիանի Վաղադնի գյուղի հոյակապ տաճարի շինարարությունը և վանքին են նվիրվել Գոմերի ագարակները[7]: Գոմերի ագարակները, հավանաբար, եղել են Վաղադի գյուղին կից ձորահովտի բերքառատ հողամասերը՝ Որոտան գետի ափին:

Ստ. Օրբելյանից վերը մեջ բերված քաղվածքը միևնույն ժամանակ ցույց է տայիս, որ Սյունյաց Սմբատ թագավորին հաջորդել է նրա մանուկ որդի Վասակը, որին թագադրել են մեծ շուքով: Իսկ նրա մյուս որդի Սևադան նշանակվել է իշխանաց-իշխան: Մեր կարծիքով, Սյունիքում իշխանաց-իշխանը հանդիսացել է թագավորական զորագնդերի հրամանատարը: Երիտասարդ թագավորի խնամակալը դարձել է Շահանդուխտ թագուհին[8]:

Սյունյաց Վասակ թագավորը ձգտել է իր թագավորության սահմաններն ընդարձակել արևելքում՝ Արցախում, որի պատճառով խստորեն լարվել են հարաբերությունները Սյունյաց ու Աղվանից թագավորությունների միջև և սկսվել է պատերազմ: Սյունիքի և Աղվանքի միջև մղված պատերազմում հաղթանակ է տանում Սյունիքը և կնքված հաշտության պայմանագրով Սյունիքին են միանում վերջինիս կողմից գրավված Ծար, Վայկունիք, Բերդաձոր գավառները: Այդ գրավումներից հետո Սյունիքի և Աղվանքի սահմանը կազմում են հյուսիսից Ծար գավառի Քիթ և Քեթի լեռները, հարավում՝ Արաքս գետի վրայի Քարավազի կամուրջը:

X դարի երկրորդ կեսին Սյունիքի հարավային մի քանի գավառներ միացվում են, որից Սյունիքի կազմում հանդես է գալիս մի նոր միավոր՝ Բաղաց աշխարհը, որի մեջ մտնում էին Ձորք, Կապան և Բաղք գավառները:

Բաղաց աշխարհը հանդիսացել է Սյունյաց թագավորության ոստանը, որտեղ և գտնվել է թագավորության մայրաքաղաք Կապանը: Կապան մայրաքաղաքի անունով Սյունյաց թագավորությունը երբեմն կոչվել է Կապանի թագավորություն: Ստ. Օրբելյանից բերված քաղվածքի մեջ «Վասակ թագավոր Բաղաց և Սյունյաց» նշանակում է հարավային և հյուսիսային Սյունիքի միասնական թագավոր: Վասակը Վայոց ձորում ամրապնդում է Եղեգիս բերդը, այնտեղ կատարելով մեծ շինարարություն:

Փաստերը ցույց են տալիս, որ Վասակն իշխել է մինչև 1040 թ.: Վասակի թագավորության վերջին տարվա մասին որոշակի հիշատակություն չկա: Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատության մեջ այն հիշատակումը, թե Վասակն իշխել է մինչև 1010 թ., պետք է համարել վրիպակ, որովհետև նույն աշխատության մեջ Վասակի գործունեության մասին նշվում է նաև 1020-ական թթ.: Հայտնի է, որ 1019 թ. Վասակը Տաթևի վանքին է նվիրել Ցողունի, Գոդևան գյուղերը և այդ մասին թողել համապատասխան վավերագիր, որը բերում է Ստեփանոս Օրբելյանը[9]:

Պատմական աղբյուրներում որոշակիորեն հիշատակվում է, որ Վասակին հաջորդել է Աշոտ «իշխանաց-իշխանի» որդի Սմբատը և իշխել է միայն մի քանի տարի: Հայտնի է, որ Սյունյաց Հովհաննես VI եպիսկոպոսը (1006-1058) 1043 թ. Տաթևի վանքի առջևի մասում կառուցել է մի սյունազարդ սրահ, որի վրա թողած վիմագիր արձանագրության մեջ նշվում է. թե այն կառուցվել է Սմբատ թագավորի օրոք[10]: Այսպիսով, պետք է ենթադրել, որ Վասակը թագավորել է մինչև 1040 թ., իսկ Սմբատը (կամ Սմբատ II-ը) թագավորել է 1040-1044 թթ., որովհետև հայտնի է, որ 1045 թ., երբ Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II-ը բյուզանդամոլ հոսանքի ճնշման տակ մեկնում է Կոստանդնուպոլիս, այդ ժամանակ Սյունիքում արդեն թագավորում էր Գրիգորը:

Նախիջևանին ու Գողթնին տիրելու ձգտման պատճառով Սյունյաց և Արծրունյաց թագավորությունները մինչև վերջ էլ հանդես են եկել որպես թշնամիներ, որը լուրջ վնաս է հասցել թե՛ Սյունիքին և թե՛ Վասպուրականին, երբ արևելքից Հայաստան ներխուժած նվաճող հորդաները առանձին-առանձին հարվածել են նրանց և ավերել Սյունիքն ու Վասպուրականը:

Հիմնվելով Ստ. Տարոնացու մի անորոշ վկայության վրա, Լեոն հայտնում է, թե իբր Բագրատունի Գագիկ I-ը թշնամական հարաբերությունների մեջ է եղել Սյունյաց թագավորության հետ և պատերազմ մղելով վերջինիս դեմ՝ Սյունիքում գրավել է մի քանի գավառներ[11]: Ստ. Տարոնացին հաղորդում է, թե Գագիկ I-ը **«տիրեաց յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ և Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր...»**[12]: Թ. Հակոբյանը նշում է, որ Սյունյաց թագավորության շրջանում նրա կազմի մեջ չի մտել Գեղարքունիքը, բայց, հետևելով Լեոյին, հայտնում է, թե **«ավելի ուշ շրջանին պատկանող վկայություններն արդեն հաստատ կերպով ասում են այն մասին, որ Վայոց ձորը (Հայոց ձոր), և ամենայն հավանականությամբ նաև նրա սահմանակից ճահուկը գրավվեցին Գագիկ I-ի (989-1020 թթ.) կողմից»**[13]: Միաժամանակ նա հայտնում է, թե իբր XI դարի սկզբներից Սյունյաց թագավորության կազմի մեջ չի մտել նաև Ծղուկ գավառի մի մասը և Աղահեջք գավառը: Իբր թե դրանք ևս Գագիկ I-ը գրավել ու միացրել է Բագրատունյաց թագավորությանը: Այդ կարծիքը հաստատող նրա փաստարկումները համոզիչ չեն[14]: Իրականում Բագրատունյաց և Սյունյաց թագավորությունների միջև պատերազմ չի եղել: Այդ մասին մատենագրական տեղեկություններ գոյություն չունեն: Իսկ բազմավաստակ Մ. Չամչյանը, հավանաբար մեզ անհայտ աղբյուրների հիման վրա, հայտնում է, թե Գագիկ I-ը կռիվներ է մղել Սյունիքի Վայոց ձոր գավառին սահմանակից արևելյան շրջաններում, գրավել մի

քանի բերդեր ու հանձնել Սյունյաց թագավորությանը:

Իր աշխարհագրական դիրքով Սյունիքը միշտ էլ հանդիսացել է մի ամուր պատնեշ հարավ-արևելքից դեպի Հայաստան արշավող օտար նվաճողների դեմ, X-XII դարերում Սյունյաց թագավորությունը կարևոր դեր է խաղացել նաև կենտրոնական Հայաստանի վրա արշավող Ատրպատականի ու Գանձակի էմիրությունների դեմ մղվող պատերազմների ժամանակ: Ահա, նրա այս չափազանց կարևոր դերի համար էլ Բագրատունյաց թագավոր, ականավոր պետական գործիչ Գագիկ I-ը բարեկամական հարաբերություններ է հաստատել Սյունյաց թագավորության հետ: Իսկ Սյունյաց Վասակ թագավորը, ընդունելով Գագիկ I-ի գերիշխանությունը, ելնելով երկրի շահերից, սերտորեն կապվել է վերջինիս հետ: Այդ կապն ամրապնդվել է նաև խնամիական կապերով՝ Գագիկ I-ի կինը, գործնական թագուհի Կատրամիդեն եղել է Սյունյաց Վասակ թագավորի դուստրը[15]: Վարդան պատմիչը հաղորդում է, թե իբր թագուհի Կատրամիդեն եղել է Սյունյաց Սահակ թագավորի դուստրը[16], մինչդեռ Սյունիքում Սահակ անունով թագավոր չի եղել:

X դարի վերջերին ու XI դարի սկզբներին հարավ-արևելքից Սյունյաց ու Բագրատունյաց թագավորությունների համար լուրջ վտանգ էին ներկայացնում թուրքական հորդաները, որոնք ձգտում էին առաջին հերթին նվաճողական կռիվներ մղել Արցախում գոյություն ունեցող հայկական մանր թագավորությունների դեմ, գրավել նրանց երկրները, ապա ներխուժել կենտրոնական Հայաստան: Երբ Արցախում մահանում են Սենեքերիմ և Գրիգոր թագավորները, Գանձակի Փատլուն էմիրը որոշում է գրավել նրանց տիրույթները: Գանձակի էմիրության առաջխաղացումը վտանգի տակ պետք է դներ Բագրատունյաց և Սյունյաց թագավորությունների արևելյան սահմանները: Հաշվի առնելով այդ լուրջ վտանգը, Գագիկ I-ը որոշում է նախահարձակ լինել ու գրավել Արցախի այդ մանր հայկական թագավորությունները և կանխել Գանձակի էմիրության առաջխաղացումը:

Հատուկ նախապատրաստությունից հետո, 1003 թ. Բագրատունյաց և Սյունյաց զորքերը շարժվում են դեպի Արցախ, գրավում Խաչեն ու Փառիսոս գավառները և մի քանի այլ բերդեր: Խաչենն ու Փառիսոսն անցնում են Բագրատունյաց թագավորությանը, իսկ սահմանակից մի քանի բերդեր՝ Սյունյաց թագավորությանը: Միաժամանակ Գագիկ I-ը ընդմիշտ ճանաչում է Սյունյաց թագավորության գերիշխանությունը Ծար գավառում: Այսպիսով, այդ հաղթական արշավանքի հետևանքով ամրացվում են նաև Սյունիքի հյուսիս-արևելյան սահմանները:

Հատկապես հյուսիսային Սյունիքի գավառատեր իշխանները ձգտում էին ամրապնդել իրենց դիրքերը Բագրատունյաց արքունիքում: Այդ մասին Ա. Լաստիվերտցին հաղորդում է հետևյալը. **«Իսկ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց Սարգիս անուն՝ եգ շուք անձինն թագաւորել ի վերայ տանն Շիրակայ և որք շուրջ զնովաւ գաւառք. զի զամենայն գանձս գտեալ ի տան թագաւորին Յովհաննիսի՝ յինքն ժողովեաց. վասն զի ի մահուան նորա նա էր հոգաբարձու նմա»**[17]: Գեղարքունյաց իշխան Վեստ Սարգիս Սյունին, բարձր դիրք գրավելով Բագրատունյաց արքունիքում, Գագիկ I-ի մահից հետո փորձում է մեկուսացնել Պահլավունյաց իշխաններին:

Ուշագրավ է այն, որ հայ պատմիչները Վեստ Սարգիս Սյունու մասին երբեմն հակասական տեղեկություններ են հաղորդում: Մատթեոս Ուռհայեցին որոշակիորեն ցույց է տալիս հայրենիքի նկատմամբ նրա կատարած դավաճանությունը: **«և զկնի մահուանն Յովհաննիսի այր ոմն յիշխանաց տանն Հայոց,** – գրում է Մատթեոս Ուռհայեցին, – **որ էր այր նենգաւոր, անուն Ազատ Սարգիս հայկազն, ազգ առնէր Հոռոմոց և ի տուր տայր զաշխարհն Հայոց, և զգանձատունն առաջին թագաւորացն Հայոց յափշտակեաց և տարաւ յԱփխազք, բերդամուտ եղեալ, և աւանս բազումս էառ ընդ ձեռամբ իւրով և կամեցաւ թագաւորել ի վերայ Հայոց, զոր ոչ ընդունեցին զնա ազգն Բագրատունեաց, վասն զի հայկազն էր»**[18]: Նույն պատմիչը անդրադառնալով Վեստ Սարգիս Սյունու դավաճանության կոնկրետ փաստերին, հաղորդում է, թե «Յայսմ ժամանակիս սկսաւ անօրէնն Սարգիս յառաջ բերել զչար նենգութիւնն իւր և ազգ արարեալ Մոնոմախին և ասէր, եթէ **«Կոչես առ քեզ զԳագիկ ի Կոստանդնուպօլիս սիրոյ պատճառանօք և յայնժամ խաբէութեամբ առցես ի նմանէ զքաղաքն Անի»**[19]: Ապա Վեստ Սարգիս Սյունին դավադրաբար քաջալերում ու ստիպում է Գագիկ II-ին ներկայանալ բյուզանդական կայսրին[20]:

Իսկ Գագիկ II-ի գահակալության հաստատումից հետո, ինչպես հաղորդում է Արիստակես Լաստիվերտցին, Վեստ Սարգիս Սյունին խռովությամբ փորձում է հափշտակել Բագրատունյաց արքայական գանձերը, բայց հաջողություն չի ունենում[21]:

Տարօրինակ է այն, որ XII դարի պատմիչ Սամվել Անեցին Վեստ Սարգիս Սյունու շինարարական գործունեության մասին խոսում է գովեստով, գրելով հետևյալը.

«Մեծապատիւ վեստն Սարգիս՝ զկնի բազում շինուածոց բերդից և եկեղեցեաց՝ զհրաշալի վանս զխծկօնս շինեաց. պայծառ պսակաւ զարդարեալ զսուրբ քաւարանն որ ճանաչի անուն սուրբ Սարգիս: Նաև զԾառաքար վանքն՝ բերդ արարեալ պարսպեալ հաստահեղոյս կրով՝ բրգունս ձուլածոյս: Յորում և ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գէորգայ՝ շինէ երկուս այլ յարակիցս գմբեթաւորս՝ զսուրբ Յովհաննէս և զսուրբ Սեբէոնս»[22]: Իսկ Մխիթար Այրիվանեցին, հաղորդելով Վեստ Սարգիս Սյունու շինարարական գործունեության մասին, նրան անվանում է **«Վեստ Սարգիս շինող բերդից և վանորէից»**[23]:

Հասկանալի է, որ թե՛ Սամվել Անեցին և թե՛ Մխիթար Այրիվանեցին անտեսել են Վեստ Սարգիս Սյունու դավաճանական քաղաքականության աղետաբեր հետևանքները հայ ժողովրդի համար և նրան գովերգել են եկեղեցաշինարարության համար:

Արու ժառանգ չունենալով, Վասակ թագավորը թագաժառանգ է վերցրել իր փեսա Աշոտ իշխանաց-իշխանի որդիներ Սմբատին ու Գրիգորին, որոնք հաջորդաբար թագավորել են Սյունիքում: Իշխանաց-իշխան Աշոտի տիրույթը եղել է Ծղուկ գավառը: Թագաժառանգության ժամանակ՝ 1017 թ. Սմբատը Ծղուկ գավառի Սիսիան գյուղի եկեղեցում թողել է մի արձանագրություն, որտեղ նշում է, թե ինքը Սյունյաց իշխանաց-իշխան Աշոտի որդին է[24]:

Սմբատը դաշինք է կնքել Լոռիի Կյուրիկյան թագավորության հետ: Երբ 1040 թ. Կյուրիկյան թագավոր Դավիթ Անհողինը կռիվ է մղում Գանձակի էմիրության դեմ, Սյունյաց Սմբատ թագավորը նրան օգնության է ուղարկում մի զորագունդ:

Սմբատից հետո Սյունիքի թագավորական գահին բազմում է նրա եղբայր Գրիգորը (1044-1084): Գրիգորն էլ ավելի է ամրապնդում դաշինքը Լոռիի Կյուրիկյան թագավորության հետ: Երբ 1046 թ. Կյուրիկյան թագավորության սահմաններն է ներխուժում Դվինի Աբուլսվար էմիրի բանակը, իր դաշնակցին օգնելու նպատակով, Գրիգորը Լոռիի թագավոր Դավիթ Անհողինին է ուղարկում 2000 հոգուց կազմված մի զորագունդ, որը, Լոռիի զորագնդերին միացած, ակտիվորեն մասնակցում է մարտերին: Այդ կռիվներն ավարտվում են Աբուլսվար էմիրի զորքերի պարտությամբ:

Աղվանից և Սյունյաց թագավորությունների ամենավտանգավոր թշնամին հանդիսանում էր Գանձակի հզորացող սելջուկյան էմիրությունը: Վերջինիս դեմ Աղվանից և Սյունյաց թագավորությունների միջև կնքվում է դաշինք: Այդ դաշինքը, ինչպես հաղորդում է Ստ. Օրբելյանը, դարձյալ ամրապնդվում է նոր խնամիական կապերով[25]:

Հայաստանում Սյունյաց թագավո-

ության քաղաքական դերը զգալի չափով մեծանում է հատկապես Բագրատունյաց թագավորության անկումից հետո: Այնուամենայնիվ Սյունյաց թագավորությունն այնպիսի հզորություն չի ունեցել, որ ձգտեր Հայաստանում վերականգնել միասնական հայկական թագավորությունը:

Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ Սյունյաց թագավորության մասին հաղորդում է միայն հետևյալը. **«Էին և այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, սահմանակից Օզաց և Աղուանից, որք էին թագաւորք անարատք և սրբակրօնք, որք յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածասէր սուրբ թագաւորքն, որք էին անուանք այսոքիկ՝ Վաչագան, և Գոշա կտակն՝ նորին որդին, Փիլիպէ որդի Գոշակտակին, Սևադա որդին Փիլիպէի, Սենեքարիմ որդի Սևադայի, Գրիգոր որդի Սենեքարիմայ, որ դեռ ևս կենդանի էր մինչև գրէաք զայս մատենագրութիւնս մեր»**[26]: Այս վկայությունը ցույց է տալիս, որ Մատթեոս Ուռհայեցին աղոտ պատկերացում է ունեցել Սյունյաց թագավորության պատմության մասին: Նշենք նաև այն, որ Սյունիքում «Վաչագան» և «Գոշակտակ» անուններով թագավորներ չեն եղել: Նրա վկայությունից պարզվում է, որ այդ ժամանակ, քանի որ Հայաստանում մնացել էր միայն Սյունյաց թագավորությունը, հայոց բոլոր եկեղեցիներում ծիսակատարությունների ժամանակ հայերի զորավոր տերեր են հիշել Սյունյաց թագավորներին:

Մինչև սելջուկ-թուրքերի առաջին խոշոր արշավանքը Հայաստան, ինչպես հաղորդում է Ստ. Օրբելյանը, 1046 թ. Ատրպատականի կողմից՝ Արդաբիլից ու Թալիշից թուրքական մի ավազակային զորագունդ ավարառուական նպատակով հանկարծակի ներխուժում է Սյունիք, հասնում Տաթև, սրի քաշում Տաթևի վանքի միաբաններին, հիմնովին թալանում գանձերով հարուստ Տաթևի վանքը և հրկիզում. փորձում են խորտակել վանքի բակում կառուցված խորհրդավոր շարժական սյունը, ավերում են ու հրկիզում նաև վանքի հարակից շենքերը, արհեստանոցները: Այդ ժամանակ Հովհաննես մետրոպոլիտը Տաթևում չի եղել: Հետագայում նա Սյունյաց Սմբատ թագավորի ու «գավառակալք» իշխանների օգնությամբ վերականգնում է Տաթևի վանքը և նորմալ հունի մեջ դնում Սյունյաց հոգևոր թեմի գործերը:

Սելջուկ-թուրքերի արշավանքներից համեմատաբար քիչ է տուժել Սյունիքը: Իրենց առաջին երեք արշավանքների ժամանակ սելջուկ-թուրքերը բուն Սյունիք չմտան: Այդ բացատրվում է որոշ չափով Սյունյաց թագավորության ռազմական հզորությամբ: Սյունյաց Գրիգոր թագավորը շուրջն է համախմբում բոլոր գավառատեր իշխաններին ու պատրաստվում դիմադրելու սելջուկ-թուրքերին:

Երբ Ալփասլանը գերազանց ուժերով անցնում է նոր արշավանքի, Սյունյաց Գրիգոր թագավորը, ճիշտ գնահատելով ստեղծված դրությունը, դիմում է հաջող դիվանագիտության: Լավ գիտակցելով, որ թշնամու գերազանց ուժերին հնարավոր չէ դիմադրել, հաշտության բանակցության համար նա դիմում է Ալփասլանին: Կողմերի բանակցությունները վերջանում են նրանով որ Գրիգորը ճանաչում է սելջուկյան սուլթանության ձևական գերիշխանությունը, իսկ Ալփասլանը խոստանում է չմիջամտել Սյունյաց թագավորության ներքին գործերին: Չնայած դրան, այնուամենայնիվ, սելջուկ-թուրքերը Սյունիքի դաշտային գավառներում ևս հայ իշխանների մի մասից խլել են նրանց տիրույթները: **«Յայնմ ժամանակի էր բարձրացեալ և զօրացեալ տէրութիւնն Տաճկաց,** – հաղորդում է Ստ. Օրբելյանը, – **և ամենայն աշխարհ ի ներքոյ հարկի նոցա նուաճեալ կայր, վասն որոյ և յոլով զաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս ի ձեռաց բնիկ տերանցն»**[27]: Բայց հետագայում Սյունյաց Սենեքերիմ թագավորը, ինչպես հաղորդում է, Ստ. Օրբելյանը, դիմում է սելջուկյան սուլթան Մելիքշահին ու սելջուկներից ետ ստանում մի քանի գավառներ[28]:

XI դարի 2-րդ կեսին Սյունիքում որոշ չափով զարգանում է տնտեսությունը, ծավալվում է շինարարությունը: Սյունիքի հարավարևելյան սահմանի պաշտպանության համար կառուցվում է Զևու բերդը, որը ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն է ունեցել ոչ միայն Սյունյաց թագավորության ժամանակաշրջանում, այլ նաև XVIII դարում, հատկապես Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական պատերազմի ժամանակ: Կառուցվում են մի քանի հոյակապ եկեղեցիներ, ինչպես, օրինակ, Սյունյաց թագուհու նախաձեռնությամբ 1086 թ. կառուցված եկեղեցին՝ Վահանավանքում՝ Բաղքում[29]: Սյունյաց հոգևոր թեմի թեմական Գրիգոր եպիսկոպոսը (1058-1115) բարձրացնում է Տաթևի վանքի պարիսպները, նրան բերդի տեսք տալիս:

Այս շրջանում Սյունյաց հոգևոր թեմը, Սյունյաց թագավորության հովանավորությամբ, փորձում է չենթարկվել Ամենայն հայոց կաթողիկոսությանը և ձեռք բերել բացարձակ ինքնուրույնություն: Սյունյաց հոգևոր թեմի դերն այնքան մեծ է եղել, որ նա գործարար կապերի մեջ է մտել նաև Կիլիկիայի հայկական պետության հետ: Այդ ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոս չէին կարող ձեռնադրել առանց Հայաստանի չորս խոշոր հոգևոր թեմերի համաձայնության, որոնցից մեկը եղել է Սյունյաց հոգևոր թեմը:

Արու ժառանգ չունենալով, Սյունյաց Գրիգոր թագավորը թագաժառանգ է վերցրել իր աներորդի՝ Աղվանից իշխանազուն Սենեքերիմին: Սենեքերիմը թագավորել է 1084-1103 թթ.: Քանի որ նա եղել է Աղվանից իշխանազուն, դրա հիման վրա ոմանք կարծում են, թե Սյունյաց թագավորությունը ունեցել է երկու դինաստիա, տեղական՝ Սյունյաց նախարարական տոհմի և օտար՝ Աղվանից Սենեքերիմյան: Նման դինաստիական բաժանումը ձևական է, որովհետև Սյունյաց բոլոր թագակիրներն էլ արյունակցական կապերով կապված են եղել Սյունյաց նախարարական տոհմի հետ:

Ստ. Օրբելյանը Սյունյաց Սենեքերիմ թագավորին անվանում է «առույգ, հանճարեղ և իմաստուն»[30] այր, գրելով, թե **«...յոյժ երևելի փառօք թագաւորեաց ի տան Բաղաց, ընդարձակեաց զամենայն սահմանս տէրութեան իւրոյ, և բազում ամօք վարեաց զթագաւորութիւնն քաղցր և խաղաղական կենօք...»**[31]:

Սելջուկ-թուրքերի գերիշխանությունը Սյունիքում եղել է ձևական նաև Մելիքշահի (1072-1092) գահակալության ժամանակ: Սենեքերիմը, գահ բարձրանալուց անմիջապես հետո, գնում է Մելիքշահի նստավայրը, ընդունում նրա գերիշխանությունը, Սյունիքի ներքին ինքնուրույնությունը պահպանելու պայմանով, և, ինչպես տեսանք, սելջուկ-թուրքերից հետ ստանում Սյունիքից զավթված մի քանի գավառամասեր: Սենեքերիմը միայն որոշ գումարի հարկ է տալիս Ատրպատականի, Աղվանքի և Հայաստանի միացյալ սելջուկյան կուսակալ Իսմայիլ-իբն-Ակութին: Այդ կուսակալության կենտրոնը եղել է Գանձակը: Իր գահակալության ընթացքում Սենեքերիմը եռանդուն կերպով ամրացնում է Կապանը: Օգտվելով սելջուկյան սուլթանության ներքին պայքարից, Սյունյաց Սենեքերիմ թագավորը վերջնականապես ամրանում է Ծար, Վայկունիք ու Վերին Խաչեն գավառներում և ձգտում իր իշխանությունը հաստատել Արցախում և իբրև հայրենական ժառանգություն, նա գրավում է Արցախի մի մասը:

Հ. Մանանդյանը նշում է, թե **«Սելջուկյան աշխարհակալ պետության քայքայման պատճառով հետզհետե ուշքի եկան նաև բուն Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները (Սյունիքը), որոնք համեմատաբար քիչ էին տուժել սելջուկյան հարձակումներից»**[32]:

XI դարի վերջերին Գանձակի սելջուկյան կուսակալությունը ևս, սուլթանությունից անկախանալով, ձգտում է նոր նվաճումներ կատարել ի հաշիվ հարևանների: Գանձակի սելջուկյան Էմիր Փատլունը անխոնջ կերպով նախապատրաստվում է էմիրության սահմաններն ընդարձակել արևմուտքում:

Նրան այդ բանում խոչընդոտ էր հանդիսանում Սյունյաց թագավորությունը: Այդ պատճառով էլ Փատլունը առաջին հերթին պատերազմ է սկսում Սյունյաց թագավորության դեմ: Սելջուկյան զորքերը 1094 թ. մտնում են Բաղաց աշխարհ և պաշարում Կապանը: Կապանի պաշտպանությունը գլխավորում է Սենեքերիմը: Իսկ Բաղքի բնակչությունը անտառապատ լեռներում թիկունքից իր հերթին հարվածում է թշնամուն: Թշնամին թողնում է Կապանի պաշարումն ու դիմում նահանջի: Ապա Փատլունը ճարպկորեն օգտագործում է հայկական ֆեոդալական տոհմերի միջև եղած հակասությունները: Նա Սյունյաց թագավորության դեմ է հանում Պահլավունի իշխաններին: Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունին դառնում է Փատլունի կամակատարը: Վերջինս որոշում է Վասակ Պահլավունու դավադրությամբ ասպարեզից վերացնել Սյունյաց թագավոր Սենեքերիմին: Հաշտության անվան տակ նա մի զորագնդով Սենեքերիմի մոտ է ուղարկում Վասակ Պահլավունուն: Տեղի ունեցած «բանակցության» ժամանակ տմարդի Վասակ Պահլավունին սպանում է Սենեքերիմին: Որոշ աղբյուրներ հաղորդում են, թե իբր այդ դավադրությունը չկազմակերպելու դեպքում Փատլունը սպառնացել է գլխատել Վասակ Պահլավունուն: Թե՛ Վարդան պատմիչը և թե՛ Մխիթար Այրիվանեցին այս եղեռնագործությունը նկարագրում են նույն ձևով, բայց Վարդան պատմիչի մոտ վրիպակ պետք է համարել այն, երբ Սենեքերիմի սպանությունը դնում է 1074 կամ 1094 թթ[33]: Իրականում Սենեքերիմի սպանությունը տեղի է ունեցել 1103 թ.: Հայտնի է, որ նա Սյունյաց գահը գրավել է 1084 թ., իսկ Ստ. Օրբելյանը հաղորդում է, թե նա «բազում ամօք վարեաց զթագաւորութիւնն»[34]:

Ոմանք կարծում են թե Սենեքերիմի սպանությունը կազմակերպել է Շիրակի իշխան Գրիգոր Ապիրատը, որ ճիշտ համարել չի կարելի: Այդ տեսակետի կողմնակիցները հիմնվում են Ստ. Օրբելյանի հետևյալ վկայության վրա. **«Սակս որոյ խանդացեալ անիծեալ Իսմայէլականացն ընդ գեղեցիկ և ամուր թագաւորութիւնս Բաղաց, զոր խոչ մեծ համարէին ինքեանց, ելեալ ամիրայն Պարտաւայ և Ռանայ և Գանձակայ՝ բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Սենէքերիմայ, ընդ որում էր Շիրակայ իշխանն Գրիգոր Ապիրատեան: Իմացեալ զայն Սենէքերիմայ՝ ամրացոյց զամենայն աշխարհին յանառիկ ամուրս, և եկեալ ապա անիծեալ ամիրային և տեսեալ, զի անհնարին էր ի մարդկանէ՝ յուղարկէ զԳրիգոր իշխանն Անեցի, որ պատճառաւ ինչ կայր առ նմա-առ Սենեքերիմ արքայն և ասէ, «երդմամբ հաւանեցո զնա գալ առ իս և առնեմք ընդ միմեանս սէր և մեծամեծ պարգևօք արձակեմ զնա, ապա թէ ոչ հաւանեցուցանես՝ և զքոյդ գլուխ աստէն հատանեմ»: Գնացեալ ապա Գրիգորին այն զչար ճանապարհն և մտեալ առ Սենեքերիմ՝ մեծամեծ երդմամբ հաւանեցուցանէ զնա դալ առ ամիրայն, որք և եկինն ի միասին: Իսկ տեսեալ զնա չարաթոյն գազանին՝ ստեաց ուխտին, և յարձակեալ մռմոանօք ի վերայ՝ եսպան զթագաւորն, և ինքն անց գնաց յաշխարհն իւր»**[35]: Այստեղ Ստ. Օրբելյանը, կատարված անցքերը մանրամասնությամբ նկարագրելով, թյուրիմացաբար, Սենեքերիմի սպանությունը, Վասակ Պահլավունու փոխարեն, վերագրում է Գրիգոր Ապիրատին: Գուցե Գանձակի էմիրության զորքերի հետ Սյունյաց թագավորության դեմ մղվող պատերազմին մասնակցել է նաև ոմն Գրիգոր Ապիրատ հայ իշխան: Բայց ավելի հավանական է, որ Վասակ Պահլավունուն, հոր անունով, կոչել են նաև Գրիգոր և նա կարող էր կալվածքներ ունենալ նաև Շիրակում ու ապրել Անիում, որի համար էլ նրան անվանել են նաև իշխան Շիրակի և Անեցի:

Սենեքերիմին հաջորդում է նրա ավագ որդի Գրիգորը (1103-1166): Վերջինիս գահակալության սկիզբը անորոշ է, Ղ. Ալիշանը համարում է XII դարի առաջին տասնամյակը և նրա գահակալության սկիզբը դնում է «11...» թ.: Քանի որ Սենեքերիմի սպանությունը եղել է 1103 թ., Ղ. Ալիշանի «11...»-ին ավելացնում ենք «03» և ստացվում է 1103 թվականը:

Ծանոթագրություններ

1. Հովհ. Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 17:
2. Ս. Պողոսյանը Սյունյաց թագավորության հիմնումը «Հայ ժողովրդի պատմություն» գրքում (հատ, II , 1965, էջ 54) դնում է 973 թ., գրելով, թե «Սյունյաց գահերից իշխան Սմբատը 973 թ. Սյունիքը անջատեց Բագրատունիների թագավորությունից, Խորասանի արաբական էմիրից թագ ստացավ և իրեն հայտարարեց թագավոր (973-998)»: Իսկ գրքի վերջում գրված «Կարևորագույն դեպքերի ժամանակագրություն»-ում Սյունյաց թագավորության հիմնումը նշված է 968-970 թթ.: «Очерки истории СССР»-ի առաջին մասում Սյունյաց թագավորության հիմնադիրը թյուրիմացաբար համարված է Վասակ Սյունյաց իշխանը:
3. Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 220:
4. Ստ. Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Փարիզ, 1859, էջ 244:
5. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 2407, էջ 278: Տես նաև Ստ. Օրբելյան, Ողբ ի ս. Կաթուղիկէն, Թիֆլիս, 1885, էջ 37:
6. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 213:
7. Նույն տեղում, էջ 220-221:
8. Տես նույն տեղում, էջ 220:
9. Նույն տեղում, էջ 223-224:
10. Տե՛ս Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 23:
11. Տես Լեո, Հայոց պատմություն, հատ. II , Երևան, 1947, էջ 625:
12. Ստ. Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, էջ 247:
13. Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորության տերիտորիան, «Երևանի պետական համալսարանի Գիտ. աշխատություններ», հատ. 47, Երևան, 1955, էջ 140:
14. Տես նույն տեղում, էջ 145-146:
15. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 219:
16. Տես Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 123:
17. Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Վենետիկ, 1844, էջ 37:
18. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 84:
19. Նույն տեղում, էջ 93:
20. Տես նույն տեղում, էջ 94:
21. Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 37-38:
22. Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 106:
23. Տես Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58:
24. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 214:
25. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 233:
26. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 231,
27. Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 234:
28. Տես նույն տեղում, էջ 234:
29. Տես նույն տեղում, էջ 176, տես նաև Ղ. Ալիշան, Սիսական, էջ 296:
30. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 233:
31. Տես նույն տեղում, էջ 234:
32. Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922, էջ 47:
33. Տես Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, էջ 137:
34. Ստ. Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, էջ 234:
35. Ստ. Օրբելյան, նույն տեղում, էջ 234-235:

«ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», 1966, № 3

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Ավատական կարգերի հետագա զարգացման ու խորացման, ինչպես նաև արտաքին ուժերի միջամտության հետևանքով հայ Բագրատունիների թագավորությունը X դարի 60-ական թվականներից սկսեց հետզհետե թուլանալ: Կենտրոնաձիգ իշխանության տկարացման հետևանքով սկսեցին իրենց ավելի ու ավելի զգացնել տալ հայոց թագավորության խոշորագույն իշխանական տների կենտրոնախույս ձգտումները: X դարի սկզբներին Բագրատունյաց թագավորությունից անջատվեց Վասպուրականը, որտեղ հիմնադրվեց Արծրունյաց թագավորությունը, իսկ նույն դարի 60-80-ական թթ. ստեղծվեցին Վանանդի, Լոռու, Փառիսոսի և Սյունյաց թագավորությունները: Հայկական պետության տրոհումը բազմաթիվ մանր կիսանկախ թագավորությունների մեծապես ջլատում էր Հայաստանի ռազմական ու դիմադրական ուժը:

Վերոհիշյալ թագավորություններից մի քանիսի հիմնադրման թվականը մեզ հայտնի է, իսկ մյուսներինը՝ ոչ: Անհայտների մեջ է նաև Սյունյաց թագավորությունը: Կ. Շահնազարյանցը, Էմիրը, Ղ. Ալիշանը, Թ. Հակոբյանը, Տ. Սահակյանը և ուրիշներ թագավորության հիմնադրումը Սյունիքում դնում են 970 թվականին[1], իսկ Ս. Պողոսյանը՝ 973 թվին[2]: Հ. Ութմաջյանը նույնպես մասնակիորեն անդրադարձել է այս հարցին և Սյունյաց թագավորության հռչակումը դրել X դարի 70-ական թվականներին[3]: Չնայած այն հանգամանքին, որ ուսումնասիրողների մեծ մասը թագավորության հիմնումը դնում է 970 թվականին, այնուամենայնիվ, դա կատարված է առանց հիմնավոր փաստարկի: Հայտնի է, որ Ստ. Օրբելյանը՝ հաղորդելով Սմբատ Սյունեցու թագադրության մասին, թվականի վերաբերյալ ոչինչ չի ասում[4]: Ըստ երևույթին նման ենթադրությունների համար հիմք է ծառայել Մ. Ուռհայեցու մի հիշատակությունը, ըստ որի 974 թ.[5] դեպի Հայաստան շարժվող Չմշկիկ կայսերը դիմավորելու կամ ավելի ճիշտ նրա առաջընթացը կասեցնելու համար 80000-անոց բանակով Տարոն է գնում Աշոտ III Ողորմած արքան, որի հետ էին իրենց զորաբանակներով Կապանի Փիլիպե, Աղվանից Գուրգեն, Վանանդի կամ Կարսի Աբաս, Վասպուրականի Սենեքերիմ և Անձևացյաց Գուրգեն թագավորները, ինչպես նաև սասունցիները[6]: Ուսումնասիրողները կարծել են, որ Կապանի Փիլիպե թագավորը Սյունյաց թագավոր Սմբատն է, ուստի և թագավորության՝ հիմնադրումը գրել են 970-973 թվերի միջև ընկած շրջանում: Սակայն այս տեղեկությունը վերաբերում է ոչ թե Սյունյաց թագավորին, այլ Արցախի արքայիկներից մեկին: Նման եզրակացության համար մեզ հիմք են ծառայել Մատթեոս Ուռհայեցու և մի քանի այլ հեղինակների վկայությունները:

Մ. Ուռհայեցին հայտնում է, որ Աշոտ III Ողորմածի թագադրությանը ներկա էր Աղվանից Փիլիպպոս թագավորը, որը Գողազգակի որդին էր և Վաչագանի թոռը[7]: Մեկ այլ տեղում նա մեկ այլ Փիլիպպոսին կամ Փիլիպպեին[8] համարում է Կապանի թագավոր, իսկ անդրադառնալով Սյունյաց թագավորությանը, գրում է. **«էին և այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, սահմանակից Օզաց և Աղուանից, որք էին թագաւորք անարատք և սրբակրօնք, որք յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածասէր սուրբ թագաւորքն, որք էին անուանք այսոքիկ՝ Վաչագան, և Գոշակտակն՝ նորին որդին, Փիլիպէ որդի Գոշակտակին, Սևադա որդին Փիլիպէի, Սենեքարիմ որդի Սևադայի, Գրիգոր որդի Սենեքարիմայ, որ դեռ ևս կենդանի էր մինչև դրէաք զայս մատենագրութիւնս մեր»**[10]:

Ասողիկը՝ անդրադառնալով Արցախի և Փառիսոսի պատմությանը, հաղորդում է, որ Կարսի Աբաս թագավորի մայրը «էր քոյր թագաւորացն Փառիսոսոյ Սենեքերիմայ և Գրիգորի»[11] և որ **«ի ՆԾԲ (1003 թ.) թուականին իշխանքն՝ Փառիսոսոյ, որ ի Հայկազեան ազանց՝ բաւեալ մինչև ցՍենեքերիմ և ցԳրիգոր՝ սպառեցան մահուամբ: Զորոց զաաշխարհին բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ և Փատլուն ամիրայն Գանձակայ»**[12]:

Վերջապես մենք ունենք նաև Ստ. Օրբելյանի այն հաղորդումը, թե Սյունյաց Գրիգոր թագավորը ամուսնանում է Շահանդուխտի հետ, որը Աղվանքից էր ու **«դուստր նոցին թագաւորազինն մեծին Սևադայի»** և անժառանգ մնալով Սյունիք է բերում Շահանդուխտի եղբորը՝ Սենեքերիմին ու նրան կտակում թագավորությունը: Սենեքերիմի մահից հետո Կապանի թագավոր է դառնում նրա որդի Գրիգորը[13]:

Ա. Մնացականյանն իր «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» աշխատության մեջ ցույց է տալիս, որ Ուռհայեցու տեղեկությունը (վերը բերված վերջին վկայությունը, էջ 231) վերաբերում է Աղվանքին: Այս միանգամայն ճիշտ եզրակացությանը հանգելով, նա սխալվում է, երբ Ուռհայեցուն ժամանակակից Գրիգոր թագավորին նույնպես համարում է Աղվանից արքա[14], որովհետև տարեգրի վկայությունը մասամբ վերաբերում է Սյունիքին:

Մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ուռհայեցու մոտ գոյություն ունի բավականին մեծ շփոթ: Նրա «Ժամանակագրութեան» մեջ խայտաբղետ ձևով իրար է միահյուսված Սյունիքի X-XI դարերի և Աղվանքի հին ու հայոց Արևելյան Կողմանց IX-XI դարերի պատմությունը: Հայտնի է, որ Սյունիքում չեն եղել Վաչագան կամ Վաչագան, Գոշակտակ, Փիլիպե և Սևադա անունով թագավորներ, սակայն իրոք Ուռհայեցու ժամանակ 1130-ական թթ. այնտեղ իշխում էր Գրիգոր թագավորը[15]: Որ Վաչագանը, Գոշակտակը և Փիլիպպեն Աղվանից իշխաններ էին, պարզվում է հենց Ուռհայեցու այն տեղեկությունից, ըստ որի Վաչագանի թոռ և Գոշակտակի որդի Փիլիպպեն եղել է Աղվանից թագավոր և մասնակցել է Աշոտ Ողորմածի թագադրությանը[16]:

Արևելյան Հայաստանի կամ հայկական Աղվանքի պատմությունը լավ ուսումնասիրված չէ, իսկ սկզբնաղբյուրների կցկտուր վկայությունները մեզ հնարավորություն չեն տալիս պարզելու այն հարցը, թե ո՞վ է եղել այդ Փիլիպպեն: Մենք գիտենք, որ IX դարում Հայոց Արևելյան կողմերում, այսինքն՝ Արցախի,



Խաչենի ու Գարդմանի շրջաններում և բուն Աղվանքում, այսինքն Կուրից հյուսիս ընկած տերիտորիայում Համամը ստեղծում է Աղվանից թագավորությունը[17], որը հայկական թագավորություններից մեկն էր: Համամին որպես թագավորներ հաջորդել են նրա եղբայր Փիպեն և որդին՝ Ատրներսեհը[18]: Սակայն այս Փիպեն կամ Փիլիպպեն չի կարող լինել Աշոտ III-ի թագադրությանը մասնակից Փիլիպպե թագավորը, որովհետև X դարի կեսերին արդեն Աղվանից թագավոր էր Ատրներսեհի որդի Իշխանիկը կամ Իշխանականը[19]:

Մեկ այլ Փիլիպպեի մենք հանդիպում ենք Արցախի իշխաններից մեկի՝ Ատրներսեհի տոհմում: Ավելորդ չենք համարում բերել Մ. Դասխուրանցու տեղեկությունների հիման վրա կազմված տոհմածառը[20]:

Հովհաննես Դասխանակերտցու հաղորդման համաձայն Սահակ Սևադա իշխանը եղել է Աշոտ Երկաթի աները[21], որն ըստ երևույթին ձևական կախման մեջ էր գտնվում Աղվանից Ատրներսեհ թագավորից[22]: Ահա այս Սահակ Սևադայի հաջորդներից Հովհաննես- Սենեքերիմին հաջողվում է իրեն հռչակել թագավոր:

Ձեռքի տակ ունենալով վերոհիշյալ հիշատակությունները, կարելի է եզրակացնել, որ Աշոտ III-ի թագադրությանը մասնակից Փիլիպպե թագավորը եղել է կամ Աղվանից թագավոր Իշխանիկի հաջորդներից մեկը, կամ Սևադա Իշխան իշխանի եղբայր Փիլիպպեն և կամ, վերջապես, ինչ-որ մեկ այլ տոհմի ներկայացուցիչ: Մեր կարծիքով առավել հավանականը երկրորդ եզրակացությունն է, այսինքն՝ Հովհաննես-Սենեքերիմը Ասողիկի հիշատակած Փառիսոսի թագավոր Սենեքերիմն է, իսկ նրա հորեղբայր Փիլիպպեն՝ Ուռհայեցու հիշատակած Աղվանից թագավոր Փիլիպպեն: Ինչ վերաբերում է Ուռհայեցու տված տոհմագրությանը, ապա նրա մոտ միախառնվել են բավական անկանոն ձևով հին Աղվանքի թագավորական, Արցախի, Գարդմանի ու շրջակայքի իշխան Ատրներսեհի և Այունյաց թագավորական տոհմերի մի քանի ներկայացուցիչները: Ուռհայեցու «ժամանակագրութեան» մեջ նմանօրինակ շփոթություններ շատ կան, ուստի՝ անդրադառնալով 974 թվին Աշոտ III-ի և նրա վասալների կողմից Չմշկիկ կայսերը դիմավորելուն, պետք է նշել, որ նա պարզապես սխալվում է, երբ Փիլիպպեին համարում է Կապանի, Գուրգենին՝ Աղվանից, իսկ Աբասին Կարսի թագավոր[23]: Արդեն մենք պարզեցինք, եթե մեր ենթադրությունը ճիշտ է, որ Կապանի թագավոր Փիլիպպեն ոչ թե Այունիքի թագավոր Սմբատն է, այլ Փառիսոսի թագավոր Սենեքերիմի հորեղբայրը, որը Մ. Դասխուրանցու վկայության համաձայն թագավոր չի եղել[24]: Գուրգենը, որը Աշոտ Ողորմածի որդին է, այդ թվին թագավոր չէր կարող լինել, որովհետև Լոռու թագավորությունը հիմնվել է 980-ական թվականներին[25], իսկ մինչև 984 թիվը Կարսում թագավորում էր ոչ թե Աբասը, այլ նրա հայր Մուշեղը[26], ուստի Աբասը լոկ կարող էր գլխավորել Վանանդի թագավորության զինված ուժերը: Նկատի առնելով այս ամենը, վստահությամբ կարելի է պնդել, որ այդ ժամանակ Այունյաց թագավորությունը դեռևս գոյություն չուներ: Դա ապացուցվում է նաև Ասողիկի մեկ այլ վկայությամբ, ըստ որի Աշոտ Ողորմածի օրոք թագավոր է հռչակել իրեն նրա եղբայր Մուշեղը[27]: Եթե Այունիքը առանձին թագավորություն հռչակված լիներ, ապա Ասողիկը, անկասկած, Կարսի թագավորության հետ կնշեր նաև նրա անունը: **Ցույց տալով, որ 974 թվին Այունյաց թագավորությունը գոյություն չուներ, փորձենք պարզել նրա հիմնադրման տարեթիվը:**

Այունյաց գահերեց իշխան Սմբատին, որը մահացել է 942-949 թվերի միջև ընկած շրջանում, հաջորդեց նրա որդի Վասակը[28]: Հայտնի է, որ վերջինիս մահից հետո գահերեցությունն անցել է Սահակ իշխանի որդուն՝ Սմբատին, որը և որոշ ժամանակ անց Այունիքը հռչակել է թագավորություն: Այն փաստը, որ Սմբատը 963 թվին հիշվում է որպես մի սովորական իշխան[29], անուղղակի ձևով ցույց է տալիս, որ Վասակը դեռևս կենդանի էր: Հ. Ութմազյանը գտնում է, որ Վասակը մահացել է 960-ական թվականներին[30], որը սակայն, մեր կարծիքով, հավանական չէ: Մեզ է հասել X դարի մի փաստաթուղթ, որը հնարավորություն է տալիս նման եզրակացության հանգելու: Դա Աշոտ Ողորմած թագավորի հրովարտակն է Շամբիձորի կամ Դարաշամբի սուրբ Նախավկայի վանքին կալվածքներ նվիրելու մասին[31]: Որոշ ուսումնասիրողներ կասկածի տակ են առել այդ փաստաթղթերի վավերականությունը, սակայն, մեր կարծիքով, նրա արժանահավատությունը կասկածի ենթակա չէ, իսկ որոշ աղավաղումներն էլ, անկասկած, արտագրողների վրիպումների արդյունքն են, որովհետև հրովարտակի միայն պատճենն է մեզ հասել[32]: Եվ իրոք, ինչպես ճիշտ նկատում է Ա. Տեր-Ղևոնդյանը, **«Ինչքան էլ որ այս բոլորը հետագայում հարմարեցված վավերագրեր լինեն, այնուամենայնիվ դրանք կարող են հեռավոր աղավաղված արձագանքը լինել ինչ-որ պատմական իրադարձության, մանավանդ որ թվականը զարմանալիորեն համապատասխանում է վերոհիշյալ անորոշության տարիներին»**[33]:

Փաստաթղթի հաղորդման համաձայն 976 թվին զորքով Մաղարդա սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքն է գալիս Աշոտ III Ողորմածը և նրան նվիրում ընդարձակ կալվածքներ շրջակա Նախճավան, Ոստան և այլ գավառներում: Այս փաստը չի կարելի մեկնաբանել այլ կերպ, բայց եթե Դվինից հարավ ընկած Արաքսի հովիտը Բագրատունյաց թագավորությանը միացնելու կամ նվազագույնը նրա գերիշխանությանը ենթարկելու իրողություն: Անշուշտ, առավել հավանականն այն է, որ այդ տերիտորիաներն ընկել էին Աշոտ III-ի գերիշխանության ներքո, որովհետև Ստ. Օրբելյանը՝ թվարկելով Բագրատունյաց թագավորների անմիջական կալվածքները, չի հիշատակում այս տերիտորիաները և, վերջապես, ինչպես երևում է հրովարտակից, թագավորը գնել էր կալվածքները և նոր միայն նվիրել վանքին[34]: Թե ե՞րբ էր հայոց Շահնշահին հաջողվել իր իշխանությունը հաստատել այս շրջաններում, դժվար է ասել, որովհետև այդ ժամանակաշրջանը ծածկված է պատմական մշուշով: Թերևս հավանական է կարծել, որ այդ տեղի է ունեցել 70-ական թթ. սկզբին: Այսպիսով՝ իրեն ենթարկելով Արաքսի հովտի արաբական ամիրայությունները և բազմաթիվ այլ շրջաններ, Աշոտ III-ը իր թագավորության սահմանները հասցնում է մինչև Սալմաստ, Զարևանդ, Մարանդ, Դարաշամբ (Շամբիձոր) և Նվան[35]:

Այս ընծայագրի վկաների թվում հիշվում է Վասակ անունով մի Այունյաց իշխան[36]: Անկասկած, սա Այունյաց գահերեց Վասակ իշխանն է, որը բնավ էլ չէր մահա-

ցել 960-ական թթ., և ակտիվորեն մասնակցել էր Արաբսի հովտի ազատագրմանը: Ենթադրել, որ ընծայագրի Վասակ իշխանը Սյունիքի թագավոր Սմբատի որդի Վասակն է, ճիշտ չի լինի, որովհետև Ստ. Օրբելյանի վկայության համաձայն՝ «պայազատէ զտէրութիւն նրա մանուկ որդին իւր Վասակ»[37]: Ենթադրվում է, որ Վասակը գահ է բարձրացել 998 թվին[38] և այն էլ մանուկ հասակում, ուստի նա չէր կարող լինել 976 թվի ընծայագրի վկաների թվում, իսկ Սյունիքում այդ շրջանում ուրիշ Վասակներ չեն հիշվում: Պարզելով հանդերձ, որ 976 թվին Վասակ գահերեցը կենդանի էր, դժվար է որոշել նրա մահվան թվականը: Հավանական է կարծել, որ նա մահացել է Աշոտ III-ի կյանքի վերջին տարում կամ էլ Սմբատ II-ի թագավորության առաջին տարիներին, այսինքն 976-980 թվերին: Հետևաբար այդ թվականներին էլ Սմբատը ժառանգեց Սյունյաց գահերեցությունը:

Աշոտ III-ին (953-977) հաջորդել է նրա որդին՝ Սմբատ II-ը (977-989), որը փորձում է տկարացնել, գուցե և գրավել Կարսի թագավորությունը: Կռվին խառնվում է Կարսի Մուշեղ թագավորին օգնության եկած Դավիթ Կյուրապաղատը, որի շնորհիվ նախկին վիճակը վերականգնվում է: Սակայն այս իրադարձությունները բնավ էլ անհետևանք չանցան: Թերևս այդ ժամանակ է, որ Դվինն ու նրանից հարավ ընկած Արաբսի հովիտը կրկին ընկնում են Սալարյանների ձեռքը: Սալարյան Աբու-լ-Հայջան (Աբլհաճ ըստ Ասողիկի) ամրանալով այդ շրջանում, 982 թվին Մուշեղ թագավորի դրդումով հարձակվում է Սմբատ II-ի տիրույթների վրա ու ներխուժում Շիրակ[39]: Սակայն նա շուտով ստիպված եղավ մարտնչել Գողթնի ամիրայության հետ, որն Աշոտ III-ի իշխանության վերջին շրջանում և, հավանաբար, Սմբատ II-ի կառավարման առաջին տարիներին ճանաչել էր հայ Բագրատունիների գերիշխանությունը: Գողթնի ամիրա Աբու-Դուլաֆը (Աբուտլուփ) հաղթում է նրան, գերի վերցնում ու տեր դառնում նրա Դվին և մյուս քաղաքներին[40]: Դժվար չէ կռահել, որ մյուս քաղաքների թվում Աբու-Դուլաֆի ձեռքն էր ընկել նաև Նախճավանը[41]: Աբու-լ-Հայջայի պարտությամբ վերջ գտավ Սալարյանների իշխանությունը Դվինում[42]:

Քաղաքական այս իրադրության պայմաններում, երբ Սմբատ II-ը բավական թուլացել էր, կրկին իրենց զգացնել տվին Սյունիքի անջատողական ձգտումները: Սյունիքի մեծ մասին տիրացած Սմբատ գահերեցը X դարը 80-ական թթ. իրեն հռչակում է թագավոր: Այդ մասին Ստ. Օրբելյանը հայտնում է. **«...յարեալ ի մեծ Աթաբակն, որ էր ի Թավրէժ յԱտրպատական աշխարհի, նաև յՌնայ ամիրայն, որ իշխէր և դրանն Դարբանդու, ևս և Աղվանից տէրանցն, որք վասն առաւել սիրոյ ծանուցանեն մեծ սուլտանին Խորասանու, և հրաման առեալ ի նմանէ թագ կապեն գեղեցկահասակ և վայելչադիտական առնն հայկազնոյ Սմբատայ՝ Սիւնեաց տեառն»**[43]: Ստ. Օրբելյանը շատ լավ հասկանալով, որ դա կենտրոնական իշխանության նկատմամբ դավաճանությանը համազոր ակտ է եղել, փորձել է մեղմացուցիչ հանգամանքներ փնտրել. **«և զի յայնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի Ուղթիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ...»** (ընդգծումը մերն է - Հ. Բ.)[44]: Ինչպես իր ժամանակին ցույց է տվել Մ. Աբեղյանը, այդ հարցում Օրբելյանն ունի աչառու վերաբերմունք[45]: Սյունյաց պատմիչի պատճառաբանությունը բռնազբոսիկ է և կամայական: Այսպես՝ Սյունիքի անջատումն ամեն կերպ արդարացնելու համար նա Բագրատունիների կալվածքները հասցնում է մինչև Գեղամա լեռները և Սյունիքը համարում նրանցից կտրված: Թ. Հակոբյանը՝ հիմք ընդունելով Ասողիկի որոշ վկայությունները[46], իրավացիորեն գտնում է, որ X դարի երկրորդ կեսում Գեղամա երկիրը պատկանում էր Բագրատունիներին, ուստի վերջիններիս տիրույթների հետ սահման չունենալու համար Սյունյաց թագավորությունն իր կազմում չպետք է ունենար Վայոց ձոր գավառը[47]: Սակայն հենց Ստ. Օրբելյանի այն տեղեկությունից, թե Վասակ գահերեցի մահից հետո Սմբատը տիրում էր «համագունդ աշխարհիս Սիսական» գահերեց իշխանությամբ[48], պարզվում է, որ Վայոց ձորն ու հարակից շրջաններն էլ էին մտել վերջինիս իշխանության մեջ, որովհետև դրանք Վասակ գահերեցի տիրույթներն էին: Քանի որ Սյունիքը անմիջականորեն սահմանակից էր Բագրատունիների տիրույթներին, ապա Սմբատ Սահակյանը իրեն թագավոր կարող էր հռչակել միայն այն ժամանակ, երբ կենտրոնական իշխանությունը կապրեր ուժեղ ցնցումներ:

Ստ. Օրբելյանի այն հիշատակությունը, թե արդեն մինչև Սյունյաց թագավորության ստեղծումը Բագրատունիների կալվածքների հյուսիսային սահմանը հասնում էր մինչև Ձորագետ, խոսում է անուղղակիորեն այն մասին, որ Լոռու թագավորությունը (սկզբնական շրջանում իշխանությունը) ստեղծվել է Սյունիքի թագավորության հիմնադրումից առաջ: Մեզ հայտնի չէ Լոռու թագավորության հիմնադրման թվականը: Հավանաբար դա եղել է 982 թվին[49], Սալարյան Աբու-լ-Հայջայի արշավանքի ժամանակ, երբ Գուրգենը՝ օգտվելով իր եղբոր ռազմական անհաջողությունից, Տաշիր-Ձորագետը դարձրել է առանձին կիսանկախ իշխանություն: Սակայն անհավանական է ենթադրել, թե այդ նույն թվականին էլ Սյունիքը հռչակվեց առանձին թագավորություն: Մեր կարծիքով այդ տեղի է ունեցել 987 թվին, երբ Ատրպատականում իշխանության գլուխ բարձրացած Ռավվադյաններից Աբու-լ-Հայջան 100000-անոց բանակով հարձակվեց Աբու-Դուլաֆի վրա և գրավեց նրան պատկանող Դվինն ու նրանից հարավ ընկած Արաբսի հովիտը, որը վերջինս գրավել էր Սալարյան Աբու-լ-Հայջայից[50]: Դվինը գրավելուց հետո նա Սմբատ II թագավորից պահանջեց անցած տարիների հարկը, որն ստանալուց հետո ետ վերադարձավ[51]: Հենց այդ ժամանակ էլ Աբու-լ-Հայջա Ռավվադյանը հայկական թագավորությունը առավել թուլացնելու նպատակով, ընդառաջ է գնում Սմբատ Սահակյանի անջատողական ձգտումներին և օգնում նրան Սյունիքը հռչակելու առանձին թագավորություն: Ռավվադյաններին հարկատու դարձած Սմբատ II-ը, հասկանալի է, ոչնչով չէր կարող խանգարել այդ բանին և Սմբատ Սահակյանը անպատիժ կերպով իրեն հռչակեց թագավոր: Ուստի բնավ էլ պատահական չէ այն փաստը, որ՝ անդրադառնալով Սյունյաց թագավորության ստեղծմանը, Ստ. Օրբելյանը ոչ մի խոսք չի ասում Անիի թագավորի թույլատրության կամ համաձայնության մասին:

988 թվին՝ օգտվելով Աբու-լ-Հայջա Ռավվադյանի մահից, Գողթնի ամիրա Աբու-Դուլաֆը վերստին տիրում է Դվինին ու նրանից հարավ ընկած հողերին և Խաչիկ կաթողիկոսի միջնորդությամբ դաշն է կնքում Սմբատ II-ի հետ[52]: Կորցնելով Ատրպատականի տիրակալի հովանավորությունը, Սմբատ Սահակյանը, որի թագավորությունը շրջապատված էր Սմբատ II-ի և նրա դաշնակից Գողթնի ամիրայի տիրույթներով, ստիպված ընդունում է Անիի թագավորի շահնշահական իրավունքը Սյունիքի նկատմամբ: Դրա վառ ապացույցն է այն, որ Սյունյաց զորքերը հայկական բանակի կազմում մասնակցում են Ափխազաց թագավորի դեմ Տայքի կյուրապաղատ Դավթի, Հայոց Սմբատ II և վրաց Բագրատ թագավորների կազմակերպած արշավանքին, որը տեղի ունեցավ 988 թվականին[53]:

Այսպիսով, սկզբնաղբյուրների վկայությունների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ Սյունյաց թագավորությունը հիմնվել է ամենայն հավանականությամբ 987 թվականին:

Ծանոթագրություններ

1. Տես Կ. Շահնազարյանց, Սիւնիք (տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1859, էջ 17). Էմիր, Տաթևի վանքը, տես «Արաբս»,

1852, գիրք Բ, Ս. Պետերբուրգ, էջ 20. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 16. Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 62 (տես վրիպակների մեջ). Տ. Սահակյան, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, «Պատմաբանասիրական հանդես», 1966, № 3, էջ 221, և այլն:
2. Տես Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 54: Պետք է նշել, որ Ս. Պողոսյանը իր գրքի «Կարևոր դեպքերի ժամանակագրության» մեջ թագավորության հիմնադրումը Սյունիքում դնում է 968-970 թթ.:
3. Տես Հ. Ութմազյան, Սյունիքը IX-X դարերում, Երևան, 1958, էջ 134:
4. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, գլ. ԾԹ, էջ 317-321:
5. Ուռհայեցին թվական չի հայտնում: Տարեթիվը մեզ հաղորդում են բյուզանդական սկզբնաղբյուրները:
6. Մ. Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17:
7. Նույն տեղում, էջ 3-4, «...կոչեցին զՓիլիպպոս զթագաւորն Աղուանից՝ զայր աստուածային և զսուրբ, զորդին Գողազգակայ որդւոյ Վաչագանայ, որք էին թագաւորք Աղուանից աշխարհաց»:
8. Նույն տեղում, էջ 4: Ուշագրավ է այն փաստը, որ տարեգիրը 3 էջում Աղվանից թագավորին կոչում է Փիլիպպոս, իսկ 4 էջում՝ Փիլիպպե:
9. Նույն տեղում, էջ 17:
10. Նույն տեղում, էջ 231:
11. Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 198:
12. Նույն տեղում, էջ 283:
13. Ստ. Օրբելյան, էջ 318-321:
14. Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 225:
15. Տես Տ. Սահակյան, Սյունյաց թագավորության քաղաքական դերը XI դարում, «Պատմաբանասիրական հանդես», 1966, № 3, էջ 228. Ստ. Օրբելյան, էջ 320-321:
16. Մ. Ուռհայեցու «Ժամանակագրութեան» մեջ 231 էջում Փիլիպպեի հոր անունը հիշվում է Գոշակտակ, իսկ 4-րդ էջում Գողազգակ ձևով, սակայն ոչ մի տարակույս չի կարող լինել, որ տեղեկությունը վերաբերում է միևնույն անձնավորությանը:
17. Մովսես Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 383:
18. Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 204-205: Ս. Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով, «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր», 1964, № 1, էջ 63: Տապանագրում Փիպեն անվանվում է Փղիպե, որը Փիլիպպե անվան աղավաղված ձևն է:
19. «Արարատ», 1897, էջ 144. «Ծագեաց ի սիրտս հզօրացն Աղուանից ի թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսեհի, և Սենեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և նորին ամուսնոյ, և քեռ նորին, և տեառն Սենեքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի և տեառն Վաչագանայ Գորոզուաց իշխանի, և այլ բազում մեծամեծաց...»: Տես նաև Ստ. Օրբելյան, էջ 286: Սյունյաց պատմիչը Իշխանիկին, Սենեքերիմին և Գրիգորի որդի Սենեքերիմին պարզապես կոչում է Աղվանից տիրակալներ. «տէրանց Աղուանից»:
20. Մ. Կաղանկատվացի, էջ 389:
21. Յովաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 300:
22. Նույն տեղում, էջ 217:
23. Մ. Ուռհայեցի, էջ 17:
24. Մ. Կաղանկատվացի, էջ 389:
25. Լեոն Լոռու թագավորության հիմնադրումը դնում է 982 թվին (տես Երկերի ժողովածու, հ. 2-րդ; Երևան, 1967, էջ 591), իսկ Ս. Պողոսյանը՝ 989 թվին (Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, պրակ 4, Երևան, 1958, էջ 341):
26. Ասողիկ, էջ 196. «Յայսմ ժամանակի, ի ՆԷԳ թուականին Մուշեղ թագաւորն մայրաքաղաքին Կարուց վախճանի, և փոխանակ նորա թագաւորէ Աբաս որդի նորա ամս Զ»:
27. Ասողիկ, էջ 180. «և զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ և Շահանշահ կոչիւր՝ ամս ԻԵ: և Մուշեղ եղբայր նորա առ նովաւ թագաւորեաց ի Կարս»:
28. Ստ. Օրբելյան, էջ 200-201, 284, 298:
29. Նույն տեղում, էջ 288:
30. Հ. Ութմազյան, Սյունիքը IX-X դարերում, էջ 304:
31. Հար. Աբրահամյան, Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ I, Երևան, 1941, էջ 3-5:
32. Մեր կարծիքով Աշոտ Ողորմածի այս կալվածագրի վավերականության մասին են վկայում Խաչիկ կաթողիկոսի հաստատության գիրը Աշոտ թագավորի՝ Նախավկայի վանքին նվիրած կալվածքների վերաբերյալ և Աշոտ III Շահնշահի դուստր Հռիփսիմեի ընծայագիրը վերոհիշյալ վանքին (տես Հար. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 5-10):
33. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 176:
34. Հար. Աբրահամյան, նշվ. Աշխ. էջ 3. «զայն և-ս գնեցի, ոչ թէ բռնութեամբ կամ հարկաւ, այլ սիրով և պարգևաւք»:
35. Նույն տեղում, էջ 6:
36. Նույն տեղում, էջ 7:
37. Ստ. Օրբելյան, էջ 301:
38. Տ. Սահակյան, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, «Պատմաբանասիրական հանդես», 1966, № 3, էջ 222-223:
39. Ասողիկ, էջ 188:
40. Նույն տեղում, էջ 189:
41. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 177:
42. Ազատ արձակվելուց հետո Աբու-լ-Հայջան երկար ժամանակ ընտանյոք հանդերձ շրջում էր Հայաստանում ու Վրաստանում և անգամ դիմեց Վասիլ (Բարսեղ) կայսեր օգնությանը, սակայն օժանդակություն չստացավ և շատ չանցած սպանվեց իր ծառաների կողմից Ուղթիսում (Ասողիկ, էջ 189):
43. Ստ. Օրբելյան, էջ 300:
44. Նույն տեղում, էջ 300: Սյունյաց պատմիչը Բաղաց թագավորության ստեղծումը արդարացնում է նաև նրանով, որ «զի թէ Բագրատունիքն (որք) գերութեամբ իմն ածեալ էին Հրաչէէ՝ այնմ արժանի գտան, ապա քանի՞ և-ս առաւել սոցա անկ էր որ ի հայկայ երևելի հարազատութեամբ որդիք զհարս փոխանակելով՝ բնիկ տերութեամբ եկեալ, հասեալ էին մինչև ցայժմ (նույն էջում):
45. Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1946, էջ 214-215:
46. Ասողիկ, էջ 259:
47. Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 61:
48. Ստ. Օրբելյան, էջ 299:
49. Լեո, Հայոց պատմություն, հ. 2, գիրք Ա, տես Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 591:
50. Ասողիկ, էջ 198. «Իսկ ի ՆԷԶ թուականին Աբլհաճ որդի Ռովդայ, ամիրայ Ատրպատականի, ճՌ պարսիկ զօրու գայ ի վերայ Աբուտլփոյ, հանէ ի նմանէ զքաղաքսն Սալարին, յաւարի առեալ զաշխարհն նորա զԳողթն՝ գայ հասանէ ի Դուին քաղաք և առնու զնա»:
51. Նույն տեղում, էջ 198. «...Խնդրէ հարկս զանցեալ ամացն ի Հայոց զոր ընդդէմ յուղարկեալ զհարկսն թագաւորն Սմբատ մեծամեծ ընչիւք՝ դարձոյց»:
52. Նույն տեղում, էջ 200-201:
53. Նույն տեղում, էջ 252-253:

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ», 1969, № 1

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի թագավորությունը

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Դեռևս արաբական տիրապետության շրջանում Սյունյաց իշխանությունները ներառնվեցին Բագրատունիների ազդեցության ոլորտում: Իսկ 885 թ. Սյունիքն Արաբական խալիֆայության կողմից ճանաչված Հայ Բագրատունիների պետության մաս կազմեց: Գտնվելով Ատրպատականի արաբական ամիրության սահմանագլխին՝ Սյունյաց իշխանությունները մեծապես զգում էին Հայոց թագավորների հովանավորության և ռազմական օգնության կարիքը: Այդ կացությունն ամրապնդվում էր ամբողջ Սյունիքի և, հատկապես, Գեղամա լճի ավազանի ու գահերեցներին պատկանող Վայոց ձորի ու մյուս տիրույթների՝ Այրարատի ու Շիրակի տնտեսական ոլորտում հայտնվելով, ինչպես նաև Սյունյաց իշխանական ընտանիքի նկատմամբ Բագրատունիների ճկուն ու հովանավորչական քաղաքականությամբ:

Սակայն ավատատիրական հարաբերությունների զարգացման ու խորացման, ինչպես նաև արտաքին ուժերի միջամտության հետևանքով դեռևս IX դ. վերջերից, թեկուզ և թույլ ձևով, իրենց զգացնել են տալիս Սյունիքի կենտրոնախույս ուժերը, որոնք ավելի ու ավելի վտանգավոր են դառնում X դ. կեսերից: Այդ միտումներին նպաստեց Դվինից հարավ-արևելք ընկած Երասխի հովիտն արաբական ամիրությունների իշխանության ներքո հայտնվելը, ինչը խաթարեց թագավորության կենտրոնական նահանգների հետ Սյունիքի տնտեսական կապերը: Հիշյալ գործոններին միանալու եկան Բագրատունիների թագավորության ռազմաքաղաքական տկարացումն ու տրոհումը և Վասպուրականի թագավորության առաջացումը:

Դեռևս IX դ. 90-ական թթ., օգտվելով Սմբատ Ա թագավորի ծանր վիճակից, Սյունյաց Վասակ իշխանիկը հպատակվեց Ատրպատականի ոստիկան Աֆշինին: Սակայն հետո Վասակը կրկին ճանաչեց Հայոց արքայի գերիշխանությունը: Հավանաբար այդ տարիներին Վասակն անգամ թագ էր ստացել Աֆշինից, բայց Ստեփանոս Օրբելյանը հավաստում է. **«Մեծարէ Ափշինն զՎասակ Սիւնի թագ կապեալ. և նա ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել»**[672]:

Սյունիքի ըմբոստության համար նոր առիթ ծառայեց Ապահունիքի կայսիկների անհնազանդությունը 902 թ. ճնշելուց հետո Հայոց արքայի կողմից Նախճավանը և շրջակայքը Վասպուրականի իշխանին հանձնելը: Արշակունիների օրոք հիշյալ տարածքը Սյունիքի մաս էր կազմում, սակայն որպես արքունի տիրույթ հանվել էր Սյունիքի կազմից և միացվել մարդպետական աշխարհին: Նախճավանը տնտեսական առումով մեծ կարևորություն ուներ Սյունիքի համար, ուստի

մեկ տարի անց Սյունյաց Սմբատ իշխանը գժտվեց Սմբատ Ա-ի հետ. **«և եղև ի գալ միւսոյ տարոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս...»**[673]: Բայց գտնվելով Հայոց արքայի և Վասպուրականի իշխանի ներխուժման սպառնալիքի ներքո և հրաշալի գիտակցելով իր թուլությունը՝ Սմբատ Սյունին կրկին հնազանդվեց Հայոց թագավորին[674]:

Սմբատ Սյունիի կյանքի վերջին տարիներին քաղաքական ու տնտեսական վերելք են ապրում Բաղքի գահակալ իշխանները, ինչը հատկապես երևում է X դ. 70-80-ական թթ.: Սմբատին հաջորդեց նրա որդի Վասակը, որը հորից ժառանգեց գահերեցությունը, Վայոց ձորն ու Ճահուկը և, հավանաբար, որոշ տիրույթներ հարակից գավառներում: Դա տեղի ունեցավ 942-949 թթ. միջակայքում: Չնայած գահերեցությունը հետզհետե վերածվում էր անվանական իրավունքի, այդուհանդերձ Վասակի ազդեցությունը Սյունիքի մեծ մասում դեռևս զգալի էր: Վասակի մասին պատմությունն այլ հիշատակություններ չի պահպանել: Սյունյաց պատմիչի խոսքերով՝ նա իշխել է երկար տարիներ և կատարել բազմաթիվ գործեր[675]:

Դվինի և նրանից հարավ-արևելք ընկած Երասխի հովտի համար հայկական պետության ու արաբական ամիրությունների միջև պայքարը բախտորոշ նշանակություն ունեցավ Սյունիքի անջատողական ձգտումների համար:

Տիրելով Դվինին և նրանից հարավ-արևելք տարածվող Երասխի հովտին՝ Սալարյանների ամիրությունը Հայաստանում զգալի ազդեցություն ձեռք բերեց: Իբն Հաուկալի վկայությամբ՝ Մարզուբան Սալարյանի վեզիր Աբու-լ-Կասիմ Ալի Իբն Ջաֆարը հիջրայի 344 թ. (955/956) կազմել էր մի հարկացուցակ, որտեղ նշված էին Մարզուբանի ստորականների անունները և հարկաչափը[676]: Այդ հարկացուցակի համաձայն՝ վերջինիս ստորականների մեջ են եղել Վայզուրի (Վայոց ձորի - խմբ.) Աբու-լ-Կասիմ ալ-Վայզուրին, Դայրանիի (Դերենիկ-խմբ.) որդիները և Խաչենի տեր Սինհարիբը (Սենեքերիմ-խմբ.): Իրավացիորեն ենթադրվում է, որ Աբու-լ-Կասիմ արաբական մականվամբ իշխանը եղել է Սյունյաց Վասակ գահերեցը[677]: Վայզուրի կամ Վայոց ձորի իշխանը պարտավոր էր վճարել 50 հազար դինար և մատուցել նվերներ[678], որը, անշուշտ, հավաքվում էր ամբողջ Սյունիքից, քանի որ Վայոց ձորն ի վիճակի չէր այդչափ հարկ վճարելու:

Աշոտ Գ Ողորմած թագավորը Դվինի 953 թ. գրավման անհաջող փորձից որոշ ժամանակ անց գրավեց դրանից հարավ-արևելք ընկած Երասխի հովիտը: Դա հավաստում են Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքին կալվածքներ նվիրելու մասին նրա հրովարտակը[679], Խաչիկ Ա Արշարունեցի կաթողիկոսի հաստատության գիրը[680] և նույն վանքին արքայադուստր Հռիփսիմեի ընծայագիրը[681]: Համաձայն այդ փաստաթղթերի՝ 976 թ. Մաղարդա Ս. Ստեփաննոս Նախավկայի վանք է գալիս Աշոտ Գ-ը և շրջակա Նախճավան, Ոստան ու այլ գավառներում վանքին նվիրում ընդարձակ կալվածքներ:

Այս փաստը չի կարելի մեկնաբանել իբրև Դվինի և Երասխի հովտի հատվածը Հայոց արքունի տիրույթներին միացնելու կամ, նվազագույնը, նրա գերիշխանությանը ենթարկելու իրողություն: Թերևս ճիշտ է երկրորդ տեսակետը, քանի որ հրովարտակի համաձայն՝ թագավորը կալվածքները գնել էր և նոր միայն նվիրել վանքին. **«...զայն ես գնեցի ոչ թէ բռնութեամբ կամ հարկաւ, այլ սիրով և պարգևաւք»**[682]: Երասխի հովտի նշված հատվածի ազատագրման թվականը հայտնի չէ: Կարելի է ենթադրել, որ դա տեղի է ունեցել X դ. 70-ական թթ. սկզբներին: Աշոտ Գ-ը Հայոց թագավորության սահմանները հասցրել էր մինչև Սալմաստ, Զարեվանդ, Դարաշամբ (Շամբիձոր - խմբ.) և Մարանդ[683]: Հայոց թագավորի այս թեկուզև ժամանակավոր հաջողությունն ամրապնդեց Բագրատունիների գերիշխանությունը Սյունիքում: Միայն դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, թե ինչպես Աշոտ Գ-ին հաջողվեց բյուզանդական Հովհան Չմշկիկ կայսեր դեմ դուրս բերել 80 000-անոց բանակ, որովհետև նրա դրոշի ներքո մարտադաշտ էին դուրս եկել Հայաստանի բոլոր արքայիկներն ու իշխանները, այդ թվում՝ Սյունյաց գահերեց Վասակը՝ իր զորքերով: Վերջինս դեռ ողջ էր և հիշատակվում է 976 թ. ընծայագրի մեջ, ուստի խոսքն այլ Վասակի չի վերաբերում[684]:

Այդ թվականին Սյունյաց գահերեց Վասակի ողջ լինելը բացառում է այն տեսակետը, թե Սյունյաց թագավորությունը ստեղծվել է 970 թ.: Վասակը մինչ իր մահը, որը տեղի է ունեցել 976-980 թթ. միջոցին, եղել է սոսկ գահերեց իշխան: Սյունյաց թագավորության հռչակումը 970-ով թվագրողներն ամենայն հավանականությամբ հիմք են ընդունում այն փաստը, որ Մատթեոս Ուռհայեցու մի հաղորդման համաձայն՝ 974 թ. դեպի Հայաստան շարժվող Չմշկիկ կայսեր առաջընթացը կասեցնելու համար հայկական 80 000-անոց բանակի կազմում իր զորամասով գտնվում էր նաև Կապանի Փիլիպե թագավորը[685]: Ուսումնասիրողները կարծել են, որ հիշյալ Փիլիպեն Սյունյաց թագավոր Սմբատն է, ուստի և թագավորության հիմնադրումը թվագրել են 970-973 թթ. միջակայքով: Մինչդեռ հենց նույն Մատթեոս Ուռհայեցու այլ վկայությունից[686] պարզվում է, որ այս տեղեկությունը վերաբերում է ոչ թե Սյունիքին, այլ Արցախի արքայիկներից մեկին[687]:

Վասակ գահերեցն ուներ երկու որդի՝ Սմբատը և Գագիկը[688]: Սակայն նրա մահից հետո գահերեցությունն անցնում է Բաղքի իշխան Սահակի որդի Սմբատ իշխանին. **«Իսկ Վասակ՝ որդի Սմբատայ, յետ բազում իշխանութեանց և գովելի գործոց մեռանի և տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ, գահերեց իշխանութեամբ»**[689]: Պետք է ենթադրել, որ Վասակի որդիներն ընդունեցին Բաղաց իշխան Սմբատի գահերեցությունը, իսկ Սյունիքի քաղաքական կենտրոնը Վայոց ձորից տեղափոխվեց Բաղք:

Սմբատ Բ թագավորը դրանից հետո պարտություն կրեց Աբու-լ-Հայջա Սալարյանից, որի հետևանքով նրա դիրքերը թուլացան: Այդ ժամանակ էլ, իհարկե ոչ առանց օտար միջամտության, կրկին ուժեղացան Սյունիքի անջատողական ձգտումները: Սյունիքի մեծ մասին տիրապետած Սմբատ գահերեցն Ատրպատականի ամիրի ճնշմամբ և օժանդակությամբ X դ. 80-ական թթ. իրեն հռչակում է թագավոր. **«Թագ կապեն գեղեցկահասակ և վայելչագիտակ առնն հայկազնոյ Սմբատայ՝ Սիւնեաց տեառն»**[690]: Սյունյաց պատմիչը քաջ գիտակցել էր Սմբատի այդ քայլի ամբողջ վտանգավորությունը և թագավորության դեմ ուղղված լինելը, ուստի փորձել էր մեղմացուցիչ հանգամանքներ փնտրել. **«և զի յայնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ...»**[691]: Ավելորդ է ասել, որ այս խնդրում Սյունյաց պատմիչը միանգամայն աչառու է:

Անշուշտ, Հայոց թագավորության մնացյալ մասի հետ Սյունիքի ընդհանուր սահմանը բավականին փոքրացել էր, սակայն չէր վերացել: Ուստի պետք է ենթադրել, որ Սյունիքի թագավորության ստեղծումը կատարվեց այնպիսի պայմաններում, երբ Հայոց թագավորությունը ենթարկվել էր արտաքին ծանր վտանգի:

Սյունյաց պատմիչի այն տեղեկությունը, թե Անիի Բագրատունիների իշխանությունը տարածվում էր մինչև Ձորագետ, պարզորոշ ցույց է տալիս, որ Տաշիր-Ձորագետի կամ Լոռու թագավորությունն արդեն ստեղծվել էր: Ուստի կարելի է թերևս ենթադրել, որ Սյունիքը հռչակվել է թագավորություն Աբու-լ-Հայջա Սալարյանի 982 թ. արշավանքից հետո կամ արշավանքի ընթացքում: Սակայն դա քիչ հավանական է, քանի որ իրենց մայրամուտն ապրող Սալարյան-

ներն Ատրպատականում այլևս մեծ ուժ չէին ներկայացնում: Առավել հավանական է ենթադրել, որ Սմբատ գահերեցն իրեն թագավոր հռչակեց 987 թ., երբ Ատրպատականում իշխանության գլուխ բարձրացած Աբու-լ-Հայջա Ռավվադյանը 100.000-անոց բանակով հարձակվեց Աբու Դուլաֆի վրա, գրավեց նրան պատկանող Դվինն ու վերջինից հարավ-արևելք ընկած Երասխի հովիտը, որը Գողթնի ամիր Աբու Դուլաֆը խլել էր Աբու-լ-Հայջա Սալարյանից[692]: Դվինը գրավելուց հետո Աբու-լ-Հայջա Ռավվադյանը, Սմբատ Բ-ից ստանալով անցած տարիների հարկը, հետ դարձավ: Սակայն Սմբատն այլևս չէր կարող խանգարել, որ Սմբատ Սահակյան գահերեցը Հայոց թագավորության թուլացման նպատակ հետապնդող Ատրպատականի ամիրից թագ ստանա:

Սյունյաց պատմիչն ամեն կերպ դրվատում է Սյունյաց թագավորության ստեղծումը և հայտարարում է, թե հայոց ազգի աջ բազուկ սյունեցիները **«թագ կապեցին... ընդդէմ չարին»**[639], այսինքն՝ օտարին դիմագրավելու համար: Եթե հավատանք Սյունյաց պատմիչին, **«Արդ՝ թագ կապեալ Սմբատայ ճոխ և երևելի փառօք յարդարէր զարքայութիւնն ըստ օրինի ինքնակալ-թագաւորաց»**[694]: Իրականում նա շատ կարճ ժամանակով ինքնուրույն եղավ Բագրատունիների նկատմամբ, իսկ նրա՝ Ատրպատականի ամիրից թագ ստանալը բոլորովին չէր հավաստում այդ ինքնուրույնությունը:

Այսուհանդերձ, Սմբատ Սահակյանի օրոք Սյունիքում ձևավորվեց պետական կարգը, ստեղծվեցին գործակալություններ և արքունի պաշտոնեություն, կարգի բերվեց բանակը, կարգավորվեց դատական գործը: Ցավոք, մեզ տեղեկություններ են հասել միայն իշխանաց իշխանի պաշտոնի վերաբերյալ: Սակայն, ի տարբերություն Բագրատունիների թագավորության, որտեղ իշխանաց իշխանը կարգավորում էր ավատատերերի միջև ծագած վեճերը և գլխավորում իշխանների հավաքը[695], *Սյունիքում իշխանաց իշխանի հիմնական պարտականությունը «ազատակոյտ զօրաց» գլխավոր հրամանատար լինելն էր*[696]:

Սյունիքի թագավորությունը հռչակելուց շատ չանցած՝ տարածաշրջանում քաղաքական իրադրությունը փոխվեց: Աբու-լ-Հայջա Ռավվադյանը 988 թ. մահացավ: Դրանից օգտվեց Գողթնի ամիր Աբու Դուլաֆը, որը կրկին տիրեց Դվինին ու նրանից հարավ-արևելք ընկած Երասխի հովտին: Խաչիկ Ա Արշարունեցի կաթողիկոսի միջնորդությամբ նա դաշն կնքեց Սմբատ Բ շահնշահի հետ[697]: Կորցնելով Ատրպատականի տիրակալի հովանավորությունը և շրջապատվելով Սմբատ Բ-ի ու նրա դաշնակից Գողթնի ամիրի տիրույթներով՝ Սմբատ Սյունին ստիպված էր ճանաչել Սմբատ Բ-ի գերիշխանությունը: Դրա վառ ապացույցն է այն, որ Սյունյաց զորքերը հայկական բանակի կազմում մասնակցեցին աբխազական թագավորի դեմ ձեռնարկված 988 թ. արշավանքին[698]:

Սյունյաց թագավորությունը հայտնվեց ավելի ծանր կացության մեջ, երբ Սմբատ Բ-ին հաջորդեց նրա եղբայր Գագիկ Ա թագավորը: Վերջինս կատաղի պայքար էր մղում կենտրոնախույս ուժերի դեմ, ուստի իր տեսադաշտից չէր կարող դուրս թողնել Սյունիքը: Ասողիկը հստակ գրում է. **«և տիրեաց նա (Գագիկ Ա-ը - խմբ.) յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր»**[699]:

Չի բացառվում, որ Սմբատ Բ-ի մահից հետո, հետևելով Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Անհողինին, Սյունյաց թագավոր Սմբատ Սահակյանը փորձել է անկախանալ, ինչը Գագիկ Ա-ին առիթ է տվել նրանից խլելու Վայոց ձորը, Ճահուկը և Ծղուկի մի մասը (Այլախ գավառ), ինչպես նաև որոշ այլ շրջաններ: Դրանք ռազմավարական կարևոր նշանակություն ունեին Անիի թագավորության համար, և դրանից հետո այլևս երբեք չեն հիշվում Սյունյաց թագավորության կազմում[700]:

Գագիկ Ա-ի արշավանքի տարին հայտնի չէ: Պետք է ենթադրել, որ այն կայացել է 990-992 թթ. միջոցին, այսինքն՝ Գագիկ Ա արքայի իշխանության առաջին տարիներին[701]: Սյունյաց թագավորությունը զրկվեց իր տարածքի նշանակալից մասից, որը մտավ Գագիկ Ա-ի տիրույթների մեջ: Դրա հետևանքով խիստ մեծացավ Վայոց ձորով անցնող Դվին-Պարտավ ճանապարհի նշանակությունը: Սյունյաց թագավորն այժմ չէր էլ մտածում հանդես գալ Հայոց արքայի դեմ, որովհետև Գագիկ Ա-ը, տիրանալով նաև Դվինին ու դրանից հարավ-արևելք ընկած Երասխի հովտին, աքցանի մեջ էր առել Սյունյաց թագավորի տիրույթները[702]:

Գագիկ Ա-ի արշավանքից հետո Սյունյաց թագավորությունն ամփոփվեց Սյունիքի հարավային մասում: Նրա տարածքը համարյա առանց մեծ փոփոխության պահպանվեց մինչև XII դ. սկիզբը: Հարավ-արևելքում թագավորության սահմանը հասնում էր մինչև Հագարի գետ[703], իսկ հյուսիս-արևելքում հավանաբար՝ մինչև Արցախի լեռների ջրբաժան[704]: Հյուսիսում սահմանն անցնում էր Բռնակոթից հյուսիս-արևմուտք ընկած ջրբաժանով, այնուհետև, թագավորության մեջ առնելով Սյունիք բնակավայրը, հասնում էր Արցախի լեռնաշղթա՝ հատելով Հագարի գետը: Արևմուտքում սահմանն իջնում էր հարավ՝ Սյունյաց լեռների ջրբաժանով, իր մեջ էր առնում Երնջակ գավառի մեծ մասը, Շոռոթ նշանավոր բնակավայրը և կրկին Սյունյաց լեռների ջրբաժանով իջնում մինչև Երասխ գետ, որը թագավորության հարավային սահմանն էր: Թեև Երնջակը X դ. սկզբին գրավվել էր Գողթնի ամիրության կողմից, սակայն, ակներևաբար, այն նույն դարի վերջին կրկին մտել էր Սյունիքի մեջ: Աշոտ Գ և Գագիկ Ա արքաները, տիրանալով Երասխի հովտի հիշյալ հատվածին, անկասկած, այդ նշանավոր և անառիկ ամրոցը չէին թողնի օտարի ձեռքին: Այդ է հավաստում թեկուզ այն իրողությունը, որ Երնջակից անհամեմատ հեռու տեղակայված Շոռոթ բնակավայրը գտնվում էր թագավորության մեջ[705]:

Տասնմեկ տարի թագավորելուց հետո Սյունյաց Սմբատ թագավորը 998 թ. մահացավ և թաղվեց Տաթևի վանքում: Նրա կին Շահանդուխտը ամուսնու «հոգու փրկության» համար 998 թ.[706] վանքին է նվիրում Հաբանդ գավառի Տեղ գյուղը, ինչն իրավունք է տալիս եզրակացնելու, որ Սմբատն արդեն մահացել էր[707]:

Սմբատ արքային հաջորդեց որդին՝ Վասակը, որը **«...մեծահանդէս ժողովով և ազատակոյտ բազմութեամբ օծանի թագաւոր Սիւնեաց և Բաղաց ձեռամբ Տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի»**[708]: Նա իր եղբայր Սևադային նշանակում է իշխանաց իշխան, իսկ նրանց մայր Շահանդուխտը դառնում է երիտասարդ թագավորի խնամակալը. **«... ես Վասակ՝ որդի Սմբատայ, հրամանաւ իմ մօրս...»**[709]: Նրա իշխանության տարիներին Սյունյաց իշխանությունը վայելեց երկարատև խաղաղություն և բարգավաճեց:

Վասակի օրոք վերստին ուժեղացավ Տաթևի եպիսկոպոսությունը, որը խիստ թուլացել էր գյուղացիական շարժման, Հայոց կաթողիկոս Անանիա Ա Մոկացու բանադրանքի ու նրա կողմից եպիսկոպոսարանն ավերելու հետևանքով ծնունդ առած անիշխանությունից: Շատ տեղերում օգտվելով գահակալ իշխանների կամ օտար նվաճողների օժանդակություններից՝ հոգևոր առաջնորդները դադարել էին ճանաչելուց Տաթևի եպիսկոպոսության գերակայությունը: Մաքենացոց վանքը հափշտակել էր Գեղարքունիքը, ինչ-որ մեկը տիրացել էր Վայոց ձորի եպիսկոպոսությանը, իսկ Երնջակի և Գողթնի հոգևոր առաջնորդներն անկախացել էին Գողթնի ամիրության օգնությամբ: Օգտվելով այդ իրադրությունից՝ շատ իշխաններ Տաթևի կալվածքների մի մասը նվիրել էին իրենց ազատներին[701]:

Վանքի հզորացմանը նպաստեցին ոչ միայն Սյունյաց թագավորության ստեղծումը, այլև արտաքին քաղաքական ասպարեզում Գագիկ Ա թագավորի հաջողությունները: Վասակը գործնականում Տաթևի վանքին վերադարձրեց նրա նախկին բոլոր կալվածքները: Դրանց

մեջ էին Յողունի գյուղը, Գնեվանքը, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Փորքկնի, Հաբանդի, Ջուղայի և Երնջակի վիճակները[711], որոնցից միայն վերջին երկուսն էին մտնում թագավորության մեջ: Այուսները Գագիկ Ա արքայի և Հայոց կաթողիկոսի օժանդակության շնորհիվ վերադարձվել էին Տաթևին: 1006 թ. Տաթևի վանքի և եպիսկոպոսության հոգևոր սահմանները որոշվել էին հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցու շրջաբերական թղթով, որի համաձայն՝ Տաթևի եպիսկոպոսական թեմի մեջ են մտել Այունիքը, Բաղքը, Արևիքը, Օրդուբատը, Արքուլիքը (Ագուլիս - խմբ.), Վանանդը, Երնջակը, Նախիջևանը, Ջուղան՝ մինչև Երասխ գետը, Ճահուկը, Վայոց ձորը, Խաչերի խոռովը, Գեղարքունիքը, Կոզաբակովը, Երիշատը, Ջաղացածորը, Փորակնը, Հաբանդը և Գողթնը[712]: Հայոց Արևելից կողմերի կամ, այսպես կոչված, Աղվանից թեմի սահման էին ճանաչվում Ըռմբի խոռը, Ծար գավառը, Աղահեճը, որի միջով հոսում է Հագարի գետը մինչև Քարադաղի կամուրջ[713]: Հասկանալի է, որ Այունյաց թագավորության սահմանները չէին համապատասխանում Տաթևի եպիսկոպոսության հոգևոր իշխանության սահմաններին:

Չնայած իր բարձր տիտղոսին՝ Վասակ թագավորը Հայոց թագավորության ընդամենը խոշոր ավատատերերից մեկն էր՝ լիովին ենթակա Գագիկ Ա արքային:

X դ. վերջին և XI դ. սկզբին Այունյաց թագավորությունում ծավալվում է լայն շինարարություն: Տաթևի վանքում կառուցվում են բազմաթիվ հարակից շինություններ, գործատներ (աշխատանոցներ): Այունյաց թագուհի Շահանդուխտը 1008 թ. ավարտում է Վաղադնու Սուրբ Ստեփանոս եկեղեցու շինարարությունը, որի կառուցումը սկսվել էր դեռ Սմբատ Ա թագավորի օրոք: Այստեղ հավաքվում են մեծ թվով կրոնավորներ, իսկ Շահանդուխտը կառուցում է աղոթարան, համբարանոցներ, գործատներ և պարսպապատում է վանքը: Եկեղեցուն նվիրվում են զանազան կալվածքներ Վաղադնում, Գոմեր ագարակը, ինչպես նաև թանկարժեք ընծաներ[714]: Իր հերթին Վասակի եղբայր Սևադան սրբատաշ քարերով 1006 թ. կառուցում է կենտրոնագմբեթ մեկ այլ եկեղեցի՝ Ս. Կարապետ անունով, և նրա արևմտյան կողմում՝ գավիթ[715]: Մեծ շինարարություն է ծավալվում Կապան մայրաքաղաքում և թագավորության այլ վայրերում: Նախկինում բավականին անհայտ Կապանը վերածվում է նշանավոր քաղաքի: XI-XII դդ. Կապանը Հայաստանի միջին մեծության քաղաքներից էր:

Գագիկ Ա-ի մահից հետո, երբ Անիի թագավորությունը բաժանվեց Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև, Անիի թագավորությունից, մասնավորապես Աշոտ Գ-ից Վասակ թագավորի կախվածությունը դարձավ ձևական:

Այունյաց պատմիչը ստույգ չի հիշատակում Վասակի մահվան թվականը: Հայտնի է, որ նա 1043 թ. այլևս կենդանի չէր[716], քանի որ արդեն թագավորում էր Սմբատ Բ-ն: Ուսումնասիրողների մեծ մասը նրա մահը դնում է 1040 թ.: Վասակն արու ժառանգներ չուներ, և հավանաբար նրա կյանքի վերջին տարիներին պետական կառավարման մեջ են ներգրավվում նրա փեսա Աշոտ իշխանի որդիներ Սմբատը և Գրիգորը[717], որոնցից առաջինին էլ ժառանգում է գահը: Ստեփանոս Օրբելյանը նրանց կոչում է ավագ Աշոտյաններ[718]: Նրանց կալվածքները գտնվում էին Ծղուկ գավառում[719]:

Գահ բարձրանալով 1040 թ.՝ Սմբատ Աշոտյանն իր եղբայր Գրիգորին նշանակում է իշխանաց իշխան[720]: Նրա իշխանության հենց սկզբում Տաշիր-Ձորագետի թագավորությունը ստիպված էր կենաց և մահու պայքար մղելու Գանձակի ամիրության դեմ: Շադդադյանները, 1022 թ. տիրելով Դվինին, աքցանի մեջ առան Այունյաց թագավորությունը: Շադդադյան ամիր Աբու-լ-Ասվար իբն Ֆադլը 1040 թ. մեծ բանակով արշավեց Դավիթ Անհողինի Տաշիր-Ձորագետի թագավորության դեմ: Սմբատ Բ-ը Դավիթ Անհողինին ուղարկեց 2 հազարանոց զորաբանակ, որը մասնակցեց Շադդադյան զորքերի ջախջախմանը[721]: Այս հաղթանակը մեծապես թուլացրեց մահմեդական ամիրությունների ճնշումը Հայոց թագավորությունների և իշխանությունների վրա: Բարձրացավ Այունյաց թագավորի հեղինակությունը: Այունյաց պատմիչի խոսքերով՝ Սմբատ Բ-ը դարձավ «ահարկու յամենայն շրջակայ ազգսն»[722]: Դրությունը փոխվեց նրա թագավորության վերջին շրջանում: Օգտվելով Անիի կենտրոնական թագավորության խիստ թուլացումից՝ Այունիքի վրա հարձակվեցին Ատրպատականի, Արդաբիլի, Ահարի և Թալիշի ամիրությունների զորքերը: Անցնելով Երասխը՝ թշնամին շարժվում է հյուսիս՝ ավերելով հոգևոր ու մշակութային կարևոր կենտրոն Տաթևի վանքը: Այն իր հարստություններով գրգռում էր այդ ամիրությունների ախորժակը, և արշավանքը զուտ ավարառուական բնույթ էր կրում: Արշավանքից առաջ վանքն ուներ 1000-ի չափ միաբաններ, ճգնավորներ ու արհեստավորներ, որոնք աշխատում էին վանքի գործատներում[723]: Թշնամին սրի է քաշում վանականների մեծ մասին, որոնք չէին հասցրել փախչել, ավերում Ս. Լուսավորիչ եկեղեցին ու այլ շինություններ: Փորձում են խորտակել Տաթևի վանքի նշանավոր շարժական սյունը, ավերում են գործատները և մեծ ավարով վերադառնում[724]: Հարձակման ժամանակ մետրոպոլիտ Հովհաննեսը վանքում չէր: Տաթև են գալիս Սմբատ Բ թագավորը, նրա եղբայր Գրիգորը, բազմաթիվ ազատներ և օգնում վանքին, որը երկու տարվա ընթացքում լրիվ վերականգնվում է, իսկ թագավորն ու իշխանները վանքին նվիրում են նոր կալվածքներ[725]: Ուսումնասիրողները սովորաբար Սմբատ Բ-ի մահը դնում են 1044 թ.: Սակայն Վահանավանքը պեղող Գ. Գրիգորյանը հայտնաբերեց նրա տապանաքարը, սրի վրա արձանագրված էր, թե նա մահացել է 1051 թ.[726]:

Գրիգորի թագավորության շրջանում սերտացան Այունիքի թագավորության և Արցախի իշխանական տների բարեկամական կապերը: Ինքը՝ թագավորը, ամուսնացավ Արցախի իշխան Մեծն Սևադայի դուստր Շահանդուխտի հետ[727]: Այունիքն այդ ժամանակ ապրում էր խաղաղ կյանքով: Եթե Այունյաց թագավորությունը սկզբում իր ենթակայության տակ ուներ շուրջ 10000 կմ² տարածք, ապա Գրիգորի և նրա նախորդ Սմբատ Բ-ի օրոք նրա տարածքը կազմում էր շուրջ 5500 կմ²: Թագավորության մեջ մնացել էին միայն երկրամասի հարավային գավառները՝ Ծղուկ գավառի մեծ մասը, Հաբանդը, Երնջակի մեծ մասը, Ձորքը, Բաղքը, Կովսականը և Արևիքը:

Ծղուկ գավառն այդ շրջանում բաժանվել էր Ծղուկ և Այլախ գավառների, որոնցից Այլախը դուրս էր մնում թագավորության տարածքից: Այն համապատասխանում է ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների հարավային հատվածին: Նեղ իմաստով կոչվել է Այունիք կամ Սիսական: Գավառի կենտրոնն էր Այունիք ավանը (այժմ՝ Սիսիան բնակավայրը - խմբ.): Այստեղ էր գտնվում Տաթևի եպիսկոպոսությունը: Հաբանդ կամ Ձագեձոր գավառը տարածվում էր Հագարու (հնում՝ Աղավնո - խմբ.) և Որոտան գետերի միջին հոսանքի շրջանում: Այն իր մեջ էր առնում Այունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի միջին հատվածը: Ներկայումս օգտագործվող Ձանգեզուր տեղանունը Ձագեձորի աղավաղված ձևն է: Հնում Հաբանդն արևելքում սահմանակցում էր Արցախի Մյուս Հաբանդ գավառին, արևմուտքում՝ Ծղուկ կամ Ծղուկք գավառին, հյուսիսում՝ Աղահեճքին, հարավում՝ Բաղքին:

Երնջակն անառիկ գավառ էր: Այն սահմանակցում էր Ճահուկ, Ծղուկք, Ձորք, Գողթն և Նախճավան գավառներին: Նրա տարածքը ներկայումս Ադրբեջանի Հանրապետության մեջ մտնող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության մաս է կազմում: Գավառի կենտրոնն էր անառիկ Երնջակ ամրոցը (այժմ՝ Ալինջաչայ):

Ձորք գավառն ընդգրկում էր Ողջագետի ավազանի արևելյան հատվածը և հյուսիսում սահմանակցում էր Ծղուկք, արևելքում՝ Բաղք, հարավում՝ Կովսական և Արևիք ու արևմուտքում՝ Երնջակ գավառներին: Այն լեռնային անտառաշատ գավառ էր և ուներ խիստ անառիկ դիրք:

Այստեղ էին գտնվում անմատչելի Բաղաբերդ ամրոցը և թագավորության մայրաքաղաք Կապանը:

Բաղք գավառը հյուսիսում սահմանակցում էր Հաբանդ կամ Ձագեձոր, արևելքում՝ Արցախի Մյուս Հաբանդ, հարավում՝ Կովսական և արևմուտքում՝ Ձորք ու Ծղուկք գավառներին: Նրա տարածքը համապատասխանում է ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի արևելյան և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հարավային հատվածին: Արևելքում նրա սահմանն էր Հագարու կամ Աղավնո գետը:

Արևիք գավառն իր տարածքով համապատասխանում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանին: Այն սահմանակցում էր Գողթն, Ձորք, Կովսական գավառներին: Հարավում նրա սահմանն էր Երասխ գետը: Ուսումնասիրողների կարծիքով նախկինում մաս է կազմել Գողթն գավառի, սակայն հետագայում անջատվել է նրանից և վերածվել ինքնուրույն գավառի: Երասխի առափնյա շրջաններն ունեն չոր մերձարևադարձային կլիմա, ինչը Ստեփանոս Օրբելյանին ստիպել է այն համեմատել Եգիպտոսի կլիմայի հետ[728]: Կենտրոնը Մեղրի ավանն էր:

Կովսական գավառը զբաղեցրել է Զանգեզուրի մարզի Կապանի տարածաշրջանի հարավարևելյան հատվածը և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Երասխին սահմանակից հարավային հատվածը: Այն հյուսիսից սահմանակցում էր Ձորքին և Բաղքին, արևելքից ու հարավից՝ Մյուս Հաբանդ գավառին, արևմուտքից՝ Արևիքին: Հարավից և հարավ-արևելքից նրա բնական սահմանն էին Երասխը և Աղավնո կամ Հագարու գետը:

Ծանոթագրություններ

672. Ստեփանոս Օրբելյան, էջ 299:
673. Թովմա Արծրունի և Անանուն, էջ 272:
674. Տես նույն տեղում, էջ 273:
675. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 299:
676. Տես Արաբ մատենագիրներ. Թ-Ժ դարեր, էջ 641-642:
677. Տես Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 173:
678. Տես Արաբ մատենագիրներ. Թ-Ժ դարեր, էջ 642:
679. Տես Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ Ա, կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 3-5 (այսուհետև՝ Կալվածագրեր): Հաջորդ վավերագրերը տպվել են «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում (1861, թիվ 5, էջ 636-638), սակայն սխալներով և թերի:
680. Տես Կալվածագրեր, էջ 5-7:
681. Տես նույն տեղում, էջ 9-10:
682. Նույն տեղում, էջ 3:
683. «ԵՒ ետու հնձէքս և հայրենիքս և դաս(տ)այկերտ և ընձայուն հին Մաղարդավանաց սուրբ Ըստեփանոս Նախավկային...անդառնալի և բարձր հրամանաւ մերով՝ թեմ և վիճակ,...նախ և առաջին՝ խոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Նախչուան, ի Կոկ գաւառն բոլորովին. Ի Խոյ, որ է Զարևանդ գաւառն և ամենայն վիճակն իւր բոլորովին մինչի Նուան ի Ղարա Դարայն, որ բաժանի առաքելոց յերկրէն և գնայ մինչև ի Ղարայ թափան և բաժանի ի Սալմաստայ ի Յերասխայ մինչև ի Մարանդայ գիրիւէն, Մարանդ իւր վիճակովն փշրին թալն իւր երկրովն, գնա մինչի դըղյակն Խոստրովու, ի յԱզատ և ի գիրեան ի Ջուղայ և իւր վանքն, ի յԱստապատ և իւր վանքն, ի Շամպ և իւր վանքն, ի Ջաղաստեղն, ի յԱրարքն և իւր վանքն և յամենայն դիտայպաւլացդ յարևելից և յարևմտոյ. Տուաք ընձայ և հայրենիք...»: Հիշատակվող «Կոկ» գավառը ոչ թե Կոգովիտն է, այլ, ամենայն հավանականությամբ, ներկայիս Խոքն իր շրջակայքով (տես նույն տեղում, էջ 6):
684. Տես նույն տեղում, էջ 7:
685. Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 17:
686. Տես նույն տեղում, էջ 3-4: Հաղորդումներից մեկում ասված է. «... կոչեցին զՓիլիպպոս զթագաւորն Աղուանից՝ զայր աստուածային և զսուրբ, զորդին Գողաղգակայ որդւոյ Վաչագանայ, որք էին թագաւորք Աղուանից աշխարհաց»: Շփոթ առաջացնելով՝ Մատթեոս Ուռհայեցին մեկ այլ տեղում Փիլիպպոս կամ Փիլիպպե թագավորին կոչում է Կապանի թագավոր:
687. Այդ մասին մանրամասն տես Հարությունյան Բ., Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 1969, թիվ 1, էջ 146-149:
688. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 329:
689. Նույն տեղում, էջ 299:
690. Նույն տեղում, էջ 300:
691. Նույն տեղում:
692. Տես Ասողիկ, էջ 198-199:
693. Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն, բնագիրը յառաջաբանով և ծանօթութիւններով հրատարակեց Կ. Կոստանեանց, Տփղիս, 1885, էջ 37 (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան, Ողբ ի Ս. Կաթուղիկէն):
694. Ստեփանոս Օրբելյան, էջ 300-301:
695. Տես Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն, հ. II (IX-XVIII դդ.), Երևան, 1965, էջ 49-50:
696. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 301:
697. Տես Ասողիկ, էջ 200-201:
698. Տես նույն տեղում, էջ 252-253:
699. Նույն տեղում, էջ 256:
700. Տես Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1966, էջ 63:
701. Համաձայն Հերհեր և Կարմրաշեն գյուղերի միջև գտնվող մի խաչքարի արձանագրության՝ 990 թ. Վայոց ձորը դեռևս գտնվում էր Սյունյաց թագավորության մեջ (Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց ձորի, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 42):
702. Տես Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 177-182:
703. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 197:
704. Տես Երեմյան Ս., Հայաստանը X դարի վերջին և XI դարի սկզբին, տես ՀՍՍՌ ատլաս, Երևան, 1961, քարտեզ 105:
705. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 307-308:
706. Տես նույն տեղում, էջ 291-292:
707. Պատմիչի մեկ այլ տեղեկությունից պարզվում է, որ Սմբատ թագավորը մահացել է Հակոբ եպիսկոպոսի հովվության տարիներին (նույն տեղում, էջ 293-294), իսկ վերջինս Սյունյաց եպիսկոպոսության գլուխ է կանգնել 998 թ.:
708. Նույն տեղում, էջ 301:
709. Նույն տեղում, էջ 293:
710. Տե՛ս նույն տեղում, էջ 304-305:
711. Տե՛ս նույն տեղում, էջ 305-306:
712. Տե՛ս նույն տեղում:
713. Տե՛ս նույն տեղում:
714. Տես նույն տեղում, էջ 302:
715. Տես նույն տեղում:
716. Տես Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 19:
717. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 306:
718. Տես նույն տեղում, էջ 318:
719. Տես Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 89:
720. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 318:
721. Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 79-82:
722. Ստեփանոս Օրբելյան, էջ 318:
723. Տես նույն տեղում, էջ 312:
724. Տես նույն տեղում, էջ 313:
725. Տես նույն տեղում, էջ 314-315:
726. Տես Գրիգորյան Գ., Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, թիվ 2, էջ 159-162:
727. Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 318:
728. Տես նույն տեղում, էջ 81:

//

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի թագավորությունը. (970/87-1170 թթ.)

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Սյունիքի թագավորությունը մեծ դեր է խաղացել X-XII դդ. Հայաստանի ռազմաքաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում, հատկապես Բագրատունյաց հարստության անկումից հետո (1045 թ.):

Սյունիքի թագավորության հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ. Սիսական պատմիչ Ստեփանոս Օրբելյանն այն չի թվագրում, ինչը տեղիք է տվել տարակարծությունների: Մի խումբ գիտնականներ (Թ. Հակոբյան, Գր. Գրիգորյան, Ս. Հախվերդյան) Սյունիքի թագավորության հիմնադրումը թվագրում են 970-ով, Ա. Աբրահամյանը՝ 973-ով, Բ. Հարությունյանը՝ 987-ով: Սակայն մի բան պարզորոշ է. Սյունիքի թագավորության հռչակման գործընթացն սկսվել է Հայոց Մեծաց Վահան Ա Սյունի կաթողիկոսի (968-969) պաշտոնանկությամբ, որը մեղադրվում էր քաղքեդոնականությանը հարելու մեջ և ավարտվել Տաշիր-Զորագետում Կյուրիկյան հարստության հաստատումից հետո: Վերջինս ակնբախ է Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունից: Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորությունը, ըստ Մխիթար Այրիվանեցու, ստեղծվել է 981 թ., Ռ. Մաթևոսյանի կարծիքով՝ 972 թվականին:

Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի թագավորության առաջացումն արդարացնում է մի շարք հանգամանքներով, նախ՝ արաբական բռնության ուժեղացմամբ և Բագրատունիների իշխանության թուլացմամբ, որոնք արդեն իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչև Գեղարքունիք, Ուխտիք, Կարին, Վասպուրականի սահմանը, Զորագետ ու Գարդման, դրանցից Սյունյաց լեռնաշխարհի կտրվածությամբ, ապա՝ կենտրոնից երկրի գլխավոր նախարարական տների անջատմամբ: Դրա համար էլ, ինչպես գրում է Օրբելյանը, Սյունյաց գահերեց իշխան Սմբատը քրեական մեղք չհամարեց՝ Խորասանի մեծ սուլթանից թագ ստանալով և թագավոր հռչակվելով: Բացի այդ, ըստ Սիսական պատմիչի, եթե Բագրատունիները, որ գերեվարությամբ բերված էին հրեա հրաչեից, արժանի գտնվեցին հայոց գահին, ապա որքա՞ն առավել արժանի էին Սյունյաց իշխանները, որ հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել-հասել էին այժմյան ժամանակները:

Թեև Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի թագավորության հիմնադիր Սմբատին (970/87-998) համարում է որդին Սահակ իշխանի, բայց իրականում նա եղել է Սյունյաց մեծ իշխանաց իշխան Վասակի ուստրը, ինչը փաստում է Վայոց ձորի Կարմրաշեն գյուղի մոտի 990 թ. խաչքարի արձանագրությունը: Ամեն դեպքում ժամանակի դրոշմ հանդիսացող վիմագրի հիշատակության արժանահավատությունը գերակա է դեպքերից շուրջ երեք հարյուր տարի հետո ապրած պատմիչի հաղորդածից:

Սյունյաց գահերեց իշխան Սմբատի կենտրոնախույս քաղաքականությունն ու թագավոր հռչակվելն առիթ տվեցին Հայոց հզորագույն Գագիկ I Շահանշահ Բագրատունի արքայից արքային (990-1020), հանուն երկրի միասնության, 990-992 թթ. պատժիչ արշավանք ձեռնարկելու դեպի նորաստեղ Սյունյաց թագավորություն: Արշավանքը Գագիկ I-ն սկսում է Վայոց ձորի գրավմամբ, որի Եղեգիս ավանում IX դարից հաստատվել էր Սյունյաց վարչաքաղաքական կենտրոնը՝ ռազմական հենակետ ունենալով դեռևս վաղ ժամանակներում կառուցված անառիկ ամրոցը, որը Սմբատաբերդ է կոչվում Սմբատ I-ի անունով, ով ամրացրել էր հնամենի այդ բերդը: Գագիկ I-ի պատժիչ արշավանքի արդյունքում Սյունյաց թագավոր Սմբատ I-ը, կորցնելով Վայոց ձորը, Ծղուկք գավառի հյուսիսային մասը, Ճահուկն ու Աղահեճքը, նաև այլ տարածքներ, քաշվում է բուն Սյունիք, դեպի Հաբանդ գավառ, որտեղ էլ մահանալով՝ թաղվում է Տաթևի վանքում:

Սյունյաց Սմբատ I թագավորի կինը՝ Շահանդուխտ I թագուհին, Աղվանից մեծ իշխան Սևադայի դուստրն էր, որը 1000 թ. կոփածո քարերով կառուցում է Որոտնավանքի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին, այն դարձնում վանք՝ տեղում հաստատելով կրոնավորների միաբանություն: Եկեղեցու բակում շինում է նաև աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաև պահեստներ, արհեստանոցներ, և վանքը շրջափակում պարսպով: Վանքի համար սահմաններ է առանձնացնում Վաղատնից, նրան է հանձնում Ծղուկ գավառի Գոմեր ագարակը: Ինքն էլ վախճանվելով՝ թաղվում է նույն սրբարանի բակում: Սմբատի և Շահանդուխտի կրտսեր որդին՝ Սյունյաց թագավորության իշխանաց իշխան (զորաց հրամանատար) Սևադան 1006 թ. Որոտնավանքում կառուցում է Ս. Կարապետ գմբեթահարկ եկեղեցին ու գավիթը՝ բակում, որտեղ ինքն է հանգչում: Որոտնավանքի պահով Ստեփանոս Օրբելյանն այն ուշագրավ տեղեկությունն է հաղորդում, որ այդ վանքը բուժում է թունավոր օձերից խայթվածներին, ինչպես Արագածոտնի Փարպի գյուղի եկեղեցին՝ մարդկանց և անասուններին՝ անբուժելի կատաղի ցավից: Կարծում ենք՝ խոսքի վերջը Փարպիի Ծիրանավորի մասին է:

Սմբատ I-ի մահից հետո Սյունյաց թագավոր է դառնում նրա ավագ որդին՝ Վասակ Կտրիճը (998-1040): Գագիկ I-ը կնության էր առել Վասակ I-ի դստերը՝ Կատրանիդեին՝ 1001 թ. Անի մայրաքաղաքի մարգարիտ Ս. Աստվածածին կաթողիկե մայր տաճարը կառուցողին: Այդ ամուսնությամբ հայոց դիվանագետ թագավորը Սյունյաց լեռնաշխարհը կապում էր կենտրոնին: Ի դեպ, Արագածոտնի նորահայտ արձանագրություններից մեկում Կատրանիդեն իրեն կոչում է «Թագուհեաց թագուհի», ինչը լիովին համահունչ էր նրա ամուսնու՝ «Հայոց և Վրաց արքայից արքա» բարձրակոչ հորջորջմանը: Որպեսզի ընթերցողներին ձերբազատենք տարակուսանքից, թե ինչու մենք Կատրանիդե անունը գրում ենք «ն»-ով, այլ ոչ «մ»-ով, ինչպես պատմիչներն ու ուսումնասիրողները, նշենք, որ այդ անձնանունը ծագում է արաբերեն «կղատր» (قطر)՝ «կաթիլ» և «նադա» (ندا)՝ «ցող» բառե-

րից և նշանակում է «Ցողի կաթիլ»: Դրանով այն համարժեք է դառնում հայերեն Ցողիկ անձնանվանը: Ինքը՝ Կատրանիդե Հայոց թագուհին, իր անունը «ն» տառով է վավերացրել Անիի մայր տաճարի շինարարական արձանագրությունում:

Սյունիքի Վասակ թագավորի խնդրանքով և Հայոց թագուհի Կատրանիդեի միջամտությամբ 1006 թ. Սարգիս Ա. Սևանցի կաթողիկոսը (990-1019) վերականգնում է տակավին IV դարի կեսին Ներսես Մեծ հայրապետի (353-373) հաստատած Սյունյաց աթոռի մետրոպոլիտության բարձր կարգավիճակը (այն իր մեջ էր ընդգրկում Սյունյաց 12 եպիսկոպոսությունների), որից Սյունյաց թեմին Հակոբոս Ա մետրոպոլիտի երկիցս անհնազանդության պատճառով 950-ական թթ. զրկել էր Անանիա Ա. Մոկացի վեհափառը (946-968)՝ այն իջեցնելով եպիսկոպոսության մակարդակի:

Ավելի քան 40 տարի գահակալելուց հետո Սյունյաց Վասակ թագավորը վախճանվում է և թաղվում Տաթևի վանքում՝ իր հայր Սմբատի կողքին:

Վասակն արու զավակ չուներ, և Սյունյաց մեծամեծերը որոշում են գահին բազմեցնել նրա քրոջ ավագ որդի, Բաղքի գահակալ իշխան, Սիսական աշխարհի իշխանաց իշխան Աշոտիկի ուստր Սմբատին:

Սմբատ II-ի թագավոր հռչակվելով (1040-1051)՝ Սյունյաց թագավորության վարչական կենտրոնը Հաբանդ գավառից տեղափոխվում է Բաղք և հաստատվում Կապան բերդաքաղաքում: Այս շրջանից է, որ Սյունյաց թագավորությունն սկսեց կոչվել նաև «Բաղաց թագավորություն», «Կապանի թագավորություն»:

Կապան քաղաքի ավերակները գտնվում են Վահանավանքից 2,5-3 կմ դեպի արևմուտք՝ Աչաղու պատմական գյուղի դիմաց, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, որին տեղացիներն անվանում են «Տանձուլենջ»: Կապանը հիշատակվում է V դարից:

Այն Սյունյաց Ձագիկյան իշխանական տան ոստանն էր, որը X դարում արդեն ծաղկող քաղաք էր: Բերդաքաղաքի տեղանքը նախ և առաջ այնպես էր ընտրված, որ այն պաշտպանված լիներ բնական արգելքներով: Նրա հյուսիսային մասի անանցանելի խորը կիրճով, որն ուներ խիստ զառիվեր անտառապատ լանջ և դիմացը մի քանի հարյուր մետրի հասնող ժայռ, հոսում էր Ողջի գետը: Հարավում ձգվում էին Արևիքի բարձրաբերձ և ժայռոտ լեռները: Արևմուտքից քաղաքը պաշտպանվում էր Բաղաբերդ և Բաղակի քար անառիկ ամրոցներով: Բնականից միակ թույլ կողմը արևելքից էր, որտեղ քաղաքի պաշտպանության համար կառուցվել էր պարիսպ: Այսօր այդ պարսպի հետքերը հազիվ նշմարելի են, իսկ աշտարակներից նկատելի են չորսը, որոնցից պահպանվել են հիմքերը՝ 1-2 մ բարձրությամբ: Քաղաքը կառուցված է եղել եռանկյունաձև տարածության վրա, որի երկարությունը հասել է մինչև 3 կմ, իսկ լայնությունը՝ 150-700 մ:

Սյունիքի թագավորությունն իր մեջ ընդգրկում էր նախկին Սյունյաց նահանգի հարավային մասը և մոտ երկու անգամ փոքր էր վերջինից՝ կազմելով 7377 քառ. կմ (Սյունյաց նահանգի պատմական տարածքը կազմել է 15237 քառ. կմ): Թագավորության սահմաններն անցնում էին. արևմուտքում Սյունյաց կամ Զանգեզուրի լեռների հարավային հատվածով, հարավում՝ Երասխ կամ Արաքս գետով, արևելքում՝ Աղավնո կամ Հագարի գետով, հյուսիսում՝ Աղավնո գետի Սպիտակաջուր վտակով և Որոտանի ջրբաժան լեռներով ու Իշխանասարի լեռնազանգվածով դեպի արևմուտք՝ մինչև Սյունյաց լեռների հետ հատվելը:

Նշված սահմաններում Սյունիքի թագավորությունն իր կազմում ընդգրկում էր Բաղք, Ձորք, Կովական, Արևիք, Հաբանդ գավառներն ամբողջությամբ և Ծղուկ գավառի հարավային մասը:

Թագավորությունն ունեցել է 43 բերդ (որից 12-ն առավել նշանավոր), 48 վանք, 1 քաղաք (Կապանը) և 1008 գյուղ:

Սմբատ II թագավորը վախճանվել է 1051 թ. և ամփոփվել Սյունյաց թագավորության վեհության և փառքի տաճար Վահանավանքում, որտեղ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ թաղված են Բաղաց և Աղվանից բազում թագավորներ ու թագուհիներ: Տեղում 1966 թվականից անխոնջ գիտնական Գր. Գրիգորյանի ղեկավարած պեղումների արդյունքում ավելի քան 600 տարվա հողի խորը շերտերից վեր հանված, վերականգնված և եկող սերունդներին ավանդված Վահանավանքից հայտնաբերված արձանագրությունները դա են վկայում:

Սյունյաց գահին բազմում է նրա եղբայր Գրիգոր I-ը, քանզի Սմբատը ժառանգ չուներ: Այդ երկու եղբայրներն իրենց հոր անունով կոչվում են «Աւագ Աշոտեանք»: Նրանք երկուսով զբաղվել են լայն շինարարական աշխատանքներով: Աջակցել և ամեն պետքականով օգնել են Տաթևի վանքի, Վահանավանքի, Բղենո Նորավանքի և այլ հոգևոր կրթական կենտրոնների վերանորոգման աշխատանքներին: 1046 թ. նրանք երկուսով հիմնանորոգում են Վահանավանքի գլխավոր՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (կառուցվել է 911 թ. Վահան Ձագիկյան իշխանի կողմից), կից սրահն ու ժամատունը՝ արձանագրելով. «Որք մտանէք յարկս սրբութեան, զսոցա յաղաւթս յիշեցէք»:

Գրիգոր I-ի կինն էր Արցախի ականավոր տիրակալ Սահակ-Սևադա II-ի դուստր Շահանդուխտը: Սյունյաց Շահանդուխտ II թագուհին (1051-1116) իր քույր Կատայի (Կատրանիդե անվան կրճատ ձևն է) հետ միասին, համաձայն Վահանավանքի ենթադրյալ սեղանատան անթվակիր արձանագրության, կառուցել են չորս եկեղեցի՝ Ս. Հարություն, Ս. Սիոն, Ս. Ստեփանոս Նախավկա և Ս. Աստվածածին: Այս եկեղեցիներից Վահանավանքում գտնվում է Ս Աստվածածինը՝ կառուցված 1086 թվականին: (Ի դեպ, դրա գավթից դեպի եկեղեցի տանող մուտքի աջակողմում կանգնեցված է Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հուշակոթողը, որի արձանագրությունում ասվում է, որ նա, նեղվելով տաճիկներից, եկել ու հանգել է աստվածասեր թագուհի Շահանդուխտի և Կատայի շինած եկեղեցու գավթում: Դա Աղվանից Ստեփանոս Ա. հայրապետն է, որը 1081 թ. Հաղբատի վանքում բուն Հայաստանի կաթողիկոս ձեռնադրեց Անի-Շիրակի արքեպիսկոպոս Բարսեղ Պահլավունի-Ապիրատյանին, որը հետագայում՝ 1105-1113 թթ., Ամենայն հայոց կաթողիկոսն էր՝ Բարսեղ Ա. Անեցի): Վահանավանքում գտնվել է նաև Աղվանից Սահակ-Սևադա II արքայի կնոջ, Շահանդուխտ II-ի մոր՝ Աղվանից Սոփի թագուհու 1081 թ. տապանաքարը: (Դժվար չէ կռահել, որ Արցախի իշխանավորները հետապնդվում էին Գանձակում հաստատվող սելջուկ-թուրքերից, որոնք աստիճանաբար բռնազավթում էին Արցախական աշխարհը):

Գրիգոր I թագավորը վախճանվել է 1072 թ. և թաղվել Վահանավանքի մեծ տաճարի յունասրահում՝ եղբոր կողքին:

Վահանավանքի Ս. Աստվածածին կրկնահարկ եկեղեցու 1086 թ. վիմագրից իմանում ենք, որ Գրիգոր I-ը և Շահանդուխտ II-ը նույնպես ժառանգ չեն ունեցել: Սյունյաց ազնվականության միահամուռ որոշմամբ 1072 թ. գահին է բազմում Շահանդուխտ II-ի կրտսեր եղբայր Սենեքերիմը: Նա, Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, եղել է գեղեցիկ, առույգ, հանճարեղ և իմաստուն պատանի: Սենեքերիմը (1072-1094/96) թերևս Սյունյաց թագավորների մեջ ամենազորեղն էր. հզոր ռազմաքաղաքական գործիչ էր և հմուտ դիվանագետ: Մտերմանալով սելջուկ տերության մեծ սուլթան Մելիք-Շահի (1072-1092) հետ և օգտվելով նրա բարյացակամ վերաբերմունքից՝ Սենեքերիմը հաղթական պատերազմներ է մղում հարևան սելջուկների դեմ, որոնք բռնազավթել էին Սյունյաց հողերը և կարողանում է ընդարձակել իր տերության սահմանները: Ուշագրավ է, որ Տաթևի նվիրատվական արձանագրություններից մեկում Սենեքերիմն իրեն իրավունք է վերապահում կոչվելու Հայոց թագավոր (Բագրատունյաց երբեմնի թագավորությունն այլևս չկար) և հստակեցնում, որ «կացեալ ի Սիսական և Բաղաց աշխարհիս»: Ապա Տաթևի վանքին է նվի-

ռաբերում «արեան գինք գաւառացս ի Ծղուկ նահանգի զԱրիտ աւան»-ը: Սյունյաց մեծ իշխան Հասանը Գանձակի Ֆադլուն (Փատլուն) ամիրայից ազատագրում է Կովսական գավառը և տեղի Նորաշինիկ ու Ձեռատիվանք գյուղերը նվիրաբերում Տաթևի վանքին, որոնք ժամանակներ առաջ դրա կալվածքներն էին: Սենեքերիմը հաստատում է վճիռը քաջ զորապետի, որը տաճիկներից այդ գյուղերն ազատագրել էր իր արյամբ:

Իրադրությունը Սյունիքում կտրուկ փոխվում է Մելիք-Շահի մահից (1092 թ.) հետո:

1094/96 թ. Գանձակի Ելտկուզ ամիրան բազմամարդ զորքով պատերազմելու է գալիս Սենեքերիմի դեմ: Վերջինս, ամրանալով անառիկ Բաղաբերդ ամրոցում, պատրաստվում էր դիմակայության: Ելտկուզի բանակում էր գտնվում Շիրակի իշխան Գրիգոր Ապիրատը, որը Անիի Շադդադյան ամիրայության զորքերի հրամանատար էր: Ելտկուզը՝ տեսնելով, որ ուժով չի կարող հաղթել Սենեքերիմին, դիմում է խաբեության: Նա Գրիգոր Ապիրատի միջոցով երդմամբ Սենեքերիմին իր մոտ է հրավիրում՝ բարեկամություն հաստատելու: Բանակցությունների ժամանակ Ելտկուզը, ինչպես չարաթույն գազան, իր պայմանը դրժելով՝ մռլտոցով հարձակվում է թագավորի վրա, սպանում նրան, ապա թողնում-հեռանում իր երկիրը: «Ահա այսպես մարեց քրիստոնյաների ճրագը, որ մնացել էր Բաղքի ամուր տեղում» – գրում է Օրբելյանը: Սենեքերիմին հուղարկավորում են Վահանավանքում՝ ուրիշ թագավորների շիրիմների մոտ: Սակայն հարկ է նշել, որ մինչ օրս չի հայտնաբերվել Սենեքերիմի գերեզմանը:

Սենեքերիմի մահով Սյունյաց թագավորությունն անկում ապրեց: Գահին նրան հաջորդում է որդին՝ Գրիգորը II-ը (1096-1166), որն «ընդ աղօտ թագաւորեալ»:

XII դարը սկզբնավորվում է դեպի Սյունյաց թագավորություն սելջուկ-թուրքական արշավանքներով: 1103 թ. Մելիք-Շահի երբեմնի մատռվակ Չորթմանը ներխուժում է Բաղք գավառ՝ նպատակ ունենալով գրավել Կապան մայրաքաղաքը, ոչնչացնել Սյունիքի զինական ուժը և վերջնականապես լուծել «Սյունյաց խոչընդոտի» հարցը: Չորթմանի հրոսակները կոտորածն սկսում են Կապանի Ջիտաթաղ կոչված արվարձանից, որտեղ, ըստ որոշ ուսումնասիրողների, ապրել են հրեաներ (այդ վարկածը Սյունյաց պատմության գիտակ Գր. Գրիգորյանը խիստ վերապահությամբ էր ընդունում): Թշնամին չի կարողանում գրավել արքայանիստ Բաղաբերդ ամրոցը և թալանած հարուստ ավարով հեռանում է Կապանից:

1104 թ. սելջուկներն արշավում են Որոտան և Բղենո գավառ, գերեվարում Խոսրովիկ իշխանին, սակայն առաջանալ չկարողանալով՝ ետ են քաշվում:

1126 թ. սելջուկ Հարոն ամիրան գրավում է Արևիք գավառը:

1152 թ. թուրքերը նվաճում են Շլորուտի բերդը:

1157 թ. ընկնում է Մեղրու բերդը:

1166 թ. մահանում են Սյունյաց Գրիգոր II թագավորը և նրա եղբայր Սմբատը: Գրիգոր II թագավորն արու զավակ չուներ: Նա իր միակ դստերը՝ Կատային, ամուսնացրել էր արցախցի իշխանազն Հասան Գեռաքարեցու հետ, որին հռչակել էր Սյունյաց գահաժառանգ:

1170 թ. սելջուկները պաշարում են անառիկ Բաղաբերդ ամրոցը: Կանխազգալով պարտության անխուսափելիությունը՝ Հասան Խաչենցին իր ընտանիքով գիշերը հեռանում է Արցախ: Թուրքերը գրավում են Բաղաբերդը: Հափշտակվում են ամրոցում ամբարված ավելի քան 10.000 ձեռագիր մատյանները, եկեղեցական սրբությունները, կողոպտում արքունական գանձերը: Բաղաբերդի անկումը պատմիչը համեմատում է Բաբելոնի Նաբուգոդոնոսոր արքայի կողմից Երուսաղեմի կործանման հետ:

Բաղաբերդի անկմամբ պատմության ասպարեզից վերանում է բուն Հայաստանի վերջին քաղաքական կազմավորումը՝ Սյունյաց թագավորությունը, որը գոյատևեց 200 տարի շարունակ:

Գահացանկ Սյունյաց թագավորների

Համադրությամբ վիմագրական և մատենագրական սկզբնաղբյուրների

Սմբատ I՝ որդի Վասակի - 970/87-998
Վասակ՝ որդի Սմբատ I-ի – 998-1040
Սմբատ II՝ որդի Աշոտիկի – 1040-1051
Գրիգոր I՝ որդի Աշոտիկի – 1051-1072
Սենեքերիմ՝ որդի Սևադայի- 1072-1094/6
Գրիգոր II՝ որդի Սենեքերիմի-1096-1166
Հասան Խաչենցի -1166-1170:

Աղբյուրների և գրականության ցանկ

Դատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:

Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն (թարգ., ներած. և ծանոթագր. Ա. Աբրահամյանի), Եր., Սովետ. գրող հրատ., 1986:

Ալիշան Ղ., Սիսական: Տեղեկագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ-Ս. Ղազար, 1893:

Գրիգորյան Գր., Սյունիքի թագավորությունը, «Պատմաբանասիրական հանդես», 2006, № 2, էջ 134-145:

Գրիգորյան Գր., Վահանավանք, Երևան, «Ձանգակ-97» հրատ., 2007:

Գրիգորյան Գր., Հախվերդյան Ս., Սյունիքի պատմություն, Երևան, «Հրազդան» հրատ., 2001:

«Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Երևան, 1976:

«Հայոց պատմություն», ՀՀ ԳԱԱ, հ. II, գիրք II, Երևան, «Գիտություն» հրատ., 2014:

Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1966:

Հարությունյան Բ., Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1:

Մանուչարյան Ա., Սյունիք-Արցախ պատմական առնչությունները (IX-XII դդ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2005, № 1, էջ 198-207:

Մանուչարյան Ա., Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատը Սահակի՞ որդին է, թե՞ Վասակի, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2014, № 1, էջ 22-30:

Սահակյան Տ., Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3:

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատը

Սահակի՞ որդին է, թե՞ Վասակի

Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատ Ա-ի (970-978)[1] ծագումնաբանության վերաբերյալ Ստեփանոս Օրբելյանը հաղորդում է, որ վայոցձորեցի գահերեց Վասակ իշխանի մահից հետո **«տիրէր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ, գահերէց իշխանութեամբ»**[2]: Ընդ որում, պատմիչը չի հայտնում, թե ինչպես է գահերեցությունը Վայոց ձորից անցել բուն Սյունիք, այն դեպքում, երբ Սյունյաց գահերեց իշխան Վասակն ուներ երկու որդի՝ Սմբատ և Գագիկ[3], որոնցից մեկն ու մեկը, ավելի հաճախ՝ ավագը, ըստ այն ժամանակի ընդունված կարգի, պետք է հաջորդեր հորը: Պատմիչի վերը բերված հիշատակության կապակցությամբ Թ. Հակոբյանը գրում է, թե նա **«որոշակի պատասխան չի տալիս այս հարցին, թե Վայոց ձորն ու ճահուկը, որ բաժին էին ընկել Սմբատին, իսկ նրանցից հետո էլ՝ նրա որդի Վասակին, նույնպես անցան Սահակի որդի Սմբատին, թե վերջինս Վասակի մահից հետո, ձեռք բերելով գահերեց իշխանի պատիվը, շարունակեց իշխել միայն Ծղուկք, Բաղք և սրանց շուրջը գտնվող գավառների վրա, որոնք կազմում էին հոր՝ Սահակի սեփականությունը, իսկ նրա մահից հետո անցան իրեն»**[4]:

Պատասխանը կշարունակվի մնալ անորոշ, եթե չնշվի, որ չկա ոչ մի վիմագիր կամ այլ վավերագիր ուղղակի վկայություն, որտեղ հիշատակվի Սահակի որդի Սմբատ թագավոր:

Այսպես՝ Որոտնավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատուհանի պսակի վրա արձանագրված է.

ՇԻՆԵՑԱՒ ՀՐԱՄԱՆՈՎ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՆՊԱՏԱ Ի ՁԵՌՆ

ՇԱՀԱՆԴԽՏՈ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳՈՒՀՈՅ[5]:

Ստեփանոս Օրբելյանն այդ եկեղեցու կառուցման ժամանակը համարում է հայոց 449 (+551=1000) թվականը[6]:

Հաբանդ գավառի Տեղ գյուղը **«իւր ամենայն բոլոր սահմանովն, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք» Տաթևի վանքին նվիրաբերելու 998 թ. վճռագրում, որը մոր՝ Շահանդուխտ թագուհու (Արցախ-Փառիսոսի տիրակալ Սահակ Սևադայի դստեր) հրամանով գրել է որդին՝ Վասակը, ինչպես նաև այդ նվիրատվությանը վերաբերող Սյունյաց եպիսկոպոսներ Տեր-Հակոբի պարտավորագրում և Տեր-Գրիգորի վավերագրում Սմբատ թագավորը չի հիշատակվում իր հայրանունով՝ «որդի Սահակայ»**[7]:

Ահա սրանք են Ստեփանոս Օրբելյանի՝ ուրիշի ուղղակի խոսքով հղած վկայությունները, որոնցում չի հիշատակվում Սմբատ թագավորի հոր անունը:

Ցավոք, այդ հարցը բաց է մնում նաև ժամանակի գործիչներից, դեպքերից, իրադարձություններից իրազեկ Ստեփանոս Տարոնեցու մոտ: Պատմիչը, խոսելով 989 թ. աբխազների թագավորի դեմ Սմբատ Բ Բագրատունու (977-990) գլխավորությամբ հայոց զորքերի՝ վրացիներին օգնության շտապելու մասին, նշում է, որ «միահաւաք լինէին» նաև «Սիւնեաց և Աղուանից իշխանքն»՝ առանց վերջիններիս անունները տալու ու նրանց արքաներ կոչելու, այն դեպքում, երբ այդ արշավանքին իր կարմրազգեստ գնդով մասնակից մանուկ Աբասին (Կարս-Վանանդի՝ Կարուց Աբաս Բագրատունի արքա՝ 984-1029) թագավոր է կոչում[8]: Հայրենասեր պատմիչի դիրքորոշումը միանգամայն հասկանալի է: Նա «կողմնակից է Բագրատունյաց կենտրոնական իշխանության, հակառակորդ երկպառակությունների»[9]: Իսկ Աբասը, ով «գահ բարձրացավ Բագրատունյաց «ազգապետի»՝ շահնշահ Սմբատ Բ-ի հրամանով, իր 45-ամյա գահակալության ընթացքում խաղաղ և լոյալ փոխհարաբերությունների մեջ էր Անիի տիրակալների հետ[10]: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն անգամ Հայոց թագուհի Կատրանիդեի հորը՝ Սյունյաց Վասակ թագավորին (998-1040) է կոչում «Սիւնեաց իշխան»[11]:

Ինչ վերաբերում է Ստեփանոս Օրբելյանի այն տեղեկություններին, որոնցում Սյունիքի թագավորության հիմնադիր Սմբատը հիշատակվում է որպես որդի «Սահակայ», ապա դրանք բոլորն անուղղակի վկայություններ են[12]՝ գրված ազատ, պատմողական ոճով, առանց վիմագիր կամ մատենագիր աղբյուրների հղման, հակառակ նախորդ բնագրերի պարագայի: Մեկ դեպքում էլ նույն խնդրին վերաբերող երկու խումբ վկայությունների մեջ նկատվում է հակասություն: Այսպես, պատմիչը, խոսելով Սյունյաց Սենեքերիմ թագավորի (1084-1094) Տաթևի վանք այցելության մասին, գրում է, որ Գրիգոր եպիսկոպոսը եկեղեցուց խլված Հարժիք[13], Բերդկաներեչի[14] և Ցուրա գետ[15] գյուղերը, որոնք գտնվում էին արքայի ազատներ, մեծ իշխան Մահևանի և Գևորգի տնօրինության ներքո, փորձում է վերադարձնել իրենց նախկին կարգավիճակին: Այդ նպատակով **«ծանուցանէ եպիսկոպոսն թագաւորին զզրկանքն եկեղեցւոյն. և առաջի արկանէ զհին նամականին, որ տուեալ էր առաջին թագաւորացն անխախտ պայմանաւ, զոր ընթերցեալ նորին՝ զարհուրեցաւ ի սոսկալի նզովիցն. զի երեք անգամ հաստատած էին այս գիւղօրայքս ի սուրբ աթոռն. առաջին՝ ի Սմբատայ՝ թագաւորէ Հայոց. և յԱշոտոյ՝ մեծ իշխանէն Սիւնեաց. և Բերդկաներեչի գանձագին էր Տէր Դաւթի, երկրորդ՝ ի Սմբատայ՝ թագաւորէ Սիւնեաց՝ որդւոյ Սահակայ, հաստատեցաւ ի ձեռն տեառն Վահանայ Բաղացւոյ, և ի Վասակայ՝ որդւոյ նորին. երրորդ Հասան ոմն իշխան՝ որդի Կորայ քըրդին, յազատաց մեծ իշխանաց իշխանին Վասակայ, որ էր իշխեցող և Վրաց, որդւոյ մեծին Սմբատայ՝ Սիւնեաց գահերեց իշխանի, գնոյ առեալ էր զգիւղն Հարժիս և ի հայրենեաց փոխան տուեալ: Սա**

հրամանաւ մեծին Վասակայ և որդւոց իւրոց Սըմբատայ և Գագկայ տայ զայս գիւղ ազատ յամենայն հարկաց ի վանսն Տաթևոյ»[16]:

Այս ընդարձակ մեջբերման մեջ մեր խնդրի համար կարևոր է հատկապես երկրորդ անգամվա նվիրատվությունը՝ կատարված **«ի Սմբատայ՝ թագաւորէ Սիւնեաց՝ որդւոյ Սահակայ, հաստատեցաւ ի ձեռն տեառն Վահանայ Բաղացւոյ, և ի Վասակայ՝ որդւոյ նորին»**[17] հատվածը, որը, փաստորեն, չի համապատասխանում նվիրատվության՝ պատմիչի արտագրածին.

«Յանուն Աստուծոյ վասն արարեալ հաստատութեան առաւել առաջին գրոյն որ մեր հարցն տուեալ էին աստուածապատիւ և հոգևոր եպիսկոպոսաց Սիւնեաց, ես Սմբատ՝ որդի տեառն Սահակայ, ետու զՀաժիս և զԾածարդ[18] որ սակաւ մի յափշտակեալ էին ի տանէս, յաստուածապատիւ և հոգևոր Տէրս Վահան և յաստուածաբնակ, ի լուսաճեմ եկեղեցիս Տաթևոյ յայս պայմանիս զոր զառաջնոցն յիշատակն նորոգեն. և զիս ևս յիշեն ի սուրբ և ի մաքրափայլ յաղօթս իւրեանց և մեր մեղացն թողութիւն խնդրեն: և յետ մեր մի ոք այլ յանդ գնեսցէ յափշտակել զսոսա ի տանէն, մի ի մերոց և մի յօտարաց. և եթէ յանդգնին՝ յԱստուծոյ ամենակալ բերանէն ընդ սատանայի և ընդ օձին նզովեալ եղիցին. և մասն և բաժին ընդ Յուդայի և Կայենի և Արիոսի եղիցի: Գրեցաք և կնքեցաք մերով մատանեաւս ի թուականիս 412»[19]:

Երկու՝ անուղղակի և ուղղակի վկայությունների միջև անհամապատասխանությունը նախ և առաջ Սմբատի կարգավիճակի հարցում է. առաջինում նա թագավոր է, իսկ երկրորդում՝ բնագրում, սոսկ իշխան (հասկանալի է, որ դեռևս թագավոր չէր հռչակվել):

Ուշադրության է արժանի այն փաստը, որ կտակագրում չի հիշատակվում որդին՝ Վասակը, ինչպես առաջինում է: Մեզ համար առանձնակի կարևորություն ունի նաև Հարժիս գյուղի երրորդ նվիրատվությունը, որը կատարվել է «հրամանաւ մեծին Վասակայ և որդւոց իւրոց Սմբատայ և Գագկայ»[20]: Ընդ որում, ընծայագրի այդ հատվածում Վասակը հիշատակվում է որպես «մեծ իշխանաց իշխան, որ էր իշխեցող և Վրաց»[21] տիտղոսներով:

Հ. Ութմազյանը Վասակ իշխանի մահը դնում է 960-ական թվականներին[22]: Իսկ ըստ Բ. Հարությունյանի՝ Վասակը վախճանվել է 976-980 թթ.[23], որին էլ Սյունյաց գահերեցության պաշտոնում հաջորդել է ավագ որդին՝ Սմբատը, այլ ոչ նրա հորեղբայր Սահակի որդի Սմբատը, ինչպես հաղորդում է պատմիչը: Այդ մասին մեզ հուշում է Վայոց ձորի Կարմրաշեն գյուղից արևելք՝ ավերակ ջրաղացի մոտ գտնվող խաչքարի ճակատային մասի արձանագրությունը *(տես՝ Գրչագիր)*:

Խաչքարի թիկունքին վերոհիշյալ Գրիգորիկի կողմից կատարված է մեկ ուրիշ արձանագրություն, որտեղ նա ասում է, որ ինքը բազում աշխատությամբ գտել է այդ արձանը և մեծ հույսով բերել ու կանգնեցրել է եկեղեցու դռան մոտ[25]:

Այս կոթողի մասին Ս. Բարխուդարյանը գրում է. **«Խաչքարն իր տեսակի հնագույն օրինակների ոճով է, պարզ և արտահայտիչ քանդակներով:**

Երկարությունը 3.66 մետր է, լայնությունը՝ 90 սմ, ներքևում ավելի նեղանում է: Այժմ այն ընկած է և թիկունքի արձանագրությունը ծածկված: Մենք այն կանգուն ենք տեսել 1932 թ. և նկարել»[26]:

Հարկ է նշել, որ մինչև Ս. Բարխուդարյանը խաչքարի արձանագրությունները գրեթե նույնությամբ ընթերցել են Ս. Ջալալյանցը[27], Քաջբերունին[28] և Ղ. Ալիշանը[29]:

Խաչքարի ճակատային արձանագրության կապակցությամբ Ղ. Ալիշանը գրում է, որ ՆԼԹ (990) **«թուականն պատշաճի Ա Սմբատայ թագաւորի Սիւնեաց, Վասակայ որդի լինելն՝ թոռին նորա Բ Սմբատայ, ըստ պատմչին բանից, եթէ ոչ վրիպիմ»**[30]:

Այդ արձանագրությունը, ինչպես նկատել է Բ. Հարությունյանը, գրվել է Գագիկ Ա Շահանշահի (990-1020) դեպի Սյունիք 990-992 թթ. արշավանքի նախօրեին[31]: Այդ պատժիչ արշավանքի պատճառով Սյունյաց թագավորությունը կորցրեց Վայոց ձոր, Ճահուկ գավառները և այլ տարածքներ: Իսկ **«արդյունքն այն եղավ, որ Վայոց ձորը, Ծղուկքի մի մասը, Աղահեճքը, Ճահուկը քաղաքական և տնտեսական սերտ կապերով կապվեցին Այրարատի և Բագրատունյաց թագավորության այլ մարզերի հետ: Դրա հետևանքով խիստ մեծացավ Դվին-Պարտավ ճանապարհի նշանակությունը: Այս ճանապարհը, որն անցնում էր Վայոց ձորով, վերածվեց տարանցիկ առևտրի խոշոր ուղու: Սյունյաց տերը այժմ չէր էլ մտածում հանդես գալ Հայոց թագավորի դեմ, որովհետև Գագիկ Ա-ն, տիրանալով Դվինին և Արաքսի հովտին, աքցանի մեջ էր վերցրել Սյունյաց թագավորի տիրույթները»**[32]:

Ըստ Թ. Հակոբյանի՝ **«Գագիկ Ա-ն Վայոց ձորը և**

Լուսանկար

Գրչագիր

Ցաղաց քար վանքը

Նրան սահմանակից ճահուկը գրավել է նախքան 1003 թվականը, որովհետև Ասողիկն իր պատմությունը վերջացնում է 1003 թ. դեպքերով, երբ Գագիկը բազմաթիվ բերդեր ու գավառներ էր գրավել Փառիսոսի և Խաչենի կողմերում: Սրանց գրավումն անհնար կլիներ, եթե Գագիկը նախօրոք իր ձեռքը չվերցներ դեպի Փառիսոս ու Խաչեն տանող ճանապարհի վրա գտնվող Վայոց ձորը, նրա սահմանակից ճահուկը, Ծղուկքի հյուսիսային մասը և Աղահեճք գավառը»[33]:

Մեր կարծիքով, Գագիկ Ա-ի արշավանքը դեպի Արցախ տեղի է ունեցել 997-1000 թվականների միջև, քանի որ Դիզակի իշխան Գագիկը, եթե ԼՂՀ Մարտունու շրջանի Ջոխտ պռավածառի վանքի 997 թ. խաչքարի վրա հիշատակվում է որպես «պետութեան տեառն... Աղուանից իշխանաց իշխան»[34] տիտղոսով, ապա Հադրութի շրջանի Տումի գյուղի Կարմիր եղցի եկեղեցու 1000 թ. արձանագրության մեջ հանդես է գալիս իբրև Աղվանից «թագաւոր»[35]: Դժվար չէ նկատել, որ Գագիկ Ա Բագրատունին Փառիսոսի թագավորների կենտրոնախույս նկրտումներն ի դերև դարձնելուց հետո Արցախում նախապատվությունը տվել է Գագիկ Դիզակեցուն:

Իսկ այդ պատժիչ արշավանքը Գագիկ Ա-ն սկսել էր Վայոց ձորի գրավմամբ, որի Եղեգիս ավանում IX դարից հաստատվել էր Սյունյաց վարչական-քաղաքական կենտրոնը՝ ռազմական հենակետ դարձնելով հյուսիսում ձգվող, դեռևս V դարից էլ առաջ կառուցված անառիկ ամրոցը, որը Սմբատաբերդ է կոչվում X դարում ապրած Սյունյաց Սմբատ իշխանի անունով[36]: Անշուշտ, Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատ Ա-ն ամրացրել է հնամենի այդ բերդը:

Եղեգիս ավանից 6-7 կմ դեպի հյուսիս-արևելք, բարձրադիր սարավանդի վրա վեր է խոյանում Սյունյաց գահերեցների հոգևոր կենտրոններից մեկը՝ Ցաղաց քար վանքը: Մեր խնդրի վրա կարող էին լույս սփռել X դարի վերջին քառորդով թվագրվող այն հինգ խաչքարերը, որոնք ի թիվս ութ տասնյակ վիմագրերի հայտնաբերվել են Ցաղաց քարում հնագետ Հ. Մելքոնյանի իրականացրած պեղումների ընթացքում[37]: Ցաղաց քարի վանքի, խաչքարագործ վարպետները բավարարվել են միայն իրենց հիասքանչ գործերի կերտման թվականները փորագրելով՝ 977-988 թթ.: Մինչդեռ գրվածքով մի փոքր ավելի ընդլայնվելու դեպքում կհաստատվեր կամ կհերքվեր Կարմրաշենի 990 թ. հիշատակագրության հավաստիությունը: Այնուհանդերձ, հիմք ընդունելով Կարմրաշենի արձանագրությունը, պետք է ենթադրել, որ Գագիկ Ա Շահանշահից պարտված Սյունյաց Սմբատ Ա թագավորը նահանջել է բուն Սյունիք, դեպի Հաբանդ, որտեղ էլ մահանալով (երևի 998 թ.)՝ թաղվել է Տաթևի վանքում:

Սմբատից հետո Սյունյաց գահ բարձրացած որդին՝ Վասակը, թագավորության մայրաքաղաք է հռչակում Կապան քաղաքը[38], որը պաշտպանված էր անառիկ Բաղաբերդ ամրոցով:

Սյունիքը կենտրոնին կապելու նպատակով Գագիկ Ա-ն կնության էր առել Վասակ Ա-ի դստերը՝ Կատրանիդեին[39], **«որ և շինեաց զսխրատեսիլն և զհրաշաձև եկեղեցին ի յԱնի զմեծ կաթողիկէն»**[40]: Շինարարական արձանագրությունը վավերացված է Անիի Մայր տաճարի հարավային պատի արտաքին մասի արևմտյան անկյան մոտ[41]:

Հ. Աճառյանի պրպտումների համաձայն՝ Մատթեոս Ուռհայեցին (XI-XII դդ.) Կատրանիդեին հռչակում է վրաց Գեորգի թագավորի դուստր, Վարդան Արևելցին (XIII դ.) նրան կարծում է Սյունյաց Սահակ արքայի աղջիկ, մինչդեռ Սյունիքում այդպիսի անունով թագակապ տիրակալ չի եղել, իսկ վրացական աղբյուրները հայոց թագուհուն կոչում են բյուզանդական արքայադուստր[42]:

Բոլոր դեպքերում պատմիչները ծանոթ չեն եղել Անիի Մայր տաճարի շինարարական արձանագրությանը: Իսկ ինչ վերաբերում է Կատրանիդե անվան ստուգաբանությանը, ապա այն անհայտ է մեծ լեզվաբանին[43]:

Մ. Օրմանյանը տեղին նկատել է, որ վկայագրում թագուհու անունը **«Կատրանիդէ գրուած է և ոչ Կատրամիդէ, ինչպէս ունին բոլոր գրչագիրները»**[44]:

Եթե ոչ Կատրանիդեն, ապա ո՞վ կարող էր իմանալ

իր անվան իմաստը, որը, ըստ հայր Անդրանիկ Այվազյանի բանավոր կարծիքի, ստուգաբանվում է արաբերեն قرمة (կղատր՝ կաթիլ) + ال شيء (նադա՝ ցող) = ցողի կաթիլ: Հայերենում ունենք Ցողիկ անձնանունը:

Այսպիսով, Այունյաց թագավորության հիմնադիր Սմբատի ծագումնաբանության շուրջ մատենագիր և վիմագիր սկզբնաղբյուրների միջև առկա անհամապատասխանության հարցի լուծման նախապատվությունը տալով պահի անմիջական դրոշմ հանդիսացող վիմագրի հիշատակությանը՝ հավելենք, որ ուշադրության արժանի է այն փաստը ևս, որ Սմբատ արքայի թագաժառանգ որդին կոչվում է ոչ թե Սահակ, այլ՝ Վասակ:

Ծանոթագրություններ

1. Մի խումբ գիտնականներ Այունիքի թագավորության հիմնադրումը դնում են 970 թ., ոմանք՝ 973 թ., իսկ Բ. Հարությունյանը՝ 987 թ. (տես Բ. Հարությունյան, Այունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, ԲԵՀ, 1969, № 1, էջ 152, նաև՝ «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. III, Եր., 1967, էջ 118: Այսուհետև՝ ՀԺՊ, III և էջը:
2. «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 299:
3. Տես նույն տեղը, էջ 329:
4. Թ. Հակոբյան, Այունիքի թագավորությունը, Եր., 1966, էջ 62:
5. «Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Եր., 1960, էջ 100:
6. Տես Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 302:
7. Տես նույն տեղը, էջ 291-293:
8. Տես Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 252-253:
9. ՀԺՊ, III, էջ 327:
10. Տես նույն տեղը, էջ 96-97:
11. Ստեփանոս Տարոնեցի, նշվ. աշխ., էջ 256:
12. Տես Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 299-300, 317, 328:
13. Հարժիքը ներկայիս Այունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Հարժիս գյուղն է:
14. Ըստ հարկացուցակի՝ Բերդկաներեչին գտնվել է Ծղուկ (այժմյան Սիսիան) գավառում:
15. Ցուրա գետը, որը հայտնի է նաև Ցուրաբերդ անունով այժմյան Այունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Սվարանց գյուղն է (տես Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 475, ծանոթ. № 725):
16. Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 328-329:
17. Նույն տեղում:
18. Ըստ հարկացուցակի՝ Ծածարդը գտնվել է Ծղուկ գավառում (տես Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 509):
19. Նույն տեղում, էջ 288:
20. Նույն տեղում, էջ 329:
21. Նույն տեղում, էջ 328
22. Տես Հ. Ութմազյան, Այունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 304:
23. Տես Բ. Հարությունյան, Այունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, էջ 150:
24. «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Վայոց ձոր, կազմեց Ս. Բարխուդարյանը, Եր., 1967, էջ 41: Գրչագիրը տես էջ 42, լուսանկարը տես էջ 29:
25. Տես նույն տեղը, էջ 41: Ս. Բարխուդարյանը գրում է. «Այդտեղ մի փոքր և ժայռոտ բլրի վրա պահպանվել են մի փոքրիկ եկեղեցու ավերակները...» (նույն տեղում):
26. Նույն տեղում, էջ 42:
27. Տես «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրությամբ Սարգիս Սանահնեցւոյ Ջալալեանց թեմական արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմերեթի և այլոց», մասն Բ, Տփխիս, 1858, էջ 137:
28. Տես Քաջբերունի (բժ. Գաբրիել Յովհաննիսեան), Ճանապարհորդական նկատողութիւնք, «Արարատ», 1889, էջ 283:
29. Տես Ղ. Ալիշան, Սիսական, Եր., 2009, էջ 110:
30. Նույն տեղում:
31. Տես ՀԺՊ, III, էջ 120:
32. Նույն տեղում:
33. Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 63:
34. «Դիվան հայ վիմագրության», պր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Եր., 1982, էջ 169:
35. Նույն տեղում, էջ 173:
36. Տես Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Եր., 1955, էջ 52:
37. Յ. Մելքոնեան, Նորայայտ արձանագրութիւններ Ցաղաց քար վանքից, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1996, 1-12, էջ 70-71, 81:
38. Այունյաց թագավորության մայրաքաղաքի հարցում, ինչպես նկատել է Թ. Հակոբյանը, Ղ. Ալիշանը հայտնում է երկու հակադիր կարծիք. ա) այն սկզբում գտնվում էր Ծղուկքի (երևի նկատի ունի Շաղատը, որը Այունյաց նախարարության վարչական կենտրոնն էր վաղ միջնադարում) և Վայոց ձորի կողմերում, իսկ հետո հաստատվեց Ձորքում, և հայտնի չէ, թե երբ է տեղի ունեցել այդ փոխադրումը (տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 290), բ) թագավորանիստը սկզբից ևեթ հաստատվել է Կապան քաղաքում, քանի որ առաջին թագավոր Սմբատն ի սկզբանե տիրում էր հայրական Ծղուկ գավառում, չնայած հետազոտողները ենթադրաբար ավելացնում են նաև Բաղք և Ձորք գավառները, որտեղ իշխում էին Ձագիկյանները (նույն տեղում, էջ 17): Թ. Հակոբյանը երկրորդ կարծիքի կողմնակից է (տես Թ. Հակոբյան, Այունիքի թագավորությունը, էջ 124-126), մենք՝ առաջինի:
39. Տես Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 300-303:
40. Նույն տեղում, էջ 300:
41. Տես «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Եր., 1966, էջ 35:
42. Տես Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 582, նաև՝ Գ. Գրիգորյան, Ս. Հախվերդյան, Այունիքի պատմություն, Եր., 2001, էջ 71, Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Եր., 1991, էջ 14, Տ. Սահակյան, Այունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, ՊԲՀ, 1966, № 3, էջ 224, Վարդան Բարձրբերդեցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկուայ, 1861, էջ 123:
43. Տես Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 582:
44. Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1358:

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ», 2014, № 1, ԷՋ 22-30

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիք-Արցախ պատմական առնչությունները (IX-XII դդ.)

Միջնադարյան Հայաստանի առանձին նահանգների, մասնավորապես Սյունիք-Արցախ պատմական առնչությունների ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուրներ են վիմական արձանագրությունները: Փորձենք գլխավորապես վիմագրերի՝ իբրև «գրչական աղավաղումների և եղծումների չենթարկված ամենահավաստի աղբյուրների»[1] տվյալների հիման վրա ներկայացնել այս երկու հարևան նահանգների առավել հզոր իշխանական տների փոխհարաբերությունների զարգացման պատկերը IX-XII դդ.: Այն ընտանեկան մերձեցումներով ամրապնդված և իրական անհրաժեշտությամբ պայմանավորված լինելով՝ այդ տարածաշրջանում հետագայում մեր ժողովրդի գոյապայքարի գրավականը հանդիսացավ:

Աղբյուրները ցույց են տալիս, որ ինչպես հնում, այնպես էլ միջնադարում, բացառությամբ ոչ էական ընդմիջումների, քաղաքական ու տնտեսական իմաստով հիշյալ նահանգները կազմել են մի ամբողջություն, ինչը հաստատվում է նաև մշակութային ընդհանրությամբ: Պատահական չէ, որ թե Արցախում և թե Սյունիքում առանձին բնակավայրեր, երբեմն էլ գավառներ, կոչվել են միևնույն անուններով:

Մատենավիմագրական տվյալները բացահայտում են, որ երկու դրացիների փոխհարաբերություններն առանձին ժամանակներում տարբեր կերպ են արտահայտվել: Դրանցում եղել են վայրէջքներ ու միջավատական հակասություններ, որոնք հատուկ են միջնադարյան բոլոր քաղաքական կազմավորումներին առհասարակ: Ավելի քան մեկ և կես հարյուրամյակ է պահանջվել, որպեսզի հարթվեն Սյունիք-Արցախ այն տիրութային տարաձայնությունները, որոնք վերստին ծագել էին IX դ. սկզբներին[2]:

Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարածքում՝ պատմական Սոդք գավառում[3], Գրիգոր Ատրներսեհյանը 881 թ. խաչքար է կանգնեցրել՝ իրեն «Սիւնեաց և Աղուանից իշխան»[4] հիշատակագրելով: Սա ցայժմ հայտնի միակ վիմական սկզբնաղբյուրն է, որտեղ միևնույն անձնավորությունն իրեն անվանում է երկու նահանգների իշխան միաժամանակ: Նրա հայր Ատրներսեհը որդին էր Սահլի **«... որ էր ի տոհմէն Հայկայ՝ տէր Սիւնեաց[5], որոյ բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամա...»**[6]: Գեղարքունյաց Գրիգոր Սուփան Ա իշխանը չէր կարող դիմակայել իր ավատական տիրույթների նկատմամբ Սահլ իբն Սումբատի (Սահլ որդի Սմբատի) հավակնություններին, քանի որ վերջինս արկածախնդիր Բաբանին գերեվարելուց հետո վայելում էր արաբների համակրանքն ու վստահությունը: Եվ պատահական չէ, որ **«...ընդ վաստակոցն առնու... իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից՝ տիրեալ... ամենեցուն արքայաբար»**[7]: Այս հիշատակությունից ակներև է, որ Սահլ Սմբատյանը հայոց տան մեջ գերագահության համար մրցակցել է Բագրատունի հզոր իշխանների հետ: Նրա Ատրներսեհ որդին ամրապնդում է իր դիրքերը՝ կառուցելով **«զբերդն Հանդու, և զապարանս իւր եդեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք (Ծար-Արցախ - Ա. Մ.), ուր և բաղանիք արքունական են... Տիկինն Սպրամ յառաւել բարեգործութիւնս յաճախէր և մեծածախ տենչմամբ շինէ զՆորավանս ի գաւառին Սոդէից (Սոդք-Սյունիք - Ա. Մ.) ամենապայծառ զարդարուք...»**[8]: Ահա այս տիրույթները ժառանգելով է, որ Գրիգոր Ատրներսեհյանը վերոհիշյալ արձանագրության մեջ իրավունք է վերապահում իրեն կոչելու «Սիւնեաց և Աղուանից իշխան»:

Ի դեպ, Արցախն ու Սյունիքը ոչ հայկական տարածքներ, հայերին եկվորներ, իսկ մշակույթն աղվանական հայտարարող բունիյաթովական դպրոցի ներկայացուցիչ Դ. Ախունդովին այս արձանագրությունը, ինչպես Գ. Գրիգորյանն է նկատում, առիթ է տվել Գրիգոր Ատրներսեհյանին հռչակելու պատմության մեջ գոյություն չունեցած **«ին՝ աղվանական իշխան»** հորջորջմամբ, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ նրա պապ Սահլը սերում էր «ի տոհմէն Հայկայ», այսինքն՝ հայ է եղել[9]:

Պատմագիտության մեջ Գրիգոր Ատրներսեհյանը նույնացվում է Աղվանից Համամ Բարեպաշտ թագավորի հետ[10], որի՝ 1241 թ. վերստին դրված տապանաքարին արձանագրված է **«...Հա |մամ| թագաորի Աղվ| անի| ց...»**[11]: Բ. Ուլուբաբյանը մեջբերում է արևելագետ Ա. Կրիմսկու այն կարծիքը, թե «Գրիգոր (որ նշանակում է «արթուն», «զգոն», «հոգատար») մկրտչական անունը թարգմանվել է արաբերեն «համամի» հետ, որն ունի նույն արմատը՝ լինել զգոն, հոգատար»[12]: Իսկապես, արաբերենում ունենք ھمام (համմամ) ձև, որը նշանակում է «զգոն», «անխոնջ», «անդուլ»: Կա նաև ھمام (հոմամ)՝ «մեծահոգի», «բարեհոգի», «բարեպաշտ», որի առաջին վանկի ձայնավորն արտաբերման պահին արտասանվում է «ա», «ը»:

Բայց կա նաև կոշտ հ բաղաձայնով սկսվող ھمام (համամ), որը թարգմանվում է «աղավնի»: Վերջինս անմեղության, խաղաղասիրության, բարեպաշտության խորհրդանիշն է: Հենց Համամ թագավորն է 894 թ. Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին ազատել արաբական գերությունից: Արդյոք այս պատճառո՞վ չէ նա ստացել Համամ պատվական անունը: Պատմիչը հաղորդում էր, որ **«...Գրիգոր շինէ զՀաւախաղացին բերդն, և յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»**[13]: Արդյոք Գրիգորն իր մականունո՞վ չի անվանել իր իսկ կառուցած ամրոցը: Չէ՞ որ «հաւ» կամ «հաւք» նշանակում է «թռչուն» ընդհանրապես[14]: Թռչունի հետ կապված անձնանունների՝ նրա հետնորդների մեջ հանդիպում ենք Արցախ-Խաչենի XIII դ. սկզբների արձանագրություններում: Դրանցում արդեն օգտագործվում է «Սակռ» (ՍԱԿՌ) արաբերեն ձևը, որը հայերեն թարգմանությամբ նշանակում է «բազե»[15]: Իսկ Գրիգորի տոհմն էլ այդ ժամանակաշրջանում ընդունված էր կոչել Վախտանգյան - Սակռյաններ:

Գրիգոր-Համամի նույնության հաստատումն է նաև Տաթևի 906 թ. վավերագիրը: Այստեղ Աղվանքի

իշխանների շարքում առաջինը հիշատակվում է Գրիգորը[16]: Նախ՝ Գրիգորը պաշտոնական փաստաթղթում, անշուշտ, պետք է հանդես գար իր մկրտության անունով, և երկրորդ՝ ո՞վ կհանդգներ ամենայն հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունու ներկայությամբ իրեն արքա կոչելու: Նրանք թագավորներ էին իրենց տիրույթներում, իսկ հայոց արքայի մոտ՝ սոսկ իշխաններ: Ի դեպ, այդ վիճակին վերջ տալու նպատակով հետագայում, Աշոտ Բ Երկաթից սկսած, 922 թ., ի նշանավորումն խալիֆայության համար վտանգավոր դարձած Ատրպատականի Սաջյան Յուսուֆ ամիրայի դեմ նրա տարած հաղթանակի, հենց իրենք՝ արաբները, հայոց Բագրատունի թագավորներին ճանաչում էին որպես «շահանշահեր» (պրսկ. Ավելորամ)[a] «արքայից արքա»[17]:

Տաթևի Մեծ տաճարի նավակատիքի առիթով հավաքված հայոց մեծամեծերի 906 թ. ժողովը մեր ժողովրդի միաբանության վկայությունն է, որտեղ թագավորի շուրջ համախմբվել էին երկրի բոլոր գլխավոր իշխանները: Դա, բնականաբար, չէր կարող վրիպել արաբների ուշադրությունից: Արաբական խալիֆայությունը, ձգտելով իր ազդեցությունը պահպանել նորանկախ պետություններում, դրանք պառակտելու դիտավորությամբ թագեր էր ուղարկում նահանգական գահերեց իշխաններին: Եվ պատահական չէ, որ Տաթևի ժողովից ընդամենը երկու տարի անց՝ 908 թ., Ատրպատականի Յուսուֆ ամիրայի ձեռքով թագադրվում է Վասպուրականի գահերեց իշխան Գագիկ Արծրունին: **«...Նախ Արծրունիքն, և թագ կապեցին ընդդեմ Սմբատայ՝ Հայոց թագաւորի, թագ կապեաց և Ատր-Ներսէհ՝ Վրաց բդեաշխն, թագ կապեաց և Աղվանին համամ[18]: Մեծարէ Ափշինն զՎասակ Սիւնի թագ կապեալ. և նա ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել: Ապա ի նուազել տէրութեանն Բագրատունեաց, և ի զօրանալ ձեռինն իսմայէլականի՝ հատեալ, բաժանեալ եղեն ամենայն գահք գլխաւոր նախարարացն Վասպուրականին և Վրացին և Աղվանին և Ձորոյգետացիքն, որ Կիւրիկեանքն կոչին, նաև Կարուցն և Վանանդայն, որ Բասեանք կոչի»**[19]: Եթե այստեղ մեծ հայրենասեր Ստեփաննոս Օրբելյանը դատապարտում է գահերեցների թագավոր դառնալու հանգամանքը և դրվատում Սյունյաց Վասակ իշխանի նվիրվածությունը հայոց գահին (թեև Կեչուտի 886 թ. արձանագրությունը[20] հակառակն է վկայում.- Ա. Մ.), ապա Խորասանի սուլթանից Սիսականի տեր Սմբատի թագ ստանալու պարագայում փորձում է արդարացնել իր հայրենակցին՝ պատճառաբանելով Սյունիքի կտրվածությունը Անի-Այրարատից՝ գրելով հետևյալը. **«և զի յայնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման, և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ, վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ...»**[21]:

Այսպիսով, նահանգներում ստեղծվում են ավատական քաղաքական կազմավորումներ, որոնք թեև մատենավիմագրական աղբյուրներում կոչվում են թագավորություններ, իսկ գահերեցները՝ թագավորներ, սակայն ենթարկվում էին Բագրատունի արքայից արքաներին: Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատ Ա-ն (970-988) փորձ արեց վերահաստատել IX դ. սկզբներին ժամանակավորապես խաթարված Սյունիք-Արցախ դաշինքը: Վիմագրության մեջ այն արտացոլվում է Սմբատ-Շահանդուխտ ամուսնական կապով: Շահանդուխտ Ա թագուհին, որը Գրիգոր Ատրներսեհյանի որդի Սահակ Սևադայի դուստրն էր, հիմնարկել է Վաղադնի վանքի սբ. Ստեփանոս եկեղեցին՝ արձանագրելով հետևյալը. **«Շինեցաւ հրամանով թագաւորին Սնպատա ի ձեռն Շահանդխտո բարեպաշտ թագուհոյ...»**[22]: Նա **«վասն հոգեաց բարեպաշտ և աստուածասէր թագաւորին Սմպատայ»**[23] 998 թ. Տաթևի վանքին է նվիրաբերել Հաբանդ գավառի Տեղ գյուղը՝ ընծայելով նաև 6000 դրամ: Այս դաշինքը, որի հիմքում ընկած էր Գանձակի ամի-

Ստեփանոս կաթողիկոսի հիշատակագրությունը Վահանավանքի կրկնահարկ եկեղեցու գավթում (XI դ.)



Սոփի թագուհու տապանաքարը Վահանավանքում (1081 թ.)

ռայության ասպատակություններից Արցախի պաշտպանությանը սատարելու՝ Սյունիքի պատրաստակամությունը, չամրապնդվեց: Այն պատմական դառնալ չէր կարող, որովհետև հետագայում երկու հզոր իշխանությունների կենտրոնախույս նկատառումները, անշուշտ, կվտանգեին հայկական ուժեղ պետականության միասնությունը: Դա նաև պայմանավորված էր Փառիսոսում և բուն Արցախում Սահակ Սևադայի ու նրա հաջորդների դիրքերի ժամանակավոր թուլացմամբ:

Այդ ընթացքում Արցախի քաղաքական կյանքում վեր է բարձրանում Դիզակի իշխան Գագիկը: Նա, եթե «Ջոխտ պռավածառի» վանքի 997 թ. խաչքարի վրա հիշատակվում է «Աղուանից իշխանաց իշխան»[24] տիտղոսով, ապա Տումի գյուղի «Կարմիր եղցի» եկեղեցու 1000 թ. արձանագրության մեջ հանդես է գալիս իբրև Աղվանից թագավոր[25]: Սրանից դժվար չէ կռահել, որ Գագիկ Ա Բագրատունին (990-1020) կենտրոնախույս իշխաններին պատժելուց հետո Արցախում նախապատվությունը տվել է Գագիկ Դիզակեցուն:

Ընդհանուր թշնամի սելջուկ-թուրքերի դեմ միաբանված պայքարելու անհրաժեշտությունն Արցախ-Սյունիք դաշինքի ստեղծման հիմք է դառնում: Կենտրոնացված հայկական պետականության անկումից հետո առանձին նահանգներ կամ թագավորություններ միայնակ ի զորու չէին դիմակայելու օրեցօր հզորացող թշնամուն: Այս իրողությունն էր, որ Սյունյաց Գրիգոր Ա թագավորին (1051-1072) և Փառիսոս-Աղվանքի թագավորազն Սևադային (XI դ. կեսեր) ստիպեց համախմբելու իրենց ուժերն ընդհանուր թշնամու դեմ՝ դրանով իսկ հիմք դնելով Սյունիք-Արցախ դաշինքին: Այն ամրապնդվում է Գրիգորի և Շահանդուխտի ամուսնությամբ: Շահանդուխտ Բ թագուհին հայտնի է իր բարեգործությամբ: Նա Սյունյաց հոգևոր կենտրոն Վահանավանքում կառուցում է եկեղեցիներ. **«...Ես Շահանդուխտ դուստր Սևադայի՝ Աղուանից արքաի և ամուսին Գրիգորոյ՝ որդո Աշոտկայ, ի նեղութեան ժամանակիս մերում բազում և ծանր աշխատութեամբ ես և սիրելի քոյր իմ Կատայս շինեցաք զեկեղեցիքս զ Հարութիւն և Սիոն... ի յիշատակ յաւիտենից Գրիգորոյ...»**[26]: Շահանդուխտը մինչ այդ ավարտին է հասցնում կրկնահարկ դամբարան-եկեղեցին՝ վիմագրելով. **«Ի: Շլե: (1086) թվականիս ես Շահանդուխտ դուստր Սևադաի Աղվանից թագաւորի և ամուսին Գրիգոր թագաւորի՝ որդո Աշոտկա, վասն ոչ գալո մեր ի միասին ժառանգ ըստ մարմնո, ես և քոյրս իմ Կատայս շինեցաք զ Աստուածածինս փոխարեն գթոց նորա...»**[27]: Այս հիշատակագրից հայտնի է, որ Գրիգորն ու Շահանդուխտը ժառանգ չեն ունեցել, և ինչպես պատմիչն է նշում. **«...ածեն յԱղվանից զՍենեքերիմ՝ եղբայրն նորին Շահանդխտոյ թագաւորազն մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ, հանճարեղ և իմաստուն...»**[28]: Ինչպես տեսնում ենք, այս դեպքերից շուրջ 200 տարի հետո ապրած Ստեփաննոս Օրբելյանը վկայում է, թե Սենեքերիմին բերում են Աղվանքից: Մինչդեռ Շահանդուխտի՝ եկեղեցու մուտքի մոտ կանգնեցված կոթողի վրա առկա է Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հետևյալ հիշատակությունը.

Գանգի վրա վերականգնում՝ Հասան Ջալալյանի

«...Նեղեալ ի տաճկաց եկա և հանգեայ աստուածասէր թագուհեայ Շահանդխտին և Կատաին շինած եկեղեցոյս գաւիթս...»[29]:

Վահանավանքի 1966-1970 թթ. պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի արձանագրություն՝ **«Յիշեայ Քրիստոս զՍևադա և զիւր կենակիցն»**[30] փորագրությամբ: Գ. Գրիգորյանը ենթադրում է, որ դա Սենեքերիմի հայր Սևադան է[31]: Այս վանքի 1970-1978 թթ. պեղումների արդյունքում գտնվում է տապանաքար՝ **«Սոփի Աղուանից թագուհի, զոքանչ Գրիգոր թագաւորի՝ որդո Աշոտկա, մայր Շահանդխտո: Թվականին :ՇԼ: (1081)» արձանագրությամբ**[32]: Արդ, եթե Աղվանից կաթողիկոսը, թագավորն ու թագուհին և շատ ուրիշ արցախցի իշխաններ «ի նեղութեան ժամանակիս», «նեղեալ ի տաճկաց» եկել էին Սյունյաց լեռնաշխարհում իրենց հարազատին ապավինելու, ապա ինչո՞ւ նրանց հետ չպետք է գար նաև «թագաւորազն մանուկ» Սենեքերիմը: Հիշենք հենց իր՝ պատմիչի այն վկայությունը, թե Վահանավանքում թաղված են **«բազում թագաւորք և թագուհիք Աղվանից և Բաղաց, և բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս»**[33]: Դա են հիմնավորում հայտնաբերված բազմաթիվ արձանագրությունները[34]: Ուրեմն, Սենեքերիմին ոչ թե բերել են Աղվանքից, այլ նա վաղուց իր ծնողների ու մյուսների հետ եկել էր Կապան: Դժվար չէ ենթադրել, որ Արցախի իշխանավորները հետապնդվում էին Գանձակում հաստատվող թուրք-սելջուկներից, որոնք աստիճանաբար բռնազավթում էին Արցախը:

Գանգի վրա վերականգնում՝ Աղվանաց Դինար թագուհու

Սյունյաց Սենեքերիմ թագավորը (1072-1096) Տաթևի նվիրատվական արձանագրություններից մեկում իրեն ներկայացնում է հայոց թագավոր և ավելացնում, որ **«կացեալ ի Սիսական ու Բաղաց աշխարհիս»**[35]: Ապա Տաթևի վանքին է նվիրաբերում **«արեան գինք գաւառացս ի Ծղուկ նահանգի զԱրիտն աւան»-ը**[36]: Սյունյաց մեծ իշխան Հասանը Գանձակի Ֆաղլուն (Փատլուն) ամիրայից ազատագրում է «զԿովական գաւառը»[37] և վճռում նվիրատվություններ կատարել վանքին[38]: Սենեքերիմը հաստատում է իր զորապետի վճիռը, **«որ ի Տաճկաց թափեալ էր իւր արեամբն»**[39]: Սենեքերիմի մահից հետո Սյունյաց թագավորությունը, անկում ապրելով, հետզհետե կուլ էր գնում սելջուկներին:

Գիտենք, որ Սիսական նախավերջին թագավոր Գրիգոր Բ-ն (1096-1166)՝ Սենեքերիմի որդին, գահաժառանգ չունենալու պատճառով և, իհարկե, ինչպես ներքևում կտեսնենք, սելջուկյան տիրապետությունից հերոսաբար ազատագրվող Արցախի օգնությանն ապավինելու համար, **«ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի՝ Հասան անուն ի Գեռաքարեցեացն. և ետ զդուստր իւր Կատայն նմա ի կնութիւն. և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ»**[40]:

Հայտնի է, որ Գրիգորն ու նրա եղբայր Սմբատը 1166 թ. մահանում են: 1170 թ. սելջուկները պաշարում են Բաղաբերդը: Հասանն իր ընտանիքի հետ գիշերով հե-

ռանում է հարազատ Խաչեն, և Բաղաբերդի անկումով վերանում է Սյունյաց 200-ամյա թագավորությունը: Այնուհետև պատմական աղբյուրներն այս Հասանի մասին լռում են: Սակայն **«որտեղ լռում են պատմագիրները, այնտեղ աղաղակել են սկսում վեմերը»**[41]: Հասանի մասին տեղեկություններ են պահպանվել Արցախ-Խաչենի վիմագրերում: Առաջին հայացքից թվում է, թե դա այն Հասանն է, որը Խաչենի հոգևոր կենտրոն Գանձասարի վանքում խաչքար է կանգնեցրել՝ արձանագրելով. **«Թիւն :ՈԼ: (1181), Էր ես Հասան, որդի Վախտանգա կանգնեցի զխաչս ի տապանի դստեր իմո Խաթունին և մաւր իւր թագուհո, դստեր թագավորին Բաղաց»**[42]: Նույն վայրում մեկ այլ խաչքարի վրա կարդացվում է **«Թիւն :ՈԻԳ: (1174) էր, Վախտանգ Խաչինո յերիտասարդ հասակի փոխեցաւ ի: Ես Նրջիս՝ դուստր Հասանա, թոռն Աբասա թագաւորին, և կանգնեցի զխաչս...»**[43]: 1216 թ. Վախտանգի մյուս որդին խաչքար է կանգնեցրել՝ վիմագրելով. **«...Սմբատ..., եղբէր արքէին Հասանայ...»**[44]: Վկայակոչված արձանագրություններից հետևվում է, որ Հասան Խաչենեցին պետք է Սյունյաց վերջին թագավորը լինի, քանի որ գործունեության ժամանակը նույնն է, կինը Բաղաց թագավորի դուստրն է, իսկ ինքն էլ հիշատակվում է որպես արքա:

Սակայն դա այդպես չէ, քանի որ այս Հասան Խաչենեցու թոռն է XIII դարի հայ իրականության խոշորագույն գործիչ, **«ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի»**[45] Հասան Ջալալ-Դոլան, որի կին Մամքանը, ըստ որոշ արձանագրությունների, Բաղաց թագավորի դուստրն է[46], իսկ համաձայն այլոց՝ թոռը[47]: Գանձասարին մոտակա հավապտուկում կա մի արձանագրություն[48], որում XII դ. կեսերի Խաչենի իշխանավորներ են հիշատակվում Հասանը (որդի Վախտանգա) ու Մամքանը: Իհարկե, կարելի է արձանագրության թվականը՝ :ՈԺԲ: (1163), դարձնել :ՈՁԲ: (1233)[49] և ստանալ Հասան-Ջալալ ու Մամքան, սակայն հիշատակությունում գործող մյուս անձինք՝ հոգևոր հայրեր Յոհանը, Գրիգորը և Գևորգը, հանդես են գալիս նաև վանքի XII դ. կեսերի վիմական ուրիշ աղբյուրներում ևս[50]: Այստեղից հետևում է, որ Հասան Վախտանգյանը Խաչենում իշխել է 1163 թվականից կամ դրանից առաջ: Նրա դուստր Նրջիսը պետք է հասուն տարիքում լիներ, որպեսզի խաչքար կանգնեցներ իր պապ Վախտանգի հիշատակին, ինչը և արել է վերջինիս մահվանից շատ ուշ՝ 1174-ին: Հասան Խաչենեցու կինը՝ Մամքան թագուհին, հնարավոր է՝ դուստրն է Բաղքի Սենեքերիմ թագավորի[51]: Բ. Ուլուբաբյանը դա բացառում է՝ պատճառ դարձնելով ժամանակահատվածի մեծությունն ու Սենեքերիմի և Ներքին Խաչենի իշխանների տոհմակցական-ազգակցական խանգարիչ կապը, հետո իրավացիորեն նկատում, որ այն մի քանի սերունդ հեռացել էր և, նույնիսկ կրոնական ամենախիստ օրենքով անգամ նրանց խնամիությունը չէր կարող արգելվել[52]: Բայց չպետք է մոռանալ, որ ոչ թե այս Վախտանգյաններն էին անմիջապես տոհմակից նրան, այլ Հաթերքի Վախտանգյան-Սակռյանները՝ Գրիգոր-Համամի անմիջական սերունդները: Ինչ վերաբերում է ժամանակահատվածի մեծությանը, ապա ինչո՞ւ Սենեքերիմի երկարակյաց որդիներ Գրիգորն ու Սմբատը կգործեին մինչև 1166 թ., իսկ նրանց քույրը՝ ոչ: Հասանը Սմբատի արձանագրության[53] մեջ, հավանաբար, արքա է կոչվում սելջուկների դեմ ունեցած իր ռազմական հաջողությունների, ուժեղ ու կայուն իշխանության, ինչպես նաև մայրական կողմով Կյուրիկյան Աբաս Բագրատունու թոռը լինելու և Բաղքի թագավոր Սենեքերիմի դստեր հետ ունեցած ամուսնական կապի պատճառով:

Այս Հասան Վախտանգյան Խաչենեցու ժամանակակիցն է Վերին Խաչենի գահերեց իշխան Հասան Վախտանգյան-Սակռյանը՝ **«տէր Հաթերո և Հանդաբերդո, Խաչինաբերդո և Հաւախաղացին, կացի յաւագութեան ամս :Խ: (40) շատ պատերազմաւ և յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն և եղեն ինձ :Ձ:/6/ որդի, զբերդերս և զգաւառս ետու նոցա և եկի ի վանքս մաւտ յիմ եղբայրս ի Գրիգորէս և եղէ կրաւնաւոր... ՈԼԱ /1182/ թուիս»**[54]:

Ինչպես տեսնում ենք, այն ազգանվեր գործը, որի սկիզբը Հայաստանի հյուսիսում դրեցին Զաքարյանները, արևելքում՝ Արցախում, վաղուց սկսել էին համամ թագավորի քաջարի հետնորդները: Զաքարե ու Իվանե եղբայրներին մնում էր իրենց շուրջը համախմբել լեռնային կռիվներում վաղուց արդեն թրծված արցախյան մարտական ջոկատները:

Ի դեպ, ինչպես Բ. Ուլուբաբյանն է նշում ու անհավանական համարում, Ղ. Ալիշանը, հանձին այս Հասան Հաթերցու, տեսնում է Բաղաց վերջին թագավորին՝ Ստեփաննոս Օրբելյանի հաղորդած հայտնի խոսքերում, Հասանից հետո, փակագծերում ավելացնելով (որդի Վախտանգայ Սակռեանց), ինչպես նաև «ի Գեռաքարեանցն» փոխելով, դարձնելով «ի Գետաքարեանցն»[55]: Միգուցե Ղ. Ալիշանը չի՞ սխալվում, այլ միայն շփոթո՞ւմ է: Այդ դեպքում հնարավո՞ր է, որ սխալվեր Ստեփաննոս Օրբելյանը՝ ավելի քան 100 տարի հետո շարադրելով Բաղաց թագավորության վախճանի պատմության անցքերը:

Հովհաննավանքի տապանաքարերից մեկի վրա հիշատակվում է.

«ՈՒԷ /1178/ թվ. Շուշիկ դուստր Գրիգորո թագաւորին Բաղաց[56] **հալածեալ ի մերմէ գաւառե եկի յաշխարհս Հայոց ի Վանս Յոհան, յորում զկատարումն և զթաղումն առի մարբ իմով»**[57]: Վախտանգ Սակռի որդին՝ Դադիվանքի հոգևոր առաջնորդ տեր Գրիգորէսը «Թվին ՈԼԹ» /1190/ խաչքար է կանգնեցրել մոր՝ Շուշիկի հիշատակին[58]: Վախտանգի և Շուշանի (Շուշիկի) որդիների շարքում արձանագրություններում հանդիպում ենք Սմբատ[59] և Գրիգորիկ[60] անունների: Արդյոք պատահականությո՞ւն է սա: Հնարավո՞ր է, որ Սյունյաց պատմիչը Վախտանգ-Շուշան ընդունելի կապը շփոթած լինի Հասան-Կատայով: Բայց այս դեպքում չեն համընկնում Վախտանգ Սակռի և Բաղաբերդի անկման ժամանակները: Ուրեմն, քանի որ ընդունում ենք Ստեփաննոս Օրբելյանի տեղեկության հավաստիությունը՝ հենվելով «Պատմութիւն տանն Սիսական»[61] երկի մոսկովյան և թիֆլիսյան հրատարակությունների վրա, ապա, ինչպես մեծավաստակ հայագետ Գարեգին Հովսեփյանն է ենթադրել[62], Հասան թագավորին, համաձայն պատմիչի հաղորդման, պետք է փնտրել Գեռաքարում՝ Խաղբակյան իշխանական տոհմի նստոց-բնակավայրում: Հասանն իրենց հոգևոր կենտրոն հավապտուկում մի գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել՝ վիմագրելով. /**«:ՈԼԳ: /1184/ Ես Հասան, որդի Խաղբակայ/**[63] **կանգնեցի զխաչերս ի վերա տապանի... »**[64]: Թե ո՞ւմ տապանի վրա է կանգնեցված հեծյալի պատկերաքանդակով խաչքարը, հայտնի չէ:

Այնուամենայնիվ, կարելի է կարծել, որ Խաղբակի որդի Հասանն է Սյունյաց վերջին թագավորը, հավանաբար, որի թոռն է Մամքանը՝ Հասան Ջալալ-Դոլայի կինը[65]: Այն արձանագրություններում, որտեղ Մամքանն իրեն հիշատակում է «դուստր Բաղաց թագավորին», ըստ երևույթին, ընդգծում է իր անմիջական կապը Սյունյաց թագավորական ընտանիքի հետ:

Հասանի եղբայրն է Զաքարյանների բանակի նշանավոր զորապետ Վասակ Խաղբակյանը՝ սելջուկ-թուրքերից Վայոց ձորի և Սյունյաց մի շարք այլ տարածքների անմիջական ազատագրողը, կողմնապետը **«Ի Գառնոյ մինչև Բարգուշատ»**[66]: Արդյոք նա իր երեք որդիներով՝ **«արք քաջք և անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն տաճկաց»**[67], չէ՞ր եկել Սյունիք՝ վրեժխնդիր լինելու և տեր կանգնելու իր եղբոր՝ Բաղաց վերջին թագավորի կորսված տիրույթներին:

Այսպիսով, միջնադարյան Հայաստանի Սյունիք-Արցախ նահանգների փոխառնչությունների զարգացմանը սույն վիմագրագիտական անդրադարձը երևան է հանում այդ երկու հարևանների միջև պատմականորեն ստեղծված մի դաշինք, որը ձևավորվել էր XI դ. կեսե-

րին՝ հայոց պետականության անկումից անմիջապես հետո, և պայմանավորված էր ընդհանուր թշնամու՝ սելջուկ-թուրքերի դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտությամբ: *Այդ դաշինքը, որը լեռնաշխարհին շնորհեց ապրելու իրավունք, հետագա դարերում էլ ավելի ամրապնդվեց և ցայտուն արտահայտվեց հատկապես Սյունիք-Արցախում XVIII դ. հայ ազգային-ազատագրական շարժումների ժամանակ:*

Ծանոթագրություններ

1. Ուլուբաբյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 11:
2. Այդ անհամաձայնությունների պատճառը մի շարք վիճելի գավառների՝ Ծար-Վայկունիքի, Աղահեջ(ճք)ի, Բերձորի, նաև Սոդքի պատկանելության շուրջ Սյունյաց և Աղվանից աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միջև վեճն է, որն առաջացել էր դեռևս Vդ., երբ բուն Աղվանքի թագավորությունն իրեն էր ենթարկել Արցախ նահանգը: Այդ խնդրի անարդյունք կարգավորմամբ փորձել են զբաղվել հայոց շատ կաթողիկոսներ: Ի վերջո, 1006 թ. Սարգիս հայրապետի կոնդակով ճշտվում են Սյունիք - Արցախ նահանգների սահմանները (տես Բարխուդարյանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 1-2, «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 308-311):
3. Հայտնի է, որ Սոդքը Մեծ Հայքի Սյունիք նահանգի 12 գավառներից հինգերորդն էր (Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Ե., 1963, էջ 117):
4. Դիվան հայ վիմագրության (այսուհետև՝ Դիվան), պրակ IV, կազմեց Բարխուդարյան Ս. Գ., Ե., 1973, էջ 334:
5. Մի շարք ուսումնասիրողներ Սահլին համարում են «Եռանշահիկ», իսկ «Սիւնեաց» ասելով՝ հասկանում են «Փոքր Սիւնեաց» (Արցախ-Խաչեն): Տես Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 67, 71:
6. Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983, էջ 340: Գեղարքունիքի Սյունիներին խնամիացած Բագրատունի թագավորները IX դ. վերջերին Սոդք գավառը վերադարձնում են նախկին տերերին, բայց Աշոտ Բ Երկաթը (914-928) այն միացնում է արքունական տիրույթներին:
7. Մովսես Կաղանկատվացի, էջ 330:
8. Նույն տեղում, էջ 340:
9. Ахундов Д. А., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, с. 248-249. Григорян Г. М., Историческое значение армянских лапидарных надписей Арцаха и Сюника (Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1990, № 1, էջ 4, նույնի՝ Очерки истории Сюника IX-XV вв., Е., 1990, с. 28 (տողատակ):
10. Ուլուբաբյան Բ. Ա., նշվ. աշխ., էջ 76:
11. Դիվան, պրակ V, կազմեց Բարխուդարյան Ս. Գ., Ե., 1982, էջ 151:
12. Ուլուբաբյան Բ. Ա., նշվ. աշխ., էջ 76:
13. Մովսես Կաղանկատվացի, էջ 340-341:
14. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. երրորդ, Ե., 1974, էջ 308 և 314:
15. Թռչունին առնչվող նաև հատուկ անունների և տեղանունների ենթ հանդիպում Արցախում՝ Հավապտուկ, Կաչաղակաբերդ, Աղավնո գետ: Ի դեպ, Լաչինը թուրքերեն նույնպես բազե է նշանակում:
16. Ստեփաննոս Օրբելյան, էջ 234:
17. Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 315:
18. Համամը թագադրվել է ավելի վաղ՝ Աշոտ Ա Բագրատունու (885-890) օրոք (Մովսես Կաղանկատվացի, էջ 335): Ստեփաննոս Օրբելյանը նույնպես նշում է գերությունից Համամի միջնորդությամբ Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի (877-897) ազատվելու մասին (Ստեփաննոս Օրբելյան, էջ 281):
19. Ստեփաննոս Օրբելյան, էջ 299:
20. Դիվան,պրակ III, կազմեց Բարխուդարյան Ս. Գ., Ե., 1967, էջ 21:
21. Ստեփաննոս Օրբելյան, էջ 300:
22. Դիվան, պրակ II, կազմեց Բարխուդարյան Ս. Գ., Ե., 1960, էջ 100:
23. Ստեփաննոս Օրբելյան, էջ 291:
24. Դիվան, պրակ V, էջ 169:
25. Նույն տեղում, էջ 173:
26. Գրիգորյան Գ., Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից (Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1980, № 2, էջ 156:
27. Դիվան, պրակ II, էջ 138:
28. Ստեփաննոս Օրբելյան, էջ 318:
29. Դիվան, պրակ II, էջ 139:
30. Գրիգորյան Գ., Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (ԼՀԳ, 1970, №10, էջ 92):
31. Նույն տեղում:
32. Գրիգորյան Գ., Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից (ՊԲՀ, 1980, № 2, էջ 162):
33. Ստեփաննոս Օրբելյան, էջ 240:
34. Դիվանի պրակ II-ում ամփոփված և Գ. Գրիգորյանի հայտնաբերած արձանագրությունները, զետեղված վերը՝ տողատակում նշված նրա երկու հոդվածներում:
35. Ստեփաննոս Օրբելյան, էջ 322:
36. Նույն տեղում, էջ 325:
37. Հարևան հանրապետության Զանգելանի շրջանը մինչև 1993 թ. կեսերը:
38. Ստեփաննոս Օրբելյան, էջ 326:
39. Նույն տեղում, էջ 327:
40. Նույն տեղում, էջ 337:
41. Ավդալբեկյան Թ., Մի գաղտնիք հայ վիմագրության մեջ, Ե., 1927, էջ 34:
42. Դիվան, պրակ V, էջ 67:
43. Նույն տեղում, էջ 69:
44. Նույն տեղում, էջ 84: Ըստ Բ. Ուլուբաբյանի (նշվ. աշխ., էջ 174)՝ Հասան Ջալալ-Դոլան է, սակայն, չենք կարծում, որ նա այդքան երիտասարդ հասակում արքա կոչվեր:
45. Դիվան, պրակ V, էջ 38:
46. Կոստանյան Կ., Վիմական տարեգիր (այսուհետև՝ Վիմական տարեգիր), Ս. Պետերբուրգ, 1913, էջ 92, 93, 96:
47. Դիվան, պրակ V, էջ 41, 80:
48. Նույն տեղում, էջ 33:
49. Վիմական տարեգիր, էջ 76-77:
50. Դիվան, պրակ V, էջ 33, 34:
51. Ստեփաննոս Օրբելյանը հայտնում է, որ Սենեքերիմն ուներ երեք որդի ու մի դուստր՝ առանց նշելու վերջինիս անունը (Ստեփաննոս Օրբելյան, էջ 319):
52. Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 137-139:
53. Դիվան, պրակ V, էջ 84:
54. Նույն տեղում, էջ 198:
55. Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 26, Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 16: Հայտնի է, որ Հասան Հաթերքցու կինը Մաման է՝ Կյուրիկե Բ Բագրատունու (1145-1185) դուստրը:
56. Գ. Գրիգորյանը, Կատայից բացի, այս Շուշիկին համարում է Գրիգոր Բ -ի դուստրը, որի մասին չի հիշատակել Ստեփաննոս Օրբելյանը (Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք, Ե., 1981, էջ 40):
57. Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և Նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 77:
58. Դիվան, պրակ V, էջ 213:
59. Նույն տեղում, էջ 202:
60. Նույն տեղում, էջ 213:
61. Ստեփաննոս Օրբելյան, Մ., 1861:
62. Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մաս Ա, Վաղարշապատ, 1928, էջ 32:
63. Նույն տեղում:
64. Դիվան, պրակ V, էջ 34:
65. Մամբանի ծագումն անհայտ է (Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 209-211):
66. Դիվան, պրակ III, էջ 123:
67. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Ե., 1961, էջ 205:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ա. Գ.
«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ», 2005, №1, ԷՋ 198-207

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԴԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ, ԳՅՈՒՂԵՐԸ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Թագավորության բերդերը

Մեզ հայտնի աղբյուրները Սյունյաց թագավորության բերդերի, վանքերի և գյուղերի վերաբերյալ պարունակում են բավականին մեծ թվեր: Որքան մեզ հայտնի է՝ այդ մասին գոյություն ունի և մեզ է հասել միայն երկու աղբյուր: Բերենք այդ աղբյուրների համապատասխան վկայությունները. ա) **«... և ի վեցհարիւր վաթսուն և ութ թուին առնու (Իվանեն–Թ. Հ.) զՈրոտն, և զմերձակայ դղեակսն, թէպէտ ոչ զբովանդակ. քանզի երբ ունէին զնա Հայկազունքն, քառասուն և երեք բերդք էին նշանաւորք, և հազար չորեքհարիւր գեղք, և քառասուն և ութ վանորեայք. որոց սկիզբն աւերման եղև ի հինգ հարիւր յիսուն և երկու թուին...»**[1]: Նույն Վարդան վարդապետի պատմության այլ հրատարակության մեջ ասված է.

բ) **«Ի վեց հարիւր վաթսուն և ութ թուին առնու զՈրոտն և զմերձակայ դղեակն՝ թէպէտ ոչ զբովանդակն. քանզի երբ ունէին զնա Հայկազունքն՝ քսան և երեք բերդք կային նշանաւորք, և գեօղք հազար և չորս հարիւր, քսան և ութ վանորայք[2], որոց սկիզբն աւերման եղև ի հինգ հարիւր յիսուն և երկու թուին...»**[3]:

Ստեփանոս Օրբելյանի պատմության թե՛ Փարիզի և թե՛ Թիֆլիսի հրատարակություններում (վերջինս արտատպված է Փարիզի հրատարակությունից) բերդերի, վանքերի և գյուղերի վերաբերյալ բերված են միևնույն թվերը. **«Ահա՛ այս իսկ եղև սկիզբն աւերման աշխարհին, և օր ըստ օրէ սկսաւ նուազիլ և պակասիլ՝ իշխանութիւնն այն որ ունէր ընդ ձեռամբ բերդս 43. և անուանիքն ի նոցանէ 12. և վանորայս 48, և գիւղս 1008. և մայրաքաղաք զԿապանն. այս Բաղաց իշխանութիւնն է»**[4]: Մոսկվայի հրատարակության մեջ ևս («Պատմութիւն տանն Սիւնեաց», 1861, էջ 245) բերդերի և վանքերի միևնույն թվերն են տրված:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանված Օրբելյանի պատմության բոլոր ձեռագրերում, որոնց թիվը 9 է, հիշատակված են 43 բերդ և 48 վանք[5]:

Դժվար չէ նկատել, որ բերված վկայություններում թվերը իրար համապատասխանում են, բացառությամբ Վարդանի պատմության Մոսկվայի հրատարակության մեջ եղած թվերի: Այստեղ բերդերի քանակը 23 է, իսկ վանքերինը՝ 28: Մոսկվայի հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրի այդ թվերը, որոնք անշուշտ սխալ են, արդյունք են ձեռագրական աղավաղումների: Դրա համար էլ չափազանց հավանական ենք համարում Սյունյաց թագավորության մեջ 43 բերդերի և 48 վանքերի գոյությունը: Այժմ այդ հարցը քննության ենթարկենք առանձին-առանձին:

Բերդերը: Միջին դարերում հայտնի բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում, առավել մեծ չափերով տարածում ունեին բերդերը: Յուրաքանչյուր նախարարական (ֆեոդալական) տուն իր գրաված գավառը կամ աշխարհն անվտանգ դարձնելու նպատակով կառուցել էր մի շարք բերդեր և ամրոցներ, որոնցից համեմատաբար ավելի մեծ հռչակ ունեցող բերդը, ամրոցը կամ բերդաքաղաքը հանդիսանում էր նրա ոստանը (իշխանանիստը):

Սյունիքը լինելով պատմական Հայաստանի արևելյան սահմանամերձ աշխարհներից մեկը և ստրատեգիական տեսակետից իշխող դիրք ունենալով Այրարատի նկատմամբ՝ բնականաբար պետք է ամրացվեր: Մեր պատմիչները Սյունյաց երկրի անմատչելիությունը ցույց տալու համար հաճախակի անվանում են այն «անառիկ», «անձուկ» և այլն: Սյունիքին տրված այդ ածականները, մեր կարծիքով, պայմանավորված են ոչ միայն երկրի անտառապատ և խիստ լեռնային լինելով, այլև այն բազմաթիվ բերդերի ու արհեստական ամրոցների առկայությամբ, որոնցից շատերը (Երնջակ, Որոտն, Բաղաբերդ) հռչակված էին դեռ 4-րդ դարում:

«Զօրանամակ»-ում հիշատակված[6] նախարարական տների մեջ ամենամեծ թվով ձիավոր զորք տալիս էր Սյունիքը: Այս երևույթը, մեր կարծիքով, պետք է բացատրել ոչ թե նրանով, որ իբր Սյունիքում բնակչության թիվն անհամեմատ գերազանցում էր կենտրոնական շրջաններին, այլ գլխավորապես նրանով, որ նա ուներ սահմանային դիրք[7]:

Սյունիքի դիրքի ստրատեգիական առավելությունները չէին կարող վրիպել Սասանյան Պարսկաստանի արքաների ուշադրությունից: 10-րդ դարի սկզբների արաբական հեղինակ Իբն-ալ-Ֆակիհն իր «Գիրք երկրների մասին» աշխարհագրական բնույթի աշխատության մեջ վկայում է, որ Խոսրով Անուշիրվանը Սիսաջանում (Սյունիք) կառուցել է մի շարք բերդեր և ամրոցներ, այդ թվում և մեզ հայտնի Շահապոնիքը («Շահբուշ») և Վայոց ձորը («Վայ»): Իմիջիայլոց, նույն այդ արաբ հեղինակը վկայում է նաև, որ ամրոցներում ու բերդերում բնակեցվեցին սիսաջանցի-

Շինուհայրի բերդը

Սմբատաբերդ

ներ (Սյունեցիներ), որոնց նա անվանում է «խիզախ» զինվորականներ[8]:

Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ նրան կցված Տաթևի եպիսկոպոսական թեմին տրվող հարկի ցուցակում կան բազմաթիվ գյուղերի անուններ, որոնք բարդված են «բերդ» բառով, իսկ նրանցից մի քանիսն ուղղակի կոչվում են «Բերդ», «Բերդիկ» և այլն: Պատմիչն իր պատմության Գ գլխում, ամբողջ Սյունիքում հիշատակելով 24 նշանավոր բերդեր, ավելացնում է. **«...և այլ ևս յոլովս, զորս աւելորդ համարեցաք գրել...»**[9]:

Սյունյաց թագավորության բերդերի քանակի վերաբերյալ պատմիչների հաղորդած տեղեկությունների ճշտությունը պարզելու համար նպատակահարմար համարեցինք դուրս հանել ինչպես մյուս պատմիչների նշած, այնպես էլ Օրբելյանի պատմության և եկեղեցական հարկի գյուղացուցակում եղած բոլոր բերդերի անունները, ներառյալ նաև այն գյուղերի անունները, որոնք սկսվում կամ վերջանում են «բերդ»-ով՝ վերջիններիս բերդ կամ ամրոց լինելը համարելով չափազանց հավանական:

Մեր կազմած բերդերի և ամրոցների ցանկը, որ բերում ենք ստորև, վերաբերում է միայն Արևիք, Կովսական, Բաղք, Ձորք, Ծղուկք, Հաբանդ գավառներին, այսինքն՝ այն գավառներին, որոնք մտնում էին Սյունյաց թագավորության մեջ:

Արևիք գավառ

1. Կարճաւան
2. Մեղրու բ.
3. Կաքավաբերդ

Կովսական գավառ

4. Գիլաբերդ
5. Գրհամ

Բաղք գավառ

6. Անդոկաբերդ
7. Բարկուշատու բ.
8. Բերդ
9. Բերդիկ
10. Պահու բ.
11. Կկուաքար կամ Կըկոց քար
12. Բղենոյ բ.

Ձորք գավառ

13. Բաղաբերդ
14. Բաղակամ քար կամ Քար Բաղակու
15. Գեղի
16. Շլորուտ

Ծղուկք գավառ

17. Բորտի Վերին
18. Բորտի Ներքին
19. Եզնաքար
20. Որձաբերդ
21. Որձաքար բ.
22. Որոտն բ.
23. Սյունյաց բ.
24. Ցուրաբերդ
25. Բերդն

Հաբանդ գավառ

26. Խոժոռաբերդ
27. Հաբանդի կամ Ձագեձորի բ.
28. Հայրաբերդ

Այս բոլոր բերդերն ու ամրոցները մտել են Ալիշանի կազմած Սյունյաց աշխարհի բերդերի ցուցակի մեջ: Հեղինակը ամբողջ Սյունիքում թվարկել է 69 բերդ՝ առանց նրանց գավառները ցույց տալու[10]: Դրանցից, ինչպես տեսնում ենք, 28-ը գտնվում էին Սյունյաց թագավորության տերիտորիայում:

Ալիշանի կողմից բաց թողնված բերդերի ու ամրոցների թիվը մեր հաշվումներով հասնում է 8-ի: Դրանք են.

1. Դաստակերտ (Քաշունիքում)
2. Երվանդակերտ (Քաշունիքում)
3. Դռնակերտ (Կովսականում)
4. Վասակակերտ (Ծղուկքում)
5. Դաստակերտ (Ծղուկքում)
6. Շաղատի բ. (Ծղուկքում)
7. Կապան բերդաքաղաք (Ձորքում)
8. Շնհեր (Հաբանդում)

Այս 8 տեղանունները Օրբելյանն ուղղակի բերդեր չի անվանում, ինչպես և բերդ կամ ամրոց չի անվանում նաև նշված 28 տեղանունները: Ութ տեղանուններից 5-ը (Դռնակերտ, Վասակակերտ, Դաստակերտ, Երվանդակերտ, Դաստակերտ) ունեն «կերտ» վերջավորություն:

Առանց մեծ սխալ գործելու կարելի է ասել, որ ոչ միայն Սյունիքում, այլև Հայաստանի մյուս նահանգներում մեր պատմիչների կողմից հիշատակված «կերտ»-ով վերջացող տեղանունները, գրեթե առանց բացառության, միաժամանակ եղել են բերդեր. օրինակ՝ Տիգրանակերտը, Վաղարշակերտը, Երվանդակերտը, Կարկաթիոկերտը, Հադամակերտը և այլն: Ճիշտ է, դրանք չափազանց տարբեր բնույթի պատմաաշխարհագրական վայրեր էին, բայց դա չի խանգարում Սյունիքում եղած «կերտ»-ով վերջացող վայրերը՝ համարելու այնպիսի վայրեր, որտեղ պաշտպանական նպատակներով կատարված են եղել որոշ կառուցումներ: Դա ավելի հավանական է դարձնում այն փաստը, որ նրանցից երկուսի անունները (Վասակ-ա-կերտ, Երվանդ-ա-կերտ) առաջացել են իշխանների (Վասակ, Երվանդ) անուններից, որոնց համար այդ բերդագյուղերը, հավանաբար, ծառայել

են որպես ամրոց կամ դղյակ:

Այնուհետև, Կապան քաղաքը պատմագիտական և աշխարհագրական մի շարք աշխատությունների մեջ նույնացված է նրանից 3-4 կմ հեռու գտնվող Բաղաբերդի հետ: Ալիշանն էլ հավանաբար այդպես վարվելով, Կապան բերդաքաղաքը չի նշել բերդացուցակի մեջ: Կապան քաղաքի մասին ավելի մանրամասն խոսելը թողնենք Ձորք գավառի նկարագիրը տալիս, նշենք այստեղ միայն այն, որ Կապանը մայրաքաղաք լինելով հանդերձ, եղել է նաև ամուր բերդ: Նրա բերդի աշտարակների մնացորդներն անգամ այժմ նշմարելի են: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ Կապան քաղաքին տված բնութագրի տակ («...մատնեաց Տէր զանառիկն ի մարդկանէ զԿապան քաղաք...»[11]) պետք է հասկանալ ոչ միայն Կապանի բնական հարմար դիրքը, այլև արհեստական կառուցումները, որոնք էլ ավելի անառիկ էին դարձնում քաղաքը:

Շաղատ ավանը երկար ժամանակ հանդիսացել է Սյունյաց իշխանների ոստանը: Միջնադարյան Հայաստանում բոլոր նախարարական տների ոստաններն անկասկած միաժամանակ բերդեր կամ ամրոցներ էին[12]: Շաղատում բերդ լինելու մասին ուղղակի հիշատակություն ունի Մովսես Կաղանկատվացին, որը ոչ ոքի կողմից նկատի չի առնվել. **«Ի նոյն ամի (821 թ.) ասպատակեաց Սևադայ աշխարհաւերն Տաճիկ, որոյ Աւառանշան անուն ճանաչէր, ի սահմանս Հայոց. և յաւարի առեալ զաշխարհն ամենայն դառնայ ի Սիւնիս, և ամրանայ ի բերդատեղի աւանին Շաղատու, որ է ի գաւառին Ծղկաց»**[13]: Այսպիսով, Շաղատը ևս պետք է ավելացնել վերը նշված բերդացուցակում: Շնհերը, որ ըստ Տաթևի եպիսկոպոսական թեմին տրվող հարկացուցակի՝ Հաբանդ գավառի մյուս գյուղերից ավելի շատ հարկ էր տալիս[14], թե՛ իր մեծությամբ և թե՛ բնույթով տարբերվում էր Հաբանդի մյուս գյուղերից: Օրբելյանը վկայում է. **«Եւ ապա էր մեծ Վասակայ որդի մի Փիլիպպէ անուն, որ ունէր զՇնհեր և զՀամբանդ»**[15]: Դժվար չէ նկատել, որ Հաբանդ գավառը բաժանվում էր երկու մասի, որից մեկը կոչվում էր Շնհեր: Շնհերի բերդ կամ ամրոց լինելն տարակույս չի առաջացնի, եթե հաշվի առնենք, որ 18-րդ դարում հռչակված[16] այդ բերդի այժմյան ավերակներն իրենց վրա կրում են հնության կնիքը:

Այսպիսով, Սյունյաց և Բաղաց թագավորության տերիտորիայում հիշատակված բերդերի ու ամրոցների թիվը մոտավորապես հասնում է 36-ի: Հետևաբար, պատմիչների վկայությունը՝ թագավորության տերիտորիայում 43 բերդերի գոյության մասին անհավանական չէ:

Հնարավոր է, որ մեր կազմած ցուցակում տեղ գտած լինեն այնպիսի վայրերի անուններ, որոնք բերդեր կամ ամրոցներ չէին, սակայն և կլինեն այնպիսիները, որոնք բոլորովին չեն հիշատակվել պատմիչների կողմից կամ հիշատակված են, սակայն դժվար է դրանք տարբերել մյուս տեղանուններից:

Սյունյաց թագավորության տերիտորիայում եղած 43 բերդից նշանավոր էին, ինչպես վկայում է Օրբելյանը[17], միայն 12-ը, որոնք քաղաքական դեպքերի կապակցությամբ հիշատակված են նրա մոտ[18]:

Դրանք են՝ Որոտն (Ծղուկք գավառում), Բղեն և Կկոց քար (Բաղքում), Բաղաբերդ, Բաղակու քար, Գեղի, Շլորուտն և Կապան (Ձորքում), Գրհամ (Կովսականում), Կաքավաբերդ, Կարճևան և Մեղրի (Արևիքում): Մնացած բերդերը, ինչպես երևում է Օրբելյանի հիշատակությունից, երկրորդական նշանակություն ունեին[19]:

Եվ իրոք, մեր բերած ցուցակում եղած բերդերի մոտ մեկ երրորդ մասը միայն կարելի է բառիս իսկական իմաստով բերդ կոչել: Իսկ նրանց գերակշիռ մեծամասնությունը սովորական գյուղեր էին և, հավանաբար, բնական անառիկ դիրք ունենալու հետևանքով են միայն կոչվել բերդ կամ ամրոց:

Սյունյաց թագավորության գլխավոր բերդերի մեծ մասի ավերակները մինչև այժմ էլ պահպանվել են, որովհետև 800-900 տարվա ժամանակամիջոցը չի բավականացրել քայքայման ենթարկելու հաստապատ պարիսպներն ու աշտարակները: Մինչդեռ այն բազմաթիվ գյուղերը, որոնք մենք հաշվել ենք բերդեր և որոնց մի մասի ավերակները պահպանվել են մինչև օրս, չունեն բերդին հատուկ կառուցումներ: Այլ կերպ ասած՝ աղբյուրներում նշված 43 բերդերի գերակշիռ մասը ամուր և անառիկ դիրք ունեցող սովորական գյուղեր պետք է ենթադրել, որովհետև այս երկրում բնակավայրերի ճնշող մեծամասնությունը գտնվում էր կամ բարձր ժայռերով պատած խոր ձորերում և կամ դժվարամատչելի լեռների բարձունքներում[20]:

Ծանոթագրություններ

1. Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, էջ 140-141:
2. Էմինի մոտ եղած ձեռագրի օրինակում «քառասուն և ութ վանորայք» են, էջ 185:
3. Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 185:
4. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1859, գիրք II, էջ 78, նույնը Թիֆլիս, 1910 թ., էջ 334:
5. Ձեռագիր № № 6271, 15-րդ դար (սա Երևանի ձեռագրատանը գտնվող Օրբելյանի պատմության ամենահին ձեռագիրն է), էջ 225 բ, 2698, 17-րդ դար, էջ 116 ա. 5501, 1683 թ., էջ 276. 1488, 18-րդ դար, էջ 142 բ, 2869, 19-րդ դար, էջ 150 ա, 6546, 1849 թ., էջ 127 ա. 2868, 1854 թ., էջ 175, 2924, 1864 թ., էջ 100 բ. 7503, 1865 թ., էջ 150 ա:
6. Տեքստը տես Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 251-252:
7. Ձորքի այդպիսի մեծ քանակությունը, թվում է, կարելի է բացատրել նրանով, որ Սյունիքում ֆեոդալիզմը չափազանց դանդաղ է իր վերջնական ձևավորումն ստացել և «Ձօրանամակ»-ի ժամանակներում այնտեղ համեմատաբար ազատներ ավելի շատ կային, քան թե կենտրոնական շրջաններում: Իսկ, ինչպես հայտնի է, ձիավոր զորքը կազմվում էր ազատներից:
8. Տես Караулов, Сведение арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, Сборник мат. Для описан. местн. и племен Кавказа, էջ 15-17:
9. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 13-14:
10. Տես Ալիշան, Սիսական, էջ 7-8:
11. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 334:
12. Այսպես՝ Բագրատունիների Դարոյնք, Տարոնի Մամիկոնյանների Ողական, Արծրունիների Հադամակերտ ոստանները միաժամանակ հռչակված ամրոց-բերդեր էին:
13. Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 374-375:
14. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 516-517:
15. Նույն տեղը, էջ 298:
16. Տես Ստեփանոս Վրդանեսյան (Շահումյան), Դաւիթ բէգ, Վաղարշապատ, 1871, էջ 6-7:
17. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 334:
18. Տես նույն տեղը, էջ 334-335:
19. Տես նույն տեղը, էջ 334:
20. Հետաքրքիր է, որ այդ լեռնային երկրում, ժողովրդական զրույցների համաձայն (միայն վերաբերում է այժմյան Ղափանի շրջանին), դեռ հնագույն ժամանակներից սկսած յուրաքանչյուր գյուղ ունեցել է իր «տիրք»-երը (դիրք), որոնք տեղադրված են եղել բարձրադիր տեղերում և իրենցից ներկայացրել են փոքրիկ ու շատ հասարակ աշտարակներ: Դրանք, ժողովրդի ասելով, կառուցվում էին դեպի տվյալ գյուղը տանող ճանապարհների վրա և ծառայում էին իբրև պաշտպանական կետեր ընդդեմ արտաքին վտանգի:

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ
«ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ», ԵՐԵՎԱՆ 1966

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԴԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ, ԳՅՈՒՂԵՐԸ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Թագավորության վանքերը

Սյունյաց թագավորության տերիտորիայում կար 48 վանք:

Ստեփանոս Օրբելյանը, որ իր պատմության մի գլուխը տրամադրել է ամբողջ Սյունիքում եղած վանքերի թվարկությանը[21], հիշատակում է ընդամենը 30 վանք և ավելացնում. **«Ահա այս ամենայն վանեար յականէ և յանուանէ ի գլխաւորագունիցն, յորոց բազումք ամայի և թափուր են ի շինութեանց, և սակաւքն ի լուսաւորութեան այժմ, որք են թուով 30, բայց այլ ևս բազումք կային զորս ոչ թուեցաք»**[22]:

Պատմիչի այս վկայությունը ցույց է տալիս, որ Սյունիքում վանքերը իսկապես մեծ տարածում ունեին:

Ալիշանը ենթադրում է, որ Սյունյաց աշխարհում վանքերի թիվը հասնում էր հարյուրների[23]: Նա կազմել է առաջին վկայություններից մինչև 17-րդ դարը հիշատակված ամբողջ Սյունիքի վանքերի, եկեղեցիների և ուխտատեղիների ցուցակը, ըստ որի դրանց թիվը հասնում է 148-ի[24]: Այդ ցուցակում տեղ են գտել նաև այն գյուղերը, որոնց անունները բարդված են «վանք» բառով:

Սյունյաց թագավորության մեջ 48 վանքերի գոյության իսկությունը պարզորոշ դարձնելու համար մենք ևս ստիպված ենք կազմել նույնատիպ ցուցակ, բայց հետևյալ տարբերություններով.

ա) Մենք կազմում ենք միայն այն վանքերի, եկեղեցիների և ուխտատեղիների ցուցակը, որոնք գտնվում էին թագավորության տերիտորիայում.

բ) Ցուցակը կազմում ենք ըստ գավառների.

դ) Նպատակադրման տեսակետից մեր կազմած ցուցակում մտել են միայն այն վանքերը, եկեղեցիները և ուխտատեղիները, որոնք հիշատակված են 10-13-րդ դարի պատմիչների կողմից: Թվում է, թե մեծ սխալ չենք գործում, երբ 10-13-րդ դարերում հիշատակված վանքերը, եկեղեցիները և ուխտատեղիները հաշվում ենք թագավորության ժամանակներում գոյություն ունեցածներ: Նախ՝ այն պատճառով, որ 9-րդ դարի կեսերից ի վեր, այսինքն՝ Բուղայի արշավանքներից հետո, արտաքին թշնամիների կողմից Սյունիքում այնպիսի ավերածություններ չեն կատարվել, որոնք ենթադրել տային նաև վանքերի ոչնչացում: Երկրորդ՝ ինչպես հայտնի է, երկրի ներսը խուժած թշնամիները, քաղաքացիական շինությունների համեմատությամբ, կրոնի հետ կապված կառուցումները[25] ավելի քիչ էին ավերում, իսկ ավերելու դեպքում էլ դրանք մեծ մասամբ վերականգնվում էին:

Ցուցակ

10-13-րդ դարերի պատմիչների կողմից Սյունյաց թագավորության տերիտորիայում հիշատակված վանքերի, եկեղեցիների և ուխտատեղիների.

Արևիք գավառ

1. Արկավանք
2. Գանձափարախ
3. Զուարի վ.
4. Խոլա վանք
5 Կարճևանի վ.
6. Մանլևու Ամենափրկիչ անապատն կուսանաց
7. Մեղրու վ.
8. Որդիշո վ.
9. Լիե վ.
10. Լուսկե վ.

Կովսական գավառ

11. Ձեռատիվան
12. Պողոսի վ.
13. Վարոսի վ.
14. Փառվարտո վ.

Բաղք գավառ

15. Բակուրի վ.
16. Երիցավանք
17. Կատարոի վ.
18. Շատանեա վ. (՞)[26]
19. Վարդանավանք
20. Աչաղուի վ.

Ձորք գավառ

21. Բաղակու քար վ.
22. Գեղու վ.
23. Գողերեա վ.
24. Վահանու վ.
25. Տանձափարախի վ.

Ծղուկք գավառ

26. Բյուրոտի վ.
27. Թանահտի վ.
28. Լերին վ.
29. Որոտան վ.
30. Կնեվանք (՞)
31. Կուռափաձորի վ. (՞)
32. Կուրավանք
33. Հալիձորու անապատն կուսանաց
34. Հարանց անապատն արանց
35. Նորավանք մյուս
36. Շաղատի վ.
37. Շաքեի վ.
38. Տաթևի վ.
39. Սյունի վ. 27

Հաբանդ գավառ

40. Պատանդավանք
41. Պետրոսկա վանք
42. Վաղատու վ.

Ինչպես տեսնում ենք, Վարդանի և Օրբելյանի վկայությունն այն մասին, թե Սյունյաց թագավորության մեջ կար 48 վանք, հեռու չէ ճշմարտությունից: Եթե 10-13-րդ դարերի պատմիչներն այս կամ

այն առիթով նրանցից 42-ը հիշատակում են, ապա կարծում ենք, որ այլևս տեղ չի մնում նշված 48 վանքերի, եկեղեցիների և ուխտատեղիների գոյության մասին կասկածելու:

Արևիք գավառում (որը Սյունյաց թագավորության մեջ մտնող փոքր գավառներից մեկն էր) հիշատակված է 10 վանք (տես ցուցակը): Ալիշանի կարծիքով նրանցից շատերը մենակյացների ապրելու հասարակ վայրեր էին. **«Սոցա՝ որպէս տեսանիդ՝ նշանաւոր է յոլովից վանք բառիւ բարդութիւն, զոր աստանօր ըստ հասարակ նշանակութեան իմանալ անկ համարիմ, այսինքն միանձնականաց բնակարանս...»**[28]:

10-11-րդ դարերում ոչ միայն Սյունիքում, այլև Հայաստանի մյուս մասերում վանքերի թիվը չափազանց մեծ էր: Սամվել Անեցու վկայության համաձայն 11-րդ դարի առաջին քառորդում Վասպուրականում կար 115 վանք, իսկ ըստ ոմանց, ինչպես նշում է Անեցին, դրանց թիվը 900 էր: **«Բայց զվանորայսն ոչ ետ Սենեքերիմ ի Վասիլ. զի կայցեն ազատս, և աղօթս արասցեն Սենեքերիմայ և որդւոյն նորա. և էին ՃԺԵ (115) վանք և ոմանք ԹՃ. (900) վանք ասեն»**[29]:

Ինչքան էլ մեծացված լինեն այդ թվերը, այնուամենայնիվ, նրանք ցույց են տալիս, որ վանքերը, եկեղեցիները և ուխտատեղիները Վասպուրականում շատ էին: Նույնպիսի դրություն էր նաև Կարինում, Վանանդում, Շիրակում, Այրարատում, Տաշիրում (Լոռի) և Հայաստանի մյուս մասերում:

Ինչո՞վ բացատրել Հայաստանում 10-11-րդ դարերում այդքան մեծ ծավալ ստացած վանքաշինությունը: Դրա պատասխանը շատ դյուրին կգտնվի, եթե մի փոքր հայացք ձգենք 10-11-րդ դարերում Հայաստանի ներքին տնտեսական դրության վրա:

10-11-րդ դարերը Հայաստանի համար, ինչպես ակադ. Հ. Մանանդյանը ցույց է տվել «Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում» փոքրածավալ, բայց արժեքավոր աշխատության մեջ, հանդիսանում է տնտեսական վերելքի և ֆեոդալիզմի հետագա խորացման շրջան: Առևտրի, արհեստավորության, անասնապահության, երկրագործության, հանքամշակության զարգացման և գյուղացիներին ճորտական կախման մեջ դնելու միջոցով 10-11-րդ դարերում հսկայական հարստություն է կուտակվում ազնվական դասի, այդ թվում և՝ հոգևորականության ձեռքում:

Հավաքված այդ ահռելի հարստության գերակշիռ մասը «հոգու փրկության» քողի տակ ծախսվում էր վանքերի՝ ֆեոդալական հասարակարգի գաղափարախոսության տարածման օջախների կառուցման համար:





Ծանոթագրություններ

21. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, գլխ. ԿԲ, էջ 338-340:
22. Նույն տեղում, էջ 340:
23. Տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 21:
24. Տես նույն տեղը, էջ 21-23:
25. Կարծում ենք, դրանով է բացատրվում այն երևույթը, որ Հայաստանում ամենից շատ պահպանված են վանքերի, եկեղեցիների և կրոնական այլ շինությունների ավերակները, այն դեպքում, երբ քաղաքացիական բնույթի շենքերից, համեմատաբար, մեզ շատ քիչ բան է հասել:
26. Փակագծերում դրված հարցական նշանը ցույց է տալիս, որ ստույգ հայտնի չէ, թե որ գավառում է գտնվում տվյալ վանքը:
27. Նկատի ունենալով Օրբելյանի վկայությունը, որ Սյունի վանքը կառուցվել է 551 թվականից առաջ (էջ 338), Ալիշանը կարծում է, որ Սյունի և Շաղատու վանքերը նույնն են («Սիսական» էջ 22): Սակայն քանի որ Սյունի և Շաղատու վանքերը պատմիչը հիշատակում է առանձին-առանձին (էջ 338-510), ուստի դրանք առանձին վանքեր էին. Սյունին գտնվում էր այժմյան Սիսիանի շրջկենտրոնում (այժմ էլ այն կա և կառուցվել է 7-րդ դարում), իսկ մյուսը՝ նույն շրջանի Շաղատ գյուղի մոտ:
28. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 299:
29. Սամուէլի քահանայի Անեցւոյ հավաքումն ի գրոց պատմագրաց Յաղագս գիւտի ժամանակաց անցելոյ մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 104:

«ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»,
Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ
ԵՐԵՎԱՆ 1966

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԴԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ, ԳՅՈՒՂԵՐԸ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Թագավորության գյուղերը

Թագավորության տերիտորիայում եղած գյուղերի թվի վերաբերյալ կան մի շարք իրար հակասող հիշատակություններ. այդ թիվը տատանվում է 1000-1400 միջև: Վենետիկում գտնվող Օրբելյանի պատմության ձեռագրերից մեկում, ինչպես վկայում է Ալիշանը, գյուղերի թիվը նշված է 2000[30]: Սակայն այդ հավանաբար աղավաղման արդյունք լինելով, չի համապատասխանում Երևանում եղած ձեռագրերից ոչ մեկին:

Օրբելյանի պատմության թեՊարիզի (էջ 78) և թե Թիֆլիսի (էջ 334) հրատարակություններում հիշվում է 1008 գյուղ:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում եղած 9 ձեռագրերից 7-ի մեջ (այդ թվում նաև ամենահին ձեռագրում. 15-րդ դար № 6271) նշված է 1400[31] գյուղ[32], մեկ ձեռագրում՝ 1000[33], իսկ վերջինում՝ «ՌԸՆ», որը գրիչի տողատակ տված ծանոթության համաձայն պետք է հասկանալ կամ «ՌԸ» (1008), կամ թե «Ռ» (1000)[34]:

Վարդան վարդապետի պատմության երկու հրատարակություններում էլ գյուղերի քանակը 1400 է[35]:

Այունյաց թագավորության սահմանների մասին խոսելիս տեսանք, որ նրա մեջ մտնում էին նախկին Այունյաց աշխարհի վեց համեմատաբար փոքր գավառները: Հենց միայն այդ տերիտորիային էլ վերաբերում է 1000, 1008, 1400 կամ 2000 գյուղերը: Չնայած նշված թվերի այդպիսի մեծ տարբերությանը, որը թվում է, թե առաջին երաշխիքը պետք է հանդիսանար կասկածելու նրանց իսկության վրա, այնուամենայնիվ մինչ այժմ եղած բոլոր ուսումնասիրողները, որոնք այս կամ այն առիթով, թեկուզ կողմնակիորեն, անդրադարձել են այդ հարցին, ընդունում կամ հավանական են համարում թագավորության տերիտորիայում 1000-1400 գյուղերի գոյությունը[36]: Միայն մեկը՝ Շահնազարյանը, այդ թիվը ընդունում է մի փոքր վերապահությամբ[37]: Սրանք են հիմնականում Այունյաց թագավորության տերիտորիայում եղած գյուղերի քանակի վերաբերյալ մեզ հասած վկայություններն ու գոյություն ունեցող կարծիքները:

Մինչև օրս ոչ միայն Այունիքի, այլև ամբողջ Հայաստանի վերաբերյալ չկա այնպիսի ուսումնասիրություն, որտեղ նպատակ լինի դրված պարզելու միջնադարյան Հայաստանի զանազան տիպի բնակավայրերի (բացի մի քանի խոշոր քաղաքների՝ Անի, Դվին, Տիգրանակերտ և այլն) մեծությունն ու բնույթը:

Այունիքի բնակավայրերի, այդ թվում հատկապես գյուղերի վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած տվյալներն առայժմ քիչ են և ոչ այնքան զորավոր՝ այդ հարցը գիտականորեն լուծելու համար: Բայց անհրաժեշտ ենք համարում իբրև հավելված սույն աշխատությանը կցել Այունյաց աշխարհի բնակավայրերի ցուցակը, ավելորդ չհամարելով անել նաև հետևյալ ընդհանուր դիտողությունը:

Գյուղերի մեծության վերաբերյալ պատմիչների մոտ որևէ հիշատակություն չկա: Դժվար չէ սակայն ենթադրել, որ նրանք պետք է որ բավականին փոքր լինեին, ըստ որում ամենամեծը հավանաբար բաղկացած էր ոչ ավելի, քան 2-3 տասնյակ ծխից: Զարմանալի ոչինչ չի մնա, եթե նկատի ունենանք Շահխաթունյանի այն վկայությունը, որ անգամ 19-րդ դարում Գեղարքունիքում և Սոտքում անասնապահությամբ զբաղվող բազմաթիվ գյուղեր ունեին ոչ ավելի, քան 2–48 ծուխ[38] (նրանցից միայն մեկն է ունեցել 48 ծուխ):

Ծանոթագրություններ

30. Տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 274:
31. Օրբելյանի պատմության Մոսկվայի հրատարակության մեջ ևս («Պատմութիւն տանն Սիւնեաց», 1861, էջ 245) գյուղերի թիվը 1400 է:
32. Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 1488, էջ 142 բ, 6271, էջ 255 ա, 7503, էջ 150 ա, 2698, էջ 117 բ, 2924, էջ 100 բ, 2869, 150 ա, 6546, էջ 127 ա:
33. Նույն տեղը, ձեռագիր № 5501, էջ 276:
34. Նույն տեղը, ձեռագիր № 2868, էջ 175:
35. Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 185, «Հաւաքումն պատմութեան...», Վենետիկ, 1862, էջ 141:
36. Ջալալյանց Սարգիս, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 301: Ալիշան, Սիսական, էջ 280: Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, էջ 50, և այլն:
37. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 299, ծանոթություն № 7:
38. Տես Շահխաթունյանց Հովհ. Եպիսկոպոս, ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Երկրորդ, Էջմիածին, 1842, էջ 255-257:

«ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ», Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ, ԵՐԵՎԱՆ 1966

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԴԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ, ԳՅՈՒՂԵՐԸ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Թագավորության ճանապարհները

Հայկական լեռնաշխարհն իր դիրքի շնորհիվ Արևելքն Արևմուտքի հետ կապող օղակ էր: Հնագույն ժամանակներից սկսած Հայաստանով էին անցնում տարանցիկ այն ճանապարհները, որոնք գալիս էին Չինաստանից ու Հնդկաստանից և անցնում դեպի Սև ու Միջերկրական ծովերի ափերը:

Հայաստանում այդ ճանապարհներն անցնում էին գլխավորապես Արևմտյան Տիգրիսի, Արածանիի և Արաքսի հովիտներով: Սակայն պատմական Հայաստանի ոչ բոլոր մասերն ունեին հարմար ճանապարհներ: Այդպիսի մասերի թվին է պատկանում և Այունիքը:

Հայաստանով անցնող ճանապարհների մասին ամբողջական տեղեկություններ է հաղորդված «Պևտինգերյան» քարտեզում: Այստեղ տրված հինգ հիմնական ճանապարհներից (որոնց ելման կենտրոնը Արտաշատ մայրաքաղաքն էր) և ոչ մեկը չէր անցնում Այունիքով[1]: Անհրաժեշտ է նկատել, որ «Պևտինգերյան» քարտեզում տրված ճանապարհները գլխավորապես Արտաշատից ձգվում էին դեպի արևմուտք, նրանցից միայն մեկն էր, որ գնում էր դեպի արևելք՝ դեպի Համադան:

Մեր նպատակների տեսակետից հետաքրքրական են «Մղոնաչափք»-ը[2], որտեղ հիշատակված են Հայաստանով անցնող 6 հիմնական ճանապարհների ուղղությունները.

ա) Դվին-Կարին-Ամասիա -Կոստանդնուպոլիս

բ) Դվին-Խլաթ-Ուռհա-Դամասկոս-Երուսաղեմ

գ) Դվին-Բերդկունք-Պարտավ-Կասպից ծով

դ) Դվին-Նախիջևան-Գանձակ Շահաստան-Տիսբոն:

Վերջինս Նախիջևանում բաժանվում էր երկու ճյուղի, որոնցից մեկը դեպի Գանձակ և Տիսբոն գնացողն էր, իսկ մյուսը՝ Արտեվատի (այժմ Օրդուբադ), Վարդանակերտի և Փայտակարանի վրայով տանում էր դեպի Կասպից ծովի ափերը:

ե) Գանձակ[3]-Նինվե-Ուռհա

զ) Դվին-Կողբ-Տփխիս (Թբիլիսի)[4]:

Նշված ճանապարհներից մեզ հետաքրքրում են՝ Դվին-Բերդկունք-Պարտավ-Կասպից ծով և Դվին - Նախիջևան - Օրդուբադ - Վարդանակերտ - Փայտակարան-Կասպից ծով ուղղությունները: Դրանցից վերջինի ընթացքը հանրահայտ է: Այն ձգվում էր Երասխի ափով, ուստի և հարկ չկա դրա վրա կանգ առնել:

Ուրեմն մեզ մնում է ավելի մանրամասն ծանոթանալ Դվին-Պարտավ գլխավոր ճանապարհին, ապա նրանցից դեպի Այունյաց թագավորության տերիտորիան ձգվող ու այնտեղ եղած մի քանի երկրորդական ճանապարհներին:

Դվին-Պարտավ ճանապարհի ուղղության և կայանների միջև եղած տարածությունների մասին մանրամասն հաղորդել է արաբ աշխարհագիր Իստահրին: Հիշատակենք նրա տված Բերդա-Դաբիլ[5] ճանապարհի կայաններն ու դրանց միջև եղած տարածությունները: Բերդայից Կալկագուա՝ 9 փարսախ, Կալկագուայից Մետրիս՝ 13 փ., Մետրիսից Դավմիս՝ 12 փ., Դավմիսից Կիլ-կու՝ 16 փ., Կիլ-կուից Սիսաջան՝ 16 փ. և Սիսաջանից Դաբիլ՝ 16 փարսախ[6]:

Ինչպես տեսնում ենք, այդ ճանապարհի կայաններից ծանոթ են միայն ելման երկու կետերը՝ Դվինը և Պարտավը: Մյուս կայանների անուններն ու տեղադրությունները մեզ համար անհայտ են: Մի քանի ուսումնասիրողներ անդրադարձել են այդ հարցին: Նրանցից ոմանք բավարարվել են միայն շատ ընդհանուր ենթադրություններ անելով: Այսպես, Լեոն ենթադրում է, որ «Այս ճանապարհը գնում էր Արցախի և Սյունիքի վրայով»[7]: Այս կարծիքն այնքան ընդհանուր և անորոշ է, որ հազիվ թե կարելի լինի ասել, թե նա որևէ պարզություն է մտցնում Դվին-Պարտավ ճանապարհի ուղղությունն իմանալու մեջ:

Ավելի որոշակի է պրոֆ. Ստ. Լիսիցյանի ենթադրությունը: Ըստ նրա, ճանապարհն Արտաշատից և Դվինից դուրս գալով ձգվում էր Վեդի գետի հոսանքին հակառակ ուղղությամբ. անցնելով Գեղամա լեռների վրայով, մտնում էր Արգիճի գետի հովիտը, ապա Սևանա լճի ավազանի հարավային հարթություններով և Թարթառ գետի հովտով հասնում էր Պարտավ[8]:

Սևանա լճի ավազանից մինչև Պարտավ գծամասի ուղղությունը, ինչպես քիչ հետո կտեսնենք, բոլոր ուսումնասիրողների մոտ էլ նույնն է: Ուստի դրա մասին խոսելն ավելորդ ենք համարում: Մեզ մնում է քննել Արտաշատից և Դվինից մինչև Սևանի ավազանն ընկած ճանապարհահատվածի՝ պրոֆ. Լիսիցյանի ենթադրած ուղղությունը: Դվին-Պարտավ ճանապարհի՝ Դվինից մինչև Սևանա լճի ավազանը եղած հատվածը պրոֆ. Լիսիցյանը անց է կացնում Վեդի գետի հովտով դեպի Արգիճի գետը: Այս ճանապարհը, որ այժմ էլ գոյություն ունի և որով Վեդու շրջանի սարվորները, ինչպես նշում է հեղինակը, բարձրանում են Արգիճի գետի վերնագավառում գտնվող արոտավայրերը[9], ձմեռը մի քանի ամիս փակվում է և անմատչելի դառնում անգամ հետիոտն մարդու համար: Մինչդեռ Դվին-Պարտավ ճանապարհը, անշուշտ, եղել է միշտ բանուկ և ժամանակի իմաստով բարեկարգ վիճակում: Դրա երաշխիքն է հենց այն փաստը, որ Հայաստանի ճանապարհներին վերաբերող գրեթե բոլոր աղբյուրների մեջ հիշատակված է այդ գիծը: Բացի դրանից, ինչպես ժամանակին նկատել է ակադ. Մանանդյանը[10], Այունյաց իշխանները, Օրբելյանի վկայությամբ (էջ 264-265), դեռևս 4-րդ դարի սկզբներին Վաղարշապատի կողմերից դեպի Գեղարքունի, ապա Վայոց ձորն անցնում էին կառքով: Իսկ դա այն ճանապարհն էր, որն Այրարատում գտնվող մայրաքաղաքները կապում էր Սևանի ավազանի հետ: Պրոֆ. Ստ. Լիսիցյանի մատնանշած ճանապարհը, ինչքանով մենք ծանոթ ենք դրան, բոլորովին պիտանի չէ կառքի համար:

Այսպիսով, չափազանց անհավանական է Դվին-Պարտավ ճանապարհի Դվին-Սևանա լճի ավազան հատվածի ուղղությունը ենթադրել Վեդի գետի հոսանքով և Գեղամա լեռներով դեպի Արգիճի:

Ակադ. Հ. Մանանդյանը հիմք ընդունելով «Մղոնաչափք»-ի և Իստահարի տված վկայությունները, ինչպես նաև օգտվելով մի շարք հայ պատմիչներից ու ուսումնասիրողներից, մանրամասն քննության է ենթարկել Դվին-Պարտավ ճանապարհի ուղղությունը «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի» արժեքավոր աշխատության «Դվին-Պարտավ հին ճանապարհը» հավելվածում:

Հեղինակն այդ աշխատության մեջ հանգում է այն եզրակացության, որ ճանապարհը Դվինից դուրս էր գալիս երկու ճյուղով: Դրանցից մեկը գնում էր Հրազդանի ափերով (այժմյան Երևան-Սևան գծով), ապա թեքվում դեպի հարավարևելք մինչև Բերդկունք (որի քարվանսարայի ավերակներն այժմ էլ պահպանվել են Այրիվանքի մոտ, Կամո քաղաքից 6, 5 կմ հյուսիս՝ Սևանա լճի ափին), Բերդկունքից Սևանա լճի ափով շարունակվել է դեպի արևելք, հասել Իստահրիի հիշատակած Կիլ-կու (Կոթ, Գեղարքունի) և Զոդով ուղղվել է դեպի Պարտավ: Սա «Մղոնաչափք»-ում հիշատակված հին ճանապարհն է[11]:

Երկրորդ ճյուղը, որը գլխավոր ճանապարհ էր արաբական շրջանում[12] և համապատասխանում էր Իստահրիի հիշատակած Բերդա-Դաբիլ գծին, դուրս գալով Դվինից նախ հասնում էր Սիսաջան կայանը[13], ուղղվում դեպի հյուսիս, Արփա գետի հոսանքով և Սելիմի լեռնանցքով մտնում Կիլ-կու (Գեղարքունի, Կոթ), հետո Դավմիս (Հաթերք՝ Տրտու գետի ձախ ափին) և Կալկագուայի (Կաղանկատոյք՝ Տրտու գետի ձախ ափին) վրայով՝ Բերդա (Պարտավ)[14]:

Դվին-Պարտավ թե՛ հին և թե՛ արաբական շրջանի ճանապարհները հանձին ակադ. Մանանդյանի հիշյալ խոր, փաստերով հարուստ աշխատության, հիմնականում ուսումնասիրված են:

Սակայն անհրաժեշտ ենք համարում մի քիչ ավելի մանրամասն ծանոթանալու Դվին-Պարտավ արաբական շրջանի ճանապարհի կայաններից մեկին՝ Սիսաջանին:

Սիսաջանը, Դվինից հաշված, այդ ուղու առաջին կայանն էր: Նրա հեռավորությունը Դվինից, Իստահրի վկայության համաձայն, 16 արաբական փարսախ էր:

Հաշվի առնելով, որ արաբական փարսախը հավասար է 5782.8 մետրի[15] և այն, որ արաբական աշխարհագիրները սովորաբար կլորացնում են թվերը, ակադ. Մանանդյանը Դվինից մինչև Սիսաջան հաշվում է 95 կիլոմետր: Դա մոտավորապես ընկնում է այժմյան Բաշնորաշենի մոտ, այսինքն այնտեղ, որտեղ Կարաուլովը իր քարտեզում նշանակել է Կիսաջանը[16]:

Այսպիսով ակադ. Մանանդյանը համաձայնվում է Կարաուլովի հետ՝ Սիսաջանը Բաշնորաշենի մոտ տեղադրելու հարցում, անելով հետևյալ վերապահությունը. **«Սակայն եթե անգամ ընդունելի չլինի Կիսաջանի նույնացումը Սիսաջան կայարանի հետ՝ կարելի է այնուամենայնիվ վստահորեն ենթադրել, որ Սիսաջանի տեղադրությունը լինելու էր Շարուրից Վայոց ձոր տանող ճանապարհագծում, հավանորեն Բաշնորաշենից Արփա գնացող գծամասում»**[17]:

Ծանոթանալով Բաշնորաշենից մինչև Արենի (Արփա) գյուղն ընկած ճանապարհին, մենք եկանք այն համոզման, որ Սիսաջան կայանը հավանաբար գտնվում

էր այժմյան Արենի գյուղի մոտ: Մեր այդ ենթադրության համար կան որոշ հիմքեր:

Այժմյան Արենի գյուղի մոտ պահպանվել են հին «Առփա»-ի ավերակները, որոնք ոչ թե սովորական գյուղի, այլ ավելի շուտ բերդագյուղի տպավորություն են թողնում: Մինչդեռ ենթադրվող Կիսաջանի տեղում, ինչպես և Բաշնորաշենից մինչև Արենի (Արփա) ընկած տարածության վրա, տեղացիների վկայությամբ, հին բնակավայրի ավերակներ չեն նկատված: Բացի այդ, Կիսաջան անունը մեզ ծանոթ պատմիչներից և ոչ մեկի մոտ չի հիշատակված:

Արփա (Արենի) գյուղի անունը հաճախակի հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի մոտ (էջ 343, 364, 367, 368, 429, 490, 491) «Առփա» ձևով: Բերենք Օրբելյանի հիշատակություններից ամենակարևորները. **«Այս Տէր Սարգիս, որպէս յառաջն ասացաք, բազում արդիւնս ցուցեալ ի Նորավանս, ևս առաւել արար գործ. մի երևելի, զի ի գիւղն Առփայ ի վերայ գետոյն կանգնեաց կամուրջ զարմանալի տաշածոյ վիմօք՝ յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացուցիչ տեսողաց, բազում ծախիւք և անչափ աշխատութեամբ՝ հրամանաւ բարեպաշտին և մեծափառ իշխանին Տարսայիճին, որոյ վարձատրեսցէ Քրիստոս հազարապատիկ»**[18]:

Արփա գետի վրա կամուրջ կառուցելու համար կատարված այդ մեծ ծախսերը, որ նշում է Օրբելյանը, ցույց է տալիս, որ Առփան սովորական գյուղ չէր, այլ կարևոր ճանապարհի վրա գտնվող կայան[19]: Այլապես անիմաստ կլիներ «յոյժ բարձր և ընդարձակ և լայն» կամուրջի կառուցումը: Ճիշտ է, նրա կառուցումը վերաբերում է ավելի ուշ ժամանակներին (13-րդ դարի երկրորդ կես), սակայն դա չի բացասում ավելի հին ժամանակներում Առփայի՝ ճանապարհային կայան լինելը: Այդ կամուրջի ավերակները մինչև այժմ էլ նշմարվում են Արենի գյուղի մոտ:

Օրբելյանի վկայության համաձայն դեռևս հնագույն ժամանակներից Առփա գյուղում բնակություն էր հաստատված. **«...որպէս Ախթամարեան զարմքն որ ի հին ժամանակաց բնակեալ էին յԱռփայ գիւղն՝ տան իւրեանց հայրենացն զԴայեկի քարոյ այգւոյն զվերին բաժինն»**[20]: Բայց ավելի նշանավոր է դառնում այդ գյուղը 13-րդ դարի երկրորդ կեսին, երբ Տարսայիճ իշխանը այնտեղ կառուցում է իր «դարպաս»-ը[21] (իշխանական ապարանքը): Այս հանգամանքը ևս անուղղակի կերպով գալիս է հաստատելու, որ Առփան ճանապարհի վրա ընկած կայան պետք է լիներ:

Սիսաջան ճանապարհային կայանի անվան ինչպես և Կիլ-կուի վերաբերյալ գոյություն ունի երկու կարծիք: Ըստ Մարկվարտի[22] Իստահիրի մոտ Sisajan (Սիսական, Սիւնիք) և Կիլ-կու (Gelakuni, Գելաքունի) կայանները նախասկիզբ են եղել՝ առաջինը Գեղարքունի գավառի, իսկ երկրորդը՝ Սիսական կամ Սյունիք (այժմ Սիսիան) գավառի և հենց այդ պատճառով էլ, ինչպես Մարկվարտն է կարծում, նրանք կոչվել են Գեղարքունի[23] և Սիսական (Սիսաջան):

Մյուս կարծիքը ակադ. Մանանդյանինն է: Նա հիմնականում ընդունում է Մարկվարտի տեսակետը միայն մի փոքր տարբերությամբ: Այսպես, նա գտնում է, որ Սիսաջան կամ Սիսական ճանապարհային կայանի անունն առաջացել է համապատասխան աշխարհի՝ Սյունիքի (որի տակ հասկանում է Սյունիքի գավառներից Վայոց ձորը) անունից:

Մանանդյանն իր այդ թեզը հավանական դարձնելու համար կռվան է ծառայեցնում այն հանգամանքը, որ Իստահրիի աշխարհագրական երկի հրապարակ գալու ժամանակ (951 թ.) Սյունյաց գահագլուխ իշխանների «արքունական ապարանքները» գտնվում էին Վայոց ձորի «Եղեգիք գիւղաքաղաք»-ում[24] Ուստի և նրա սահմանի վրա գտնվող ճանապարհային կայանն էլ, ինչպես կարծում է Մանանդյանը, կոչվել է Սիսաջան[25]:

Բերված կարծիքներից որևէ մեկի հետ անվերապահորեն միանալ չենք կարող: Եթե ակադ. Մանանդյանը, ինչպես մենք տեսանք, հիմնականում ճիշտ էր Սիսաջան կայանի աշխարհագրական դիրքի որոշման հարցում, ապա նրա անվան առաջացման խնդրում նախապատվությունը պետք է տալ Մարկվարտին՝ միայն այնքանով, որքանով նա Սիսաջանի առաջացումը կապում է Սյունիք կամ Սիսական գավառի անվան հետ: Եվ իրոք, 10-րդ դարի սկզբներից սկսած մեր մատենագիրների մոտ սովորաբար Սյունիք է կոչվում միայն «Աշխարհացոյց»-ի մեջ նկարագրված 12 գավառից բաղկացած Սյունյաց աշխարհի հարավարևելյան մասը՝ հատկապես՝ Ծղուկք գավառը, որտեղ մինչև 9-րդ դարի առաջին քառորդի վերջերը գտնվում էր Սյունյաց գահագլուխ իշխանների ոստանը:

Մեր կարծիքով, Սիսաջան (Սիսական, Սյունիք) ճանապարհային կայանի անվան ծագումը բացատրելու համար նախ պետք է ընդունել, որ նշանավոր ճանապարհների կայանները գտնվել են գերազանցապես այլ ճանապարհների հետ ունեցած հատման կետերում: Արաբական շրջանի Դվին-Պարտավ ուղու Սյունիքում եղած երեք կայաններն էլ իրոք, գտնվում էին ճանապարհների խաչման կետերում. Կոթում (Գեղարքունի, Կիլ-կու) նրա հետ հատվում էր Դվինից Հրազդանի ափերով և Բերդկունքով անցնող հին ճանապարհը[26], Սիսաջանում (որ մենք ենթադրաբար տեղադրում ենք այժմյան Արենի գյուղի տեղում) Ծղուկքի կողմերից եկող ճանապարհը, իսկ Զոդում՝ նրանից սկիզբ էին առնում երկու ճանապարհներ, որոնցից մեկը Գեղամա (Սևանա) լճի հյուսիսային ափերով գնում էր դեպի հյուսիս-արևմուտք, իսկ մյուսը Սոտք գավառի տերիտորիայով ձգվում էր դեպի հարավ, ապա նրա սահմանի մոտ թեքվելով արևմուտք՝ հասնում էր Վայոց ձորի Եղեգիք կամ Եղեգիս քաղաքավանը[27]:

Այդտեղից էլ դժվար չէ տեսնել նաև այն, որ արաբական շրջանի Դվին-Պարտավ ուղու Սյունիքում ունեցած կայանների անունները՝ Սիսական (Սիսաջան, Ծղուկք), Գեղարքունի (Կիլ-կու) և Զոդ, առաջացել են ոչ թե նույնանուն գավառների նախասկիզբ լինելու պատճառով[28], այլ այն բանի շնորհիվ, որ տվյալ կետերում գլխավոր ճանապարհը հատող երկրորդական ճանապարհները, որոնց մասին մենք ասացինք, տանում էին դեպի համապատասխան գավառները, Գեղարքունուց դեպի Գեղարքունի գավառի խորքը, Սոտքից՝ դեպի Սոտք գավառի տարբեր մասերը, Սիսաջանից՝ դեպի Սյունիք (Ծղուկք):

Դվին-Պարտավ ուղու հետ միացող ճանապարհներից մեզ հետաքրքրում է Արենի (Արփա) գյուղի մոտերքից դեպի Ծղուկք գնացողը:

Ծղուկքից Վայոց ձոր, իսկ այնտեղից էլ դեպի Այրարատ գնացող ճանապարհը, ինչպես երևում է դեռևս 4-րդ դարի սկզբներին վերաբերող հիշատակություններից, գտնվում էր բավականին բարեկարգ վիճակում: Բերենք Օրբելյանի վկայությունը. **«...և կազմեցին (Սյունյաց իշխանները) կառս ի սպիտակ ջորւոց. և կողոբս արծաթիս արարեալ՝ եդին ի նմա զնշխարս սրբոյն և բարձին սաղմոսիւք և օրհնութեամբ. և տաճիկ նժուգօք՝ սրավար երիվարօք իբր օդապարիկ թևօք թռուցեալ անցին ընդ լայնածիր ասպարէզ երկայն ռահին, և հասին ի բնիկ սահմանս իւրեանց տէրութեանն ի Մազազ գաւառ. և անցեալ ընդ Գեղամ մտին ի Վայոց ձոր. զի դէմ եդեալ էր տանել ի Սիւնիս յարքունական գահոյս իւրեանց»**[29]:

Ինչպես տեսնում ենք, Սյունյաց իշխանները, կառքով Այրարատից դուրս գալով, անցել են Մազազ գավառով, Գեղամա երկրով և մտել Վայոց ձորը՝ իրենց առաջ նպատակ դնելով այստեղից էլ «արքունական» գահը տանել Սյունիք: Սա անուղղակի կերպով վկայում է, որ Այրարատից դեպի Սյունյաց ոստան Ծղուկք (որ վկայության մեջ անվանված է Սյունիք) տանող ճանապարհն անցնում էր Վայոց ձորով:

Ավելի որոշակի է նույն պատմիչի՝ 6-րդ դարին վերաբերող մի ուրիշ վկայությունը. **«Եւ նորա (Մուշե կաթողիկոսը) տիրաբար խոնարհեալ գթալով ի հօտն իւր՝ ոչ ինչ վերջացաւ ի գալոյն. այլ պատրաստել հրամա-**

յեաց ըստ հայրապետական ճոխութեանն զճանապարին՝ հեծեալ ի սպիտակ ջուրջ ոսկեզօծ թամբօք, եպիսկոպոսօք և բազմամբոխ պաշտօնէիւք զառաջեաւ ունելով զոսկիափայլ նշանն աստուածընկալ արեգակնակերպ նշուլիւք՝ ընթանային զճանապարհաւն սաղմոսիւք և քաղցրաձայն եղանակօք: Եւ այն ինչ հասանէին ի սահմանս Սիւնեաց, ի գաւառն Վայոց ձորոյ՝ տեսին երաշտացեալ ի բազում աւուրց և ողորմ տեսակաւ թարշամեալ ամենայն բոյսք...: Իսկ ի մերձենալն ի գահ իշխանաց ի Սիւնիս՝ աւետաւորքն առաջի ընթանային... կէսկք հետևակք կէսկք հեծեալք ընթանային յաջմէ և յահեկէ. և մեծաձայն աղաղակաւ հնչէին, գոչէին զերգս օրհնութեան այնքան, մինչ լի լինէր փորակ գաւառին իբրև յորոտմանէ ամպոց: Եւ այնպէս փառաւորութեամբ տարեալ իջուցանէին ի խորանն արքունական. և նստուցանէին ի վերայ ոսկեթել և մարգարտաշար բազմականին, ի գահ իշխանացն, ի տեղին որ կոչի Կից վտակաց»[30]:

Կասկածից վեր է, որ Վայոց ձորից դեպի Ծղուկք տանող ճանապարհը պետք է անցներ մոտավորապես այժմյան խճուղու ուղղությամբ, այսինքն՝ Մարտունի-Սելիմ-Եղեգնաձոր-Որոտանի լեռնանցք-Բազարչայ գծով, որովհետև խիստ լեռնային այդ երկրում նշված գավառները միացնող այլ ճանապարհ չկա:

Նույն այդ ճանապարհը Ծղուկքում չէր ընդհատվում, այլ շարունակվում էր մինչև Բաղք գավառի Երիցավանքը (այժմ Արծվանիկ) և այստեղ էլ հավանաբար միանում Ողջագետի հովտով գնացող ճանապարհին: Ծղուկք-Երիցավանք ճանապարհն այնքան բարեկարգ էր, որ կարելի էր անցնել կառքով: Ահա ինչ է գրում Օրբելյանը. **«Իսկ տիկինն Սահակիա ընծայէ նմա զվրանն արքունի ամենայն կահիւքն և բազմականօքն. և հեծուցանէ զնա (Երիցակ վանականին-Թ. Հ.) յոսկիապատ կառս սպիտակ ջրուց. ընդ որում և ամենայն բազմութիւնն գրոհ տուեալ գնացին զկնի: Եւ այն ինչ հասեալք ի դուռն Երիցու վանիցն որ է ի Բաղք գաւառի որ Քաշունիք կոչի, և այժմ Բարկուշատ, կամեցաւ սուրբն Երիցակ իջանել պարանօք ընդ պարիսպն և փախչել, և ոչ թողացուցին պահակքն»**[31]:

Այունյաց երկրի հարավարևելյան մասում մյուս համեմատաբար հարմար ճանապարհը գալիս էր Արցախի և Մուղանի կողմերից: Այս ճանապարհն, անշուշտ, բանուկ է եղել շատ վաղուց, սակայն նրա մասին եղած հիշատակությունները վերաբերում են չափազանց ուշ ժամանակներին: Առաջին հիշատակությունը պատկանում է Աբրահամ Կրետացուն: Նա նկարագրում է 1736 թ. Մուղանում Նադիր Շահի թագադրության հանդեսից Վաղարշապատ վերադառնալիս իր անցած ճանապարհը, որը Այունյաց երկրի հարավարևելյան մասում ունի հետևյալ ուղղությունը: Արցախից անցնելով Այունիք, նա ամենից առաջ մտնում է Խնձորեսկ գյուղը, հետո՝ Քարահունջ, ապա «Սատանի կամուրջ»-ով, Մեծ Անապատով, Տաթև գյուղով անցնում է Տանձավեր ավերակ գյուղի մոտով (հնում կոչվում էր Տանձավայր, այժմ բնակեցված է և գտնվում է Ղափանի շրջանում) և դուրս գալիս Ողջագետի ափը: Այս գետի հոսանքով շարունակելով իր ճամփորդությունը՝ հասնում է Ղափանի շրջանի Փուխրուտ (հնում՝ Բեխորոտ, Ձորք գավառում) գյուղը, այստեղից էլ Մեղրի և ապա՝ Օրդուբադ[32]:

Նշված ճանապարհի Ծղուկք գավառը Բաղքի հետ կապող հատվածի մասին որոշ ակնարկներ կան Օրբելյանի կողմից մեջ բերված վավերագրերից մեկում, որը վերաբերում է Տաթևի վանքի կալվածքների 906 թվականի սահմաններին:

Բերենք մեզ հետաքրքրող հատվածը. **«...և Քարաձորին մեծ բնասեռովն ի սարն և ի բուն ճանապարհն որ գայ սարովն ի Հարսնավազն, և Հարսնավազին ձորակովն զառ ի կողմն յեկեղեցին որ ի պառակոջ ճանապարհին, և սալքարովն հատեալ զմեծ ձորովն ի միաւոր քարն որ կայ հանդէպ ի յայն կողմն մեծ ձորոյն. և հատանելով զմեծ տափն ի յերկայն խաչն և ջրաթափովն ի մեծ խոռն և ի ճանապարհն որ գայ ի Բաղաց ձորոյ, և անտի ի նոյն լեառնն Գազբոյլ»**[33]:

Անշուշտ Հարսնավազ սարի մոտով եկող բուն ճանապարհը, որի մասին ակնարկվում է, վերաբերում է Ծղուկքից դեպի Բաղք տանող ուղուն, այսինքն այն ճանապարհին, որով անցել է նաև Աբրահամ Կրետացին: Դրա համար էլ առանց որևէ լրացման միանում ենք Ալիշանի կարծիքին, ըստ որի. «Հարսնեվազն (Հարսնեքար), Կելին գայա ըստ այլզգեաց. զոր և ըստ նախագրեալ սահմանագրութեան թեմին Տաթեւոյ համարիմ լինել յելից հարաւոյ Վանացն, առ հին ճանապարհաւն՝ որ ի Բաղաց տանէր (ընդ Ծղուկ) յԱյրարատ աշխարհ»[34]:

Արցախից Ծղուկք, այստեղից էլ դեպի Բաղք տանող ճանապարհի մասին Օրբելյանն ունի մի ուրիշ վկայություն ևս, որը վերաբերում է 7-րդ դարի կեսերին. **«...ես մեղուցեալ աղախինս Քրիստոսի Շահանդուխտ՝ դուստր Վարազ-Տրդատայ (Աղվանից գահերեց իշխանի – Թ. Հ.), երթայի հարսն ի տունն Թորգոմեան. և եկեալ ի սահմանս Բաղաց, ի գլուխ քարիս ընդ որ անցանէ ճանապարհն»**[35]:

Ինչպես այս, այնպես էլ նույն պատմիչից քիչ առաջ բերված մյուս վկայության մեջ Ծղուկքից դեպի Բաղք և Արցախ գնացող ճանապարհների ուղղություններին մասին որոշակի ոչինչ չի ասված, սակայն դժվար չէ նույն վկայություններից տեսնել, որ Արցախից դեպի Ծղուկք և այստեղից էլ Բաղք գնացող ճանապարհը հին ժամանակներից սկսած բանուկ է եղել:

Տաթևի վանքի կալվածքների սահմաններին վերաբերող վավերագրում, բացի «բուն ճանապարհ»-ից, հիշատակվում է նաև մի ուրիշ ճանապարհ. **«...և ջրաթափովն ի մեծ խոռն և ի ճանապարհն որ գայ ի Բաղաց ձորոյ, և անտի ի նոյն լեառնն Գազբոյլ»**[36]:

Ի տարբերություն քիչ առաջ քննված «բուն ճանապարհ»-ի, սա կոչվում է Բաղաց ձորից եկող ճանապարհ: Հավանական է, որ վերջինս համապատասխանում է այժմյան այն ճանապարհին, որն սկսվում է Ողջագետի ափից (Կապան քաղաքի և Բաղաբերդի ավերակների մոտից), ապա անցնելով Ներքին ու Վերին Գիրաթաղ գյուղերի մոտով և Կազբել (Գազբոյլ) գագաթից ոչ շատ արևելք գտնվող Արմազ լեռան արևելյան կողմով (Կամբիլի լեռնանցքով)՝ դուրս է գալիս Տաթևի ձորի նեղ հովիտը: Հետո շարունակվելով Տաթևի ձորի ափերով դեպի հյուսիս՝ նա հասնում է Տաթև և Տանձատափ գյուղերին ու սրանցից քիչ հյուսիս միանում հիմնական ճանապարհին:

Մեր այս կարծիքը հիմնավորվում է նախ նրանով, որ վավերագրի մեջ (Օրբելյան, էջ 232) Տաթևին պատկանող շրջանի սահմանների թվարկությունը սկսվում է Գազբոյլ սարից (որը հանդիսանում էր նրա արևմտյան սահմանի վրա գտնվող կետերից մեկը) և, ընթանալով ժամացույցի սլաքի ուղղությամբ, արևելքի կողմից գալիս է նորից Գազբոյլ: Ուստի «Բաղաց ձորից եկող ճանապարհը» Բարկուշատի լեռնաշղթայի վրայով անցնում էր Գազբոյլից ոչ շատ արևելք ընկած մասով, որտեղ ճանապարհի համար միակ հարմար լեռնանցքը Կամբլի (Արմազ) լեռնանցքն է:

Երկրորդ՝ «... ի ճանապարհն որ գայ ի Բաղաց ձորոյ...» ակնարկից պետք է հասկանալ, որ այդ ճանապարհը գալիս էր ոչ թե Բաղք, այլ Ձորք գավառից (որում գտնվում էին Կապան քաղաքն ու Բաղաբերդը), որովհետև՝ ա) բուն Բաղք գավառը մատենագրական ոչ մի երկի մեջ Բաղաց ձոր չի անվանված, բ) հնագույն ժամանակներում, ինչպես ճիշտ կերպով նշում է Ալիշանը[37], Ձորքն ու Բաղքը կազմում էին մի գավառ՝ Բաղք անունով: Հետագայում, թեև այն բաժանված էր երկու մասի՝ Բաղքի և Ձորքի, այնուամենայնիվ երկու գավառներում էլ իշխում էր Այունյաց իշխանական տան Ձագիկյանների ցյուղը»: Այդ պատճառով էլ չափազանց հավանական ենք համարում, որ վավերագրում հիշատակված Բաղաց ձորը

նույն Ձորք գավառն է: Իսկ Ձորքից դեպի Տաթև շատ թե քիչ հարմար է միայն այն ճանապարհը, որ սկսվում է Բաղաբերդի և Կապան քաղաքի մոտից և Գիրաթաղ գետի հոսանքով ու Կամբլի լեռնանցքով անցնում Տաթևի շրջանը:

Սյունյաց երկրի հարավարևելյան մասի վերջին ճանապարհը, որի մասին ուզում ենք նշել, Սյունյաց իշխանների ոստան Ծղուկքը Երասխի (Արաքսի) ափին գտնվող Նախիջևանի հետ միացնող բավականին բարեկարգ ուղին է: Նրա ուղղությունը համընկնում է այժմյան Սիսիան-Շաղատ-Սիսիանի լեռնանցք-Նախիջևան խճուղու հետ:

Ծղուկք-Նախիջևան ճանապարհի մասին առաջինը հիշատակել է Սեբեոսը 7-րդ դարի առաջին կեսին. **«Իբրև ետես Երակլոս, եթէ ի մեջ արկին զնա՝ դարձաւ ի վերայ զաւրուն՝ որ ի թիկանց կողմանէ հապճեպ զաւրութեամբ եհար զնա (Շահենին-Թ. Հ.) և խորտակեաց. և գնաց ընդ Ծղուկս. և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախճուանն ի ձմերան ժամանակի»**[38]:

Հերակլ կայսրը պարսկական զորքերի կողմից շրջապատման էր ենթարկվել Տրտու (այժմ Թարթառ) գետի հովտում, որտեղից դեպի Նախիջևան նրա անցած ճանապարհի ուղղության մասին Լեոն գրում է. **«Այս ճանապարհը մոտավորապես նույնն է, որ այսօր էլ Գանձակից (այժմ Կիրովաբադ) մեկնելով, Շուշի ու Գորիս քաղաքների վրայով տանում է ուղիղ Նախճավան»**[39]:

Լեոյի կարծիքի այն մասը, որ վերաբերում է Հերակլի զորքի Թարթառ գետի հովտից մինչև Ծղուկք անցած ճանապարհի ուղղությանը, մեզ տվյալ դեպքում չի հետաքրքրում, իսկ ինչ վերաբերում է Ծղուկքից (Սիսիան) մինչև Նախիջևան հատվածը, որն ըստ նրա համընկնում է այժմյան խճուղու հետ, ընդունում ենք անվերապահորեն:

Պետք է ենթադրել, որ Ծղուկք-Նախիջևան ճանապարհը Սյունյաց աշխարհի համար տնտեսական մեծ նշանակություն է ունեցել, սակայն մեր մատենագիրների մոտ այդ մասին, բացի, Սեբեոսից վերը բերված անուղղակի վկայությունից, ոչինչ չկա ասված:

Այսպիսով, մենք խոսեցինք Սյունյաց երկրի հարավարևելյան մասի այն բոլոր ճանապարհների մասին (ա) Վայոց ձոր - Ծղուկք - Արցախ, բ) «Սատանի կամուրջ» - Տաթև - Տանձավայր - Երիցավանք - Ողջի գետ - Բեխորոտ - Մեղրի, գ) Տաթև - Կամբլի լեռնանցք - Վերին Գիրաթաղ - Ներքին Գիրաթաղ - Բաղաբերդ, դ) Ծղուկք - Սիսիանի լեռնանցք-Նախիջևան), որոնք այս կամ այն առիթով հիշատակվում են մատենագիրների աշխատություններում:

Սյունյաց երկրի այս մասում եղած գրեթե բոլոր ճանապարհները ձմեռը փակվում են[40]: Նրանք համեմատած Դվին-Պարտավ, Դվին-Նախիջևան, Դվին-Անի և Հայաստանի մյուս նշանավոր ճանապարհների հետ, իրենց նշանակությամբ երկրորդական էին:

Ծանոթագրություններ

1. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 11:
2. «Մղոնաչափ»-ը պատկանում է 7-րդ դարի գիտնական Անանիա Շիրակացուն:
3. «Գանձակ Շահաստան»-ը չպետք է շփոթել Աղվանքում գտնվող Գանձակ կամ Գյանջա (այժմ Կիրովաբադ) քաղաքի հետ: Նա գտնվում էր Ատրպատականում, Ուրմիո լճից հարավ-արևելք, մոտավորապես այժմյան Թախտի-Սուլեյմանի տեղում:
4. Տեքստը տես Ա. Աբրահամյանի «Անանիա Շիրակացու մատենագրությունը», աշխ. 355 էջում:
5. Արաբական աղբյուրները Պարտավն անվանում են Բերդա, Դվինը՝ Դաբիլ, Նախիջևանը՝ Նաշավա և այլն:
6. Տես Н. А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. Сборник мат. для опис. местн. и племён Кавказа, вып. XXIX, 1901, էջ 33-34:
7. Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 382:
8. Տես Ստ. Լիսիցյան, ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, էջ 28-29:
9. Տես Ստ. Լիսիցյան, ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, էջ 28:
10. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, հավելված «Դվին-Պարտավ հին ճանապարհը», էջ 177:
11. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, հավելված, էջ 177-193:
12. Տես նույն տեղը, էջ 196:
13. Սիսաջանը Կարաուլովի կազմած քարտեզում նշանակված է այժմյան Բաշնորաշենի մոտ՝ Կիսաջան անունով (տես ,,Сборник материалов для описания местн. и племён Кавказа″, 1901, вып. XXIX-ին կցված քարտեզը):
14. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, էջ 193-203:
15. Տես Հ. Մանանդյան, Երատոսթենեսի ստադիոնը և Պարսից ասպարեզը, Երևան, 1934, էջ 9-12:
16. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, հավելվածի քարտեզները: Караулов, Свед. арабск. писат. о Кавказе..., Сборник мат. для опис. местн. и племён Кавказа, вып. XXIX, Тифлис, 1901, քարտեզը:
17. Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները..., «Դվին-Պարտավ հին ճանապարհը», էջ 195:
18. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 429-430:
19. Այժմյան Արենի (Արփա) գյուղը, որի մոտ էր և հին Առփան, գտնվում է Արփա գետի և նրա Եղեգիս վտակի անկյունում, Արփա գետի ափին:
20. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 368:
21. Տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 181:
22. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 193:
23. Գեղարքունի կայանը համապատասխանում է Կոթ ավանին:
24. Տես Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 199:
25. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները..., հավելված, էջ 193-195:
26. Տես Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները..., հավելվածին կցված քարտեզը:
27. Տես Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատ. կցված քարտեզը:
28. Ի դեպ, նկատենք, որ նշված ճանապարհային կայաններից ոչ միայն Սիսաջանը, այլև մյուս երկուսը (Գեղարքունի և Զոդ) ևս չէին հանդիսանում համապատասխան գավառների նախասկիզբ (տես Ալիշանի «Սիսական» աշխատ. կցված քարտեզը)
29. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 264-265:
30. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 73-74:
31. Նույն տեղում, էջ 75:
32. Տես Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիքն իւրոց ու Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 73-77:
33. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 232:
34. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 252:
35. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 164:
36. Նույն տեղը, էջ 232:
37. Տես Ղ. Ալիշան, Սիսական, էջ 290:
38. Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 115:

«ՍՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ», Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ ԵՐԵՎԱՆ 1966

ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ

Կատրանիդե թագուհին, ով Հայոց շահնշահ Գագիկ Ա Բագրատունու կինն էր, Կապանա տան չքնաղ դուստրը

Կատրանիդե թագուհին եղել է Սյունիքի թագավոր Վասակի (990-1040) միակ դուստրը, Սմբատ Սյունու թոռը:

Գագիկ Ա շահնշահը և Կատրանիդե թագուհին ունեցել են 4 զավակ՝ Խուշուշ (ամուսնացել է Սենեքերիմ Արծրունու հետ և դարձել Վասպուրականի թագավորության վերջին թագուհին), Հովհաննես-Սմբատ (հայոց թագավոր, 1022-1040), Աշոտ (հայոց թագավոր, 1022-1039) և Աբաս:

Մահից հետո թագուհի Կատրանիդեին մեծ շուքով, եկեղեցական ծեսերով թաղեցին Անիի Կաթողիկե եկեղեցու հարևանությամբ գտնվող տապանատան գերեզմանոցում:

20-րդ դարի սկզբին, երբ հնագետների խումբն արևելագետ Հովսեփ Օրբելու գլխավորությամբ բացեց Կատրանիդեի գերեզմանը, և երևաց թագուհու կմախքը, նրանք տեսան, որ թագուհու ոտքերը խաչած էին ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսի ոտքերը խաչելիս: Սա եղել է նրա վերջին ցանկությունը:

* * *

Գագիկ Ա շահնշահի (990-1020) հոր՝ Աշոտ Ողորմած (953-977) շահնշահի օրոք՝ 961 թվականին, Անին դարձել էր Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը: Աշոտ թագավորը կառուցել էր պարիսպների մի գիծ, որին նրա ավագ որդի և հաջորդ Սմբատ Տիեզերակալը (977-990) ավելացրել էր երկրորդ գիծը: Գագիկ շահնշահի օրոք շարունակվում է մայրաքաղաք Անիի կառուցապատումը՝ եկեղեցական կառույցներով:

Կատրանիդե թագուհու հովանավորությամբ՝ իր հայրական գանձարանի օժիտով ու թագավորական գանձարանի հաշվին, կառուցվում է Անիի մայր տաճարը: Առասպելը պատմում է, որ Կատրանիդե թագուհուն երազում հայտնված հրեշտակն է հուշել հովանավորել տաճարի կառուցումը: Նրա ճարտարապետն էր Տրդատը: Եկեղեցու շինարարությունը տևել է 20 տարի և ավարտվել 1001 թվականին: Այստեղ է տեղափոխվում կաթողիկոսական աթոռը՝ Սարգիս Ա Սևանցի (992-1019) կաթողիկոսի առաջնորդությամբ:

Կատրանիդե թագուհին Անիի Մայր տաճարը զարդարել է «ծիրանեծաղիկ ոսկեղեն» գործվածքներով, արծաթե ու ոսկե անոթներով: Տաճարի գմբեթին կանգնեցվել է մարդահասակ արծաթե խաչ, իսկ Սմբատ Տիեզերակալ թագավորը Հնդկաստանից բերել է տվել բյուրեղյա հսկա ջահ:

Անիի ճարտարապետական կառույցները հայոց Գագիկ Առաջինի, Տրդատ ճարտարապետի և Կատրանիդե թագուհու մտահղացումների և ջանքերի շնորհիվ են կյանքի կոչվել: Անին զարդարվեց ճարտարապետական հարուստ ձևավորումներով շինություններով, որոնց հիմնական մասը կազմում էին եկեղեցական կառույցները: Կառուցվել են նաև իշևանատներ, ապարանքներ, այլ շինություններ:

Պատմիչների վկայությամբ՝ քրիստոնեական հավատքին հավատարիմ թագուհին կատարում էր բոլոր ծեսերն ու աղոթքները, հաճախում մայրաքաղաքի եկեղեցիներ, աղոթում ու լսում հոգևոր երգեր:

Կատրանիդե թագուհու և Գագիկ թագավորի տոհմածառը՝



Հայոց Կատրանիդե թագուհին, ով Սյունիքի թագավոր Վասակ 1-ինի դուստրն էր

ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ

Սյունյաց Գրիգոր Բ արքայի անվանակիր սարկոֆագը

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Քարե սարկոֆագներում թաղումները տարածված են ինչպես ուրարտական ու անտիկ (հելլենիստական), այնպես էլ միջնադարի վաղ ու զարգացած շրջափուլերում, ուստի պատահական չէ մասնագետների այն բնորոշումը, թե «Սարկոֆագը Վանի թագավորությունում գոյություն ունեցած թաղման խուցերից մեկն է, որից սկիզբ են առնում հեթանոս և քրիստոնյա հայերի մոտ լայն տարածում գտած և մինչև զարգացած միջնադար գոյատևած միակտուր քարաշեն սարկոֆագները»[1]: Հայաստանում այսօրինակ թաղումներ հայտնի են Արգիշտիխինիլիից, Վաղարշապատից, Աղցքից, Արուճից, Ջրվեժից, Ողջաբերդից, Չովունիից, Քասաղից, Սիսիանից, Արցախի Գյավուրկալա (անհավատների բերդ) բնակատեղիից և մի շարք այլ հնավայրերից[2]: Գտնված կավե ու փայտե սարկոֆագներին զուգահեռ հանդիպող քարե դագաղները արտաքուստ և ներքուստ ուղղանկյունաձև մշակմամբ, երբեմն՝ մարդակերպ (անտրոպոմորֆ) փորվածքով միակտուր երկլանջ սալերով ծածկված քարարկղեր են:

Սիսիան քաղաքի բացօթյա Քարադարանում ցուցադրված է ՀՀ Սյունիքի մարզի Շաքի գյուղից բերված բազալտե մի սարկոֆագ, որն ըստ թանգարանի գույքամատյանի գրառման՝ 1985 թ. շինարարական աշխատանքների ընթացքում պատահականորեն հայտնաբերվել է հիշյալ գյուղի ճանապարհամերձ հատվածից: Շաքին (հնում՝ Շաքե) պատմական Սյունիքի Ծղուկ գավառի հնագույն բնակավայրերից է, որտեղ պահպանվել են դեռևս մ.թ.ա. II հազարամյակի ամրոցի ու բնակատեղիի մնացորդներ, միջնադարյան գյուղատեղիներ, գերեզմանոց, մատուռ, քարայր-կացարաններ: Գյուղում է գտնվել նաև Շաքիի վանքը, որը XIX դարի վերջին նկարագրել է Երվանդ Լալայանը. «Շաքէոյ վանքը գտնուում է Շաքի գիւղում, որ ընկած է Անգեղակոթ և Ղարաքիլիսա գիւղերի մէջ, Շաքիչայի աջ ափին, մի հարթութեան վրայ... շինուած է մեծ մասամբ տաշած քարից»[3]: Ե. Լալայանը բերում է նաև եկեղեցու կառուցման (միգուցե՝ նորոգման) արձանագրությունը. «Դռան ճակատակալ քարի վրայ գրուած է. Շաքու եկեղեցիս շինեցինք թ. ՌՃԵ (1626)»[4]: Այն, որ հուշարձանը մեզ չի հասել, իր աշխատություններում նկատել է նաև պատմաբան Մորուս Հասրաթյանը՝ նշելով, որ Սիսիանի հին բնակավայրերի նյութական մշակույթի մնացորդներից շատերն արդեն ոչնչացել են, ինչպես օրինակ՝ Շաքիի վանքը և գյուղի հնագույն բազիլիկ եկեղեցին, որը կանգուն էր դեռևս XX դարի սկզբին, ինչպես նաև գերեզմանոցը[5]: Տեղանունների բառարանում կարդում ենք, որ 1960 թ. գյուղում հայտնաբերվել է մոտ 3 մ երկարությամբ քարե դամբարան, որի մեջ եղել են մարդու ոսկորներ և մի քարե կացին[6]: Ենթադրելի է, որ գտածոն սարկոֆագ է (միգուցե՝ քարարկղային դամբարան), ինչը թույլ է տալիս հավաստել, որ այս տեղանքին հատուկ են նմանատիպ թաղումները:

Քնևության առարկա սարկոֆագի ընդհանուր երկարությունը 2.18 մ է, լայնությունը՝ մի ծայրում 0.70 մ, մյուսում՝ 0.65 մ, բարձրությունը՝ գլխամասում 0,48 մ, նեղ մասում՝ 0.44 մ: Նույն կերպ են նաև ներքին չափերը. երկարությունը՝ 1.90 մ, լայնությունը՝ մի ծայրում 0.46 մ, մյուսում՝ 0.40 մ, խորությունը՝ գլխամասում 0.36 մ, նեղ մասում՝ 0.32 մ: Սարկոֆագի ծածկասալը չի պահպանվել, հատակի գրեթե կենտրոնում կա մոտ 5 սմ տրամաչափի անցք, ինչը որոշ ենթադրությունների տեղիք է տալիս: Հավանական է, որ ավելի ուշ այն օգտագործվել է նաև այլ նպատակներով, օրինակ՝ իբրև գուռ կամ ջրամբար: Այս առումով ուշագրավ է Ե. Լալայանի հիշյալ նկարագրության հետևյալ հատվածը. **«Այս գիւղում գտնուած է մի մեծ քարէ սարկոֆագ (շիրիմ), որ այժմ գործ են ածում որպէս ալիւրի շտեմարան»**[7]: Դժվար է պնդել, որ Սիսիանի թանգարանում ցուցադրվածը Ե. Լալայանի հիշատակած սարկոֆագն է, բայց և այնպես գյուղում նկատելի են այսօրինակ առարկաների երկրորդական

Սյունյաց Գրիգոր Բ արքայի անվանակիր սարկոֆագը

Սիսիանի քարադարանի մուտքը

Նկ. 3. Սարկոֆագի միջնամասը

կիրառության դեպքեր: Բացառված չէ, որ տվյալ անցքը խնդրո առարկա սարկոֆագի հետագա օգտագործման հետ որևէ կապ չունի, այլ արվել է այն տեղափոխելու համար կամ էլ ունի ինչ-որ պաշտամունքային նշանակություն: Այդպիսին է հնագետներ Հ. Մարտիրոսյանի և Ռ. Թորոսյանի ուսումնասիրած Արգիշտիխինիլի ուրարտական սարկոֆագը, որի ստորին պատի և հատակի միացման հատվածում ևս առկա է մոտ 4 սմ տրամաչափի միջանցիկ անցք: Նման անցքեր կան նաև տեղի այլ դամբարաններում, Շիրակավանի՝ նույն ժամանակաշրջանի դամբարանի մաս կազմող ժայռաբեկորի ստորին մասում, ինչպես նաև Վաղարշապատի դամբարանադաշտից 1966 թ. հայտնաբերված III-IV դդ. թվագրվող կավե սարկոֆագի՝ դարձյալ նեղ պատի ու հատակի միացման հատվածում: Սրանց առկայությունը հնագետները պայմանավորում են հոգու հետ կապված ժողովրդական հավատալիքներով[8]: Ավելի վաղ, Ռ. Թորոսյանը հավանական է համարել, որ Վաղարշապատի դամբարանադաշտից հայտնաբերված սարկոֆագի անցքն արվել է այն տեղաշարժելու համար[9]:

Քարատապանի գլխամասի նեղ նիստը արտաքուստ արձանագիր է: Այս փաստը թույլ է տալիս կարծել, որ սարկոֆագը հողում չի թաղվել, այլ ծածկասալով փակվելուց հետո (որի ելնդավոր մշակմամբ շուրթերը պահպանվել են սարկոֆագի եզրերին) դրվել է ինչ-որ դամբարանային կառույցի մեջ, որպիսին հայտնի է Ջրվեժից (նկ. 4)[10]: Ըստ ամենայնի, դամբարանային նման թաղումները վերաբերում են բարձրաշխարհիկ անձանց (թագավորներ, իշխաններ, նշանավոր գործիչներ), ինչն ապացուցում է եռատող տապանագիրը:

Մասնագիտական գրականության մեջ ինչպես սարկոֆագի, այնպես էլ տապանագրի մասին մեզ որևէ ստույգ տեղեկություն գտնել չհաջողվեց: Թանգարանի գույքացուցակում նշված է հետևյալը. «Քարե սարկոֆագ-հայատառ արձանագրությամբ՝ «Քաջ Գրիգոր», գտնված է Շաքե գյուղի ճանապարհամերձ հատվածից», իսկ էքսկուրսավարի 2017 թ. տեքստում կարդում ենք, որ այն գտնվել է 1985 թ., ունի դժվարընթեռնելի արձանագրություն, որից նշմարվում են «Քաջ Գրիգոր» և «Շաքոա» անունները[11]:

Դատելով տառաձևերի հնագրական առանձնահատկություններից՝ տապանագիրն առավել հարազատ է XI-XII դդ.: Նկատենք, որ սկզբնատառ Շ-ի վերնամասը բացակայում է, այսինքն՝ մնացյալ հատվածը փորագրվել է ծածկասալին: Հիշատակագրության համաձայն՝ սարկոֆագը Գրիգոր արքայինն է: Սյունյաց թագավորների գավազանագրքում այս անունով հիշատակված են երկուսը. Գրիգոր Ա՝ որդի Աշոտի (Աշոտիկի, 1051-1072), Գրիգոր Բ՝ որդի Սենեքերիմի (1096՞-1166):

Սյունյաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանն իր Պատմության ԾԹ. (59) գլխի «Վասն թագաւորացն Սիւնեաց» խորագրի ներքո հիշատակում է նշված երկրամասի գահակալների անուններն ու նրանց օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձությունները[12]: Ըստ վի-



Սարկոֆագի հատակագիծը, երկայնական և լայնական կտրվածքը (չափագրությունը՝ Ս. Աղայանի)

մագիր ու մատենագիր սկզբնաղբյուրների, Սյունյաց 200-ամյա թագավորության գահակալներն են Սմբատ Ա (970 (987)–998), Վասակ Ա (998–1040), Սմբատ Բ (1040–1051), Սենեքերիմ Ա (1072 (1094) 1096՞), Հասան Խաչենեցի (1166-1170)13 և Ստ. Օրբելյանի կողմից հիշատակված երկու թագավորները:

Նրանց գահակալման ժամանակագրությունը հստակեցվել է նաև Սյունյաց հոգևոր կենտրոններից Վահանավանքի հնագիտական պեղումների ընթացքում, որոնք իրականացվել են սկսած 1966 թ.՝ վիմագրագետ Գր. Գրիգորյանի ղեկավարությամբ: Ի թիվս տարաբնույթ գտածոների՝ հայտնաբերվել են նաև տարբեր բովանդակության, այդ թվում՝ նշանավոր անձանց անուններով վիմագրեր: Դրանցից են՝ Վահանավանքի հիմնադիր, Բաղքի իշխան Ձագիկի որդի Վահանը, Սյունյաց թագավորներ Սմբատ Բ-ն, Գրիգոր Ա-ն, թագուհիներ Դինարը, Շահանդուխտը, վերջինիս և Սենեքերիմ թագավորի քույր Կատան և այլք[14]:

Գրիգոր Ա թագավորի տապանաքարը գտնվել է Սմբատ Բ թագավորի շիրիմի կողքին՝ վանքի սյունասրահի արևելյան հատվածի պեղումների ժամանակ: Ուղղանկյուն տապանաքարի վրա հետևյալ քառատող արձանագրությունն է. «ԹՎԱԿԱՆ ՇԻԱ (1072), ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐ ՈՐԴԻ ԱՇՈՏԿԱ»[15]: Այս տապանագիրը բացառում է սարկոֆագի վիմագրում վկայված Գրիգորի նույնացումը Աշոտիկի որդի Գրիգոր Ա թագավորի հետ, ուստի հավանական է Գրիգոր Բ թագավորի անվան հիշատակությունը: Վերջինս Սենեքերիմ թագավորի չորս որդիներից ավագն էր (մյուսների անուններն են՝ Սմբատ, Սևադա, Կյուրիկե), որի մասին պատմագիրը համառոտ տեղեկություններ է հաղորդում: Սյունյաց թագավորության գահը ժառանգելու առնչությամբ կարդում ենք հետևյալը. **«Եւ յետ նորա (Սենեքերիմի Ա.Հ.) էառ զտէրութիւն նորա որդի իւր Գրիգոր՝ նուազ եւ ընդաղօտ թագաւորեալ»**[16]: Նույն Պատմության աշխարհաբար տարբերակում հիշյալ հատվածն այսպես է թարգմանված. **«Նրանից (Սենեքերիմից - Ա.Հ.) հետո նրա իշխանությունն ստանձնեց իր որդի Գրիգորը՝ թագավորելով քիչ և թույլ»**[17]: Բանն այն է, որ Գրիգոր Բ-ն, թերևս, Սյունյաց այն գահակալն է, որն ամենաերկարն է թագավորել՝ շուրջ վեց տասնամյակ: Չնայած անհավանական թվացող այս ժամանակահատվածին՝ պատմագրի վկայությունը, կարծում ենք, պետք է մեկնաբանել «թույլ» և «անհիշարժան» իմաստներով:

Ինչ վերաբերում է Գրիգոր Բ-ի կյանքի վերջին տարիներին տեղի ունեցած դեպքերին և մահվան տարեթվին, ապա Ստ. Օրբելյանն այդ մասին հիշատակում է իր երկու աշխատություններում: Նախ Պատմության էջերում նշում է, որ սելջուկյան սուլթանության Շամսադդին Ելտկուզ աթաբեկի (1147-1175) տևական ասպատակությունների արդյունքում Սյունյաց աշխարհում տեղի ունեցան ավերածություններ, իսկ 1170 թ. գրավվեց Բաղաբերդը: Սակայն, մինչ այդ. **«...ինքն (Գրիգոր Բ թագավորը - Ա.Հ.) եւ եղբայր իւր Սմբատ յառաջ քան զառնուլ բերդին մեռանին ի 615 թուին»**[18], այսինքն՝ 1166-ին: Նույնը վկայված է նաև Վաղարշապատի Ս. Կաթողիկեին (Մայր տաճար Ս. Էջմիածնին) նվիրված քնարական «Ողբ»-ում.

«...Որոց վերջին Սենէքարիմ
Նաև Գրիգոր որդի նորին:
Ապա և զայս ի բաց բարձին
Ի ժամանակս Ելտկուզին
Ազգն անիծեալ և պարսկային,
Որք հրով զաշխարհս տոչորեցին
Ի վեց հարիւր մեր թուականին
Եւ տասնևհինգ յաւելուածին...»[19]:

Ցավոք, Գրիգոր թագավորի և նրա եղբայր իշխանաց իշխան Սմբատի մահվան մանրամասների, թաղման վայրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ պատմագիրը չի հաղորդում: Դժվար է ասել, թե նրանք ինչ հանգամանքներում են մահացել: Սակայն, անժխտելի է, որ իր տևական գահակալման ընթացքում Գրիգոր Բ-ն մշտապես պայքարել է սելջուկների նվաճողական ոտնձգությունների դեմ՝ ժողովրդին կոչ անելով միաբանվել և չհանձնվել[20]: Միմյանց հաջորդող պաշարումները կարող էին վերջնականապես հյուծել արդեն տարեց արքային, որով էլ, թերևս, պետք է բացատրել տապանագրում վկայված զտառապեալ բառի առկայությունը՝ «նեղություն», «չարչարանք», «զրկանք կրած» իմաստով:

Գրիգոր Բ-ն, ըստ էության, դարձավ Սյունյաց նախավերջին գահակալը, որին նրա իսկ ցանկությամբ հաջորդեց Խաչենի իշխաններից Հասան Գեռաբարեցին, որը կնության էր առել Գրիգորի դստերը՝ Կատային. **«բայց Գրիգորն, որ իշխէր Բաղաց, ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն ի Գեռաբարեցեացն և ետ զդուստր իւր Կատայն**

ՁՏԱՌ[Ա]/ՊԵԱԼ
ԳՐԻԳ[Ո]/ՐԻ
ՅԱՐՔԱ:

Նկ. 1. ա-բ Սարկոֆագի արձանագրությունը



Նկ. 2. Սարկոֆագի ընդհանուր տեսքը

Նկ. 4. Ջրվեժի սարկոֆագով դամբարանը (V-VII դդ.), արտադրված Ն. Տոնգարսկու «Դերքաբ II» աշխատությունից, աղյուսակ 20:

նմա ի կնութիւն և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ»[21]: Բացի Կատայից, Գրիգորն ունեցել է մեկ դուստր ևս՝ Շուշիկ անունով, որի անունը հիշատակված է Հովհաննավանքի տապանատան վիմագրերից մեկում. **«Ի ԹԼՈՒԻՆՅ ՈՒԷ (1178), ՈՂՈՐՄՈՒԹԼԵԱՄՅԲ Ա՛Յ, ԵՍ՝ ՇՈՒՇԻԿ, ԴՈՒՍՏՐ ԳՐԻԳՈՐՈ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԲԱՂԱՑ, ՀԱԼԱԾԵԱԼ Ի ՄԵՐՄԷ ԳԱՒԱՌԷ ԵԿԻ ՅԱՇԽԱԼՐՅՆՍ ՀԱՅՈՑ, Ի ՎԱՆՍ ՅՈՀԱՆՈՒ... ԵՏՈՒ ԶԱՋ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ Ի ՅՈՒԽՏՍ Ա՛ՆԲ՝ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ...»**[22]:

Գրիգորի մահից հետո Հասան Խաչենեցին թագավորել է նախքան Բաղաբերդի գրավումը, քանի որ. **«մինչ զբերդն կամէին առնուլ՝ Հասան կացոյց բերդապահս, և ինքն առեալ զկին իւր և զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն և անց, գնաց ի գաւառ իւր և ի տուն ի Խաչէն»**[23]: Փաստորեն, Բաղաբերդի գրավումով վերջ դրվեց Սյունյաց թագավորությանը, որի գահակալները **«...էր որ անզաւակ մնացին, և էր որ կիսօրեայ փոխեցան, էր որ սպանան և գերեցան եւ մնացեալ էին միայն այս Գրիգոր և Սմբատ, որք այսու օրինակաւ բարձան»**[24]:

Վահանավանքի 1966 թ. պեղումների ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան սարալանջից գտնվել է Գրիգոր և Սմբատ եղբայրների անվանակիր մի խաչքար՝ հետևյալ արձանագրությամբ. **«...ԶԳՐԻԳՈՐ ԵՒ ԶՍՄՊԱՏԻԿ ՅԻՇԼԵՅԱ՛ՔՄԱԾ»**[25]: Վիմագրի առաջին հրատարակիչ Գր. Գրիգորյանը ծանոթագրում է, որ հիշատակված Գրիգորն ու Սմպատիկը Սյունյաց Սենեքերիմ թագավորի որդիներն են, ովքեր իրենց մահկանացուն կնքել են 1166 թ.[26]: Դատելով արձանագրության բովանդակությունից՝ խաչքարը կերտվել է եղբայրների հիշատակին, ովքեր, ըստ ամենայնի, միասին են վախճանվել: Գր. Գրիգորյանը նախապես հավանական է համարել նրանց՝ Վահանավանքում թաղված լինելու հանգամանքը[27], որն այդպես էլ չի հաստատվել տապանագրերի բացակայության պատճառով: Նա նաև արձանագրում է, որ Սյունիքում և, մասնավորապես, Վահանավանքում, մի շարք անձնանուններ ավարտվում են իկ փաղաքշական մասնիկով, ինչպես օրինակ՝ Սմպատիկ, Գրիգորիկ, Վահանիկ, Աշոտիկ[28]: Հետաքրքիրն այն է, որ խնդրո առարկա տապանագրում ևս Գրիգոր անունը վկայված է Գրիգորի ձևով, որը Գրիգորիկ անվան արտահայտվածներից պետք է լինի, այլ ոչ Գրիգոր անվան սեռական հոլովաձևը:

Այն, որ տապանագրում Գրիգորին թագավորի փոխարեն հիշատակված է «յարքա» տիտղոսով (բառավերջին յ-ն փորագրիչը սկզբում է զետեղել) չպետք է տարակույս հարուցի, քանի որ նմանօրինակ զուգաձևությունները վիմագիր և մատենագիր սկզբնաղբյուրներում բազմաթիվ են: Իբրև օրինակ, հատվածաբար վկայակոչենք հենց Վահանավանքի վիմագրերից երկուսը, որոնցում Շահանդուխտ թագուհին հիշատակված է մի դեպքում. **«...ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱՒ...»**[29], մեկ այլ դեպքում՝ **«...ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ...»**[30]:

Ամփոփելով արձանագրենք, որ Սիսիանի թանգարանի Քարադարանում ցուցադրված սարկոֆագը, ըստ արձանագրության, Սյունյաց Գրիգոր Բ արքայինն է (մահ. 1166 թ.): Իհարկե, բացառված չէ, որ հիշատակվածը նշանավոր իշխանական տան ներկայացուցիչ է, որն իրեն պարզապես արքա է կոչում, սակայն, սա քիչ հավանական է: Այնուամենայնիվ, նկատի ունենալով ներքոնշյալ դրույթները, մենք հակված ենք սարկոֆագի վիմագրում վկայված Գրիգորին նույնացնել Սյունյաց արքայի հետ.

ա. Չպետք է պատահական համարել սարկոֆագի՝ բազալտից լինելու հանգամանքը, քանի որ դրանք, սովորաբար, պատրաստում էին տուֆից, որն ավելի հեշտ էր մշակվում: Այս երևույթը որոշակիորեն վկայում է հանգուցյալի ունեցած բարձր դիրքի մասին:

բ. Սարկոֆագի Շաքիից ծագած լինելը չպետք է կասկած հարուցի, քանի որ բնակավայրում վավերացվել են դամբարանային (այդ թվում՝ սարկոֆագային) այլ թաղումներ ևս: Սակայն, կասկածելի է մնում Սյունյաց արքայի՝ Շաքիում թաղվելու պատճառը: Հիշենք, որ Սյունյաց գահակալներից Սմբատ Ա-ն և Վասակ Ա-ն, ըստ Ստ. Օրբելյանի, ամփոփվել են Տաթևի վանքի գավթում, մյուսները՝ Վահանավանքում: Կարելի է միայն ենթադրել, որ Գրիգոր արքայի սարկոֆագով դամբարանը գտնվել է Շաքիի վանքում կամ նրանից ոչ հեռու: Բայց, ցավոք, ոչ այն, ոչ էլ վանական համալիրը մեզ չեն հասել: Հավանական է, որ սկսված սելջուկյան ահագնացող ասպատակություններն են պատճառ հանդիսացել, որ Գրիգոր Բ-ի տապանը չի դրվել ավանդական տապանավայրերում (Տաթև, Վահանավանք), այլ քիչ հայտնի՝ թերևս գաղտնի մի տեղում, որպեսզի թշնամիների ձեռքով աճյունը չանարգվի[31]:

գ. Սյունյաց Գրիգոր Բ թագավորը գահակալել է առնվազն XII դարասկզբից և ըստ պատմագիր Ստ. Օրբելյանի՝ եղբոր հետ միասին իր մահկանացուն կնքել է 1166 թ.: Ինչպես պատմագրի հիշատակությունը, այնպես էլ արձանագրության հնագրական առանձնահատկությունները հիմք են տալիս սարկոֆագը թվագրել XII դարով:

դ. Տևական գահակալման ընթացքում Գրիգոր թագավորը մշտապես պայքարել է սելջուկ-թուրքերի դեմ, հաճախ նաև՝ հաղթանակելով: Վիմագրում նրան վերագրված զտառապեալ բառի առկայությունը կարելի է մեկնաբանել հենց այդ տեսանկյունից:

ե. Այն, որ արքա տիտղոսով հիշատակվում էին հիմնականում թագավորները, ապացուցվում է վիմագիր ու մատենագիր սկզբնաղբյուրներով:

զ. Գրիգորի անվանաձևը, թերևս, նույն Գրիգորիկն է, քանի որ իկ փաղաքշականով հայտնի էին Սյունյաց աշխարհիկ բարձրաստիճաններից շատերը, ինչպես օրինակ՝ Ձագիկ, Աշոտիկ, Վասակիկ, Գրիգորիկ, Սմպատիկ և այլք:

Ծանոթագրություններ

1. Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ., Արգիշթիխինիլիի սարկոֆագը, ՊԲՀ, 1986, № 3, էջ 226:
2. Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի թաղումների ձևերի նկարագրության առումով յուրօրինակ է պատմական Արտաշատի դամբարանադաշտը, որտեղ հանդիպող հիմնահողային և կարասային թաղումներին զուգահեռ հայտնաբերվել են նաև կավե ու փայտե սարկոֆագներով թաղումներ: Տես Խաչատրյան Ժ., Արտաշատ II. Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977 թթ. պեղումները) (Հնագիտական պեղումները Հայաստանում, հ. 17, Ե., 1981, էջ 31-64): Հայաստանում հայտնաբերված սարկոֆագների և դրանցով ուղեկցվող թաղումների վերաբերյալ տես նաև Քալանթար Ա., Հին Վաղարշապատի պեղումները (Հայաստան, քարե դարից միջնադար, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 2007, էջ 338-341,

351, նկ. 8, 11): Սահինյան Ալ., Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Ե., 1955, էջ 55, Тирацян Г., К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапата (ՊԲՀ, 1977, № 2, с. 93-96, рис. 3): Սադոյան Բ., Արուճի վաղմիջնադարյան հուշարձանները (ՊԲՀ, 1985, № 4, էջ 172, նկ. 1-2): Ժամկոչյան Ա., Ջրվեժի վաղմիջնադարյան դամբարանադաշտի պեղումները (ՊԲՀ, 1986, № 1, էջ 220-225, նկ. 2): Պետրոսյան Հ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Հակոբյան Հ., Սաֆարյան Վ., Կիրակոսյան Լ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները (Հին Հայաստանի մշակույթը, XIV, Ե., 2008, էջ 190): Միրիջանյան Դ., Հայաստանի վաղմիջնադարյան գերեզմանային կառույցների դասակարգման փորձ, «Հաբիտուս» I. մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ (Հայաստանի և հարակից երկրների ազգաբանություն և հնագիտություն» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2014, էջ 276281): Մասնագիտական խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում հնագետ Դ. Միրիջանյանին: Լոնդոնի Ս. Մարտին եկեղեցու պեղումներով հայտնաբերված սարկոֆագը թվագրված է ուշ հռոմեական (Late Roman) ժամանակաշրջանով, այսինքն՝ մ.թ. 400-500 թթ.: Տես Barber B., Thomas C., Waston B., Religion in Medieval London: Archaeology and Belief, London, 2013, p. 16.

3. Լալայեան Ե., Սիսիան. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Նշանաւոր վանքեր (Ազգագրական հանդէս, Գ. գիրք, Թիֆլիս, 1898, № 1, էջ 190-191):
4. Նույն տեղում, էջ 191:
5. Հասրաթյան Մ., Պատմահնագիտական ուսումնասիրություններ, Ե., 1985, էջ 139:
6. Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Ե., 1998, էջ 93:
7. Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 191:
8. Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ., Արգիշթիխինիլիի սարկոֆագը, էջ 221-222:
9. Թորոսյան Ռ., Կրկյաշարյան Ս., Հնագիտական նորույթներ Էջմիածնից (ՊԲՀ, 1971 № 4, էջ 287, նկ. 2):
10. 1958-1962 թթ. հնագետ Ն. Տոկարսկու ղեկավարությամբ պեղումներ են իրականացվել Ջրվեժ գյուղի գերեզմանոցում և Քոսաղբյուր հնավայրում: Գերեզմանոցի տարածքում պեղվել է վաղմիջնադարյան միանավ եկեղեցի և նրա հյուսիսարևելյան կողմում գտնվող կիսագետնափոր թաղածածկ դամբարան՝ վրան աստիճանաձև պատվանդանի վրա կանգնեցված կոթողով: Դամբարանի ներսում հայտնաբերվել է նաև քարե սարկոֆագ (2,18x1,25x0,55-0,63 մ): Տես Токарский Н.М. Джрвеж II, Вохджаберд. Результаты работ Джрвежской археологической экспедиции 1958-1962 гг., Е., 1964, с. 39. Վիմագրագետ Գ. Սարգսյանի հետ կատարած մեր այցելության ժամանակ, ցավոք, դամբարանը տեսնել չհաջողվեց: Տեղացիների խոսքով, մոտ երկու տասնամյակ առաջ այն հողով լցվել ու ամբողջովին ծածկվել է: Վաղմիջնադարյան դամբարանային շինության լավագույն օրինակ է նաև Արտավազդ Կամսարականի գերեզմանը Նախիջևանում, որի երկլանջ տապանաքարի արձանագրության վերծանությունը տես Орбели И. Шесть армянских надписей VII-X веков (Избранные труды, Е., 1963, с. 409-413), Մանուչարյան Ալ., Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, Ե., 1977, էջ 104:
11. Թանգարանում ուսումնասիրություններ անելու և լուսանկարելն ապահովելու համար շնորհակալություն ենք հայտնում ղեկավարությանը՝ ի դեմս տնօրեն Լյուդմիլա Գրիգորյանի: Թանգարանի հրատարակած «Քարադարան» խորագրով գրքույկում տեղ է գտել նաև այս սարկոֆագի լուսանկարը, որի բացատրագրում նշված են չափերը և այն, որ ունի նաև հայատառ արձանագրություն: Տես Քարադարան, տեքստերը՝ Պետրոսյան Ծ., լուսանկարները և ձևավորումը՝ Հակոբյան Վ., Սիսիան, 2010, էջ 7:
12. Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 317-321:
13. Գրիգորյան Գր., Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր) (ՊԲՀ, 2006, № 2, էջ 144):
14. Պեղումների նախնական արդյունքների մասին տես Գրիգորյան Գր., Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966-1970 թթ.) (ԼՀԳ, 1970, № 10, էջ 8193), նույնի՝ Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից (ՊԲՀ, 1980, № 2, էջ 154-165):
15. Գրիգորյան Գր., Վահանավանք. պատմահնագիտական ուսումնասիրություն, Ե., 2007, էջ 58, արձ. 34:
16. Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 320-321:
17. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1986, էջ 270:
18. Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 337:
19. Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն, հրատարակեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 38:
20. Սենեքերիմ թագավորի չարանենգ սպանությունից հետո (1096 թ.՞) ընդհուպ մինչև Բաղաբերդի գրավումը (1170 թ.) սելջուկները պարբերաբար արշավում էին Սյունյաց երկրամաս, ավերի ու թալանի ենթարկում թագավորության տիրույթները: 1104-1105 թթ. գրավում են Որոտնը, ապա Բղենը, 1126 թ. Հարոն ամիրան կարճ ժամանակով գրավում է Արևիք գավառն (այժմյան Մեղրին) ու Կաբավաբերդը, 1151 թ. սելջուկների ձեռքն են անցնում Շլորուտի, 1157-ին՝ Մեղրիի բերդերը: Այս խառնակ պայմաններում էլ 1166 թ. անսպասելիորեն վախճանվում են Գրիգոր Բ թագավորն ու նրա եղբայր իշխանաց իշխան Սմբատը (տես Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, հ. III, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Ե., 1976, էջ 477-478, Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, Ե., 1981, էջ 37-39):
21. Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 336-337:
22. Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 77, արձ. 4:
23. Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 337:
24. Նույն տեղում, էջ 337-338: Սյունյաց թագավորության անկման մասին տես նաև Հակոբյան Թ. Խ., Սյունիքի թագավորությունը պատմաաշխարհագրական առումով, Ե., 1966, էջ 114-115:
25. Գրիգորյան Գր., Վահանավանք, էջ 42, արձ. 10:
26. Նույն տեղում, էջ 43:
27. Գրիգորյան Գր., Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 41, ծանոթ. 26:
28. Գրիգորյան Գր., Վահանավանք, էջ 43:
29. Գրիգորյան Գր., Վահանավանք, էջ 63, արձ. 37:
30. Նույն տեղում, էջ 71, արձ. 55:

«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ, № 1 (16), 2018 Թ.

ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ

Հայոց կաթողիկոս Տեր-Սարգսի շրջաբերական գրությունը Սյունիքի ամբողջ թեմին կամ թե ինչպես Սյունյաց առաքելադիր աթոռին վերադարձվեց իր նախնական պատիվը

«Ամենակալ հայր աստծու շնորհիվ, նրա միածին որդու գթությամբ և ազատիչ սուրբ հոգու նախախնամությամբ սա իմ՝ աստծու նվաստ ծառա ամենայն հայոց կաթողիկոս Տեր-Սարգսիս հրամանի և օրհնության գիրն է, որ նորին ողորմածությամբ գրեցինք որպես շրջաբերական գրություն՝ ուղղված Սյունյաց նախապատիվ ու աստվածամեծար տանը, աստվածապսակ Վասակ թագավորին, աստվածապահ իշխաններ Սևադային[878] ու Աշոտին[879], բոլոր ազատ մարդկանց, հասարակ ժողովրդականներին՝ ըստ սահմանված տասներկու գավազանների: Նախ նրանց օրհնություն ու պահպանություն թող հասնեն սուրբ Գրիգորի աթոռից և աստվածաներկ ու աստվածագումար այլ սրբերից ու մեզանից: Դրանցով դուք փրկված լինեք բոլոր տեսակի պատահարներից ու անպատեհ դիպվածներից:

Ի գիտություն ձեզ, մեր հոգևոր որդիներ, որ թեև մեզանից առաջ եղած Տեր-Թեոդորոս[880] և Տեր-Անանիա[881] կաթողիկոսների կողմից ինչ-որ պատճառով խախտված էր ձեր՝ Սյունյաց առաքելադիր աթոռը, և շեղված, բաժանված էր այդ գավազանի թեմը, բայց երբ եկավ աստծու ընտրյալ այս Հովհաննեսը[882], մենք նրան առաջին աթոռակալների նման ձեռնադրեցինք Սյունիքի մետրոպոլիտ ու վերստին հաստատեցինք տասներկու գավազանների նույն թեմը Սյունյաց տան նախապատիվ աթոռի՝ Տաթևի վրա, ձեր այս մետրոպոլիտ ընտրված աստվածաշնորհ, բազմերջանիկ սուրբ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի միջոցով. դրան կրկին հանձնեցինք իրենց նախնական պատիվը՝ խաչը, գահավորակը [և գավազանը]: Բայց սա չեղավ մեր իսկ պաշտոնական նախաձեռնությամբ, այլ ըստ մեզ մոտ բերված մեծափառ գրությունների և վճռագրերի՝ գրված հայոց նախնի հայրապետների ձեռքով, սկսած սուրբ Գրիգոր Լուսավորչից և իր որդիներից ու թոռներից: Այդ գրությունները մինչև սուրբ Սահակը գրվել էին հունարեն գրերով՝ յուրաքանչյուրը մատանիով

Տեր-Հովհաննես եպիսկոպոս, ով Տաթևի մետրոպոլիտն էր, ով պատմության մեջ է մտել «Երկրորդ Լուսավորիչ Սյունյաց» անվամբ

Անանիա Ա Մոկացի, Ամենայն հայոց կաթողիկոս 946-968 թթ.

դրոշմված և կապարե կնիքով կնքված, այնուհետև՝ հայերեն գրերով, մինչև Անանիան, նրանից հետո էլ [նույն ձևով] գրված մինչև մեզ, բացառությամբ Անանիայի, որ գրել էր Վահան եպիսկոպոսի համար, բայց ոչ մյուսների ձեռով: Ամբողջը հիսունհինգ շրջաբերական գրություն էր՝ յուրաքանչյուրը [համապատասխան] հայրապետի կնիքով[883], շարադրված երկար խոսքերով ու հրահոսան նզովքներով, որ ոչ ոք չհամարձակվի որևէ բան պակասեցնել սրանց սահմանված թեմից և կամ նվաստացնել ու սրանց պատվից ու աստիճանից զրկել: Այդ պատճառով էլ մենք, վախենալով առաքելական հայրերի այդպիսի հրա-

Անի քաղաքի մարգարիտ Սուրբ Աստվածածին Կաթողիկե մայր տաճարը, որ կառուցել է Սյունիքի Վասակ 1-ին թագավորի դուստր Կատրանիդեն, ում անվանում էին «Թագուհեաց թագուհի»

Կանից ու պատկառելով Սյունյաց հնամենի աթոռից, վերադարձրինք նրանց թեմի բոլոր սահման[ներ]ը, վերստին հաստատեցինք նրանց պատիվը՝ խաչը, գահավորակը և գավազանը: Սրանք են նրանց ենթակա հոտի գավառների սահմանները՝ Սյունիք, Բաղք, Արևիք, Օրդվատ, Արգուլիք[884], Վանանդ[885], Երնջակ, Նախիջևան[886], Ջուղա՝ որքան Երասխ գետն է կտրում, Ճահուկ, Վայոց ձոր, Խաչերոխոռով[887], Գեղարքունիք՝ Կոզաբակով[888], Երիշատ[889], Ջաղացաձոր[890], Փորակն[891] էլ ամբողջովին, որի վրա շատ հակառակություններ էին եղել, բայց հայոց կաթողիկոսները մեծամեծ նզովքներով ամրապնդել էին»:

Առանձնացվում է նաև Աղվանքի սահմանը՝ Ռմբաձորը, Ծար գավառը[892], Աղահեճը[893], որը հատում է Աղվանո գետը[894]՝ մինչև Քարավազի կամուրջը, և Հաբանդ գավառը, մինչև Երնջակի սահմանի Բստիձորը՝ գրավված գողթնեցիների կողմից, նաև Վանանդն ու Գողթնը ամբողջովին, որոնք թեպետ և եպիսկոպոս ունեին, և սահմանափակ տեղերի համար էլ դեռ կար, բայց ենթարկվում էր Սյունիքին:

«Եվ արդ՝ դուք, Սիսական գավառներդ, ամենայն մտերմությամբ՝ հնազանդ եղեք Սյունյաց աթոռին և ընդունեցեք մեր կողմից ուղարկված ձեր եպիսկոպոս Տեր-Հովհաննեսին՝ որպես աստծու պատվիրակի ու առաքելական մարդու, և ամենայն հպատակությամբ ծառայեցեք դրան, ինչպես աստծուն: Իսկ եթե որևէ մեկը կամենա հակառակվել այդ աթոռին և կամ խանգարման պատճառ դառնա եկեղեցու՝ հայրապետի կողմից սահմանված պատվին, վիճակին ու սեփականություններին, ժառանգի անբավ հրահոսան անեծքներ, որոնք դրվել են առաջին սուրբ հայրապետների և կրկնապատիկ դարձվել մեր իսկ կողմից: Իսկ այս հրամանը կատարողները կօրհնվեն ամենակալ աստծուց, սուրբ հայրապետներից, մեզանից ու սուրբ Գրիգորի աթոռից: Ահա այսպես մեր այս հրամանագիրը գրվեց մեր ձեռքով հայոց չորս հարյուր հիսունհինգ թվականին[895]: Ավելի հաստատուն լինելու նպատակով կնքեցինք մեր սեփական մատանիով, ի փառս աստծու, որն օրհնյալ է հավիտենապես. ամեն»:

Ծանոթագրություններ

878. Այս Սևադա իշխանը Սյունյաց Վասակ 1-ին թագավորի եղբայրն էր, Սմբատ 1-ին թագավորի և Շահանդուխտ թագուհու որդիներից մեկը: 11-րդ դարի 1-ին կեսի գործիչ է: (Էջ 262):
879. Սա Սյունյաց իշխանաց իշխան Աշոտն է (11-րդ դար), Վասակ 1-ին թագավորի քրոջ ամուսինը: (Էջ 262):
880. Տես ծան. 790: (Էջ 262):
881. Տես ծան. 787: (Էջ 262):
882. Այսինքն՝ Հովհաննես 7-րդ եպիսկոպոսը: Տես ծան. 768: (Էջ 262):
883. Ըստ Մ. Օրմանյանի ուսումնասիրությունների՝ հայոց կաթողիկոսների թիվը մինչև Սարգիս 1-ին Սևանցին 57 է: Հիսունհինգերոր-

Գագիկ Ա Բագրատունի, Հայոց թագավոր, Հայոց և Վրաց շահնշահ

Սարգիս Ա Սևանցի, Ամենայն հայոց կաթողիկոս 992-1019 թթ.

դը Վահան 1-ին Սյունին է: Նրանից հետո մինչև Սարգիս 1-ինը գահակալել են երկուսը՝ Ստեփանոս 3-րդ Սևանցին (969-971 թթ.) և Խաչիկ 1-ին Արշարունին (973 - 991 թթ.): Հմմտ. Մ. Օրմանեան, «Հայոց եկեղեցին...» Կոստանդուպոլիս, 1912, էջ 200: (էջ 263):

884. Սա Գողթնի նշանավոր Ագուլիս ավանն է: (էջ 263):
885. Սա Գողթն գավառի Վանանդն է և ոչ թե Բայանքի նույնանուն գավառը: (էջ 263):
886. Սա նշանավոր Նախիջևան քաղաքն է, այժմ Ադրբ. ՍՍՀ-ի Նախիջևանի ԻՍՍՀ-ի կենտրոնը: (էջ 263):
887. Խաչերո խոռ (Խաչերի հեղեղատ, ձոր, փոս) է կոչվել Վայոց ձորի մի (հավանաբար դեպի Շարուրի դաշտն ընկած) մասը: Ղ. Ալիշանն այն կարծիքն է հայտնել, թե այդ անվանումը կապված է Խաչիկ գյուղի անվան հետ («Սիսական» էջ 172): (էջ 263)
888. Մոսկովյան հրատարակության մեջ այս տեղանունը Գռզայ բակ ձևով է: Կռզաբակը Գեղարքունիք գավառի մի մասն էր կազմում: Դա պատմական Կոթն էր, որ գրավում էր այժմյան ՀՍՍՀ Մարտունու շրջանի տարածքի հիմնական մասը: Այդտեղ եղել է նաև համանուն գյուղ: (էջ 263):
889. Երիշատ ավանը գտնվել է Սոթք գավառում: Հարկացուցակում նշված չէ: Ղ. Ալիշանը, օգտվելով Ս. Երևանցու «Ջամբռ»-ից, գրել է լրացուցիչ ցանկում («Սիսական», էջ 64): Սակայն «Ջամբռ»-ում այն ներկայացված է Իրիշատ ձևով (Տես անդ, էջ 283): Նրա մոտի գետն էլ նույն անունով է կոչվել՝ Երիշատ (Արիշատ), այժմյան Մեծ Մազրայից ոչ շատ հեռու (հմմտ. «Սիսական», էջ 71)՝ Վարդենիսի շրջանում: (էջ 263):
890. Ջաղացաձորը գտնվել է Սոթք գավառում: Հարկացուցակում հիշատակվում է 10 միավոր հարկաչափով: Սիմեոն Երևանցու ժամանակներում դեռ գոյություն է ունեցել (տես «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 283): (էջ 263):
891. Ղ. Ալիշանը ենթադրում է, որ այս Փորակը որպես մի փոքրիկ շրջան պիտի լիներ Սոթքի տարածքում («Սիսական», էջ 26) կամ սահմանակից Սոթքին ու Ծարին (անդ. էջ 75), (էջ 263):
892. Ծարը հին Վայկունիք գավառն է, որը միջին դարերում կրել է Ծար անունը: Մոտավորապես համընկնում է Ադրբ. ՍՍՀ-ի Քելբաջարի շրջանին: (էջ 263):
893. Տես ծան. 19: (էջ 263):
894. Տես ծան. 217, այլև հմմտ. ծան. 19: (էջ 263):
895. Այսինքն՝ ընդհանուր 1006 թվականին: (էջ 264):

ՀԱՏՎԱԾ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻՑ

ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ

Սյունիքի թագավորության առաջին թագուհին՝ Շահանդուխտ Ա

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ (ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Արեւելյան Հայաստանի վերջին՝ Սյունիքի թագավորության (970-1170) առաջին թագուհին է՝ Սմբատ Ա արքայի կողակիցը, հարսնությունը՝ Աղվանից տնից, դուստր Խաչենի եւ Ուտիքի իշխան Սահակ Սեւադայի: Սյունիքի թեմակալ առաջնորդ, պատմիչ Ստ. Օրբելյանի երկից (1297թ.) մակաբերվում է, որ ամուսնու հետ եւ նրա վախճանվելուց հետո հովանավորել է մշակույթը, վայելել շինարարի փառք ու համբավ:

Հերանք: Գրիգոր-Համամի որդի, քաջ ու բարեպաշտ իշխան Սահակ Սեւադան հորից ժառանգել էր Փառիսոսի իշխանությունն ու դրան միացրել Արցախի հարեւան Գարդման եւ Ձորոգետ գավառները: Նրա հաճությամբ դուստրերի ձեռքը խնդրել էին անվանի իշխանական տոհմերի երեւելի զավակները. Շահանդուխտինը՝ Սյունիքի գահերեց իշխան Սմբատ Սահակյանը, Սահականույշինը՝ Հայոց գահի ժառանգորդ Աշոտ Երկաթ Բագրատունին: Սահակ Սեւադան անմասն չէր Սյունիքում ծավալված իրադարձություններին՝ սատարում էր համախմբմանն ու իշխանության կազմակերպմանը: Ս. Սեւադան բուռն սեր ու հոգածություն ուներ մշակույթի ու դպրության նկատմամբ, որ ժառանգել էր հորից. «....իր տանը դպրապետեր կարգեց» (Կղնկ.):

Անունը: Հազարամյակների խորքում հայերենն ու պարսկերենը քույր լեզուներ են, բազմաթիվ բառարմատներ նույնն են երկուսի համար: Արդի ընկալմամբ Շահանդուխտ անունն արքայադուստր է նշանակում՝ շահան-թագավորաց, դուխտ-դուստր: Պատմության հոլովույթում հայոց մեջ տարածված էր հատկապես իշխանական տներում: Մեկ այլ՝ Վարազ-Տրդատի դուստր Շահանդուխտի անվամբ ցայժմ հայտնի են ժայռ, մատուռ, բերդացուղ Գինական գետի (Տաթեւջուր) աջակողմ բարձունքներում: Իսկ Շահանդուխտ Ա թագուհու անվամբ ավանդասեր սյունեցիները երբեմն կոչում են գորիսակողմ Տեղ գյուղը:

Գործն է անմահ... Պատմության սանդուղքի վրա թագուհիները մեծամասամբ երեւում են պերճանքի ու քմահաճությունների հետնախորքի վրա: Շահանդուխտի պարագայում դույզն-ինչ այդպես խորհելը սրբապղծություն կլիներ. մեր ստուգապատում պատմիչը՝ հիացած նրա շինարարական գործունեությամբ, այլ մանրամասների չի անդրադարձել: **«Երանելի թագուհի Շահանդուխտը... աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղատնի գեղեցկակերտ ու վայելչաձեւ վանքը, որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետեւ այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար Սբ Գրիգոր Լուսավորչի անունով... Այստեղ հենց այժմ էլ տեսնում ենք անպատմելի հրաշքներ. թունավոր գեռուններից խայթված, սեւացած ու պայթելու աստիճան ուռածներին հանում են բարձրադիր լեռնե-**

Որոտնավանք

Գյուղ Տեղ

ը, ցույց են տալիս վանքը եւ կամ եկեղեցուց մի քիչ հող են հասցնում, մակարդված թույնն իսկույն քայքայվում է, ու հիվանդը՝ բուժվում: Այդ պատճառով մեծ բարեպաշտ Շահանդուխտը կոփածո քարերով եկեղեցի է շինում՝ սուրբ Նախավկա Ստեփանոսի անունով, հայոց ՆԽԹ թվականին (1000թ.), այնտեղ հաստատում է կրոնավորների ու վանքի բազմաթիվ սպասավորների տուն: Եկեղեցու բակում շինում է նաեւ աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաեւ պահեստներ, արհեստանոցներ, եւ վանքը շրջափակում պարսպով» (Օրբ.):

Պատմիչի՝ Սիսական տան պատմության մեջ պահպանվել է մի վճռագիր, որով Շահանդուխտ թագուհին Տաթեւի վանքին է նվիրաբերել Տեղ գյուղը 998 թվականին: **«Տեղ կոչված գյուղը, որ ինձ էր նվիրել իմ թագավոր Սմբատը, եւ ես խոպան տեղից գյուղ էի դարձրել, իմ երանելի թագավորի վախճանից հետո, նրա հոգու համար Տաթեւի սուրբ կենտրոնական վանքին ու սուրբ նշանին տվեցի...»**(Օրբ.):

Սերնդագործությունը: Սմբատ թագավորն ու Շահանդուխտ թագուհին երեք զավակի ծնողներ էին՝ Վասակ, Սեւադա եւ դուստր, որ Բաղքի գահակալ իշխան Աշոտի կինն էր: Սմբատ արքայի վախճանից հետո գահին բազմեց Վասակ որդին, ում պատմիչը մեծարում է Կտրիճ պատվանունով: Վերջինիս եղբայր Սեւադան հռչակվեց իշխանաց իշխան: Շահանդուխտի թոռնուհին՝ Վասակ Կտրիճի դուստր Կատրամիդեն, ամուսնացած էր Աշոտ 3-րդ Ողորմածի որդի Գագիկ Ա Բագրատունի թագավորի հետ: Կատրամիդե թագուհին հայտնի է Անիի Սուրբ Կաթողիկե երկնաճեմ եկեղեցու շինությամբ, Այունիքի մետրոպոլիտության աստիճանի վերականգնման ջանքերով:

Շահանդուխտ Ա-ի աղջկաթոռ Գրիգոր Ա թագավորի կողակիցն էր Շահանդուխտ Բ թագուհին՝ դարձյալ Աղվանից տնից:

Հանգչիմ ի Քրիստոս: Ամուսնու՝ Սմբատ արքայի վախճանից հետո Այունիքի (Բաղքի կամ Կապանի) թագավորությունը կառավարում էր Վասակ որդին, եւ նրան զորավիգ էր իմաստախոհ մայրը՝ Շահանդուխտ թագուհին: Թե որքան զուգահեռեց թագավոր որդուն, տակավին պարզված չէ: Վախճանվեց ու ամփոփվեց Վաղատնի (Որոտնավանքի) սրբարանի բակում: Սբ Ստեփանոս եկեղեցվո արեւելյան պատուհանի պսակի քարի վրա Ս. Բարխուդարյանը կարդացել–լուսանկարել է «ՇԻՆԵՑԱՒ ՀՐԱՄԱՆՈՎ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՆՊԱՏԱ Ի ՁԵՌՆ ՇԱՀԱՆԴԽՏՈ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳՈՒՀՈՅ» արձանագրությունը:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ, № 30 (271)

ԵՎՍ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ

Շահանդուխտ Բ՝ թագուհի Սյունյաց

Յոթնարքա երկրի ոսկեծղի տիրուհի: Սյունիքի թագավորության 200-ամյա ժամանակաշրջանում կառավարել են միմյանց հաջորդած յոթ տիրակալներ: Չորրորդը՝ Գրիգոր Ա Աշոտյան արքան, թագավորել է 1051-1072 թթ.: Նա կնության էր առել Սահակ Սեւադա Ա-ի թոռ Սեւադա իշխանի դուստր Շահանդուխտին, որին իր հոր հորաքրոջից՝ Շահանդուխտ Ա-ից, տարբերելու համար ետիները կոչել են Շահանդուխտ Բ: Ամենաօրհնյալ բարեպաշտուհին կարողացավ դիմակայել վրահաս դժբախտություններին. վախճանվեց ամուսինը՝ Գրիգոր արքան, 1094 թ. դավադրության զոհ գնաց եղբայրը՝ Սյունիքի Սենեքերիմ թագավորը, Գրիգոր-Շահանդուխտ թագավորական զույգը զավակ չունեցավ... **«Բաղքի Գրիգոր թագավորի օրոք, ինչպես եւ Շահանդուխտ թագուհու, Կատայի, Սենեքերիմ թագավորի կողմից բազմաթիվ ու գեղեցիկ կառուցումներով առավել գեղեցկացվեց Վահանավանքը: Կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմասյուն ու բարձրահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ»** (Օրբ.): Ոսկեծղի տիրուհու անվամբ կառույցներ են պահպանվել մինչեւ մեր ժամանակները:

Դինաստիական անցում: Քանի որ Գրիգորն ու Շահանդուխտն ազնվական էին, ապա, իշխանների հետ խորհուրդ անելով, որպես թագավորության ժառանգորդ՝ Աղվանքից բերում են **«Շահանդուխտի եղբայր, թագավորազն մանուկ Սենեքերիմին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլեւ՝ աստծուց երկյուղած»** (Օրբ.): Արդ, Սյունիքի թագավորական դինաստիան շարունակվում է Աղվանք-Արցախի թագավորազուններով: Ընդլայնվում են երկրամասերի ռազմական, տնտեսական կապերը: Աղվանքի երեւելիները բազմակի առումներով ապավինում էին Կապանա տանը: Վահան Ջեւանշերյա-

նը Վահանավանքի **«եկեղեցու բակում կառուցեց մեծ աղոթատունը՝ վիմակերտ մահարձաններով, որտեղ թաղված են Աղվանքի եւ Բաղքի շատ թագավորներ ու թագուհիներ, Սիսական աշխարհի բազմաթիվ փառավոր իշխաններ»:** Ճողոպրելով թշնամիներից՝ Կապան եկավ Տեր-Ստեփանոս կաթողիկոսը, վախճանվեց ու թաղվեց Վահանավանքում 1091 թ.:

Սենեքերիմ արքայի եղերական մահից հետո իշխանությունը ստանձնեց նրա որդի Գրիգորը: Մերօրյա հետազոտողները նրա գահակալությունը հաշվարկում են 72 տարի՝ 1094-1166: Ի դեպ, ըստ պատմիչի՝ **«...իշխանությունը ստանձնեց Սենեքերիմի որդի Գրիգորը՝ թագավորելով քիչ ու թույլ»** (Օրբ.): Թյուրըմբռնումն ի դերեւ է լինում, եթե մակաբերենք, որ թագավորության փաստացի կառավարումը մոր՝ Շահանդուխտի ձեռքում էր, թերեւս մինչեւ իր մահը՝ 1116 թ.:

Վահանավանքի Սբ Աստվածածին երկհարկ դամբարան եկեղեցի (Այունիք, 1086թ.)

Միջնադարյան դիվանագիտության սնանկությունը: 11-րդ դարում սելջուկներն ասպատակում էին տարածաշրջանը, որը «ենթարկված ու հարկատու էր նրանց» (Օրբ.): Բայց Մելիքշահ սուլթանը խաղաղասեր գտնվեց, որից «թագավորական պատվով մեծարվում էր Սենեքերիմը, որը եւ երեւելի փառքով թագավորեց Բաղաց տանը, ընդարձակեց իր տերության սահմանները» (Օրբ.): 1092-ին այդ սուլթանը մեռավ, եւ Սենեքերիմն այլեւս վստահելի չէր: Երկու տարի հետո Էմիր Փադլունը դավադրաբար սպանեց Սենեքերիմին Հին Կապանում, սկսեցին դառն ու դժնդակ տարիները: Բաղաբերդին հարեւանող Հին Կապանը շրջապատեց Բեկիարուխի Չորթման զորապետը: «....Բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր....» (Օրբ.): Դա 1103-ի աշնանն էր, եւ Այունիքի կառավարիչներն էին մանկամարդ Գրիգորն ու իր թագուհի մայր Շահանդուխտը: Այունյաց թագավորության մայրաքաղաքն ավերվեց, «կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ» (Օրբ.): Միջնադարյան դիվանագիտության սնանկությունն ակներեւ էր: «Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը, եւ այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ» (Օրբ.) եւ 1170-ին, Բաղաբերդի անկմամբ, վերացավ:

Տաթեւի վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին (1087 թ.), որ կառուցվեց Շահանդուխտ Բ թագուհու հովանավորությամբ և Այունյաց թեմի առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոսի ջանքով:

...Փոխարեն Գթոց նորա... Մեր միջնադարյան թագուհին մշակութամետ էր, սակայն հայտնվեց ռազմամոլության դարաշրջանում: Բոլորը չէ, որ Շամիրամ են, եւ ընդհանուր առմամբ կանացիությունը ներհակ է ռազմատենչությանը: Շահանդուխտ թագուհին Քրիստոսի անհագուրդ ծառայի մարմնացում էր: Նվիրատվություններ արեց Տաթեւի վանքին եւ Վահանավանքին, ձեռնարկեց-կառուցեց չորս եկեղեցի: Մինչեւ մեր ժամանակները կիսականգուն պահպանվել է Վահանավանքի մայր տաճարից մոտ 50մ դեպի հարավ գտնվող Սբ Ածն եկեղեցին՝ կրկնահարկ ու պատշգամբով, որի ներսում՝ բեմին հարող հարավային պատին, արձանագրված է.

Ի:ՇԼԵ: ԹՎԱԿԱՆԻՍ ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱԻ ԱՂՎԱՆԻՑ

ԹԱԳԱՒՈՐԻ ԵՎ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ ՎԱՍՆ ՈՉ

ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ ԸՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՒ ՔՈՅՐՍ ԻՄ ԿԱՏԱՅՍ

ՇԻՆԵՑԱՔ ԶՍԲ ԱԾԱԾԻՆՍ ՓՈԽԱՐԵՆ ԳԹՈՑ ՆՈՐԱ ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄՔ

ՆՄԱ ԿԱՏԱՐԵՆ ԶՍԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՒ ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ԶՄԵԶ

ԿՑՈՐԴ ԱՐԱՍՑԵՆ ԱՆՄԱՀ ՁԵՆՄԱՆՆՔԻ:

Ակներեւ՝ Սբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1086 թվականին՝ Վահան Նախաշինողի հիմնարկեքից 175 տարի հետո:

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ (ԳՐԻԳՈՐՅԱՆ)
«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»,
15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ, № 30 (271)

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Կապանի ծննդյան վկայագիրը
ԱՌԱՋԻՆ ԳՐԱՎՈՐ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

... Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել:
Տեսիլքով մի լուսավոր տղամարդ երեւաց, որ քայլում էր գետափով, գավազանը կախել էր ջուրը, եւ գավազանի ծայրից դուրս էին գալիս ձկների անբավ ու անհամար խմբեր. ինքն էլ նրան բացատրում էր որսի հանգամանքները: Եվ այսպես վանքին արտոնվեց գետի ձուկ որսալ:

Մ.Թ. 5-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ, ԸՍՏ ՍՏ.ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԻ

Պատմական Կապան քաղաքի տեղադրության հարցի շուրջ

...Եթե չհաշվենք Նախիջեւանը, որը երբեմն կարճ ժամանակներով մտել է Սյունիքի մեջ, ապա ամբողջ Սյունիքում Կապանը միակ քաղաքն էր:

Կապանը գտնվում էր այժմյան Ղափան-Քաջարան խճուղու կիսաճանապարհին՝ Աչըղլու գյուղի դիմաց՝ Ողջի (հնում Կապան) գետի բարձրադիր աջ ափին, որը տեղացիներն անվանում են «Տանձուկենջ»:

Կապանի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 5-րդ դարի վերջերին: Ըստ երեւույթին, այդ ժամանակ Կապանը սովորական մի բնակավայր էր: 10-րդ դարից սկսած՝ մատենագիրների մոտ Կապանն արդեն հիշատակվում է որպես քաղաք: Կապանը 10-րդ դարի վերջին (հավանաբար 998-1001 թթ. սահմաններում) դարձել էր Սյունիքի թագավորության մայրաքաղաքը:

Կապանն ուներ մի շարք առավելություններ: Նրա արեւմտյան կողմում գտնվող Բաղաբերդ եւ Բաղակու քար բերդերը ապահովում էին քաղաքի անվտանգությունն արեւմտյան եւ հյուսիսարեւմտյան կողմերից: Քաղաքի հյուսիսային կողմով անցնում էր Կապան գետը, որն այդ մասում առաջացրել էր խոր կիրճ՝ խիստ զառիվեր եւ անտառապատ լանջով, իսկ դիմացը մի քանի հարյուր մետրի հասնող ժայռ էր: Հարավային կողմում ձգվում էին Արեւիքի բարձրաբերձ եւ ժայռոտ լեռները, որոնք անմատչելի էին դարձնում քաղաքը հարավային կողմից: Այդ է եղել պատճառը, որ քաղաքը հարավային եւ հյուսիսային կողմերից հարկ չի եղել պարսպապատելու, իսկ արեւմտյան կողմից նա ապահովված էր Բաղաբերդ եւ Բաղակու քար ամուր բերդերով: Համեմատաբար դյուրին էր քաղաք մտնելը արեւելյան կողմից, այդ պատճառով էլ քաղաքի այս մասը պարսպապատված է եղել: 1103 թ. Կապանն ավերման է ենթարկվում սելջուկների կողմից: Այնուհետեւ Կապանը մի քանի դար շարունակում է իր գոյությունը, բայց արդեն իբրեւ ոչ թե քաղաք, այլ սովորական բնակավայր: Կապան անունը հետագայում պահպանվեց Ղափան ձեւով, որն արդեն շրջանի, երկրի անուն է եւ տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր մեծություններ:

Կապանը եղել է ֆեոդալական ոչ մեծ քաղաք: Նրա բնակչությունն ըստ երեւույթին միատարր չի եղել: Նա ուներ հրեաների հատուկ թաղ:

Վաղեմի Կապան քաղաքից այժմ շատ քիչ բան է պահպանված: Նրա արեւելյան կողմի պարսպի հետքերը հազիվ նշմարվում են, իսկ աշտարակներից նկատելի են չորսը, որոնցից մնացել են միայն հիմքերը՝ 2-2,5 մետր բարձրությամբ: Աշտարակների հետքեր կան նաեւ քաղաքի արեւմտյան կողմում: Ավելի աննախանձելի է բուն քաղաքից պահպանված ավերակների վիճակը: Քաղաքի բռնած տարածության գրեթե կեսը, դարերի ընթացքում հերկման ենթարկվելով, վերածվել է միապաղաղ դաշտի, իսկ մյուս կեսը ծածկված է խիտ եւ անանցանելի անտառով:

ԹԱԴԵՎՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

ՌՈՄԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Ղափան

Երկնքին մոտ - անտառներից
Դեղին լեռներ գահավիժող,
Նրանց դեղին պաստառները
Ես տեսնում եմ - թե՛ արթմնի,
թե՛ երազում:

Դեղին գույները չեն մեղմվում
Աշնան ճերմակ սավաններից,
Որ հասել են լեռնակողեր:
Լվացքատան տոթ կա այստեղ
Ու սավաններ շոյող քամի:

Քաղա՛ք, քարե քո պատերի,
Քո ուղղաձիգ սահմանների
Ներսն եմ թողել - ինձ ու սերս:

Երկրիս քարե սրտում - քաղաք:
Քաղաք - որ ձույլ երակներով
Ամուր կառչել է այս երկրի
Առողջ սրտին - մոլիբդենե եղունգներով –
Ու պղնձե կաթ է ծծում - կաթ առնական:

Իմ մանկության քաղաքն ահա –
Խստադեմ է ու մանկադեմ:
Եվ պղնձե մարմին ունի - կանաչ մազեր:
Երկու ճամփա գիտի միայն -
որ մանկանը
Հեռացնում են - տանում հեռու,
Այլ աշխարհներ –
Մի զույգ այրվող, երկաթյա աչք,
Նաեւ մի հին,
Մի տաք երկինք:

Որի աստղերը ցերեկով են երեւում:
Իսկ գիշերը - դեղին գույներն
Արտացոլվում են լեռներից –
Թե՝ երկնքից:

Քո երկինքը կայծակներ ու օրհնանքներ է
Կախված ծեր Խուստուփի մի հայացքից:

Ես հիշում եմ լեռն առնական
Ու ծածկում եմ հոգիս մի տաք
Կափարիչով,
Որ դրված էր իմ քաղաքին,
Որպես տանիք, որպես երկինք,
Որպես սահման –
Իմ սիրո եւ հիշողության:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Կապանի համառոտ ֆիզիկաաշխարհագրական բնութագիր

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Ֆիզիկաաշխարհագրական դիրքի առումով Կապան քաղաքը գտնվում է ՀՀ հարավարեւելյան մասում՝ ուղիղ գծով մայրաքաղաք Երեւանից 190 կմ հեռավորության վրա: Կապանի աշխարհագրական կոորդինատներն են հս-լ 39 աստիճան 10 րոպե, հար.-լ 46 աստիճան 15 րոպե: Դա հյուսիսային մերձարեւադարձային աշխարհագրական գոտու տարածքն է: Կապանը հասարակածից հյուսիս է մոտ 4300 կմ, իսկ հյուսիսային բեւեռից հարավ՝ 5700 կմ: Նրա հեռավորությունը մոտակա արեւադարձից 1700 կմ է, իսկ սկզբնական միջօրեականից՝ 3700 կմ: Դա երրորդ ժամային գոտու տարածքն է:

Կապան քաղաքը ջրավազաններից զգալի հեռավորության վրա է: Նրանից դեպի արեւելք՝ մինչեւ Կասպից ծով, հեռավորությունը մոտ 200 կմ է, դեպի հյուսիս-արեւմուտք՝ մինչեւ Սեւ ծով՝ մոտ 500 կմ, դեպի հարավ-արեւմուտք՝ մինչեւ Միջերկրական ծով, 1000 կմ եւ դեպի հարավ՝ մինչեւ Պարսից ծոց՝ 900 կմ:

Լեռնագրական տեսակետից Կապանը Փոքր Կովկաս լեռնահամակարգի հարավարեւելյան մասում է՝ ՀՀ հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաներ եւ միջլեռնային գոգավորություններ մարզի Զանգեզուրի ենթամարզում: Դա Ողջիի գոգավորության այն հատվածն է, որտեղ Ողջի գետին են միախառնվում նրա վտակներ Վաչագանը, Կավարտը, իսկ արեւելյան եզրում էլ՝ Աջանանը:

Ողջիի գոգավորության միջնամասն է սա, որը նաեւ Կապանի գոգավորություն է կոչվում: Կապանի գոգավորությունը եզրավորված է Խուստուփ-Կատարի լեռնաշղթայից անջատված թմբաշարքերով: Գոգավորության հարավային մասը կազմում են Գեղանուշի, Բաղաբուրջի, Վաչագանի եւ Բեխի հյուսիսահայաց հողմակողմ եւ խոնավ, անտառատափաստանային բուսականությամբ ծածկված միջին բարձրության լեռնալանջերը՝ իրենց թիկունքում ունենալով Խուստուփ լեռան (3208) վեհաշունչ տեսարանը:

Կապանի գոգավորության հյուսիսային ձախափնյա մասը կազմում են Կավարտի եւ Բարաբաթումի հարավահայաց (գյուղեր) լեռնաչորասեր (ֆրիգանոիդ) բուսականությամբ ծածկված միջին բարձրությամբ լեռնալանջերը:

Այսպիսով՝ Կապան քաղաքը տեղադրված է Ողջի գետի միջին հոսանքներում, նրա Վաչագան եւ Կավարտ վտակների աջափնյա ու ձախափնյա նեղ դարավանդներում, դրանց հարակից 30-40 աստիճան թեքության լեռնալանջերին, 700-1000 մ բացարձակ բարձրությունների վրա: Տարածքի ընդհանուր թեքվածությունը արեւմուտքից արեւելք է:

Երկրաբանական տեսանկյունից Կապանի գոգավորությունը, որի ցածրադիր մասերում Կապան քաղաքն է, Յուրայի դարաշրջանի (մոտ 170 մլն տարի առաջվա) հրաբխային-նստվածքային ապարաշերտերից կազմված ծալքաբեկորավոր կառուցվածքներ է: Դարավանդները ծածկված են ավելի երիտասարդ՝ Անթրոպոկեն ժամանակաշրջանի (մոտ 1 մլն տարի առաջվա) գետաբեկորային կուտակումներով: Հարակից լեռնալանջերում, երկրակեղեւի ճեղքերով, լեռնակազմությունների ժամանակ (30-40 մլն տարի առաջ) կատարվել են հրաբխային ներժայթքումներ: Դրանք հանգեցրել են Կավարտի, Կապանի պղնձի եւ Շահումյանի բազմամետաղային հանքավայրերի առաջացմանը:

Ըստ երկրաշարժավտանգության՝ Կապան քաղաքն ընկած է չափավոր 7-8 բալ ուժգնության սեյսմիկ գոտում:

Կապանն ունի չափավոր շոգ վերընթաց տիպի կլիմա: Դա պայմանավորված է նրա՝ մերձարեւադարձային գոտում գտնվելով, ոչ մեծ բացարձակ բարձրություններով (700-800) եւ ծովափերից ունեցած զգալի հեռավորություններով: Արեգակի բարձրությունը հորիզոնական հարթության նկատմամբ տատանվում է 24,5 աստիճանից (դեկտեմբերի 22-ի կեսօրից) մինչեւ 74,5 աստիճան (հունիսի 22-ի կեսօրին): Դա ձմեռվա համար ցածր չէ, իսկ ամառվա համար զգալի է: Արեւի ճառագայթների անկման անկյան փոփոխման հետ կապված՝ տարվա ընթացքում փոփոխվում է նաեւ գիշեր-ցերեկվա տեւողությունը: Ամենաերկար ցերեկը հունիսի 22-ին է՝ տեւելով 15 ժամ 30 րոպե, որը նաեւ ամենակարճ գիշերն է՝ 8 ժամ 30 րոպե: Կապանում ամենակարճ ցերեկը դեկտեմբերի 22-ին է՝ 9 ժամ 30 րոպե: Սա նաեւ ամենաերկար գիշերն է՝ 14 ժամ 30 րոպե տեւողությամբ:

Կապանը ամպամած օրերի թվով (տարեկան մոտ 60 օր) ՀՀ քաղաքներից զիջում է միայն Իջեւանին: Այդ պատճառով արեւափայլի միջին տարեկան մեծությունը բարձր չէ (2450 ժամ/ տարի):

Տարվա եղանակները Կապանում լավ են արտահայտված: Դրանք իրենց օրացուցային պահից 10-15 օրով ետ են ընկնում: Միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +12 աստիճան C:

Ամառը Կապանում համեմատաբար երկարատեւ է, չափավոր չոր ու շոգ, հատկապես հուլիս-օգոստոս ամիսներին: Առանձին տարիների տեւական շոգ եւ

ԿԱՊԱՆ

Սյունիքի մարզկենտրոն: 2017 թվականի նոյեմբերից, իր մեջ միավորելով տարածաշրջանի գյուղական համայնքները, դարձել է Կապան խոշորացված համայնք: Գտնվում է երկրի հարավ-արևելքում, Երևանից 320 կմ հարավ-արևելք, Ողջի գետի ափին, Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին, ծովի մակարդակից 910 մ բարձրության վրա, մշտական բնակչությունը 2015 թվականի դրությամբ՝ 42 700: Քաղաքի անունը ծագում է «կապան» հասարակ անունից, որ նշանակում է «կիրճ, նեղ անցք երկու լեռների միջև», նաև «կիրճի նեղ մասում եղած ամուր դուռ»:

չոր երաշտային եղանակները կարող են ընդմիջվել որոտով ու կայծակով, տեղատարափ անձրեւներով, երբեմն էլ կարկտահարությամբ: Տարվա ամենատաք պահերը Կապանում հուլիս եւ օգոստոս ամիսներն են, երբ օդի օրական միջին ջերմաստիճանը բարձրանում է +23 աստիճան C-ից, իսկ երբեւիցե դիտարկված առավելագույն ջերմաստիճանը 39 աստիճան C է: Ամառային չոր, շոգ ու փոշոտ եղանակները պայմանավորված են հարավից՝ Իրանական բարձրավանդակից ներթափանցող արեւադարձային ցամաքային օդային զանգվածներով:

Ձմեռը Կապանում մեղմ է, թույլ եւ անկայուն ձնածածկոյթով: Առաջին ցրտերը երբեմն պատահում են նոյեմբերի սկզբներին, բայց իրական ձմեռը հունվար-փետրվար ամիսներին է, երբ օդի միջին ջերմաստիճանը մոտենում է 0 աստիճան C-ի: Երբեւիցե գրանցված նվազագույն ջերմաստիճանը -27 աստիճան C է: Ի տարբերություն ամառային կայուն եղանակների՝ ձմեռը Կապանում փոփոխական է. արեւոտ օրերին հերթափոխում են մառախլապատ, ցուրտ եւ ձնառատ օրերը: Դա պայմանավորված է Կենտրոնական Ասիական օդի բարձր ճնշման մարզի (անտիցիկլոն) եւ միջերկրածովյան ու արեւմտաեվրոպական օդի ցածր ճնշման մարզի (ցիկլոն) փոփոխական ազդեցություններով:

Գարունը տեւական է, ամպամած, հաճախ մառախլապատ ու խոնավ: Գարնան սկիզբը ցուրտ է: Վերջին գարնանային ցրտահարությունները լինում են մարտի վերջից ապրիլի վերջն ընկած ժամանակահատվածում: Առավել խոնավ են մայիս-հունիս ամիսները: Անձրեւներն այդ ժամանակ տեւական են ու հորդառատ:

Կապանի աշունը հաճելիորեն տեւական է ու տաք: Առաջին աշնանային ցրտահարությունները կարող են լինել հոկտեմբերի 10-ից դեկտեմբերի սկիզբն ընկած ժամանակահատվածում: Անսառնամանիք օրերի թիվը տարվա մեջ տատանվում է 164-238-ի միջեւ: Ուշ գարնանային եւ վաղ աշնանային ցրտահարությունները զգալի վնասներ կարող են հասցնել գյուղացիական տնտեսություններին:

Տեղումների միջին տարեկան քանակը Կապանում 550-600մմ է: Դրանք առավելապես անձրեւային տեսք ունեն, որոնք լինում են գարնանը եւ աշնանը, իսկ նվազագույնը ձմռանն է՝ ոչ մեծաքանակ եւ ոչ էլ տեւական ձնածածկոյթով: Ողջիի ձախափնյա հատվածում տեղացած ձյունը 1-2 օրից հալվում է, բայց աջափնյա մասում այն կարող է ավելի տեւական լինել: Գարնան վերջին եւ ամռանը թափվող տեղումները հաճախ տեղատարափ բնույթ են կրում, ինչը հանգեցնում է ուժեղ հեղեղումների եւ սելավների առաջացմանը: Դրանք մեկ անգամ չէ, որ ավերածություններ են պատճառել Կապանի ճանապարհներին, շինություններին եւ շրջակա հողատարածքներին: Այդ պատճառով հիշարժան են 1960 թ., 1968 թ., 2006 թ. սելավային ցեխաջրահոսքերը Ողջի, Կավարտ, Վաչագան եւ Աջանան գետավազաններում:

Կապանում տեղումների զգալի մասը պայմանավորված է մի կողմից ամբողջ տարին տիրապետող օդային զանգվածների արեւմտյան հոսքով, իսկ մյուս կողմից գարնանն ու աշնանը դրանց գումարվող՝ Կասպից ծովից փչող օդային հոսանքներով: Վերջիններիս խոնավաբեր ազդեցությունը զգալի է միայն ՀՀ հյուսիսային եւ հարավարեւելյան մասերի հողմահայաց լեռնալանջերին:

Ջրագրական տեսակետից Կապան քաղաքը տեղադրված է Արաքսի ձախակողմյան առաջին կարգի վտակ Ողջիի եւ նրա վտակներ Վաչագան, Կավարտ ու Աջանան գետերի գետախառնուրդի շրջակայքում: Այս գետերն ունեն խառը սնում՝ ձնհալք անձրեւային սնման գերազանցությամբ: Հոսքի ռեժիմն այլ գետերում անկայուն է, հորդացումները պարբերաբար կրկնվում են ապրիլ-հունիս ժամանակահատվածում, իսկ սակավաջրությունը՝ ամռանն ու ձմռանը: Քանի որ արագահոս են այս գետերը (ունեն հունի մեծ թեքություն), ակտիվ է նրանց էրոզիոն գործունեությունը: Հատկապես հորդացումների ժամանակ նրանց տղմուտությունը բարձր է, հասնելով 200-250գ/մ-ի, իսկ Ողջիի տարեկան կարծր հոսքը հասնում է մոտ 70 հազ.տ:

Ըստ ջրառատության՝ Ողջին 2,5 անգամ զիջում է Որոտանին եւ մոտ 4 անգամ ՀՀ ամենաջրառատ գետ Դեբեդին: Կապան քաղաքի տարածքում Ողջի գետի միջին տարեկան ծախսը կազմում է 9,6 խոր.մ/վրկ: Գետը ոռոգիչ, էներգետիկ եւ տեխնիկական ջրամատակարարման դեր ունի:

Ստորգետնյա ներծծումը զգալիորեն զիջում է մակերեւութային հոսքին: Դրա պատճառը մի կողմից մեծ թեքություններն են, իսկ մյուս կողմից՝ ծալքաբեկորավոր ռելիեֆում ջրամերժ ապարաշերտերի գերազանցումը: Վերջին փաստը նպաստում է քաղաքի հարավային մասում սողանքային երեւույթների ակտիվացմանը:

Ողջի գետահովտի մաս կազմող ափամերձ դարավանդներում գետնաջրերի մակարդակը հատկապես գարնանն ու աշնանը զգալիորեն բարձրանում է: Դա հանգեցնում է այդտեղ կառուցված շինությունների նկուղային հարկերի ողողմանը:

Քաղաքի մերձակա տարածքներում քիչ թե շատ նշանակալից աղբյուրային ելքերը բացակայում են, իսկ որոշ սակավաջուր աղբյուրներ էլ ժամանակի ընթացքում մնացել են ճանապարհների եւ շինությունների տակ, մասնավորապես՝ Կապանի կենտրոնում գտնվող հին աղբյուրը:

Լանդշաֆտային տեսանկյունից Կապանի տարածքը չոր լեռնատափաստանային եւ լեռնանտառային վերընթաց գոտիների սահմանն է: Քաղաքի մերձակայքի հողերը հիմնականում լեռնանտառային գորշ եւ դարչնագույն հողեր են, իսկ ավելի ցածրադիր մասերում նաեւ լեռնաշագանակագույն հողեր կան: Սրանք զգալի հումուս պարունակող եւ ոռոգման դեպքում բարձր բերք ապահովող հողեր են, որոնց վրա մշակվում են հացահատիկ, բանջարաբոստանային մշակաբույսեր, անասնակեր, խոտաբույսեր, նաեւ խաղող ու ջերմասեր պտղատուներ՝ թթենի, ընկուզենի, թզենի եւ այլն:

Կապանի հարավային մասում ձգվող լեռների լանջերն անտառածածկ են: Ավելի ցածրադիր մասերում անտառը վերափոխված է վարելահողերի, խոտհարքների եւ արոտավայրերի: Գետահովիտների ամենացածրադիր մասերը զբաղեցված են բանջարանոցներով, այգիներով, մոշուտներով:

Համեմատաբար ավելի աղքատ է Ողջի գետի ձախափնյա մասի բուսածածկը: Այն ներկայացված է լեռնաչորասեր (ֆրիգանոիդ) բուսականությամբ, որը տեղտեղ վերածվում է փշոտ մացառուտների՝ կազմված մասրենու, մոշի, գաչի, սզնու եւ այլ թփերից: Գարնանը ժողովրդի կողմից «գյունե» կոչվող այդ լեռնալանջերին տարածվում են կարճակյաց խոտաբույսեր, բազմատեսակ ծաղիկներ, որոնց մեծ մասը շոգից ամառվա սկզբին չորանում է:

Լեռնային լանդշաֆտներին բնորոշ նյութի միգրացիայի եւ կուտակման բնույթի տեսանկյունից Կապան քաղաքի տարածքն ընդգրկում է տարանցիկ գոտու ցածրադիր մասը: Այն մի կողմից կրում է ավելի վեր տարածվող ինքնավար լանդշաֆտների ազդեցությունը, որովհետեւ հոսող ջրերի, օդային զանգվածների ծանրության ուժերի ազդեցությամբ անընդհատ վերից վար նյութի տեղաշարժ է կատարվում: Բայց մյուս կողմից էլ այս տարածքն իր ազդեցության տակ է պահում ավելի ցածրադիր՝ ենթակա գոտու լանդշաֆտներին, որովհետեւ տեղափոխվող նյութերի մի մասը ժամանակի ընթացքում շարունակում է իր շարժը՝ իրեն միացնելով նաեւ տեղում առաջացած նյութերը:

Կապանի՝ նման տարանցիկ գոտում գտնվելը պայմանավորում է քաղաքի մի շարք տնտեսական եւ բնապահպանական խնդիրներ, որոնց լուծման համար կարեւոր է նաեւ վերոհիշյալ առանձնահատկությունների հաշվի առնելը:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»,
№ 24-25 (160-161),
10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2008 Թ.

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

«Կապան» տեղանվան ստուգաբանություն

ԳԱՅԱՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Խորհրդավոր, անծայրածիր այս աշխարհը մարդուն զարմացրել, հմայել է դեռ վաղնջական ժամանակներից, ծնվել են տանջող ու չարչարող հավիտենական հարցեր: Քաղաքակրթությունները առաջ են անցել, բայց շատ հարցեր մնացել են անպատասխան: Բազում հիմնախնդիրների մեջ առանձնանում են տեղանունների ստուգաբանությունները: Այդ հարցերին սկսել են պատասխանել դեռ աներևակայելի հեռուներում անհետացող ժամանակներից: Պատասխան են տվել շատ ժողովուրդներ և ամենից առաջ՝ իրենց դիցաբանությամբ: Դիցաբանությունը նաև ժողովրդի աշխարհայացքն է ու մտածելակերպը:

Անշուշտ, տեղանունները սերտորեն կապված են նաև ժողովրդի պատմական անցյալի՝ նրա էթնոգենեզի, այս կամ այն իրադարձության, ավանդությունների հետ:

Էթնիկական տեղաշարժերը, որոնց հետևանքով մարդկանց մեծ խմբեր տեղից տեղ էին շարժվում, նկատելի չափով փոխում էին ժողովրդագրական վիճակը. այդ ցեղերի մի մասը անհետանում էին, մյուս մասը՝ ձուլում կամ ձուլվում տեղաբնիկներին: Որքան էլ այդ ժամանակները հազարամյակների խորքերը ձգվեն, մի բան ակնհայտ է՝ նրանցից յուրաքանչյուրը ինչ-որ հիշատակ է թողել, այդ թվում նաև տեղանուններ:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» առաջաբանում հեղինակները գրում են. «...սխալված չենք լինի, եթե պատմահայր Մովսես Խորենացուն համարենք նաև հայկական տեղանվանաբանության (տոպոնիմիկա) հիմնադիրը»: Պատմահայրը տեղանունների ծագումը բացահայտելու հարցում հիմնականում դիմում է ավանդություններին և իր ժամանակի ավատական վարչակարգով պայմանավորված հասկացություններին: Սակայն քիչ չեն նաև այն անունները, որոնք Մ. Խորենացու ստուգաբանությամբ ուղղակի կապվում են պատմական դեմքերին ու իրադարձություններին, երևույթներին, երկրի հնագույն բնակչության ցեղագրական կազմին: Այս կարգի ստուգաբանություններ հանդիպում ենք թե միջնադարյան, և թե նոր շրջանի հայ պատմագրության մեջ: Այս տեսակետից չգերազանցված օրինակ են Ղ. Ալիշանի թողած մեծածավալ աշխատությունները:

Իրենց գիտական աշխատանքներում Հայաստանի, մասնավորապես Սյունիքի տեղանունների են անդրադարձել գերմանացի ականավոր հայագետ Հ. Հյուբշմանը, Ն. Ադոնցը, Ստ. Լիսիցյանը, Հր. Աճառյանը, Ղափանցյանը, Բ. Հարությունյանը և ուրիշներ:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» հանդիպում ենք մի քանի տասնյակ «Կապան» տեղանունների (բերդեր, գյուղեր, լեռներ, քաղաքներ և այլն): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք գտնվում են հիմնականում լեռնային երկրամասերում (Սյունիք, Կիլիկիա և Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններ):

Նույն բառարանի էջ 946-ում կարդում ենք. **«Կապան,... Խաբան, Խափան (բերդաքաղաք Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ձորք կամ Կապան գավառում...) Կապան նշանակում է լեռնանցք»:**

Կապան անունը հայ մատենագրության մեջ հիշտակվում է 5-րդ դարի վերջին քառորդին վերաբերող մի պատմության մեջ, որ Ստ. Օրբելյանը վերցրել է Հովհաննես եկեղեցականից. **«Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը...»** (Ստ. Օրբելյան «Սյունիքի պատմություն», 1986 թ., Երևան, էջ 118): Նույն աշխատության մեջ պատմագիրը, թվարկելով Սյունիքի գավառները, գրում է. **«Տասներորդ՝ Ձորք գավառ, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոց, և այժմ կոչվում է Կապան»** (նույն տեղում, էջ 70):

Կապան գավառը Սյունիքի ամենալեռնոտ շրջանն է, անդնդախոր, բարձրաբերձ լեռների մի աշխարհ: Անունն էլ Կապան (լեռնանցք, կիրճ) կամ Ձորք է կոչվել բազմաթիվ ձորերի և լեռնանցքների պատճառով: Կապան անունը ծագում է կապան հասարակ անունից, որ նշանակում է **«կիրճ, նեղ անցք երկու լեռների միջև»,** նաև՝ **«կիրճի նեղ մասում եղած ամուր դուռ»:** Այդ իմաստը հենց պատշաճում է գավառի տեղանքին: Ստ. Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության (Երևան, 1986) ծանոթագրության մեջ Ա. Աբրահամյանը գրում է, որ այդ անունն արտացոլում ունի Ղափան անվան մեջ, իսկ վերջինս արդյունք է հետագայի ժողովրդական ստուգաբանության՝ Կապան-Ղափան: Աղավաղումով կապվել է թուրքական ղափան բառի հետ՝ «մեծ կշեռք» նշանակությամբ: Այս մեկնաբանությունը շատ գիտնականների կարծիքով շինծու ստուգաբանության առիթ է տվել թուրք գիտնականներին:

Մեծանուն գիտնական Ստեփան Լիսիցյանը «Զանգեզուրի հայերը» արժեքավոր աշխատության մեջ, անդրադառնում է ժողովրդական տոներից մեկին՝ Վարդավառին, որը նվիրված էր լեռների գագաթների պաշտամունքին: Վերջինիս հետ զուգորդվում է նաև լեռնանցքների ոգիների պաշտամունքը: **«Մի նեղ կածան տանում է ներքև, քարից քար, մինչև որ ուխտավորը հասնում է մի տեղ, որտեղ գրեթե ժայռի երեսին փարվելով՝ ստիպված է լինում քայլերը զգուշությամբ դնել ժայռակողի մեկ դուրս ցցվածքից մյուսին... Այդ կապավ կարող էին անցնել միայն անմեղները»** (նշված աշխատություն, էջ 281):

Անշուշտ, լեռների պաշտամունքը ինչպես Հայկական լեռնաշխարհում առհասարակ, մասնավորապես Սիսական երկրում, կապվում էր վտանգի ժամանակ պաշտպանվելու մարտավարության հետ: Մարդը իր հույսը դնում էր ժայռերի գրեթե ուղղաձիգ կողերի անվերելանելիության վրա: **«Անշուշտ, դարերի ընթացքում անհրաժեշտությունը դրդած պիտի լինի այդ պաշտպանական կառուցումների մեջ ընդհանուր նպատակներով շաղկապված սիստեմ հաստատելու և այդպիսով փոխադարձ օգնությունը դյուրացնելու: Ապագայի մանրազնին ուսումնասիրությանն է վերապահվում Զանգեզուրի զանազան ձորերում, հովիտներում, լեռնալանջերին, լեռնագագաթներին հայ բնակչության ինքնապաշտպանության միջոցին գրաված դիրքերի նկարագրությունը և նրանց մեջ մի ժամանակ հաստատված փոխադարձ կապակցության դրսևորումը»,** – գրում է մեծանուն ազգագրագետը (Ստ. Լիսիցյան, «Զանգեզուրի հայերը», Երևան, 1969 թիվ, էջ 40):

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Գահանիստ Կապանի հոգևոր կենտրոնը

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վահանավանքի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ այն Սյունիքի գահերեց և գահակալ իշխանների (նախ՝ Ձագիկյանների իշխանական տան) նստավայր, գահանիստ, արքունանիստ, ապա՝ Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանի գլխավոր տաճարն էր: Հարկ է նկատի առնել նաև, որ Վահանավանքի ծնունդը, որքան էլ Վահան Նախաշինողը պատճառներ ունենար կառուցելու համար, պայմանավորված էր քաղաքական իրավիճակով ու դրդապատճառներով: 9-րդ և 10-րդ դարերի սահմանագծում սյունիքյան իշխանության քաղաքական կենտրոնը տեղափոխվում էր Բաղք, որի գլխավոր ոստանը Կապանն էր: Ուրեմն՝ Կապան քաղաքում կամ Կապան քաղաքի անմիջական մերձակայքում, ժամանակի ավանդակարգին համապատասխան, պետք է լիներ նաև Աստծո տաճար, մանավանդ որ մերձակայքում այդժամ նշանավոր՝ գահանիստ քաղաքին պատշաճող, տաճար չկար (Երիցավանքի փառքը մնացել էր անցյալում, իսկ Տանձափարախը նման առաքելություն չէր կարող ստանձնել): Այդպես էլ ծնվեց Վահանավանքը, որի **«կալվածքի սահմանը հասնում էր մինչև քաղաքի պարսպի արտաքին պատը»** (Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան -1966, էջ 121):

Որքան էլ բազմազան են ու հակասական Կապանի (ինչպես և Բաղաբերդի) վերաբերյալ (նաև տեղորոշման ու ավերման հանգամանքների մասին) մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադարձ կատարել Կապանի մատենագիտությանը:

Կապանի պատմության համար գլխավոր սկզբնաղբյուրը եղել և մնում է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» կոթողային գործը: Այսպես՝ **«Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել»** (նշված աշխ. էջ 118): Այդ գրքի մի ամբողջ հատված էլ (գլուխ ԿԱ) նվիրված է Կապանի ավերման թեմային:

Կապան քաղաքի ավերման մասին տեղեկություններ է հաղորդում նաև Վարդան Վարդապետը (Հաւաքումն պատմութեան, էջ 146-147). **«Հինգ հարյուր քսաներեք թվին (1094թ.) Գանձակի Փատլուն ամիրան Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավին Առանի ամբողջ զորքով ուղարկեց Բաղքի ու Կապանի (կիրճի) անառիկ ամրոցները: Նրանք խաբեությամբ մուտք գործեցին այնտեղ և սպանեցին հայկազուն Սենեքերիմ արքային, որովհետև այնտեղի թագավորները հայեր էին: Բայց (թագավորությունը) չվերացվեց մինչև երկու անզավակ եղբայրների՝ Սմբատի ու Գրիգորի վերջին օրերի դեպքերը»:** Վարդան

↘

Լինելով լեռներով ագուցված՝ կապված երկիր՝ Կապանը մշտապես ծուղակ է եղել թշնամու համար: **«Մեր հայրենի եզերքը կապել է նրա (իմա՝ թշնամու) առաջխաղացումը:**

Առ այսօր տեղացիների խոսվածքում կան Սուրուն կապ, Օխչու կապ, Գեղվա կապ, Հուշութին կապ ու նման այլ տեղանուններ» (Ռ. Գրիգորյան, «Կապանա տուն», էջ7):

Խոսելով Կապան քաղաքի կառուցման տեղի մասին՝ Ստ. Լիսիցյանը մատնացույց է անում Ջրախոր գյուղը՝ **«... որտեղ կառուցված էր Կապան քաղաքը, գետահովտի նեղացող մասում, կապելով երթևեկությունը գետի հոսանքով վեր ու վար: Այդ հեռուները, մանավանդ, լավ երևում են Ղըրղալայի գլխին բարձրացող աշտարակի վրայից՝ երևում է Բաղաբերդը, որի միջոցով հնարավոր էր, պայմանական նշաններով և այլ ձևերով, կապ պահպանել և՛ կենտրոնական հիմնական ամրոցի, և՛ ավելի խորը սփռված դիրքերի վրա»** (Ստ. Լիսիցյան, նշված աշխատություն, էջ 41): **«Ողջի (Օխչի) գետի հովիտն այդտեղ նեղանում է,** – շարունակում է գիտնականը,- **լանջերը ստանում են զառիթափ ապառաժների բնույթ, ամրություններ իսկ, որ «կապում են» կիրճը, հարավում ընդհուպ կպչելով քարաժայռերին, իսկ հյուսիսում վերջանալով արագավազ, փրփրալի գահավիժող գետի կտրած ափին»:**

Այսպիսով, հստակ երևում է, որ տեղանունն առնչվում է կապ, կապվել բառերի հետ:

Ըստ Ս. Ումառյանի՝ Բաղք և Կապան բառերը նույնիմաստ են. Բաղք տեղանունը ստուգաբանելով՝ մեր հայրենակիցն այն կապում է բալ հիմքի հետ, որը հնդեվրոպական ծագում ունի և նշանակում է «բարձր, լեռնային երկիր»: Մի շարք ուսումնասիրողների կարծիքով Բաղք տեղանունն ունի ցեղային ծագում: Այնուամենայնիվ, դժվար է ընդունել միանշանակ տարբերակ, որովհետև խնդրի արմատները գնում են հազարամյակների խորքերը, ու դրանց վրայով բազում ջրեր են հոսել: Այս հարցի վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել մեկ այլ տեսակետ. պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանն իր «Վահանավանք» պատմահնագիտական ուսումնասիրության մեջ գրում է. **«Էթնոնիմների և տոպոնիմների առաջացման վարկածներն ու տեսակետները կարելի է հաստատագրել միայն մեր դասական լեզվի ատաղձն ուսումնասիրելով, հայոց մի քանի տասնյակ բարբառների, ենթաբարբառների, տեղական խոսվածքների մթամած շերտերը լուսաբանելով: Չի կարելի ամեն մի անհասկանալի եզրույթ ներկայացնել լոկ «էթնիկական ծագմամբ»** (Գր. Գրիգորյան, Վահանավանք, Երևան 2007, էջ 96):

Թե հետագայում ինչպես կզարգանան այս տեսակետները, կամ թե ինչ նոր վարկածներ առաջ կքաշվեն, թողնենք գիտնականներին: Մի բան ակնհայտ է. կապանցին պատմական-աշխարհագրական, ազգագրական, մշակութային ու մեծագույն սիրո կապերով կապված է իր հայրենի եզերքին՝ Կապանը համարելով Աստծո շնորհ, մեծ աշխարհի իր անկյունը:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»,
№ 24-25 (160-161),
10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2008 Թ.

Վարդապետի և Ստ. Օրբելյանի վկայությունների միջև, ինչպես տեսնում եք, կան տարբերություններ: Վարդանի վկայությամբ Կապանն ավերվել է Գանձակի Փատլուն ամիրայի հրամանով՝ Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավի կողմից, 1094 թ.:

Կապան քաղաքի թեման հետաքրքրել է ճանաչված պատմաբան Բաբկեն Առաքելյանին: «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում» (Երևան, 1958թ.) աշխատության մեջ նշում է. **«Հնում Կապանը, ինչպես երևում է, եղել է բերդ, որը Ստեփանոս Օրբելյանը նույնացնում է Բաղաբերդի հետ, թեև նույն հեղինակի մոտ, այլ էջերում, Բաղաբերդը և Կապանը նշվում են իբրև տարբեր բնակավայրեր: ...Հենց այդ ժամանակներում էլ՝ 9-րդ դարավերջին և 10-րդ դարասկզբին, Կապանն աճում, քաղաք է դառնում: Այստեղ նկատելի շինարարություն է կատարվում: Կապանը դարձավ Սյունյաց թագավորության մայրաքաղաք, որի անունով Սյունյաց թագավորությունը կոչվում էր նաև Կապանի թագավորություն»** (նշված աշխ. էջ 90-91): Բաբկեն Առաքելյանը նշում է նաև՝ **«Հայաստանի միջնադարյան քաղաքների մեծագույն մասն առաջացել է բերդ ունեցող ավաններից՝ բերդավաններից, բերդի առջև փռված ավանների աճի ու արհեստագործության և առևտրի կենտրոն դառնալու շնորհիվ: Ավելի արագ աճում ու քաղաք էին դառնում մանավանդ այն բերդավանները, որոնք գտնվում էին առևտրական ճանապարհների վրա և հանդիսանում էին (կամ ժամանակի ընթացքում դառնում էին) ֆեոդալական մանր ու մեծ իշխանությունների կենտրոններ: ...Նման ձևով է քաղաք դարձել նաև Կապանը»** (նշված աշխ. էջ 121-122): Հեղինակը Կապանը դասել է 10-11-րդ դարերի Հայաստանի միջին մեծության քաղաքների թվին, որի բնակչությունը 7-8 հազարից մինչև 10-12 հազար է թվում:

Տեղին է նշել, որ Կապանի՝ իբրև քաղաքի առաջացումն իրականություն է դարձել նախևառաջ Ձագիկյան իշխանական տան ջանքով ու ձեռներեցությամբ:

Կապան քաղաքին անդրադարձել է Ղևոնդ Ալիշանը «Սիսական» տեղագրության մեջ. **«Աներկբայելի է, որ այս աշխարհի շինության և բնակության սկզբում Բաղակ նահապետը, որից է Բաղաց գավառի անունը, այստեղ հաստատեց կամ կառուցեց իր բույնը՝ Բաղակի քարի վրա, որ հետո Բաղաբերդ կոչվեց, և դարձավ վերջին ապաստանը Սյունյաց իշխանների: ...Եվ նրանց ամուր քաղաքի պատճառով ամբողջ գավառը Կապան անվանվեց 11-12-րդ դարերում և մինչև այժմ էլ նույնպես է անվանվում՝ միայն թե աղավաղ Ղափան ձևով»:** Ալիշանը նույնպես հաստատում է, որ **«Այն ժամանակ Կապան քաղաքը լոկ Բաղաց իշխանի նստավայրն էր և դրանից հետո Սյունյաց նահապետների ոստանը դարձավ»**: **«Մտածում էին այն դարձնել խաղաղ մի վայր, և, հիրավի, սրանից ավելի ապահով վայր չկար, որովհետև ոչ միայն զորավոր էր Բաղաց բերդը, այլև, ինքնըստինքյան, ամուր էր Կապանն ի բնե և արվեստաշեն»:** Ալիշանը, հիմք ընդունելով Ստեփանոս Օրբելյանի երկը, անդրադառնում է Կապանի ավերմանը՝ **«...Չորթմանն իր վրեժը (լուծելու) համար անսպասելիորեն հարձակվեց քաղաքի վրա: Նախ բազմաթիվ հետևակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը և հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպապատված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից, ապա բացեցին քաղաքի դարպասը... Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ: ...Այստեղ մարեց ճրագը...»:**

Կապանին անդրադարձել է նաև անանուն տաջիկ աշխարհագիրը (նկարագրությունը վերաբերվում է 982-93 թթ.): Այդ մասին իմանում ենք Վ.Բարտոլդի «Հուդուդ ալ-Ալամի», Թումանսկու ձեռագիրը, Լենինգրադ-1930, գործից (Վ. Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար), ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր, N 5, 1952, հաղորդում, էջ 79): Քաղաքների մասին խոսելիս «Հուդուդ ալ-Ալամին» նշում է Կաբան քաղաքի մասին, որ «կանաչազարդ քաղաք է, որտեղ մեծ քանակությամբ ընտիր բամբակ է արտադրվում»: Այդ վկայությունը, իհարկե, միանշանակ չի ընդունվել, բայց մասնագետների հիմնական մասը Կաբանը նույնացնում է Կապանի հետ:

Կապան քաղաքը վկայակոչել է նաև արաբ աշխարհագիր Յակուտ ալ Համավին՝ կատարելով նկարագրություններ, չօգտագործելով Կապան անվանումը: Ավելի ուշ ռուս ազգագրագետ, ճանապարհորդ Նիկոլայ Միկլուխո-Մակլայը (1846-88) նկարագրությունից ենթադրել է, որ խոսքը Կապանի մասին է: Իսկ արաբ աշխարհագրի նկարագրություններին կարելի է ծանոթանալ նրա «Աջաիբ ադ-Դունյա» (Աշխարհի հրաշալիքները), «Наука», Москва-1993, գործի

ծանոթագրություններում, էջ 207, ծանոթագրություն 490:

Կապան քաղաքի տեղադրության վերաբերյալ դիտարկումներ է արել Աշոտ Աբրահամյանը՝ Ստ.Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» աշխատության թարգմանության, ներածության, ծանոթագրությունների հեղինակը: Խոսելով Ձորք գավառի մասին՝ նա մասնավորապես նշել է՝ **«...Կենտրոնական քաղաքն էր Կապանը, որից այժմ միայն ավերակների հետքեր են մնացել՝ այժմյան Ղափան քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք: Կապան անունը ծագում է կապան հասարակ անունից, որ նշանակում է «կիրճ, նեղ անցք երկու լեռների միջև», այլև՝ «կիրճի նեղ մասում եղած ամուր դուռ»**: Այդ իմաստը հենց պատշաճում է գավառի տեղանքին: Այդ անունն արտացոլում ունի Ղափան անվան մեջ, իսկ վերջինս արդյունք է հետագայի ժողովրդական ստուգաբանության՝ Կապան-Ղափան: Աղավաղումով կապվել է թուրքական գափան բառի հետ՝ «մեծ կշեռք» նշանակությամբ» (ծանոթագրություն 26): Մեկ այլ ծանոթագրության մեջ (228) Աշոտ Աբրահամյանը նշում է. **«Կապան բնակավայրը (քաղաքը) գտնվում էր այժմյան Ղափան քաղաքից վերև, Ղափան-Քաջարան ճանապարհի միջին հատվածում,**

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Ոչ միայն Վահանավանք (Վահանի վանք), այլև՝ Հովհաննավանք (Հովհաննու վանք)

Ողջի գետի բարձրադիր աջ ափին, այն տեղում, որ տեղացիներն անվանում են «Տանձու լենջ»: Հիշատակվում է 5-րդ դարից: 10-րդ դարում արդեն քաղաք էր և դարավերջին դարձավ Սյունիքի թագավորության կենտրոնը»:

Հիմք ընդունելով «Հուդուդ ալ-Ալամի» հիշատակությունը՝ Հայկարամ Ութմազյանը նշում է, որ Դվին-Պարտավ ճանապարհով **«Սյունիք էին բերվում ոչ միայն Անիից, Դվինից, ինչպես և հեռավոր երկրներից բերված պերճանքի իրեր, արհեստագործության զանազան արտադրանքներ, այլև հենց այդ ճանապարհով, պետք է ենթադրել, Սյունիքից արտահանվում էր տեղական հումքի, հատկապես գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկը»** (Սյունիքը IX-X դարերում, էջ 247):

Բաղք և Կապան տեղանունների ստուգաբանության փորձ է արել Սերգեյ Ումառյանը «Սյունիքը դիցարան» դիտարժան գրքում:

– Բաղք և Կապան անունները նույն իմաստն են արտահայտել, - գրում է հեղինակը (նշված աշխ. էջ 73): – **Գավառանվան հիմքը բալ է, որ լ-ղ հնչյունափոխությամբ դարձել է բաղ: Այս հիմքը հնդեվրոպական ծագում ունի, որը նշանակում է «բարձր», «կապ», «գագաթ»**: ...Այդ անունն էլ հետագայում փոխարինվել է հնդիրանական ծագումով մեկ ուրիշ, բայց նույնիմաստ հիմքով՝ «կապ», որից էլ կապան անունը:

Պրոֆեսոր Թադևոս Հակոբյանը նույնպես ծավալուն անդրադարձ է կատարել Կապան մայրաքաղաքին, թեև որոշ եզրակացություններ վիճելի են: «Սյունիքի թագավորությունը պատմաաշխարհագրական առումով» աշխատության մեջ մասնավորապես նշում է. **«Կապանի ավերումից հետո (1103 թ.) թագավորության մայրաքաղաքը դառնում է Բաղաբերդը: Այդ երևում է նրանից, որ Սյունյաց տան պատմիչը Բաղաբերդի գրավումը հաշվում է թագավորության վերջը»** (նշված աշխ. էջ 114):

Կապան քաղաքի պատմության աղբյուրների մասին հիշատակումները կարելի է շարունակել, բայց բավարարվենք ասվածով:

...Ահա այդ Կապանի հոգևոր կենտրոնը պետք է լիներ և եղավ Վահանավանքը:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»,
№ 30 (271),
15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ.

Ստեփանոս Օրբելյանը Վահանավանքը (Վահանի վանքը) կոչում է նաև Հովհաննավանք կամ Հովհաննու վանք: Երկրորդ անունն օգտագործում են նաև Վարդան Արևելցին, Ղևոնդ Ալիշանը և ուրիշները: Թե ինչու է Վահանավանք կամ Վահանի վանք կոչվում, հասկանալի է՝ **«Վահանն իր անունով վանքը կոչում է Վահանավանք»** (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 217): Խոսքը, իհարկե, Վահան Նախաշինողի մասին է: Իսկ թե ինչու Հովհաննավանք կամ Հովհաննու վանք, առայժմ քննության առարկա չի դարձել: Ստ. Օրբելյանի նշված աշխատության ծանոթագրությունների հեղինակ Աշոտ Աբրահամյանը նույնպես չի անդրադարձել այդ հարցին: Որքան էլ զարմանալի է, հարցը չի քննարկել նաև Վահանավանքի պատմության անզուգական գիտակ, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը: Եվ ինչպես նշում է Ռոբերտ Գրիգորյանը (Էջմիածնցին) իր «Վահանավանքը և կապանյան տեղորոշումների թեականությունը» հոդվածում՝ **«Այս երկվությունը տակավին սպառիչ պատասխան չունի»:**

Սույն հրապարակման մեջ չենք հավակնում պատասխանել այդ հարցին, բայց և չենք կարող մի քանի նկատառում չհայտնել:

Եվ այսպես՝ ինչո՞ւ Հովհաննավանք կամ Հովհաննու վանք:

Նման ձևով վանքն անվանակոչելու համար, անտարակույս, հիմք է հանդիսացել ոմն Հովհաննեսի անունը: Սա, կարծում ենք, անքննելի ճշմարտություն է: Դրանից բխում է հաջորդ հարցը՝ ո՞վ կարող էր լինել Հովհաննեսը, ում անվամբ (Նախաշինող Վահանից զատ) կարող էր կոչվել վանական համալիրը:

Հատկապես հոգևոր գործիչների մեջ (իսկ մեր կողմից փնտրվող Հովհաննեսն ամենայն հավանականությամբ հոգևոր գործիչ է եղել) մինչև Վահանավանքի

կառուցման օրերը շատ Հովհաննես ենք ունեցել, ինչը և արժանացել է Հրաչյա Աճառյանի ուշադրությանը (Հայոց անձնանունների բառարան, հ. 3): Նրանցից մի քանիսին պարտավոր ենք հիշել, քանի որ վանքը կառուցողները կարող էին նրանց նկատի ունենալ: Այսպես՝ Հովհաննես Առաքյալ, ով գրել է մի Ավետարան, երեք կաթողիկե թուղթ և Հայտնության գիրքը: Հովհաննես Մկրտիչ (Հովհաննես Կարապետ)՝ ըստ ավետարանական ավանդության՝ Քրիստոսի գալուստը կանխագուշակող և Հորդանան գետում հրեաներին և Հիսուսին մկրտող մարգարեն է: Հովհաննես Դրասխանակերտցի՝ Վահանավանքի կառուցման ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսն էր՝ (Հովհաննես Ե (898-929 թթ.), պատմաբան):

Վանքը կառուցողները կարող էին նկատի ունենալ նաև Սյունիքի՝ Հովհաննես անունով եպիսկոպոսներին (մինչև Վահանավանքի կառուցման ժամանակները եղած), որոնք հինգն էին: Խիստ անհավանական համարելով Հովհաննես անունով նախորդ չորս եպիսկոպոսի, ինչպես և Հովհաննես Առաքյալի, Հովհաննես Մկրտչի, Հովհաննես Ե կաթողիկոսի անվամբ Վահանավանքը կոչելու վարկածը (պատճառները բազմաթիվ են), ենթադրում ենք, որ նորակառույց վանական համալիրը կոչել են ոչ միայն Նախաշինող Վահանի, այլև Սյունյաց թեմի այդ օրերի գահակալ Հովհաննես Ե-ի անվամբ: Ինչո՞ւ: Նախ՝ գրեթե անհնարին ենք համարում տարբերակը, որ առանց Սյունյաց աթոռի առաջնորդի Վահան Նախաշինողը (որքան էլ Բաղքի գահակալ իշխանի գերդաստանի ներկայացուցիչն էր) կկառուցեր վանական մի հսկա համալիր, որը նաև քաղաքային բնակավայր էր կարծեք: Այնպես որ՝ Վահան Նախաշինողը, ինչպես և Բաղքի իշխանները պետք է ունենային Տաթևի հայրապետանոցի թույլտվությունն ու աջակցությունը, մանավանդ որ Ամենայն հայոց կաթողիկոսի՝ Հովհաննես Դրասխանակերտցու վիճակն այդ ժամանակ աննախանձելի էր (բանտարկություն, թափառական կյանք) և չէր կարող իրական ազդեցություն ունենալ Սյունիքի հոգևոր կյանքի և հատկապես եկեղեցաշինության վրա: Եվ վանքին (և ոչ թե կառուցված առաջին եկեղեցուն), Նախաշինողի հետ մեկտեղ, շնորհվել է թեմի գահակալի անունը, ինչը եղել է երախտագիտության և գնահատանքի յուրօրինակ դրսևորում: Ամենայն հավանականությամբ հենց նա էլ օծել է Վահանավանքը՝ 911 թ. տեղի ունեցած նավակատիքի ժամանակ:

Մեր ենթադրությունը, անշուշտ, քննարկվող հարցին սպառիչ պատասխան չի տալիս, բայց և համարում ենք ճշմարտանման վարկած: Ուստիև՝ երկու խոսք այն մասին, թե ով էր Սյունյաց թեմի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը:

Ըստ Հրաչյա Աճառյանի՝ **«Յովհաննէս Ե եպիսկոպոս Սիւնեաց. հաջորդեց Սողոմոն Բ-ին. նախապէս Տաթևի վանքի փակակալն էր. իր օծումն ստացավ Գէորգ Բ («877-897») կաթողիկոսից և նրա հետ միասին օծեցին Աշոտ Ա թագավորին («895 թ.»): Վերաշինեց Տաթևի վանքը տասնմեկ տարվա ընթացքում և վերականգնեց նրա շարժական այունը: ...Գահակալության թվականը շփոթ է. եթե հետևենք Օրբելյանի ...ժամանակագրության ...Յովհաննէս Ե-ն նստել է 38 տարի, ուստի իր թվականն է 888-926: Սակայն այս թիվը ճիշտ չէ. որովհետև ըստ Օրբելյանի Յովհաննէս Ե-ն օծում է Աշոտին 885 թ.: Ազգապատումը դնում է նրա թվականը «885-918», իսկ Տաթևի շինությունը «895-906 թթ.»: Այստեղ հարմար է 885 թիվը իբրև Աշոտ Ա-ի օծման թվական, բայց Յովհաննէս Ե-ի գահակալության տարին, ըստ Օրբելյանի..., այստեղ իջեցրած է 33-ի»** (Հայոց անձնանունների բառարան, հ. 3, էջ 557-58):

Հովհաննես 5-րդի կյանքին ու գործունեությանը շատերն են անդրադարձել: Եվ բոլոր այդ տեղեկությունները վկայում են, որ Հովհաննես 5-րդ եպիսկոպոսը 9-րդ դարավերջի և 10-րդ դարասկզբի ամենահեղինակավոր հոգևորականներից մեկն է եղել ամբողջ Հայաստանում: Փաստը, որ նրան է վստահվել Բագրատունի առաջին թագավորի՝ Աշոտ 1-ին արքայի օծումը (Գէորգ Բ կաթողիկոսի հետ մեկտեղ)՝ այդ է վկայում: Ոչ պակաս կարևոր է փաստը, որ հենց նրա նախաձեռնությամբ կառուցվեց Տաթևի վանքի Մեծ կաթողիկե եկեղեցին: Հովհաննես 5-րդն էր, ով իր օրերում քաջալերում էր եկեղեցաշինությունը, պայքարում վանական տնտեսության հզորացման համար, ինչի արդյունքում և տարիներ շարունակ թիրախ էր դարձել Ցուրի, Ավելադաշտի, Տամալեկքի և այլ գյուղերի բնակիչների հակաեկեղեցական շարժման ընթացքում:

Վահանավանքի եկեղեցիները

Քանի՞ եկեղեցի է ունեցել Վահանավանքը: Նախ կառուցվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ Վահան Նախաշինողի կողմից, որի նավակատիքը տեղի ունեցավ 911 թ.: Այդ փաստն արձանագրում է Ստեփանոս պատմիչը: 1046 թ. եկեղեցին նորոգվել ու ընդարձակվել է, ինչը հավաստում է պահպանված վիմագիր արձանագրությունը՝ հայտնաբերված 1970 թ.: Ահավասիկ՝ «ԹՎ(ԱԿԱՆԻՆ): ՆՂԵ: (1046). ՈՂՈՐՄԵԱ Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ) Ծ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՎ ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈՒ՝ ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՍՐԱՀԻՍ ԵՎ ԺԱՄԱՏԱՆՆ. ՈՐՔ ՄՏԻ ԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՀՍՈՑԱ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ»: Այս արձանագրությունը, սակայն, տարակարծությունների տեղիք է տվել: Ահա թե ինչ է գրում Գրիգոր Գրիգորյանը. **«Արձանագրության բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ Վահանավանքը կառուցվել է 1046 թ. Սյունյաց իշխանազուն եղբայրների ջանքերով: Սակայն մենք գիտենք, որ առաջին կառուցողն ու վանական միաբանության հիմնադիրը եղել է Վահան Նախաշինող Զագիկյանը... Ուրեմն՝ 1046 թ. հիմնովին վերանորոգվել է Վահանավանքի ողջ համալիրը, և շինել բառը պետք է հասկանալ վերակառուցել, նորոգել, շենացնել իմաստով»** (Վահանավանք, էջ 48-49):

«Շինող» բառի գրիգորյանական

ստուգաբանության հարցում, մինչդեռ, վերապահում ունենք: Ոչ մի բառարանում այդ բառի նման մեկնաբանություն չգտանք: Հրաչյա Աճառյանը, օրինակ, այսպես է ստուգաբանում բառը՝ «կանգնեցնել, շինել, հաստատել, տնկել, կառուցել» (Հայերեն արմատական բառարան, Բ հատոր էջ 527-528):

Բանն այն է, որ Վարդան Արևելցին այլ վարկած է առաջադրում Վահանավանքի կառուցման մասին: Ահա՝ **«Նա շինեց Հովհաննի ամենապայծառ վանքը Բաղաց դղյակի անմատույց ստորոտում...»**:

Պատմիչը նկատի ունի Զվանշիր իշխանի որդի Տեր Վահանին, ում Անանիա Մոկացին ապստամբ Հակոբից հետո եպիսկոպոս ձեռնադրեց, ով հետագայում դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս:

Այսպիսով՝ Վարդան Արևելցու վկայությունը և վերոբերյալ վիմական արձանագրությունը հակասության մեջ են Ստեփանոս Օրբելյանի վկայության հետ: Եվ, այդուհանդերձ, կարելի է եզրակացնել, որ 911 թ. կառուցված վանքը տարիներ հետո վերակառուցվել է Վահան 2-րդի, ապա՝ 1046 թ.՝ Սմբատ թագավորի և իր եղբայր Գրիգորի կողմից:

1086 թ. շինվեց Սբ Աստվածածին կրկնահարկ եկեղեցին, որ գտնվում է մեծ տաճարից (Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց) մոտ 70մ հեռավորության վրա: Այս եկեղեցու կառուցման մասին ևս պահպանվել է վիմագիր արձանագրություն, այն կառուցել է Սյունյաց Շահանդուխտ Բ թագուհին իր քույր Կատայի հետ: Ահա արձանագրությունը՝ «: ՇԼԵ: (1086) ԹՎԱԿԱՆԻՍ. ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԼԱԴՈՒԱԻ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՎ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ (Ը)ՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՎ ՔՈՅՐՍ ԻՄ ԿԱՏԱՅՍ ՇԻՆԵՑԱՔ ՁՍ(ՈՒՐ)ԲԻ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾԻՆՍ ՓՈԽԱՐԷՆ ԳԹՈՑ ՆՈՐԱ. ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄՔԻ ՆՄԱ ԿԱՏԱՐԷՆ ՁՍ(ՈՒՐ)Բ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՎ ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ՁՄԵՁԻ ԿՑՈՐԴ ԱՐԱՍՑԵՆ ԱՆՄԱՀ ՁԵՆՄԱՆՆ Ք(ՐԻՍՏՈ)ՍԻ» (Գ. Գրիգորյան, Վահանավանք, էջ 71):

Սակայն, բոլոր հիմքերը կան պնդելու, որ Վահանավանքում եղել է ևս երեք եկեղեցի (ընդհանուր թվով՝ հինգ եկեղեցի): Սբ Գրիգոր Լուսավորիչ և Սբ Աստվածածին եկեղեցիների մասին գիտենք, կան, վերաշինված են: Բայց ...Շահանդուխտ Բ թագուհին իր քույր Կատայի հետ միասին կառուցել է ոչ թե մեկ, այլ չորս եկեղեցի՝ Սբ Հարություն, Սբ Սիոն, Սբ Աստվածածին, Սբ Նախավկա: Ահա արձանագրությունը, որի ստույգ թվականը հայտնի չէ , որ հայտնաբերվել է ենթադրյալ սեղանատանը՝ «...ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵՎԱԴԱԻ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱԻ ԻԼ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ՝ ՈՐԴՈՅ ԱՇՈՏԿԱՅ Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՄԵՐՈՒՄ ԲԱՁՈՒՄ ԵՎ ԾԱՆՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՍ ԵՎ ՍԻՐԵԼԻ ՔՈՅՐ ԻՄ (ԿԱՏԱ) ՇԻՆԵՑԱՔ ՁԵԿԵՂԵՑԻՔՍ ԻՁՍՈՒՐՈՒԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՎ Ս(ՈՒՐ)Բ ՍԻՈՆ Ի (ՓՐԿ)ՈՒԹԻՒՆ ՄԵՁ ԵՎ ՅԻՇԱՏԱԿ ՅԻԱՒԻՏԵՆԻՑ ԳՐԻԳՈՒՐՈՅ ԵՎ Ս(ՈՒՐ)Բ (ԱՍՏՈՒ)ԱԾԱԾԻՆՆ ԵՎ ՁՆԱԽԱՎԿԱՅՆ Ի ՔԱՒՈՒԹԻՒՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ԻԵՂԲԱՒՐ ՄԵՐՈ ՍԵՆԵՔԱՐԵՄԱՅ ԵՎ ԻՒՐ ՈՐԴՈՅՆ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՊԱՆ ՆԵՐԿԱՅԻՄՍ ԵՎ ԲԱՐԵԽԱՒՍ ՅԱՊԱԳԱՅՍՆ» (Գ. Գրիգորյան, Վահանավանք, էջ 63):

Գրիգոր Գրիգորյանը, սակայն, որոշակիորեն չի ասում, թե կոնկրետ որտեղ են եղել, գտնվել թվարկված եկեղեցիները (բնականաբար, բացի Սբ Աստվածածնից)՝ հարցի պատասխանը թողնելով մշուշապատ: Այդ կապակցությամբ նա նկատառում է արտահայտել դեռևս 1974թ. օգոստոսի 8-ին «Պղնձի համար» թերթին տված հարցազրույցում (հեղինակը հայտնի չէ): Նա նշում է, որ Սբ Նախավկայի տեղադրությունն առայժմ պարզված չէ, բայց հավաստում է Սբ Նախավկա տաճարի գոյությունը, որը «պետք է գտնենք», ինչը հնարավորություն կտա «թեկուզ մտովի կամաց-կամաց վերականգնել Վահանավանքի ամբողջականությունը»:

Պատմական գիտությունների թեկնածու Աշոտ Մանուչարյանի կարծիքով (ով 2011 թ. դեկտեմբերի 8-9-ին զեկուցումով հանդես է եկել Վահանավանքի 1100-ամյակին նվիրված երևանյան գիտաժողովում)՝ **«Աղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով դժվար է որոշել այդ եկեղեցիների տեղադրության հարցը, բայց պետք է ենթադրել, որ դրանք եղել են և՛ Վահանավանքի տարածքում, և՛ նրանից դուրս»:**

Չենք բացառում, այնուամենայնիվ, որ Վահանավանքում հայտնաբերված (վերոբերյալ) արձանագրության մեջ նշված բոլոր եկեղեցիները գտնվել են Վահանավանքի տարածքում: Կարելի է նաև այսպես ձևակերպել՝ այդ արձանագրությունը վկայություն է Շահանդուխտ Բ-ի՝ Վահանավանքում կառուցած եկեղեցիների մասին: Ինչո՞ւ: Եթե այդ արձանագրությունը նպատակ ունենար վավերագրել Շահանդուխտ Բ-ի նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ կառուցված բոլոր եկեղեցիների անունները, ապա կնշեր նաև, ասենք, Տաթևի վանքի արևելյան դարպասի վրա կառուցված Սբ Աստվածածին եկեղեցին (կառուցել են Շահանդուխտ Բ-ն և նրա եղբայր Սենեքերիմը՝ Սյունյաց մետրոպոլիտ Գրիգորի հետ՝ 1087 թ.): Մյուս կողմից՝ այդ եկեղեցու կառուցման մասին (նշված թվականը՝ ըստ Սեդրակ Բարխուդարյանի, վիճելի է) Տաթևի վանքի Սբ Աստվածածին եկեղեցու հարավային պատի արևելյան անկյան մոտ (արտաքուստ) պահպանված արձանագրության մեջ, սակայն, հիշատակված չէ Շահանդուխտ Բ-ի անունը, այլ միայն Սյունյաց եպիսկոպոսի անունը: Ահա՝ «Ի ՇՐՁԱԳԱՅՈՒԹԵԱՆ ՏՈՄԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ: Ժ: ԻՑ ՅՈԲԵՂԻՆԱՑ ԵՎԻ: Լ: ԵՎ: Շ ԹՎՈՑ. ԵՍ ԳՐԻԳՈՐ ԱՄԵՆԱՆՎԱՍՏ ԾԱՌԱ ՔԻ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ ԿԱՆԳՆԵՑԻ ԿԱՄԱՐՔՍԻ ԵՎ Ի ՎԵՐԱ ՁԵԿԵՂԵՑԻՍ ԵՎ ՁՈՐ ԱՅԼ ՇԻՆՈՒԹԻՒՆՍ Է ԵՎ ՈՐ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵ ԻՄ ՏԱՆՍ ԵՎ ԱՐԴԻՒՆՔ ՎԿԱ ԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՎ ՅՈՐԺԱՄ ՅԱՒԱՐՏՈՒՄՆԻ ԵԿՆ ԱՄԵՆԱՅՆՍ ԿԱՄԵՑԱՆ ԻԵՂԲԱՐՔ ԵՎ ԿԱՐԳԱՒՈՐՔ ՏԱՆՍ ԻՎԱՐՁԱՀԱՏՈՅՑ ԼԻՆԵԼ ԻՆՁ ԵՎ ԽԻՆԴՐԱՒՔ ԻՄԱՒՔ ԿԱՐԳԵՑԻՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՄԻՆ ՈՐ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՐՈՑ ԿԱՏԱՐԵՆ ՎԻԱՍՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՏԱՌԱՊԵԱԼ ՀՈԳՈՅՍ ԻՍՄՈ ՈՐՉԱՓ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՔՆ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻԵԱՆ ԵՆ ԱՐԴ ՈՐ ՁԿՆԻ ՄԵՐ ՅԱՁՈՐԴԻՔ Ի ՍԲ ԻԱԹՈՒՂ ՀԱՅՐԱՊԵՏՔ ԵՎ ԿԱՐԳԱՒՈՐ ՏԱՆՍ ՊԱՒՐՏԱԿԱՆ ԵՆ ԱՅԴ ՔԱՌԱՍՆՈՅՑ ՈՐ ԱՆԽԱՓԱՒՆ ԿԱՏԱՐԵՆ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՐՈՑ ՈՐ ԻԽԱՓԱՆԻՄԱՆ ՊԱՏՃԱՌՔ ԼԻՆԻ ԵՂԵԱԼ ԺԱՄՈՅՂ ԻՆՁ ԵՎ ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱՆԱՒՔ ԵՎ ՈՉ ԿԱՏԱՐԻԷ ԵՎ ՁՐԿԷ ՁՀՈԳԻՍ ԻՄ ԵԹԷ Ի ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ԵԹԷ Ի ԿԱՐԳԱՒՈՐԱՑ ՁՐԿԵԱԼ ԵՎ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՆԻ Ի ՓԱՌԱՑ ՈՐԴՈՅՆ ԱՅԺՄ ԵՎ ՀԱՆԴԵՐՁ ԻԵԼՈՒՄՆ ԵՎ ԱՆԷԾՍ ԿՐԵՑԷ Ի ՍԲ ԵՐԲՈՐԴՈՒ ԹԵՆԷՆ ԵՎ ՄԻ ԳՏՑԷ ԹՈՂՈՒԹԻՒՆ Ի ՔԷ ԱՅԻ ԻՍԿ ՀԱՍՏԱՏԻՉՔ ԳՐՈՅՍ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՆ ՅԱՅ» (Դիվան հայ վիմագրության, հ.2, էջ 28): Այդուհանդերձ Վահանավանքի եկեղեցիների հարցը վերջնական ճշտման կարիք ունի:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», № 30 (271), 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ.

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Դիվան Բաղաբերդի

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

Քանի որ Բաղաբերդի տեղորոշման վերաբերյալ պատմագրության մեջ կան իրարամերժ և ոչ համոզիչ տեղեկություններ, զգուշավոր քննության եմ հրավիրում գիտակներին, հայրենի երկրամասի պատմության սիրահարներին, պատանի հայրենագետներին:

Այդ նպատակով ի մի բերեցի և թերթին եմ տրամադրում սկզբնաղբյուրների, հետազոտողների հիմնական փաստարկներն ու եզրահանգումները:

Հուսամ, որ այս լրագրային «նորահնար ժանրը» ի հայտ կբերի թերթի նոր բարեկամներ:

Քննարկման արդյունքները կընդհանրացնենք մի հրապարակմամբ:

Մովսես Կաղանկատվացի, 7-րդ դար

Իսկ երբ Շապուհ թագավորը պատերազմը վերջացնելուց հետո եկավ ու տեսավ պատահած աղետը, ցասումնալից հրաման տվեց, որ իր բոլոր զորքերը մտնեն Սյունիք և գերեն ասուն ու անասուն... Ճակատամարտ են տալիս Բաղաբերդի դեմ, որտեղից քարեր էին գլորում զառիվայրով և բոլորին ոչնչացնում: Կրկին, երրորդ անգամ ավելի ուժեղ ճակատամարտ տվեցին, բայց ոչինչ չկարողացան անել. ընդհակառակը, շատերը կոտորվեցին: Թագավորը զայրանալով կամեցավ մարտը էլ ավելի սաստկացնել: Այդ ժամանակ բոլոր մեծամեծներն ընկան նրա ոտքերն ու աղաչեցին, որ այլևս ճակատամարտ չտան, այլ ամրոցի շուրջը քանդեն: Այդ ժամանակ Անդոկը, հարմար պահ ընտրելով, թողնում է բերդը ու մեծ հարստությամբ անցնում Բյուզանդիա:

Ստեփանոս Օրբելյան, 1297 թ.

1. Տասներորդը՝ Ձորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, և այժմ կոչվում է Կապան:

2. Սյունիքի անառիկ ամրոցները, որ անհասանելի են մարդկանց մուտքին, և միայն տերը կարող է մատչելի դարձնել՝ Բաղաբերդ. դա այն է, որ Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառը ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար, բերդն ամրացնում է և անվանում Բաղաբերդ. գավառն էլ իր անունով կոչվեց Բաղաց գավառ:

3. Եվ բերելով անհաշիվ ավարը՝ ամբողջը հավաքեցին Բաղաբերդում: Եվ բոլոր գավառների հացի, խոտի, հարդի պաշարները, ամբողջ գինին, յուղը, մսացուները, մեղրը, տեսակ-տեսակ մրգերը՝ անհամար կենսապաշար, ինչպես նաև հեծելազորի սարքերն ու զենքերը կենտրոնացրին բերդում:

4. Ապա Շապուհ արքան հրամայեց, որ դրանից ավելի շատ, կրկնապատիկ զորքեր գան Պարսկաստանից: ... Եվ ինչպես առաջին, նույնպես և այս երկրորդ անգամ պարսաքարերով ու վեմերի գլորումով պարսկական զորքի անհամար բազմությանն ամբողջովին դիաթավալ արեցին:

Շապուհը նորից ուրիշ զորք գումարեց՝ դրանից եռապատիկ ավելի ու հրամայեց սաստկացնել պատերազմը: Կարգադրեց վերջապահներ թողնել և ասաց. «Եթե մեկը ետ դառնա, սպանեցեք»: Սրանք էլ նույն ձևով, ինչպես առաջին, երկրորդ, այնպես և այս երրորդ անգամ, վեմերով ու պարսաքարերով ջախջախվելով առհասարակ ոչնչացան:

5. Ոմն Վահան՝ Ձագիկ իշխանի որդին և Ջևանշերի եղբայրը... շատ ու խիստ ճգնություններից հետո գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար..., սկսում է եկեղեցու շինարարությունը:

... Վահանն իր անունով վանքը կոչում է Վահանավանք:

6. 1103 թվականին, մի օր, երբ քաղաքացիներն անհոգ դրության մեջ էին..., անիծյալ Չորթմանն իր վրեժը լուծելու համար անսպասելիորեն հարձակվեց Կապան քաղաքի վրա: Նախ՝ բազմաթիվ հետևակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը և հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպապատակված չէր... Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից: Նրանք բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր Խնձորոգլխին: Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ: Սակայն բերդի նկատմամբ ոչինչ չկարողացան ձեռնարկել և ետ դարձան իրենց տեղը:

7. Ձորք գավառի՝ Տաթևի վանքին հարկատու գյուղերը. Բաղաբերդ-12, Տինիք-12, Ծաղթանու-6, Գեղովանք-20, Բեխորոտ-8 և այլն:

8. 1126 թ. եկավ ամիր Հարոնը և բնաջնջեց Կապանի տունն ու Արևիք գավառը, գրավեց Կաքավաբերդն ու Բաղակաքարը:

9. Իսկ երբ լրացավ 1151 թվականը, և սկսվեց առաջին տարին, Շլորուտ բերդը կողոպտեց թուրքերի ճարպիկ ցեղը, 1157 թվականին էլ Մեղրին հափշտակեցին:

10. 1170 թ. ... բազմաքանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետև խաբեական խոսքերով խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց և Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած արեց: Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթևի փարթամ ու հարուստ աթոռի անհամար և անմման սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե և արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով: Այնտեղ ամբարված էին շատ Կտակարաններ՝ թվով ավելի քան 10 հազար: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին և ցիրուցան եղան երկրի երեսին:

Վարդան Արևելցի, 13-րդ դար

1166-1169 թթ. Ելտկուզի զորքերը գրավեցին թագավորության նշանավոր բերդերից Գրհամը, Գեղին և Կաքավաբերդը:

Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, 1976

1170 թ. սելջուկները պաշարեցին թագավորության վերջին հենակետը՝ Բաղաբերդը, որտեղ գտնվում էր Հասան թագավորը: Որոշ ժամանակ անց Բաղաբերդի վիճակը դարձավ օրհասական: Հասան Գեռաքարեցին բերդապահներ կարգելուց հետո իր ընտանիքի հետ գիշերով հեռանում է Խաչեն՝ դեպի իր հայրենական կալվածքը:

Հ. Ութմազյան, Սյունիք 9-10-րդ դարերում, 1958

Վահանը... Բաղաբերդի հանդեպ մի հարթության վրա կառուցում է մի վանք և իր անունով կոչում Վահանավանք:

Ղևոնդ Ալիշան, 1893

... ուրանօր յահեկէ գետոյն Կապանայ խնդրելի են երկոքին գլխաւոր տեղիք սորին, որք ըստ ոչ բաղդի ոչ նշանակին ի տեղացոյց տախտակի. յայտ է զի աւերակք իցեն, այսինքն Բաղաբերդն կամ Բերդն Բաղայ և Կապան քաղաք, եր-

կոքին և ս անուանատուք ողջոյն գաւառաց...

Ռաֆֆի, Դավիթ Բեկ, 1980

Նա տեսավ Հալիձորի բերդը, իսկ նրա հանդեպ՝ Աչաղու բերդը: ... Հիշյալ երկու բերդերի միջով անցնելով, նա մտավ Բաղաբերդ քաղաքի ավերակների մեջ:

... Բաղաբերդը իսկապես դրած էր մի քարեղեն սնդուկի մեջ:

Ստեփան Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, 1969

Բաղաբերդը, որին այժմ տեղացիք Դավիթ Բեկի բերդ անունն են տալիս... գտնվում է գրեթե Ջրախորի հանդեպ, հազիվ մի կես-երեք քառորդ կիլոմետր հեռավորության վրա, գետի հոսանքով վեր, դեռ չհասած Գեղվա գետի բերանին... Այստեղ երկրակեղևի հուժկու նստվածքների շերտերը շրջված են և կանգնեցրած են գրեթե ուղղաձիգ հյուսիսից հարավ ուղղությամբ Ներքին Գիրաթաղ գյուղի արևմուտքով... Այս ժայռերն է, որ պատմագիրը հիշում է որպես Բաղակի քար:

ՀՍՀ, հ. 2, 1976

Բաղաբերդը գտնվում է Ղափան քաղաքից դեպի արևմուտք՝ Քաջարան տանող մայրուղու վրա, Ողջի գետի ձախ ափին, Դավիթ-բեկ բանավանի մոտ: ... Բաղաբերդի հյուսիսարևելյան միակ մուտքին թշնամին կարող էր մոտենալ միայն անկյան տակ:

... 1126-ին սելջուկները Ամիր Հասանի առաջնորդությամբ գրավել են Բաղակու քարը:

Տեղանունների բառարան, հ.1, 1986

Բաղաբերդի ավերակներն այժմ կարելի է տեսնել Ողջի գետի և նրա ձախակողմյան Գիրաթաղ վտակի անկյունում, Դավիթ Բեկ բանավանի մոտ..., Ողջի գետի հունից 200մ բարձրություն ունեցող ձախափնյա լեռան վրա:

Պրոֆ. Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, 1966

1. Ալիշանի աշխատությանը կցված քարտեզում Բաղաբերդը, Բաղակի քարը և Կապան քաղաքը ընկնում են ոչ թե Ձորքի կամ Կապան գավառի մեջ, ինչպես իրականում կար, այլ՝ Բաղքի:

2. Բաղակի քարը գտնվում է Բաղաբերդի մոտ (700-800 մետր հեռու), այժմյան Վերին Ջրախոր գյուղի տեղում, Ողջագետի աջ ափին:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»,
№ 24-25 (160-161),
10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2008 Թ.

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Ամրոցը, որ մերձակից է Բաղքի երկնքին (վարկած)

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ

Կարծիք եմ հայտնում, որ դեպի լեռնապարը տանող հազիվ նշմարելի կածանը երբեմնի բանուկ ճանապարհ էր: Գործընկեր Իվանյանը համաձայնում է, իսկ աշակերտներ Գագոն, Շիրակը, Նվերն ու Վարդանը, դեռ հոգնություն չզգալով, ոլորան առ ոլորան առաջկտրուկ են անում: Մեր վեցյակը գնում է Դավիթ–Բեկ ավանի հանդիպակաց ձորն ի վեր, որ աջակողմ մի անջուր վտակ է Ողջի գետի համար: Մեր ձախ մասում բարձրաբերձ լեռնապարն է, որ խոյանքով վեր է ելնում գետի բիբլիական հունից և մաս կազմում Արևիքի լեռնաշղթային: Պապակ ձորի վերին շրջանում ջուր կա, որը մի լքված գյուղի մեղմաթեք դաշտերով խողովակաշար իջնում է Դավիթ-Բեկի աջափնյա թաղամասը:

Կածանը ձորից ճյուղավորված արևելակողմ ձորակն ի վեր է: Շրջադարձերը գրեթե սանդղաձև են, և վերելքն ավելի է դժվարանում: Ակնհայտ է, որ մարդկանցից հեռու այս լեռնաստանում արահետները բանուկ են պահում քարայծերի ու եղնանց հոտերը: Ծորենու տակ վարազն ու մերունը փնտրտուք են արել ու մի հսկայատես հողե տաշտակ շինել:

Որքան մոտենում ենք լեռնապարին, խիճն ու քարաշեղջերն ավելի են շատանում: Կածանն անհետանում է: Բուսաշխարհում իշխում են բարձրադիր գոտու տեսակները, իսկ ժայռաստանը, ծ, զմայլանք, հույժ տարաշխարհիկ է: Մեզ գրավում են քարանձավները. ձեռակե՞ռտ են, թե՞ անձեռակերտ: Մեկում մումիո հիշեցնող սևաթույր հոսք կա, մյուսից, կարծես, առատ ջուր է հոսել...

Թեպետ շոգը նեղում է, և Գագոն զգուշացնում է ջրի պաշարի սպառվելու մասին, գրեթե սողեսող վիհն ի վեր հասնում ենք լեռնապարի դժվարամատչ թամբին: Մեր առջև բացվում են զարմանահրաշ անդունդներ, որոնք արևելակողմում գահավիժում են դեպի Բաղակուքարի հեքիաթային ձորը: Թամբի հյուսիսակողմն ու հարավակողմը ուղղաձիգ ժայռեր են: Մի քանի կիլոմետր դեպի հարավ Բաղացսար լեռնագագաթն է /3256 մ/, բայց մենք փակուղի ենք մտել. թամբից, կարծես, միայն ետ դառնալն է հնարավոր: Տղաները տասը հարկանի շենքի բարձրություն ունեցող ժայռի կատարին, որ, կարծես, մեր գլխավերևում է, հեռադիտակով պատ են հայտնաբերում: Այո, այո, և շարվածքը ծիրանագույն երանգ ունի:

Ինչ էլ լինի, պետք է բարձրանալ ժայռի կտուրը. պարիսպը գայթակղել է բոլորին: Նվերն ու Վարդանը մոտակա ժայռի միջնամասում քարայր են հայտնաբերում, որ գաղտնարանի տպավորություն է թողնում: Հետախուզելով, պապակ լեռնաստանի հանելուկային խորքից հողի թացավուն շերտ են հայտնաբերում: Իսկ քարայրը, կարծես, փորված է հանելուկային ժայռակտուրի տակ...

«Նախ՝ բազմաթիվ հետևակ ծերպամուտ քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը...»:

Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, գլուխ ԿԱ:

Շուտով իմ պատանի քարագնացները, մանրակրկիտ զննում կատարելով, հայտնաբերեցին քարայծերի՝ դեպի ժայռակտուրը տանող հնարամիտ ճանապարհը, որ բնաստեղծ անկանոն սանդուղք է հիշեցնում: Խճաքարի բնահոսքի մեջ և սանդուղքի հարթակներին հայտնաբերվեցին կավե ամանեղենի ջնարակված կտորներ, կարասի նախշավոր պռունկների փշրանք: Եվ դարձյալ հանելուկ՝ որտեղի՞ց է անսովոր ապակու այս փոքրիկ շեղբը... Արդ, պարզ է, որ վերևում, կարծես երկնքի մեջ մխրճված, նախնյաց հանգրվան էր:

«... Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով,... ապառաժը շինում է ամրոց...»:

ՍՕ, գլուխ Գ:

Ահավասիկ ժայռի կտուրը. այն դարերի անհիշելի խորքում մեռած ու թաղված բերդաքաղաք է հիշեցնում: Տեր Աձ, այս քարագլուխն ի՞նչ անձեռակերտ հրաշք է: Դիմացի վեհանիստ ժայռը, կարծես, պատմության անտես խորքից կարդում է Հայր Ստեփանոսի «Հիշատակաց մատյանը».



«... այստեղ գտնվող անառիկ ամրոցները, որ անհասանելի են մարդկանց մուտքին, և միայն Տերը կարող է մատչելի դարձնել... /գլ. Գ/: ... այս մատյանը թողեցինք որպես անջնջելի հուշարձան ու գովելի հիշատակ գալիք ժամանակների համար՝ ի հաստատություն Այունյաց փառահեղ աթոռիս...» /գլ. ՀԳ/:

Քեզ հավասար բարձրության վրա, դիմակայելով Կապան մարզոստանից փչող տաք հոսանքին, հողմաբազեն անտարբեր վայելում է շնկշնկան հովի խուտուտն ու գուրգուրանքը...

Տարածքը, որ հեռուներից հեռադիտակով անգամ դժվար կռահելի է, մոտ կես հեկտար է, ունի շուրջանակի պարիսպ հենց անմատչելի անդունդեզրերին: Դարերի հետ կռիվ տալով, պարիսպը տեղ–տեղ մնացել է մոտ մեկ մետր բարձրությամբ: Ընտիր կրաշաղախից է, ցեմենտբետոնե ամրությամբ: Հնադարի վարպետները պարսպի մեջ՝ հիմքին առընթեր, օգտագործել են նաև թրծված աղյուս, որը, ի տարբերություն սովորականի, քառակուսիաձև է: Պարսպի քարերը պատված են ծիրանագույն քարամամուռով, որ սովորական է այս կողմերի համար:

Բայց առավել դյութիչն այն չնաշխարհիկ տեսարանն է, որ երևում է շուրջ բոլորը. ամրոցը, որ մերձակից է Բաղքի երկնքին, արևմտյան կողմից տիրաբար իշխում է Ձորք հնամենի գավառի վրա, արևելյանից՝ Աճանանի, Քաշունիքի ու Կովսականի վրա: Չես վիճի՝ արքայավայել բարձունք է:

Այցելուն, հիացքից զատ, ջանում է իր համար պարզել մի քանի հանելուկներ.

Այբ/ Չորս կողմից գահավեժ անդունդներ են, նայելն անգամ ահի առիթ է: Արդ, ո՞րն էր բերդամուտ ճանապարհը:

Բեն/ Տարածքում առկա են շինությունների հետքեր: Ի՞նչ նշանակություն են ունեցել դրանք:

Գիմ/ Ամրոցը կատարյալ անջուր է: Արդյո՞ք առկա մեկուկես մետր շառավղով վիմափոր ու քարաշեն հորերը որպես ջրամբար են ծառայել:

Դա/ Ամրոցից անդունդով բաժանված հարավակողմ մեկուսի և անմատչելի ժայռի վրա կառուցված պարիսպն ի՞նչ առնչություն ուներ ամրոցի հետ:

Եչ/ Պարսպից թափված քարակույտերի մեջ ինչպե՞ս են հայտնվել տաշած շթաքարերը /ստալակտիտներ/, երբ շրջապատում այդ նմուշի ապարներ չկան:

Զա/ Ոչ խոր հողաշերտը ձեռաց փորելով կամ փետրախոտի ճիմ հանելով, կարելի է դյուրավ գտնել կավե ամանեղենի կտորտանք: Ենթադրե՞լ, որ երբևէ թշնամու ավերիչ հարձակում ու ավարառություն է եղել:

«... մեր կորուստն ու ավերածությունը առավել եղան, քան Երուսաղեմինը...»: ՍՕ, գլ. ԿԱ:

* * *

Հայր Ստեփանոսն իր պատմությունը գրել է 1297 թվականին: Նրանում պատմիչը տարբեր առիթներով անդրադարձել է Բաղաբերդ ամրոցին.

«... բոլորի ապավեն ու ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոց...»

«... այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին հավաքվել սրբությունները» /գլ. ԿԱ/:

«... Շապուհը զորավահավաք կատարեց, գնաց պատերազմելու Բաղաբերդի դեմ, բայց տեղի ամրության պատճառով ոչինչ չկարողացավ անել...» /գլ. Թ/:

«Տասներորդը՝ Ձորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, և այժմ կոչվում է Կապան» /գլ. Գ/

Նոր շրջանի պատմաբանները Բաղաբերդը տեղորոշել են հիմնականում հենվելով Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկությունների վրա: ՀՍ հանրագիտարանի 2-րդ հատորում կարդում ենք. «ԲԱՂԱԲԵՐԴ», գտնվում է Ղափան քաղաքից դեպի արմ.՝ Քաջարան տանող մայրուղու վրա, Ողջի գետի ձախ ափին, Դավիթբեկ բանավանի մոտ»:

Հիրավի, նշված վայրում բոլորիս հանրածանոթ, պարսպապատ ամրոցն

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Գտնվել է Սյունյաց թագավորության «արքայական դղյակը»

ԼԵՌՆ ՄԿՐՏՉՅԱՆ
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հուշարձանների պահպանության բաժնի գլխավոր մասնագետ, հնագետ

Պատմական Կապան քաղաքի՝ Սյունյաց թագավորների արքայական դղյակն այսօրվա Հայաստանում պահպանված այն եզակի և իր զուգահեռը չունեցող հուշարձան է, որը նյութապես վկայում է 9-12-րդ դդ. Հայոց ինքնիշխան պետականության գոյության, նրա աշխարհիկ իշխանությունների թողած պատմամշակութային ժառանգության մասին:

Արդեն տևական ժամանակ է, ինչ պատմական Կապան քաղաքի նույնականացման և տեղայնացման հետ կապված տարաձայնություններ կան: Այսպես, ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում՝ առկա է 9.1/21 ցուցիչով, «Քաղաքատեղի Կապանը», որի հասցեն նշված է՝ «Կապան-Քաջարան ճանապարհին, Ողջի գետի բարձրադիր աջ ափին»: Նույն հասցեով է նշված՝ 9.1/1 ցուցիչն ունեցող «Ամրոց Կատարավանքը»: Այս համատեքստում հետաքրքրություն է ստանում նաև Սյունիքի մարզի Անդոկավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում առկա 9.13.1/2 ցուցիչով «Ամրոց Բաղակու քարը», որը կրկին տեղորոշվում է Ողջի գետի ափին:

2020 թվականից սկսած՝ ՀՀ գիտության կոմիտեի 21Т.6А175 «Պատմական Արցախի և արևելյան Սյունիքի ամրոցները և ամրաշինական համակարգը» գիտական թեմայի շրջանակում՝ հատկապես առանձին ուսումնասիրվել է Կապանի տարածաշրջանը՝ նպատակ ունենալով ի մի բերել մատենագիտական, արխիվային և հուշարձանների ցանկում առկա տվյալները և դաշտային աշխատանքներով կատարել դրանց նույնականացում ու տեղայ-

100

է: Սակայն մատենագրական որեւէ հավաստում չկա, թե հատկապես դա է Բաղաբերդը: Առավել եւս՝ այդ ամրոցում չի հայտնաբերված վիմագիր որեւէ արձանագրություն, որի վրա հենվելով, կարելի լինի հիմնավորել տեղորոշումը:

Ամրոցը գտնվում է լեռներով շրջափակված քարե սնդուկում /ըստ Ռաֆֆու պատկերավոր նկարագրության/, եւ հատկապես այդ դիրքավիճակն է անհարիր Ստ. Օրբելյանի նկարագրություններին: Ի դեպ, ԽԵ գլխում, խոսելով Վահան Նախաշինողի կողմից Վահանավանքը կառուցելու մասին, պատմիչն ասում է.

«... գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ...»:

Արդ, պարզ է, որ Բաղաբերդը պետք է փնտրել բարձր լեռան վրա: Մինչդեռ տեղորոշված Բաղաբերդը /ըստ ՀՍՀ-ի/ ոչ բարձր լեռան վրա է, ոչ էլ ինչ-որ լեռան ստորոտում: Բերդի՝ Ողջի գետի աջափնյա սլացիկ սարաժայռն իր բնաստեղծ վեհությամբ այնպես է ստվերում նրան, որ չի պատշաճում այն կոչել ԱՆՄԱՏՉԵԼԻ, ԱՆԱՌԻԿ, ԱՆՄԱՏՈՒՅՑ ու նման մակդիրներով: Ու նաև. Օրբելյանից առաջ, տակավին 7-րդ դարում, պատմիչ Մովսես Կաղանկատվացին նկարագրել է պարսից Շապուհ արքայի բազմահազարանոց բանակի գրոհները Բաղաբերդի դեմ /վերաշարադրել է նաև Օրբելյանը/: Պարսիկները **«ճակատամարտ են տալիս բերդի դեմ, որտեղից քարեր էին գլորում զառիվայրով եւ բոլորին ոչնչացնում: Կրկին, երրորդ անգամ ավելի ուժեղ ճակատամարտ տվեցին, բայց ոչինչ չկարողացան անել. ընդհակառակն, շատերը կոտորվեցին»** /գիրք 2, գլ. Ա/:

Դե, հիմա գնացեք ու զննեցեք տեղորոշված Բաղաբերդի տեղանքը եւ կհամոզվեք, որ այնտեղ քարեր գլորելով ոչ մի ճակատամարտ էլ չի կարելի շահել:

Իսկ նորընծա ամրոցը, որի մասին խոսք եղավ վերը, գտնվելով բարձր լեռան վրա, հույժ անմատչելի ու անհաղթահարելի է:

«Շապուհը նորից ուրիշ զորք գումարեց՝ դրանից եռապատիկ ավելի ու հրամայեց սաստկացնել պատերազմը: ... Սրանք էլ նույն ձեւով, ինչպես առաջին, երկրորդ, այնպես եւ այս երրորդ անգամ, վեմերով ու պարսաքարերով ջախջախվելով առհասարակ ոչնչացան» /ՍՕ, գլ. Թ/:

Ամրոցից, ինչպես ափերիդ մեջ, ներքևում երևում է պատմական Աչաղու գյուղը:

«Այնուհետև...խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց եւ Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած կատարեց» /ՍՕ, գլ. ԿԱ/:

Ուրեմն, Բաղաբերդն ընկավ /1170 թ./ դավաճանության եղանակով: Ըստ իս, այս նորահայտ ամրոցը Բաղաբերդն է, իսկ թե որո՞նք են Յոթնաբերդ Կապանի մյուս ամրությունները, կքննարկեմ Ձեզ հետ մի այլ անգամ...

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ: Ես՝ անձս ճանաչողների համար ամենաանցանկալի, Կապանա ուսուցիչների մեջ մտքով ամենատկար, նվաստներից նվաստ եւ մեղուցյալ Ռոբերտ Գրիգորյանս, որ նաեւ կոչվում եմ Էջանանցի, մեր հայրենի երկրամասի սիրուց արբեցած՝ մշտապես թերթելով մեր նախնյաց մատյանները, ունկնդրելով տարեցներին ու բնաշխարհում շրջողներին, անխամիր սիրով այցելում եմ մեր հնավայրերը, ուրախության արցունք հեղում տխրամած ու անխոս քար ու վեմի վրա: Նախասիրություն է:

Արդ, եթե չընդունեք Բաղաբերդի վերահայտնագործման իմ վարկածը, ինձ մի մեղադրեք Կապանա տան պատմության անգիտության մեջ, կաղաչեմ: Որովհետեւ Յոթնաբերդ Կապանա բերդերի տեղորոշումները տակավին հստակ ու համոզիչ չեն: Այնուհանդերձ, ջանացեք՝ գեթ մեկ անգամ լինել իմ վարկածի Բաղաբերդում, եւ, հավատացեք, դուք առմիշտ կհամակվեք հայրենի եզերքի տիրականության երանական ու լիցքատու զգացումով:

«ՍՅՈՒՆԻՔ»,
№ 35-36, ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1998 Թ.

Կնացում: Աշխատանքային թիմին հաջողվեց ուսումնասիրել Ողջի գետի գրեթե ողջ հովիտը, որտեղ պետք է տարածվեին Սյունիքի թագավորության Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգը: Այդ ուսումնասիրություններով պարզ դարձավ, որ մատենագիտական և հուշարձանների ցանկից հայտնի որոշ ամրոցներ (Շլորուտ, Ձևա, Կկոց քար) առայժմ չեն նույնականացվում որևէ հուշարձանի հետ: Եվ ահա այս աշխատանքների շրջանակում մեզ հաջողվեց նույնականացնել միջնադարյան Կապան մայրաքաղաքը, որին տարբեր անվանումներով են նշել և ցուցակագրել, ինչպես նշվեց վերը:

Միջնաբերդը գտնվում է ներկայիս Կապան մարզկենտրոնից 9,0 կմ արևմուտք՝ Ողջի գետի աջ ափին, Ողջի ու Ջրախոր գետերի միախառնման վայրում, մոտ 7-10 մ բարձրությամբ կլորավուն բլրին: Այն տեղակայված է Բաղաբերդ ամրոցից 1,3 կմ արևելք, Բաղակու քար ամրոցից՝ 1,8 կմ հյուսիս՝ գտնվելով դրանց հետ տեսողական կապի մեջ: Բլուրը հարավից ու մասամբ արևելքից եզերվում է ձեռակերտ փորված խորը խանդակով: Միջնաբերդը զբաղեցնում է բլրակի հարթեցված գագաթը, որի հյուսիսարևելյան եզրին պահպանվել են արքայական ապարանքի (պալատի) ավերակները: Ապարանքն ուղղանկյուն, մեծ մոնումենտալ, բազմասենյականոց շինություն է՝ կառուցված ճեղքած քարերով՝ կրաշաղախով: Ներսի ու դրսի բոլոր ճակատները սվաղված են եղել կրածեփով: Կառույցի պատերը կանգուն են՝ տեղ-տեղ մինչև 3,5 մ բարձրությամբ, ծածկը բացակայում է, բայց նկատվում է դեպի կիսաշրջան թաղը տանող հանգույցը: Երևում է, որ մուտքերի ու պատուհանների եզրաքարերը սրբատաշ էին: Ապարանքը հատակագծում ուղղանկյուն է, մոտ 25x30 մ չափերով, որի հյուսիսային ծավալը զբաղեցնում է շինության ամբողջ լայնքով դրված երկար թաղակապ դահլիճ-ընդունարանը: Դահլիճին հարավից կցված են չորս երկարավուն սենյակ, որոնց միջնամասով գնում է ապարանքի հարավային ճակատը դահլիճին և երկու կողմի սենյակներին կապող երկար միջանցքը: Հարավային ճակատում միջանցքի մուտքը կազմակերպված է լայն, բարձր, կամարակապ դարպասի տեսքով: Միջնաբերդի հարավային ճակատի դիմաց բացվում է ընդարձակ, բաց բակ-հրապարակը: Միջնաբերդի ապարանքը և բաց բակը վերցված են գագաթնագծի ընդհանուր պարսպապատի մեջ:

Ապարանքն ունեցել է նաև երկրորդ պարսպագիծը, որը ներառնում է միջնաբերդի հարավային ու արևելյան լանջերը և միանում է գագաթնագծի պարսպին՝

հյուսիսային կողմում: Այստեղ պարսպի պահպանված բարձրությունը 4,0 մ-ից ավելի է, լայնությունը՝ 2,0 մ: Պարիսպները շարված են միջին չափսի քարերով և կրաշաղախով: Երկու պարսպագծի միջնամասը խիտ կառուցապատված է: Երկրորդ՝ ստորին պարսպագծի հարավային անկյունում, խանդակի եզրին կանգուն են մնացել մի փոքր, գողտրիկ, միանավ եկեղեցու պատերը: Եկեղեցու թաղակապ ծածկը փլուզված է, բայց երևում են արևմտյան ճակատի միակ մուտքը և ուղղանկյուն խորանը: Եկեղեցու հարավային ճակատի դիմաց եղել է արքայական գերեզմանոց-տապանատունը: Այստեղ տապանաքարերը ծածկված են հողով ու բուսականությամբ, բայց պահպանվել է, ինչ-որ մի բարձր, փոքրածավալ շինության, հնարավոր է՝ փլուզված մահարձանից մնացած շինաքարերի քարակույտը:

Բլրի արևելյան ստորոտից դեպի դղյակի բաց բակն է բարձրանում երկու կողմերից պատաշարերով եզերված մոտ 2,5-3,0 մ լայնությամբ «արքայական» ճանապարհը: Ճանապարհի ու ստորին և վերին պարիսպների հատույթում նկատվում են երբեմնի դարպասների հետքեր:

Սյունյաց թագավորության Կապան մայրաքաղաքի արքայական դղյակի կառուցման ժամանակը հայտնի չէ: Հայտնի է թուրք-սելջուկների կողմից գրավման ու ավերման տարեթիվը՝ 1103 թ.: Հետագայում արքաների նստոցը, հավանաբար, տեղափոխվում է Բաղաբերդ՝ առավել անմատչելի ու ապահով տեղ, իսկ ավերված միջնաբերդն էլ չի վերականգնվում: Գտնվելով բնակավայրերից դուրս, բլրի վրա և ամբողջովին պատված լինելով փլատակներով ու անտառով, հուշարձանը գրեթե չի ունեցել կորուստներ՝ պայմանավորված հետագա մարդկային գործունեությամբ:

Հուշարձանախմբի այսօրվա վիճակը ծանր է: Այն ամբողջովին պատված է խիտ, գրեթե անանցանելի անտառով ու մացառուտներով: Շինություններն ու պարիսպները ծածկված են բուսականությամբ այնպես, որ մեր խմբի կատարած բազմաթիվ օդալուսանկարահանումներում երևում է միայն ապարանքի մի պատառիկ: Մացառուտների խտությունը թույլ չի տալիս չափագրել ու լուսանկարել շինությունները: Դղյակի բաց բակն այնպես է պատված մոշուտներով, որ այնտեղ հնարավոր չէ մուտք գործել:

Հաշվի առնելով հուշարձանի եզակիությունը, հայկական աշխարհիկ ինքնիշխան պետականության պատմական աղբյուրագիտական հիմքերի բացահայտման կարևորությունը և զբոսաշրջության գրավիչ օբյեկտ դառնալու հեռանկարը՝ չափազանց անհրաժեշտ են այստեղ իրականացնել պարբերական հնագիտական ուսումնասիրություններ:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿԱՊԱՆԸ

Բաղաբերդ ամրոցը.

պատմաճարտարապետական ակնարկ

ԱՐԱ ՉԱՐՅԱՆ
Ճարտարապետ

Բաղաբերդ ամրոցը Մեծ Հայքի Սյունյաց նահանգի անառիկ ամրոցներից էր, որը IV դարից սկսած (մինչև գրավումը՝ 1170 թ.) եղել է ռազմական կարևոր հենակետ, իսկ Սյունիքի թագավորության շրջանում՝ 970-1170 թթ.[1]: Կապան մայրաքաղաքի ռազմաստրատեգիական պաշտպանական համակարգի գլխավոր օղակը: Ամրոցը ներկայումս գտնվում է Ղափանի շրջանում, Ղափան-Քաջարան մայրուղուն հաղորդակից Դավիթ-բեկ բանավանի մոտ, Քաջարանից 17 կմ հարավ-արևելք, Բարկուշատի լեռնաշղթայից դեպի Ողջագետի ձախ ափը գահավեժ իջնող լեռնաճյուղերից մեկի վրա, որի լեզվակը կազմող եռանկյուն սարավանդի ուղղաձիգ, անմատչելի ժայռաձերպերը սարաոստի ստորոտում ողողվում են Ողջագետի և նրա ձախակողմյան վտակ Գիրաթաղի արագահոս ջրերով: Անմատույց ժայռապարիսպները և բնական խոչընդոտների համակարգը անառիկ են դարձնում բերդատեղի արևմտյան ողջ հատվածը: Տեղանքի այսպիսի առանձնահատկությունների հմուտ օգտագործումը հնարավորություն է տվել ամրոցի հատակագծում ունենալ առավելապես միակողմանի կառուցապատում: Բերդի դիրքադրության և դիրքորոշման համար ընտրվել է Ողջագետի անդնդախոր ձորերով շրջապատված ժայռակերպ սարաոստի կատարի մի բարձրավանդակ, որն իր գերիշխող դիրքով հնարավորություն է ունեցել հսկելու պատմական Կապան քաղաքը և անհրաժեշտության դեպքում Սյունյաց թագավորության մայրաքաղաքի համար ծառայել որպես ռազմական (գծ. I, 1): Կապանը[2] Սյունիքի թագավորության մայրաքաղաք է դառնում[3], երբ Գագիկ Ա թագավորը (989-1120) արշավում է Սյունիք և գրավում Վայոց ձոր գավառը, որի հետևանքով Սյունիքի թագավորությունը ամփոփվում է իր հարավարևելյան գավառների սահմաններում: Ստեղծված իրավիճակում նպատակահարմար էր գահանիստ կենտրոնը փոխադրել ավելի ապահով տեղ, որը և դարձավ Կապան քաղաքը[4]: Կապանը կառուցված էր Ողջագետի հովտի՝ հյուսիսից զառիվայր, անտառապատ ձորերով, հարավից՝ Արևիքի լեռնաշղթայի (այժմ՝ Տանձուլենջ կոչված վայրում) հատվածում: Կապանի արևելք-արևմուտք առանցքը, որով ձգվում էր գետահովտով անցնող Արցախ-Տաթև-Մեղրի-Որտուատ ճանապարհը, եղել է քաղաքի սակավ ամրացված միակ ուղղությունը: Դեռ վաղ միջնադարում կառուցված ռազմական հենակետերը՝ արևմուտքում Բաղաբերդը, հարավ-արևմուտքում՝ Բաղակի քարը, արևելքում՝ Հալիձորը (XVII դ.) և հյուսիս-արևելքում՝ Կկոց քարը, ապահով էին դարձնում քաղաքի արևելյան և արևմտյան մատույցները:

Ավելի ընդարձակ պաշտպանական համակարգը բաղկացած է եղել դեպի Կապան տանող ռազմական նշանակություն ունեցող բոլոր ճանապարհների երկայնքով իրարից որոշակի հեռավորության վրա տեղադրված բերդերից ու ամրոցներից, որոնք քաղաքի շուրջը ստեղծել են ռազմահենակետերի խիտ ցանց և մոտավորապես 10 կմ շառավղով կազմել ներփակ օղակ, որի կենտրոնում գտնվում էր վարչական կենտրոնը (գծ. I, 2):

Բաղաբերդի հյուսիսով անցնում էր երկու ճանապարհ: Դրանցից մեկը գալիս էր Բարկուշատի ու Աճեանի կողմից և ձգվում դեպի Արևիք ու Գողթն: Մյուսը սկիզբ էր առնում հենց Բաղաբերդից և ձգվում դեպի Տաթև: Երկու այլ ճանապարհներ՝ մեկը արևմուտքից, մյուսը՝ հարավ-արևմուտքից նույնպես մաս են կազմել Կապանի պաշտպանական համակարգի: Տաթև-Բաղաբերդ ճանապարհի երկայնքով տեղադրված են եղել Ցուր, Բերդ-ավելադաշտ, Տանձավայր, Գանձաբերդ, Աչաղվա, Կկոց քար, Բաղաբերդ ամրոցները, արևմտյան ճանապարհը հսկում էին Գեղի և Ձևա բերդերը, հարավարևմտյանը՝ Շլորուտը,

Հարավարևելյանը՝ Գոհար, Կռնաս, Բերդաքար, Հալիձոր ամրոցները[5]:Այսպիսով, դեպի Կապան-Բաղաբերդ[6] տանող ճանապարհի երկայնքով տեղադրված ռազմական նշանակություն ունեցող հենակետերը կազմել են մայրաքաղաքի՝ իր բնույթով միակենտրոն պաշտպանական համակարգը: Այն բաղկացած էր գլխավոր ռազմականացված կենտրոնից, որի շուրջ տարածվել են պաշտպանական տարբեր նշանակության միավորները՝ որպես լրացուցիչ, ամբողջացնող տարրեր: Այսպիսի համակարգում գլխավոր կենտրոններն իրենց դիրքադրության սկզբունքներով, նշանակությամբ տարբերվել են այդ համակարգի մասը կազմող պաշտպանական մյուս միավորներից[7]: Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգն ստեղծվելիս նկատի են առնվել բնաաշխարհագրական նպաստավոր բոլոր պայմանները: Գետահովիտները, լեռնաշղթաները, բարձրավանդակներն ու ձորերը ռազմաշինական կառույցների հետ միասին ստեղծել են խիտ, անառիկ պաշտպանական գոտի, որը, իր հերթին, կապված էր հարավից՝ Գողթն, Արևիք, Կովսական, հյուսիսից՝ Ճահուկ, Ծղուկք, Հաբանդ գավառներում կազմավորված պաշտպանական այլ համակարգերի հետ:

Նախքան Կապան քաղաքի[8] պաշտպանական միակենտրոն համակարգի գլխավոր կենտրոն հաստատվելը, Բաղաբերդը հանդիսացել է Սյունյաց աշխարհի անմատչելի բերդը և ծառայել որպես ռազմական հենակետ՝ քաղաքական տարբեր ընդհարումներից ժամանակավորապես ապաստանելու և պատսպարվելու վայր[9]: Այս է վկայում, թերևս, այն փաստը, որ IV դ. կեսերին, Սյունյաց Անդոկ իշխանը, ամրանալով Բաղաբերդում՝ Սյունիքի ամենաապահով վայրում, կարողանում է հաջողությամբ հետ մղել պարսից Շապուհ արքայի զորքերի երեք գրոհները և հետագայում հեռանալ Բաղաբերդից[10]:

Բաղաբերդը պատմագրության մեջ հիշատակվում է Բաղաց ամրոց, Բաղբերդ, Պաղաբերթ անուններով: Ամրոցի մասին հիշատակություններ ունեն Շապուհ Բագրատունին (IX դ.), Հովհաննես Դրասխանակերտցին (X դ.), Վարդան Արևելցին (XIII դ.). Մխիթար Այրիվանեցին (XIII դ.), Ստեփանոս Օրբելյանը (XIII-XIV դդ.):

853 թ. Բուղան, Դվինը ասպատակելուց հետո, արշավում է Սյունիք՝ նպատակ ունենալով գերել Վասակ իշխանիկին և նրա եղբորը՝ Աշոտին, որոնք ամրանում են Բաղաց անառիկ ամրոցներում[11]: X դ. Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը, «ապստամբում» է Անանիա Մոկացի կաթողիկոսի գերգահության դեմ և ապաստան է գտնում Բաղաբերդում, ուր ապրում է 10 տարի, մինչև մահը[12]: Բաղաբերդի մասին հետագա տեղեկությունները վերաբերում են Սյունիքի թագավորության շրջանին[13]: Թագավորության օրոք բերդը ստանում է ավելի կարևոր նշանակություն և Կապան մայրաքաղաքի պաշտպանական համակարգի մասն է կազմում: 1103 թ. սելջուկ թուրքերը Չորթման ամիրայի առաջնորդությամբ մատնությամբ գրավում են Կապանը[14], իսկ Բաղաբերդը գրավելու փորձերը անհաջողության են մատնվում. «...բայց ի բերդն ոչ ինչ կարացին ձեռնարկել, այլ գնացին»[15]: Կապանի կործանումից հետո Բաղաբերդը դառնում է Սյունիքի թագավորության մայրաքաղաքը: Եթե մինչ Սյունիքի թագավորությունը Բաղաբերդը ծառայել է որպես անառիկ ապաստան, ուր թշնամուց կարող էին հուսալիորեն պատսպարվել մեծաքանակ զորամասեր, ապա, թագավորության շրջանում բերդը դառնում է գահանիստ կենտրոն և շուրջ մեկ տասնյակի հասնող շրջակա բերդերի պաշտպանական համակարգի միջոցով դառնում Սյունիքի ամենաանառիկ ամրությունը: Այս մասին է վկայում այն փաստը, որ Կապանի կործանումից հետո այստեղ են կենտրոնանում Տաթևի վանքի և թագավորության մեծաթիվ հարստություններն ու ձեռագրերը. **«... և զի վասն անառիկ ամրութեանն յամենայն վանորէիցն անդ էին կուտեալ զսրբութիւնս և զգրեանս և զսպաս եկեղեցւոյն. ևս առաւել՝ զանհամար և զաննման սրբութիւնս և սպաս եկեղեցւոյն Տաթևոյ՝ փարթամ և հարուստ աթոռոյն, խաչ և վկայարանք յոսկւոյ և յարծաթոյ, և անդին ակամբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտակարանք յոլովք որք թուով ավելի քան 10.000 զորս ամբարեալ էին անդ»**[16]: Բաղաբերդի մասին X դ. վերագրվող հիշատակություններ ունի Վարդան պատմիչը, ով Սյունյաց Ջևանշեր իշխանի որդի Վահանի կողմից Վահանավանքը հիմնելու կապակցությամբ գրում է. **«... զտեր Վահան ի Բաղաց, որդի Ջուանշէրի իշխանին, որ շինեաց զամենապայծառ ուխտն Յովհաննու վանս, առ ստորոտս անմատոյց դղեակին Բաղաց»**[17]: Վահանավանքի կառուցման առթիվ Բաղաբերդը հիշատակում է նաև Գանձակեցին[18]:

Հասանի իշխանության օրոք՝ 1126 թ., Բաղաց թագավորության վրա է հարձակվում Հարոն ամիրան[19], ով գրավում է Կաքավաբերդն ու Բաղակաքարը[20]: Ինչպես Ստ. Օրբելյանն է նշում, Կապանի գրավումով (1103 թ.) Բաղաց թագավորությունը թուլանում է, և հետզհետե իշխանության տարածքը փոքրանում է: Կապանի ավերումից մեկ տարի անց՝ 1104 թ., թշնամին գրավում է Որոտանը, 1105 թ.՝ Շլորուտը, 1157 թ.՝ Մեղրին, 1166-1169 թթ. Գրիամը, Գեղին, Կաքավաբերդը[21]: Կապան մայրաքաղաքի գրավումից 67 տարի հետո միայն՝ 1170 թ., Ելտկուզ աթաբեկի զորքերին հաջողվում է խաբեությամբ ներխուժել ամրոց և գրավել դարերի ընթացքում անառիկ մնացած Բաղաբերդը[22]: Բերդի գրավման մասին Սյունյաց տան պատմիչը գրում է. **«Եւ զապավենն ամենացուն եւ զտեղի ապաստանի զանառիկ ամուրն զԲաղաբերդ մատնեաց ի ձեռս Իսմայէլի անիծեալ եւ գիշախանձ առն, որ բազում զօրոք եկն եւ ոչ կարաց հնարել ինչ: Ապա պատրող բանիւք խաբեաց զպարզամիտ արս քրիստոնեայս Աչաղոացիս, եւ նոքօք նախ առ զՔարն Կկոց, եւ ապա ի գիշերի՝ այնու արամբք գողացաւ զԲաղաբերդ, եւ առեալ կոտորեաց սաստիկ...»**[23]: Ամրոցի մասին հետագայում պատմիչները լռում են: Այդ կապակցությամբ Ալիշանը գրել է. **«Կապան և Բաղաբերդ ոչ եւս յիշին... միայն վիճակ՝ Բաղաբերդ կոչումն մնայ եւ մնայ ցարդ»**[24]:

Բաղաբերդի դիրքադրության մասին պատմիչները պարզորոշ տեղեկություններ չեն հաղորդում, անգամ Ղ. Ալիշանը իր «Սիսական» աշխատությանը կցված քարտեզում ստույգ չի նշում Բաղաբերդի, նրանից ոչ հեռու գտնվող Բաղակի քարի[25] և Կապան քաղաքի դիրքը: Ըստ Ստ. Օրբելյանի, Բաղաբերդը հիմնել է ոմն Սյունեցի Բաղակը. **«... մի ոմն ի զարմից Սիսակայ Բաղակ անուն, առեալ զայս գավառ մասն ժառանգութեան՝ շինէ զքարն Բաղակու ամրոց, որ կոչի Բաղակի քար եւ ամրացուցանէ զբերդն եւ կոչէ Բաղաբերդ, եւ գաւառն իւր անուն կոչեցաւ Բաղաց գաւառ»**[26]: Հեղինակը բերդը տեղադրում է Բաղաց գավառում[27]: Լայն առումով Բաղք գավառը կոչվել է նաև «Բաղաց աշխարհ»[28], որի մեջ ընդգրկվել են Ձորք, Կապան և Արևիք գավառները[29]: Ստ. Օրբելյանի մեկ այլ հիշատակությունում Բաղաբերդը տեղադրված է Ձորք գավառում. «Տասներորդ՝ Ձորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, եւ այժմ կոչի Կապան»[30]: Պատմագրի այս հաղորդումը բացատրվում է նրանով, որ Բաղաբերդը գտնվում էր Բաղք և Ձորք գավառների սահմանամերձ շրջանում, և X դ. սկսած (Բաղքի թագավորության ժամանակ) Ձորք գավառը մտել է նրա սահմանի մեջ[31], իսկ Կապանը համարվել է թագավորության մայրաքաղաքը. **«Ունէր ի բաժնի զԲաղաց գաւառն եւ զԿապան քաղաք»**[32]:

Ինչպես ասացինք, Բաղաբերդը տեղադրված է Ողջագետի և Գիրաթաղ գետերի միախառնման հատվածում, հունից 200 մ բարձրության վրա: Ամրոցի հատակագծային կառուցվածքը վերջնական լուծում է ստացել տեղանքի առանձնահատկություններից ելնելով: Այստեղ շատ հմտորեն օգտագործված է արեմտահայաց բնական խոչընդոտը: Հրվանդանի





կառուցապատումը ստորոտին համապատասխան իրականացված է 3 մակարդակներով: Պարսպապատերի առաջին շարքը, որը գտնվում է ամենացածր նիշի վրա, Գիրաթաղ գետի հունի մոտ է, արևմտյան հսկայական ժայռալանջի ստորոտում, որից պահպանվել է մոտ 60 մ երկարությամբ ուղղաձիգ մի հատված (գծ. II, 1, № 9): Այս պարսպապատը, հավանաբար, վերագրվում է շինարարական վերջին փուլին: Այն քողարկում էր անառիկ բերդաժայռերի միջև գոյություն ունեցող բնական ջրաբաշխ գծի ստորին, լայն հատվածը, որտեղով հնարավոր էր բարձրանալ և արևմտյան կողմից հայտնվել ամրոցի միջնաբերդում: Պարսպապատերի երկրորդ գոտին վերջինից մոտ 150 մ բարձր է: Այստեղ ուղղաձիգ ժայռազանգվածի վրա տեղադրված է կիսաշրջանաձև, սնամեջ դիտաշտարակը (գծ. II, 1, № 7), որի հյուսիսային անկյունը լծորդված է ուղիղ անկյուն կազմող բերդապարսպի հատվածով: Աշտարակի արևմտահայաց պատին պահպանվել է դեպի ներս լայնացող պատեր ունեցող ուղղանկյուն դիտանցքը: Այս դիտաշտարակից կարելի էր հսկողության տակ պահել Ողջի գետահովտի ընդարձակ շրջանը և հետևել հակառակորդի զորաշարժերին: Պարսպապատերի այս խմբից հարավ նշմարվում են ոլորաձև պարսպապատի հետքեր, որոնք նույնպես քողարկվում են ջրբաշխ գծով դեպի վեր լայնացող միջանցքը՝ հարավարևելքից (գծ. II, 1, № 8):

Բերդատեղի արևելյան հատվածը անտառապատ բլուր է, որը ողորկ մակերևույթով բարձրանում է դեպի ժայռածածկ գագաթը և լծորդվում հրվանդանի լեռնաշղթայի վզիկին: Բնական խոչընդոտներից զուրկ այս հատվածում են տարածվում ամրոցի աշտարակավոր պարսպապատերը (տես նկ.), որոնք ձգվելով հարավից հյուսիս, հարավում շրջվում են դեպի հյուսիս-արևմուտք՝ իրենց մեջ առնելով ժայռի կատարին կառուցված սնամեջ միակ աշտարակը (գծ. II, 1, № 1): Վերջինս, դիրքադրության պատճառով, գլխավոր մայրուղուց (այժմ՝ Ղափան-Քաջարան) հազիվ է նշմարվում, որի շնորհիվ աշտարակն իր հսկողության տեսադաշտում պահում էր դեպի ամրոցը մոտեցող մատչելի արևմտակողմ ուղղությունը: Պարսպապատերի այս ընդարձակ գոտին կառուցված է գետի հունից ամենաբարձր մակարդակի վրա: Այն ուղղաձիգ հատվածներից կազմված բեկյալ է, որի համարյա բոլոր անկյուններում տեղադրված են հաստաբուն, բրգաձև, հատակագծում՝ կիսաշրջանաձև հինգ բուրգորմահեցերը: Վերջիններս խմբավորված են պարսպապատի հյուսիսային հատվածում և ունեն տարբեր տրամաչափեր (7-12 մ): Կոնստրուկտիվ միջոցառումներից ելնելով, պարսպապատի հարավարևմտյան հատվածը, որն ամրացված չէ բուրգերով, և ուր տեղադրված է բերդի միակ, այժմ կիսավեր մուտքը (գծ. II, 1, № 3) ավելի հաստավուն է (2.5 մ) : Մուտքի հյուսիսային կողմում տեղադրված հոծ բուրգը իր տրամաչափով ամենամեծն է (12 մ գծ. II, 2, № 3), քանի որ այն օգտագործվել է որպես մուտքը պաշտպանող հսկիչ-մարտաշտարակ: Թշնամին, որը կարող էր մոտենալ այս կողմին, աջից ընկնում էր կողային հարվածի տակ, իսկ ձախ կողմում նահանջելու տեղ չկար, քանի որ այստեղ սկսվում էր անդնդախոր կիրճը: Բուրգից քիչ ներքև տեղադրված է երկու հրակնատներից մեկը, որն այժմ կիսավեր է: Այս հրակնատի դիրքորոշումը ևս կապված է մուտքի պաշտպանության ապահովության հետ (գծ. II, 2, № 2): Թերևս այս երկու հնարքների կիրառությունը կարող էր բավարար լինել ամրոցի մուտքը անարգել պահելու համար, սակայն այստեղ օգտագործված են նաև հայկական ամրոցաշինության մեջ լայն տարածում գտած մուտքային փակուղիները (շլյուզները): Ամրոցի մուտքային հատվածի պարսպապատը կառուցված է այնպես, որ թշնամին մուտքից ներս մտնելիս հայտնվում էր դիմացի ուղղաձիգ

ժայռազանգվածի առջև: Ներսի հատվածում պարսպապատը, անկյուն կազմելով, նեղացնում է դեպի միջնաբերդ տանող հնարավոր անցուղին, որտեղով կարելի էր անցնել միայն 1-2 շարքով: Պարսպապատի և ժայռի միջև ստեղծված այս նեղ միջանցքը ևս, որտեղ կարող էր հայտնվել թշնամին, պաշտպանված էր ժայռի կատարին տեղադրված պահակ-աշտարակով (գծ. II, 2, № 4) և մուտքի աջ կողմում տեղադրված հրակնատով (գծ. II, 2, № 2): Այս հրակնատը հատակագծում ունի ուղղանկյուն նկարվածք, որը դեպի դուրս ավարտվում է խորանով: Այս փոքր ծավալը ծածկված է եղել թաղով, իսկ խորանի մասում՝ կիսագունդ գմբեթարդով: Հրակնատի կողային, երկայնական պատերը պարսպապատի մակերևույթից ուղղահայաց շարունակվում են դեպի ներս և հենվում ժայռի վրա: Հրակնատի նման հորինվածքը հնարավորություն է տվել մարտական գործողություններ վարել երկու ուղղությամբ, անկյան տակ և արգելակել մուտքից ներս հայտնված թշնամու առաջխաղացումը:

Սարաոստի գագաթը շրջապատող բերդապատերի միակողմանի հատվածով և արևմտյան ժայռապարիսպով կազմված միջնաբերդի ներքին տարածությունը, այժմ քողարկված է հողի հաստ շերտով: Այս ընդարձակ տարածքում (150 մ X 50 մ) պահպանվել են միայն աննշան շինությունների հետքերը: Միջնաբերդի արևմտյան անկյունում, պարսպապատերից մոտ 13 մ ներս, պահպանվել են հաստ պատերով (2-2.5 մ) ուղղանկյուն՝ 10 մ X 12 մ շինության պատերի մնացորդները: Այն դիրքորոշված է փոքր բարձունքի վրա և հավանաբար, ծառայել է, որպես հյուսիսային ռազմական ճանապարհի մատույցները հսկող դիտաշտարակ (գծ. II, 1, № 5): Կառույցի արևելյան պատը պահպանվել է մետ 2.5-3 մ բարձրությամբ, որի պատերի մեջ, հորիզոնական ուղղությամբ պահպանվել են գերանների որոշ բներ: Դիտաշտարակի շրջակա տարածքում հայտնաբերվել են աղյուսե ուղղանկյուն քարեր: Հնարավոր է, որ կառույցը ենթարկվել է նորոգման, որի ժամանակ որպես շինանյութ օգտագործվել է աղյուսը: Ամրոցի արևելյան պարսպապատի ներսում, նրան անմիջապես հպված, պահպանվել են որոշ սենյակների բների փոսորակները, որոնք դիրքորոշված են հյուսիսից հարավ (գծ. II, 1, № 10): Հնարավոր է, որ այս կառույցները ծառայել են որպես զինանոցներ, մթերանոցներ, խցեր: Բաղաբերդն անկասկած ունեցել է նաև գետնուղի և ջրամատակարարման համակարգ: Ժողովրդական զրույցների համաձայն Ողջագետի ափին դուրս եկող հորդառատ աղբյուրը ժամանակին գտնվել է բերդի ներսում[33]: Անհնար է Բաղաբերդ ամրոցի միջնաբերդի շինությունների մասին գաղափար կազմել առանց հնագիտական աչալուրջ հետազոտությունների և պեղումների:

270 մ երկարություն ունեցող պարսպապատերի ամբողջ գոտին, որը ներկայումս պահպանվել է 8 մ բարձրությամբ, կառուցվել է շինարարական երեք փուլերով: Ամրոցի պատերն ու բուրգերը եռաշերտ են, կառուցված՝ բազալտե, կիսամշակ, անկանոն քարերից, կրաշաղախի միջնաշերտով (հաստ.՝ 1,20-2,50 մ): Պատերի շարվածքում առավելապես պահպանված են հորիզոնական կարանները: Ամրոցի հերթական նորոգման ժամանակ, պատերի ամրացման նպատակով, շաղախով փակվել են անկանոն քարերի շրջակա ճեղքերը, այնպես, որ սվաղված մակերևույթներից դուրս են մնացել քարերի ուռած մասերը: Պատերի քարերի շարքի հորիզոնական կարանները պահպանելու համար յուրաքանչյուր նոր քարե շարք կառուցելուց առաջ տափարակ, փոքր քարերով հարթեցվել է հաջորդ քարե շարքի հիմքը: Տեղում, մեր կողմից կատարած ուսումնասիրություններն բացահայտեցին այն փաստը, որ շինարարության ընթացքում օգտագործվել է տեղափոխվող տախտակամած, որի գերանների բները պահպանվել են տարբեր հատվածներում, միևնույն մակարդակի վրա: Պատերն ու աշտարակները կառուցելիս, իրարից որոշակի հեռավորության վրա՝ 80 սմ - 90 սմ, տեղադրվել են պատերին ուղղահայաց, հաստավուն (15-20 սմ) բարձակ (կոնսոլ) կազմող գերաններ, որոնց վրա, կառուցվող պատին զուգահեռ, հենվել է տախտակամածը: Պատի տվյալ հատվածը կառուցելուց հետո, գերանների բարձակի հատվածները կտրել են և տախտակամածը նույնությամբ տեղափոխել վերին նիշում՝ նախօրոք պատի մեջ թողնված գերանների վրա: Որոշ բներում, մինչ օրս պահպանվել են տախտակամածի հենարանները հանդիսացող գերանների ձևափոխված մնացորդները[34]:

Նորոգման մեկ այլ փաստ. արևելյան պարսպապատի միջին հատվածում տեղադրված պատի ստորին մասում, բուրգի կիսաշրջան հիմքի հատվածը մոտ 1 մ բարձրությամբ շարված է ուղղանկյուն նկարվածք ունեցող աղյուսներով, որոնք ամրացված են կրաշաղախով: Շինարարական երրորդ փուլին է վերագրվում նաև Ողջագետի հունի մոտ կառուցված, այժմ ուղղագիծ հատվածով պահպանված պարսպապատի հատվածը (գծ. II, 1, № 9): Ենթադրվում է, որ առաջնապարսպի այս գոտին կառուցվել է, երբ Սյունյաց թագավորության մայրաքաղաքը Կապանի գրավումից հետո տեղափոխվել է Բաղաբերդ: 1103-1170 թթ. ժամանակաշրջանը հանդիսացել է ամենակարևորն ու վճռականը, քանի որ Բաղաբերդը գրավելուց հետո վերանում է Սյունիքի թագավորությունը: Անառիկ Բաղաբերդը գրավել են խաբեությամբ, մեկ գիշերվա ընթացքում: Ստ. Օրբելյանը բերդը գրավելու մասին հիշատակությունում[35] ակնարկում Կկոց քար ամրոցը, որը եղել է Տաթև-Բաղաբերդ ճանապարհի վերջին պահակակետը: Այն գտնվում էր Բաղաբերդից 2-3 կմ արևելք, Ալաղվա գյուղի մոտ[36]:

Ամփոփելով շարադրանքը, կարելի է եզրակացնել, որ Բաղաբերդը եղել է Սյունյաց աշխարհի ամենաամուր բերդերից մեկը: Տեղանքի առանձնահատկությունները հմտորեն օգտագործելու և ռազմաշինարվեստի լավագույն ավանդույթները ներդնելու շնորհիվ դարերի ընթացքում այն մնացել է անառիկ բազմաթիվ այլազգի զավթիչների համար: Ռազմաստրատեգիական նկատառումներից ելնելով ամրոցն ունեցել է երկու կարևոր շրջան. առաջին՝ մինչ թագավորական (IV դ. երկրորդ կեսից մինչև 1103 թ.) և երկրորդ՝ Սյունիքի թագավորության ժամանակաշրջանը (970-1170 թթ.): Առաջին շրջանում ամրոցն օգտագործվել է որպես հուսալի ապաստարան և թաքստավայր, ուր բազմիցս թշնամու հետապնդումներից թաքնվել ու փրկվել են Սյունյաց իշխանները: Երկրորդ շրջանում ամրոցն ստանում է համապետական, ռազմավարական նշանակություն՝ հանդիսանալով միակենտրոն պաշտպանական համակարգի գլխավոր տարրը: Այլ բերդերի հետ միասին Բաղաբերդը կազմում է Կապան մայրաքաղաքի ճառագայթաձև պաշտպանական համակարգի գլխավոր օղակը: Երկրորդ շրջանում կարելի է առանձնացնել նաև 1103-1170 թթ. միջև ընկած ժամանակահատվածը, երբ Բաղաբերդը հանդես է գալիս որպես թագավորության մայրաքաղաք: Այդ շրջանում ամրոցի ռազմաստրատեգիական դերը հասնում է առավելագույնի: Այդ պատճառով էլ Սյունիքի բազմաթիվ հարստությունները կենտրոնանում են անառիկ մնացած ռազմական միակ հենակետում:

Ճարտարապետական տեսակետից Բաղաբերդը հայկական ռազմաշինարվեստի եզակի կառույց է: Այստեղ օգտագործվել են հայկական ամրոցաշինության՝ տվյալ ժամանակահատվածում գոյություն ունեցող լավագույն ավանդույթները: Այլ ամրոցների հետ համեմատած, այստեղ շատ ինքնատիպ և յուրովի լուծում են ստացել մուտքային հանգույցի պաշտպանությունը, հրակնատների տիպը և նրանց դիրքորոշումն ու հատակագծային լուծումը, բուրգերի, որմնահեցերի, դիտաշտարակների և բերդապարիսպների տեղընտրությունն ու կառուցապատումը:

Ծանոթագրություններ

1. Բ. Հ. Հարությունյանի կարծիքով Սյունիքի թագավորությունը հիմնվել է 987 թ. («Հայ ժողովրդի պատմություն», հ.

III, Երևան, 1976, է 117):

2. Ստ. Օրբելյանը Կապանը նույնացնում է Բաղաբերդի հետ, սակայն այլ առիթով Կապանը և Բաղաբերդը նշում է իբրև տարբեր բնակավայրեր («Պատմութիւն նահանգին Սիսական, .արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ վարդապետ Շահնազարեանց» (այսուհետև՝ Ստ. Օրբէլեան), Փարիզ, 1859, էջ 12-13):

3. Կապանը Սյունիքի թագավորության մայրաքաղաք է դարձել հավանաբար 998-1001 թթ. (Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 203):

4. А. Карагезян, Вопросы исторической географии области Сюник (անտիպ աշխատություն):

5. Այս ճանապարհների պաշտպանական հենակետերի մասին ավելի հանգամանալից տես Ա. Ղարագյոզյան, Սյունիքի հարավարևմտյան մասի ճանապարհները [«Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1980, № 2, էջ 263-265, նույնի՝ Բաղաբերդ («Սովետական Հայաստան», 1980, № 6, էջ 32-33)]: Հեղինակի կարծիքով Տաթև-Բաղաբերդ ճանապարհով են ներխուժել թուրք-սելջուկները և Կկոց քարը գրավելուց հետո տիրել Բաղաբերդին: Նշենք, որ Բաղաբերդը փորձել են գրավել նաև հարավարևմտյան և հարավարևելյան ուղղություններով, քանի որ պատմական տվյալները տեղեկացնում են, որ 1152 թ. թուրք-սելջուկները գրավում են Շլորուտը (հարավարևելյան ճանապարհ), 1166-1169 թթ.՝ Գրհամը, Գեղին (արևմտյան ճանապարհ) և որից հետո միայն 1170 թ. Կկոց քարը, այսինքն՝ Տաթև-Բաղաբերդ հյուսիսային ճանապարհի վերջին ռազմական հենակետը [«Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց» (այսուհետև՝ Սիսական), Թիֆլիս, 1910, էջ 335-336]:

6. Տ. Մ. Սահակյանը Սյունիքի մայրաքաղաքն անվանում է Կապան-Բաղաբերդ [Տ. Մ. Սահակյան, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում (ՊԲՀ, 1966, № 3, էջ 223)]:

7. Սյունիքի միակենտրոն և երկկենտրոն պաշտպանական համակարգերի մասին տես Ա. Զարյան, Որոտնաբերդ-Որոտնավանք պաշտպանական համակարգը [«Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև ԼՀԳ), 1986, № 10, էջ 61]:

8. Կապան քաղաքի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է V դ. վերջին քառորդին (Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 122), իսկ Բաղաբերդը նշանավոր է եղել IV դ. և կազմել է ռազմական նշանակություն ունեցող ճանապարհի պաշտպանական համակարգի մի մասը:

9. «... պատմության մեջ հաճախ կը տեսնվի, որ երբ երկրին բնակիչները փախչիլ կուզեին, ասոր մեջ (Բաղաբերդի- Ա. Զ.) կամրանային» (Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, Վենետիկ, 1903-1905, էջ 376):

10. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 86:

11. «Բայց յոլովք ի տերանցն կուսակալաց յանառիկ ամրոցն Բաղաց դիմեալք՝ հավաքեալք՝ փրծանէին ի ձեռաց նեզչացն» (Հովհաննես Կաթողիկոս, Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 160): Շատ հավանական է, որ Սյունյաց իշխանները պաշտպանվել են Բաղաբերդում, քանի որ այն եղել է Բաղաց աշխարհի ամենաանառիկ ամրոցը:

12. Հ. Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 376, Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 295:

13. Բաղաց (Կապանի) թագավորությունը իր տիրապետության տակ ուներ 43 բերդ, 48 վանք և 1008 գյուղ (Սիսական, էջ 333-335):

14. «... 552(1103) թուին՝ որ մի յանկարծակի մինչ կային յանհոգոսթեան քաղաքացիքն, մտանեաց Տէր զանառիկն ի մարդկանէ զԿապան քաղաք, և անիծեալ՝ Չորթման վասն քինուն իւր յեղակարծում ժամու հեղաւ ի վերայ քաղաքին...» (նույն տեղում):

15. Նույն տեղում:

16. Նույն տեղում, էջ 336:

17. Վարդան պատմիչ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 89:

18. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 49: X դ. սկսած Բաղք գավառը հայտնի է եղել Աճեն կամ Աճանան անուններով, որը հետագա դարերում էլ շարունակվել է գործածական մնալ: Այս մասին տես Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 130-132:

19. Սիսական , էջ 79:

20. Ենթադրվում է, որ Բաղակի քարը գտնվում է Բաղաբերդի դիմաց, նրանից 700-800 մ հեռավորության վրա, Ողջագետի ձախ ափին: Այստեղ գոյություն ունեցող Բաղակի վանքում պահվել են հսկայական հարստություններ, որոնք կողոպտվել են Հարոն ամիրայի կողմից: Բաղակի քարի մասին տես Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 118, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», Երևան, 1986, էջ 570:

21. Սիսական, էջ 335-336:

22. Ստ. Օրպէլեան, Ողբ ի սուրբ Կաթողիկոսէն, բնագիրը յառաջաբանով և ծանօթութիւններով հրատարակեց Կարապետ Կոստանյանց, Թիֆլիս, 1885, էջ 38:

23. Ստ. Օրբէլեան, էջ 80:

24. Ղևոնդ Ալիշան, Սիսական, էջ 295-296:

25. Ստ. Օրբելյանը Բաղաբերդը նույնացնում է Բաղակի քարի հետ, սակայն իրականում դրանք տարբեր աշխարհագրական վայրեր են, ընդ որում, Բաղակի քարը եղել է վանք: Այս մասին տես Թ. Խ. Հակոբյան, Ձորք կամ Կապան [ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1950, № 4 էջ 65-66]:

26. Ստ. Օրբէլեան, էջ 51-52:

27. Բաղաց աշխարհի մասին հիշատակություններ կան Ասողիկի մոտ՝ Վահանիկին կաթողիկոս ընտրելու կապակցությամբ. «ի Բազաց գաւառէ, որդի Ջուանշէրի իշխանին Բաղաց» (Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 181): Բաղք անվան ստուգաբանության մասին տես Գր. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армении (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ» հ. XIV, Երևան, 1940, էջ 380-381), Թ. Խ. Հակոբյան, նշվ. հոդվ., էջ 69-70, Ա. Ղաբագյոզյան, Սյունիքի Բաղք և Քաջունիք գավառների ստուգաբանության շուրջ (ԼՀԳ, 1978, № 12, էջ 71-73):

28. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», էջ 579-580:

29. «...զԱրեւիկ եւ զԲաղս» (Շապուհ Բագրատունի, Պատմութիւն, Էջմիածին, 1921, էջ 65):

30. Ստ. Օրբէլեան, էջ 51:

31. Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 43:

32. Ստ. Օրբէլեան, էջ 50-52:

33. Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 118:

34. Թ. Խ. Հակոբյանի կարծիքով աշտարակների վրա պահպանված այս անցքերը ծառայել են որպես դիտանցքներ կամ օգտագործվել թշնամու վրա վառվող հեղուկ թափելու համար (Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 117): Այս բացատրությունն անհավանական է, քանզի նման անցքերով աշտարակները եղել են հոծ, իսկ անցքերը՝ միևնույն մակարդակի վրա: Իրարից հավասար հեռավորությամբ տեղաբաշխված անցքերը սկսվում են պատի ստորին մասերից, որտեղից անհնար է մարտ վարել: Բացի այդ, աշտարակները կառուցված են մեծ թեքության վրա, որով և բացատրվում է տախտակամածի օգտագործման անհրաժեշտությունը:

35. Սիսական, էջ 335-336:

36. Կկոց քարի մասին, ինչպես նաև նրանից հյուսիս գտնվող Ղըզղալա (Աչաղու բերդ) ամրոցների մասին, ավելի հանգամանալից տես Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 134-135, Ա. Ղարագյոզյան, Սյունիքի հարավարևելյան մասի ճանապարհները (ՊԲՀ, 1980, № 2, էջ 264): ■

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՎԱՆԴԱՁՐՈՒՅՑՆԵՐ

Չորթմանի արշավանքը

Հատված Սերգեյ Ումառյանի «Բաղաբերդ» վիպակից

ՍԵՐԳԵՅ ՈՒՄԱՌՅԱՆ
Արձակագիր, թարգմանիչ

Ա

Գիշերը հոգնած ուղտի պես ծանր քայլերով իջավ Սեբիլյան լեռների հովիտը: Տոթը կարծես խտանում էր ուղտերի բերաններից ելնող գոլորշուց:

Չեչոտ Չորթմանի դեմքը վառվում էր քրտինքից ու նա հաճախ սափրած գլուխը կոխում էր առվի սառը ջրի մեջ, անհամբեր սպասում սուրհանդակին: Նա որոշել էր իր բանակը գիշերով շարժել, որ տեղի բնակիչները չտեսնեին, թե դեպի ուր էր տանում իր զորագնդերը:

– Փատլունը շուտով այստեղ կլինի, տեր իմ,– Չորթմանին զեկուցեց համարզ Ալին,– նրա բանակը շարժվում է Արաքսի ձախ ափով՝ դեպի Նակորզան:

– Որտե՞ղ է Ապիրատյան իշխանը:

– Այստեղ է: Սպասում է քո հրամանին:

– Կանչիր:

– Հիմա, տեր իմ:

Չորթմանը մոտեցավ մի խումբ զինվորների և ասաց.

– Մենք վաղը կհասնենք Արաքս գետը: Քանի վեր բարձրանանք՝ այնքան զով է լինելու: Իսկ երբ հասնենք Բաղաբերդին՝ ալլահը թող մեզ օգնական լինի, զովն ու գեղեցիկ աղջիկները միասին կլինեն:

– Լա Իլլահա հիլլ ալլահ,– միաբերան գոչեցին զինվորները, թռչկոտելով դես ու դեն,– Չորթմանը մեզ դրախտ է տանում:

– Ալլահի բարի երեկոն Չորթման իշխանին,– ասաց Գանձակի Էմիր Փատլունը, Ապիրատյանի հետ,– կամրջի հեռավորությունը ուշացրեց, ես Արաքսը վաղուց կանցնեի:

– Աչքս ճանապարհիդ էր, Փատլուն, ականջս՝ սուրհանդակի ձայնին:

– Ալլահը թող մեր իղձերի ճանապարհը կարճացնի:

– Ինչպե՞ս է Անիի իշխանը:

– Զինվորի պես:

– Այս պատերազմը կվճռի նաև քո թագի հարցը: Հայոց թագավորները Անիում են նստել, ոչ թե Բաղաբերդում:

– Շնորհակալ եմ Չորթման իշխանից,– պատասխանեց Ապիրատյանը:

Չորթմանը նախօրոք պատրաստել էր Բաղաբերդ մեկնելու մի խումբ, որը պետք է ղեկավարեր Էմիր Փատլունը: Նա անեցի իշխան Ապիրատյանի թագ ստանալու ձգտումը օգտագործեց իր դավադրական նպատակի համար, առաջին հերթին որոշեց մեջտեղից վերացնել Բաղաց թագավոր Սենեքերիմին, որպեսզի թուլացնի Կապանի պաշտպանության ոգին, հեշտ ճանապարհ հարթելով Բաղաբերդ ամրոցը գրավելու:

Չորթմանը երկար տարիներ ծառայելով Մելիք-շահի պալատում՝ լավ էր յուրացրել խարդախության, խաբեության ու սպանության միջոցները, ուստի ինքն էր մշակել Սենեքերիմի ոչնչացման միջոցները:

Թուլամորթ ու թագատենչ Ապիրատյանը արդեն Չորթմանի ձեռքին դարձել էր թեթև գործիք, որն ինչպես ցանկանում բանեցնում էր նրան:

Ապիրատյանի թագ ստանալու ծրագրերը սկզբում այլ կերպ էին, բայց երբ տեսավ, որ նպատակին հասնել չի կարողանում՝ գիտակցաբար իր վրա վերցրեց դավաճանի դերը: Սակայն նա երկար տատանվում էր ու եռում էր հակասական մտքերի մեջ, մանավանդ, երբ մտածում էր, որ կարող է մոտալուտ ճակատամարտում Չորթմանը պարտվել և այդպիսով հավիտյան իր վրա կմնար դավաճանի ամոթալի անունը:

– Բաղաբերդում իմ երևալը արդյո՞ք կասկածի տեղիք չի տա հեռատես ու զգուշավոր Սենեքերիմ արքային,– հարցրեց Ապիրատյանը:

– Վախից դողո՞ւմ ես,– հարցրեց Չորթմանը:

– Ոչ, Չորթման իշխան, ջերմախտից հետո երեկոները հաճախ է լինում այս անտանելի դողոցը: Ներսումս կարծես սառույց են դրել,– պատասխանեց Ապիրատյանը, կարծելով, որ Չորթմանը տեսնում է իր ներքին ալեկոծումները:

– Բաղաբերդում ոչ թե կկասկածեն քեզ վրա, Ապիրատյան իշխան, այլ կվստահեն, մանավանդ, որ Էմիր Փատլունի անունից ես ներկայանում ի վնաս նրա հակառակորդ Չորթմանի: Քո նպատակը բարի է, դու Բաղաբերդ չես մտնի: Ամեն ինչ կանի Փատլունը և դու հեշտությամբ կստանաս թագ: Հիմա եթե մի հայ գյուղացու առաջարկեմ իմ պայմանը՝ վազելով կգնա:

– Ես համոզված եմ, որ առանց Սենեքերիմին

սպանելու՝ Չորթմանը կհաղթի ու կգրավի Բաղաբերդը:

– Անեցի աղվես, քննությա՞ն ես դնում իմ հրամանը: Ուզո՞ւմ ես որպես դավաճանի քո գլուխն ուղարկեմ Սենեքերիմ թագավորին...

Ապիրատյանը հասկացավ, որ Չորթմանը ինչպես ցանկանա, այնպես էլ կվարվի իր հետ: Նա ակամայից ձեռքը տարավ դեպի գլուխը: Չորթմանն ու Փատլունը նկատեցին այդ ու ծիծաղեցին: Այնուհետև նրանք լուռ գլուխ տվին Չորթմանին ու հեռացան:

– Թույլ տուր նոր լուր հայտնեմ, տեր իմ,– Չորթմանին մոտեցավ համիարզ Ալին:

– Ասա, Ալի, դու վատ լուր չես հայտնի:

– Այստեղ է հաքիմ Օմար Խայամը:

– Ի՞նչ ես ասում, Ալի...

– Ահա գալիս է նա:

– Ալլա՜հ իմ, մի՞թե կարող եմ աչքերիս հավատալ... Որտեղի՞ց հայտնվեց մեծ Խայամը,– ծոր տալով դիմեց Չորթմանը:

– Կյանքիս բոլոր ճանապարհները միշտ էլ անսպասելի են եղել, Չորթման:

– Այդպես մի ասի, հաքիմ, Մելիքշահի ժամանակ դու, ես, բոլորս էլ լավ էինք ապրում: Թուրքան-Խաթունը բոլորիս բնավեր արեց:

– Դու հիմա ավելի լավ ես, Չորթման... Թավրիզի իշխանը ինչի՞ց է բողոքում:

– Այն ժամանակ միայն մտածում էի Մելիքշահի կյանքը պաշտպանելու մասին, իսկ հիմա՝ մի ամբողջ ժողովրդի...

– Մի՞թե...

– Խայամը իր ուշքն ու միտքը երկնքին հառած՝ աստղերից բացի ոչինչ չի տեսնում: Աշխարհի ցավերը հիմա ավելացել են: Խաչակիրները արևմուտքում նեղում են Իսլամի որդիներին, իսկ մենք մեր քթի տակ հանդուրժում ենք հայերին: Իմ ժողովուրդը այրվում–տապակվում է տոթակեզ անապատներում, տենդը սոված գայլի պես փրթում է Ղուրանը աղոթողներին, մինչդեռ հայերը վայելում են զովասուն սարերի ու անտառների հաճույքը:

– Ինչո՞վ ես համոզված, որ բաղացիք քեզ կգիջեն հայրենի օջախը, Չորթման, նրանք կռվել գիտեն: Մի մոռացիր մեզ ավանդած անցյալի դասերը, հայերի մեջ սյունեցիք ամենաաջ կռվողներն են եղել:

– Ես նրանցից չեմ խնդրի, Խայամ, իմ բանակը եռապատիկ անգամ շատ է, իսկ Սենեքերիմ թագավորի դեմ իմ ոխը՝ ուժեղ...

– Հիշում եմ Մելիքշահի ժամանակվա խրախճանական խաղերը,– պատասխանեց Խայամը,– քո ոխը հին է...

– Մելիքշահը Էմինային ինձ էր ուզում տալ, բայց այդ բաղացին ծաղրեց ինձ՝ հիշեցնելով իմ ստրուկ լինելը... Թողնենք անցյալը, դու այն ասա՝ ի՞նչ գործ ունես այս կողմերում:

– Գնում եմ Մեքքա: Լսեցի որ պատերազմի ես գնում Բաղաբերդի դեմ՝ ցանկացա տեսնել քեզ:

– Գիտեմ, Խայամը պատերազմների դեմ է:

– Այո, Չորթման, դեմ եմ:

– Երբ Մեքքայից վերադառնաս՝ ես նստած կլինեմ Մելիքշահի գահին: Դու կգաս Չորթմանի մոտ ծառայելու, բայց Չորթմանը քեզ Մելիքշահի պես երես չի տա, որ ծաղրես մոլլաներին, շեյխերին, սուրբ Ղուրանը և աստծուն: Գնա Մեքքա, որ այսուհետև քեզ անհավատ չկանչեն: Բարի ճանապարհ, հաքիմ:

Խայամը այլևս ավելորդ համարեց խորամանկ ու քինախնդիր Չորթմանի հետ խոսելը: Այդ ստոր ծառան, որն արդեն իշխանական գահի էր տիրացել՝ ընդունակ էր աշխարհը կործանելու:

Խայամը նստեց քարին ու հայացքը հառեց հեռու գյուղի վրա, որի ճրագները հետզհետե սկսեցին հանգչել: Ճրագների այդ լույսերը որքա՜ն նման էին հանգչող աստղերին...

– Մի՛ վշտանա, հեքիմ Խայամ, իմ տերը բնավորությամբ չար մարդ է:

– Դու սելջուկի պես չես խոսում, տղա:

– Ես պարսիկ եմ, Սպահանցի: Քո աստղադիտարանի ճանապարհը անցնում էր մեր տան մոտով:

– Ո՞ւմ տղան ես:

– Որմնադիր Սասանիի: Ես քեզ ճանաչում եմ... Դու մեր տանը շատ ես եղել:

– Այս ո՞ւմ եմ տեսնում... Սասանիի որդին այն ժամանակ շատ փոքր էր: Հիշում եմ գեղեցիկ քրոջդ:

– Այո, քույրս շատ գեղեցիկ էր, դրա համար էլ գողացան: Հայրս վշտից մեռավ:

– Ի՞նչ գործ ունես այստեղ:

– Զինվոր եմ:

– Ինչպե՞ս է անունդ:

– Ալի:

– Հորդ աշխատանքը պատվաբեր էր, Ալի, ինչո՞ւ ես զինվոր դարձել:

– Պատվաբեր աշխատանքով տուն չես դնի, հաքիմ: Ամեն մի մուսուլման մի քանի կին է պահում: Չհասունացած աղջիկներին նախօրոք են գնում: Ես ոչինչ չունեմ, ինձ պես աղքատին ո՞վ աղջիկ կտա: Բախտ գտնելու համար եմ զինվոր դարձել, հաքիմ Խայամ: Եթե այս պատերազմում հաջողվի մի ձի և մի աղջիկ տանել, նշանակում է մարդավարի կապրեմ:

– Եթե չհաջողվի՞...

– Վատ բաների մասին չեմ մտածում...

– Դու ինչո՞ւ ես մտածում Ալի, որ Բաղաբերդի աղջիկներն ու ձիերը պատրաստ քեզ են սպասում:

– Չորթմանը խոստացել է՝ կանի: Ես նրա համար օրական հինգ անգամ աղոթում եմ:

– Ալի՜,– կանչեց Չորթմանը:

– Տերս կանչում է, հաքիմ Խայամ, ես գնացի, քեզ բարի ճանապարհ: Այնքա՜ն եմ ուզում Մեքքան տեսնել...

– Եթե ուզում ես կտանեմ ինձ հետ:

– Ո՞ր մեղքիս համար... քավության ճանապարհը ինձ համար չէ, սրիս վրա դեռ մի կաթիլ արյուն չկա: Այս պատերազմից հետո գուցե գնամ:

Բ

Հալիձորի բերդի ուղղությամբ Սենեքերիմ թագավորը նկատեց երեք ձիավոր: Առջևի հեծյալը ավելի շատ երեխայի էր նման: Նա հազիվ էր երևում ձիու թամբին: Արքան հասկացավ, որ առջևից ընթացողը Անիի իշխան կարճլիկ Ապիրատյանն է:

– Առջևից երեխա՞ է, արքա, – հարցրեց համիարզը:

– Չափազանց մեծ երեխա է,– ասաց թագավորն ու ծիծաղեց:

Ապիրատյանը մոտեցավ՝ ձիու սանձը քաշեց մոտ տասը քայլ հեռավորության վրա:

– Բաղաց բարեպաշտ թագավորին ողջո՛ւյն:

– Ողջույն, իշխան Ապիրատյան: Ի՞նչ լավ լուր ես բերել իմ երկիրը:

– Նախ համարձակվում եմ հարցնել, թե ինչո՞ւ է Բաղաց արքան ինքնավստահ:

– Ինչի՞ մասին է խոսքը...

– Մի համիարզով շրջելը անզգուշություն է այս անտառախիտ վայրերում:

– Իմ տան մեջ ումի՞ց պիտի վախենամ, Ապիրատյան:

– Անտառներում աղվեսներ շատ կան...

– Աղվեսները թաքուն հավեր գողանալու են սովոր, իսկ ես զինվոր եմ:

Ապիրատյանը իջավ ձիուց: Նրան հետևեց ուղեկցող սելջուկ զինվորը, որը մի քանի քայլ առաջ գալով՝ խոնարհվեց Սենեքերիմ թագավորի առջև ու հետ գնաց:

Ապիրատյանը հպարտությամբ նայեց երկարահասակ զինվորին ու ժպտալով ցույց տվեց իր միակ առավելությունը՝ սպիտակ ու համաչափ ատամները:

Սենեքերիմ թագավորի հոգու խորքում ինչ-որ մի կարեկցանք առաջացավ Անիի թափառական իշխանի հանդեպ, որ նա թագ ստանալու համար ստիպված ծեծում էր սելջուկյան իշխանների դռները: Բայց, ավա՜ղ, նրա բոլոր հույսերը խորտակվել էին ու նա հիմա նորից եկել էր Բաղաց թագավորի մոտ ինչ-որ մի բան միջնորդելու... մտածեց Սենեքերիմ թագավորը:

– Ինչի՞ համար է եկել Ապիրատյանը:

– Այցելության նպատակի մասի՞ն է խոսքը,– շփոթված հարցրեց Անիի իշխանը:

– Էլ ինչի՞ մասին...

– Ես մենակ չեմ, արքա... ահա գալիս է Գանձակի Էմիրը:

– Սուրհանդակը միայն քո անունից լուր բերեց:

– Ես միայն Փատլունի միջնորդն եմ:

– Ի՞նչն ես միջնորդում:

– Նա Չորթմանի թշնամին է:

– Չեմ հավատում:

– Երդվել է Ղուրանի վրա:

– Թշնամին երբ բանակցության մեջ երդվում է, նշանակում է նպատակը վատ է: Ապիրատյանը ինչպիսի ծառայություն էլ որ ցույց տա սելջուկներին, մեկ է՝ Անիի թագավոր չի դառնա:

Գանձակի իշխանը մոտեցավ, թուրը հանեց պատյանից ու պատվի նշան բռնելով՝ ողջունեց Բաղաց թագավորին:

Սենեքերիմը նույն ձևով ողջունեց նրան, բայց ծիծաղը հազիվ զսպեց, երբ մտքում չափեց Փատլունի թրի երկարությունն ու Ապիրատյանի հասակը:

Ձիապանները ձիերը մի կողմ տարան, Ապիրատյանը առաջինը խոսեց, որովհետև միջնորդի պարտականությունն իր վրա էր դրված:

– Էմիր Փատլունը չէ՞ր բարեհաճի հյուրասիրվել Բաղաբերդ ամրոցում:

– Ապիրատյան, Բաղաց թագավորը ես եմ, հրավիրելու պատիվը ինձ է վերաբերում:

– Ես նույնպես Հայոց իշխան եմ, Սենեքերիմ թագավոր:

– Բայց ոչ Բաղաց աշխարհի:

– Այունիքը միշտ էլ եղել է Բագրատունյաց տան հրամանի տակ:

– Եղել էր... մոռացե՞լ է Ապիրատյանը:

– Բաղաց թագավորը չգիտի հյուրընկալության կանոնները,– միջամտեց Էմիր Փատլունը,– իմ ամենաբռի հովիվը քեզանից բարեկիրթ է:

– Ձեր այցելության նպատակը բանակցության նման չէ, Փատլուն, դուք գողունի եք մտել իմ երկիրը...

Էմիր Փատլունը կատաղությունից աբլորի պես վիզը երկարացրեց, սուրը մերկացրած, բղավելով հարձակվեց Սենեքերիմ թագավորի վրա ու խոցեց նրա սիրտը: Էմիրի բղավոցի ազդանշանից մոտակա ծառերի ու թփուտների արանքներից թափվեցին սելջուկ զինվորները ու առանց վայրկյան կորցնելու թրատեցին Սենեքերիմի համիարզին:

Դավադրությունը կատարվել էր...

– Դիակները դու կտանես Բաղաբերդ, Ապիրատյան,– ասաց Էմիր Փատլունը:

– Ե՞ս...

– Չէ՛, ես,– բղավեց Փատլունը:

– Անհնարին բան է, Էմիր:

– Դավաճանելը հնարավո՞ր է, Անիի աղվես... Տար դիակները, գուցե բաղացիք քեզ թագ տան: Զինվորներ, հայդա՜մ,– գոռաց Էմիր Փատլունը ու սուրը մերկացրած փախավ:

Դավաճան Ապիրատյանին մնում էր փախուստի ճանապարհ գտնել և այդ ճանապարհը նրան տարավ դեպի Անի:

Գ

Սենեքերիմ արքայի սպանության լուրը ցնցել էր Բաղաց աշխարհը:

Կապան քաղաքի հրապարակից մինչև Վահանավանք արքայի դիակը տարան ձեռքերի վրա:

Վանքի շքամուտքի մոտ երկշարք կանգնել էին Բաղաց քառասունութ վանքերի ու եկեղեցիների առաջնորդներն ու սաները:

Սգազգեստ Շահանդուխտ թագուհին ու նրա քույր Կատան կանգնել էին ծիածան կամարների տակ, որոնց գլխավերևում փողփողում էին Բաղաց թագավորության վարազադրոշմ, կապույտ դրոշակները՝ երիզված սգո կտորներով:

Արքայազնը մերթ նայում էր խռնված ամբոխին, մերթ բազում հոգևորականներին, աղերսող հայացքով նրանցից հարցնելով՝ սա ի՞նչ ոճիր է... Բայց բոլորը լուռ էին, գլխահակ, ոչ ոք չէր խոսում:

Արքայազնը զարմանքով էր նայում Բաղաց վեհատեսիլ սարերին ու լեռներին, որոնք աստծու աչքերի առաջ անտարբեր կանգնել ու տեսնելով իրենց տիրոջ մահը՝ փուլ չէին գալիս:

Մեծ վիշտ ունեցող մարդու համար աշխարհը թվում է սգատուն:

– Դուք հասկանո՞ւմ եք, թե ով է սպանված, ո՞վ բաղացիներ... մի՞թե դուք միայն արտասվելու եք ընդունակ,– դիմեց արքայազնը:

– Նրանք ցնցված են, որդյակ, թող արտասվեն,– պատասխանեց եպիսկոպոսը:

Սուրհանդակը ճեղքելով հոծ ամբոխի ու հոգևորականների շարքերը, մոտեցավ արքայի դագաղին, ծնկի գալով ասաց.

– Տե՛ր իմ, աշխարհի շատ արքաներ են կտրել իրենց սուրհանդակների լեզուն՝ վատ լուրերի համար: Ես մեծ ցանկությամբ կուզենայի, որ դու հիմա այս ամբոխի առաջ կտրեիր իմ գլուխը, միայն թե կենդանի լինեիր...

Սուրհանդակի դաժան խոսքերից վախվորած ժողովուրդը զգաց, որ ճակատագիրը դահճի կացնով չոքել է Բաղաց աշխարհ վրա:

Սիսքարից կարմրակտուց ագռավների մի երամ անցավ Վահանավանքի վրայով ու թեքվեց դեպի Բաղաց դաշտը: Սիսքարը Բաղաց աշխարհի հեթանոսական հինավուրց զոհարաններից մեկն էր: Ըստ ավանդության՝ այնտեղ էին թաքնված Քրիստոսի հավատամքի թշնամի աստվածները, որոնք խուլ և համր էին: Նախապաշարված ժողովուրդը տեսնելով ագռավների չուն՝ մտածեց, որ երկնքից սահմանված պատիժ է իջել Բաղաց աշխարհի վրա:

– Ո՜վ աստված, օգնիր քո անմեղ ստրուկներին, մեր աշխարհի վրա սև ամպ է իջել... մենք անմե՛ղ ենք, մենք անմեղ ենք,– միաբերան գոչեց ժողովուրդը:

– Խոսիր, սուրհանդակ, մեզ համար հիմա միևնույն է, լավ լուրերի չենք սպասում,– դիմեց արքայազնը:

– Սելջուկների հետիոտն ու հեծյալ բանակները Քաշունիքի անտառներից խորանում են դեպի Բաղաց աշխարհի սիրտը: Գյուղերի խուճապահար բնակիչները փախել են դարանամուտ ձորերն ու սարերը:

– Իսկ որտե՞ղ են մեր գահակալ իշխանները,– եպիսկոպոսին դիմեց արքայազնը:

– Նրանք խնջույքներում մեծ-մեծ խոսել գիտեն, բայց երբ լսում են թշնամու զուռնայի ձայնը՝ իսկույն ծակամուտ են լինում,– պատասխանեց եպիսկոպոսը: – Նրանք գիտեն, որ Բաղաց աշխարհը հիմա թագավոր չունի, ամեն մեկը իր գլխի տերն է...

– Թագավոր ունի, եպիսկոպոս,– ասաց Շահանդուխտ թագուհին,– Սենեքերիմի գահը պատկանում է նրա որդի Գրիգորին:

– Գրիգորը մեր թագավորն է:

– Նա է տերը Բաղաց աշխարհի:

– Հրամայիր, Գրիգոր արքա, մենք քո զինվորներն ենք:

– Կեցցե՛ Գրիգոր թագավորը:

Այս ու այն կողմից գոչում էին մարդիկ, շրջապատելով Վահանավանքը:

– Մի՞թե սա թագադրության ավելի մեծ օծում չէ, եպիսկոպոս,– հարցրեց թագուհին:

– Նա կօծվի նաև օրենքով: Շահանդուխտ, սիրտս տրոփում է ուրախությունից՝ լսելով հոտիս ձայնը: Այունյաց քաջերի համար ոչ մի թշնամի սարսափելի չէ: Խոսիր, Գրիգոր որդիս, խոսիր, թող ժողովուրդը լսի իր նոր թագավորի ձայնը: Խոսիր, որ դագաղում պառկած հայրդ լսի ու հանգիստ քնի սուրբ վանքի մեջ... Նրա սպանության վրեժը դրՒ պիտի առնես:

– Խոսիր, արքա, մենք քեզ հետ ենք,– աղմկում էր ամբոխը:

Վանքի տափարակից քիչ հեռու կանգնել էին մի խումբ գեղջուկներ, շրջապատած Այունեին: Անհանգիստ աղջիկը մերթ շրթունքներն էր կրծոտում, մերթ բռնում կողքից կախած սրի կոթը:

Աղվեսադրոշմ կրող գեղջուկները, որոնք անհավատ էին հռչակվել, իրավունք չունեին մոտենալու վանքին:

Աղանդասեր գեղջուկների ճակատներին խարանված աղվեսադրոշմից ճանաչում էին մարդիկ: Կանայք ատելությամբ նայելով՝ գրողի չանչ էին անում, իսկ ոմանք անպատշաճ հայհոյանքներ էին նետում:

Յուրաքանչյուր աղանդասեր ինքնապաշտպանության համար գաղտնի սուր կամ դանակ էր կրում, այնպես որ, եթե նրանց վրա հարձակում էր լինում՝ նրանք այնքան էլ հեշտ չէին սպանվում:

– Իմ սուրբ հայրեր, իմ արդարամիտ ժողովուրդ,– դիմեց Գրիգոր արքայազնը,– այսօր Սենեքերիմ արքայի մարմինը մենք հանձնում ենք երկնահրաշ Վահանավանքին, իսկ, այնուհետև ձեզ հետ կիջնենք մեր բերդերը, քանի որ անպատեհ վտանգը սպառնում է մարել մեր օջախի ծուխը:

– Թող հավիտյան խաղաղ մնա Բաղաց բարեպաշտ թագավորի երանավետ հոգին,– ասաց եպիսկոպոսը:

– Ամեն...

– Այսօրվանից Բաղաց աշխարհը ես հայտարարում եմ անկախ: Այսուհետև մենք հարկատու չենք ոչ մի օտարի,– շարունակեց արքայազնը,– աղոթքներն ու մաղթանքի խոսքերը թող մնան մեր հոգևոր հայրերին, մեր քույրերին, մեր մայրերին ու կանանց, իսկ սրերը՝ մեզ, իմ սիրելի բաղացիներ:

– Կեցցե՛ Գրիգոր արքան:

– Կեցցե՛ Բաղաց նոր թագավորը:

Այունեն իր խմբից մի քանի քայլ առաջ եկավ, սուրը քաշեց պատյանից ու դիմեց ժողովրդին.

– Ահա առաջին սուրը... ես ստացել եմ Սենեքերիմ թագավորից, իբրև առաջին կին զինվոր Բաղաց աշխարհի:

Աղանդասեր աղջկա ձեռքին մերկացրած սուր տեսնելով՝ վանականները քաշվեցին ժողովրդի կողմը:

Գրիգոր արքան զարմանքից աչքերը հառել էր Այունեին ու հոր նվիրած սրին: Եթե աղանդասերը սուր ունի, նշանակում է կարող է կործանել սելջուկներից ահաբեկված երկիրը: Ինչո՞ւ իր հայրը արմատախիլ չարեց աղանդասերների սփյուռքը Այունյաց աշխարհում, միայն բավարարվեց նրանց առաջնորդներին պատժելով: Դեռ ավելին, իր հայրը սուր նվիրեց այդ անհավատ աղջկան, որը մի քանի քայլ հեռու ցույց է տալիս իր ուժը: Արդյոք ճի՞շտ էին Այունեի հայրենանվեր խոսքերը, թե՞ աղանդասերի խորամանկ քայլ էր... երիտասարդ արքան մտածում էր ու չգիտեր իր մտքերից ո՞րն էր ճիշտը:

– Անհավատ նվազունք, այդ սրի վրա խաչ կա, դու իրավունք չունես կրելու,– ափսոսանքով ասաց Շահանդուխտ թագուհին:

– Սուրն ինձ նվիրել է Սենեքերիմ թագավորը, այդ գիտես դու:

– Մի՞թե մեռել են Բաղաց այրերը, երբ մի անհավատ աղջիկ սուր է ցույց տալիս վանքի դռանը,–ժողովրդին դիմեց թագուհին:

Շահանդուխտի խոսքերից ոգևորված ժողովուրդը աղաղակով քշեց Այունեի վրա, բայց նրանց ալեկոծումը վայրկյան տևեց, երբ տեսան աղանդասեր գեղջուկների մերկացրած սրերը:

Անզեն ժողովուրդը ճարահատյալ քարացավ տեղում:

– Խաղաղվեցե՛ք, ժողովուրդ, խաղաղվեցե՛ք, ի սեր աստծու, հիմա դրա ժամանակը չէ,– դիմեց եպիսկոպոսը,– մի խռովեցրեք հանգուցյալ թագավորի վշտացած հոգին, քանզի նա լսում է մեզ... Ոչ ոք չի արգելում, Այունե, որ դու հայրենիքի պաշտպանության համար սուր կրես, բայց թագավորի նվիրած սուրը պետք չէ ճոճել նրա դիակի մոտ: Ինչո՞ւ եք բոլորդ զինված եկել այստեղ: Կռվե՞լ եք ուզում, սելջուկները հիմա ավերում են Բաղաց գյուղերը: Գնացեք, Այունե, թողեք թագավորասեր ժողովուրդը սգա իր դառը վիշտը:

– Ես մի օր այդ սրով կկտրեմ չափը կորցրած աղանդասերի գլուխը,– հազիվ լսելի ձայնով շշնջաց Գրիգոր արքան:

– Սենեքերիմ արքայի նկատմամբ մեր հարգանքը այսքանով կարողացանք ցույց տալ: Գնանք, վաղվա օրը ցույց կտա, թե մեզանից ով է ավելի ուժեղ հայրենասեր,– պատասխանեց Այունեն ու գեղջուկների հետ իջավ Տանձափարախի ձորը:

Վշտակեզ արևը իջավ մայրամուտի գիրկը... Ձորքի գյուղերից մարդիկ գալիս էին Վահանավանք՝ տեսնելու Սենեքերիմ արքայի թաղումը:

Շատերն անտեղյակ էին, որ սելջուկյան բանակը արդեն Բաղաց դաշտում չոքել էր իրիկնային նամազի, որ լուսաբացի կոչնակից հետո՝ հարձակվի Բաղաբերդի վրա:

«ԲԱՂԱԲԵՐԴ» ՎԻՊԱԿ,
ԵՐԵՎԱՆ 1973

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՎԱՆԴԱՁՐՈՒՅՑՆԵՐ

Հին Կապանի վերջին աշունը

■ Ավանդավեպ: Լրագրային տարբերակ

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ (ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Հայոց ՌԺԹ թվականին, որ է Փրկչական 1170-ը, աշունը ծանրախոհ շուլալվել էր Կապանա տանը: Սարերում գերված անասնագող ելուզակները սպառնում էին աթաբեկի մոտալուտ հաշվեհարդարով: Հալածական գաղթականների խմբերը, գալով Սեւասարի կողմերից, Տաթեւի ուխտն էին գնում եւ այնտեղից սփռվում Վայք, Վիրք ու Մանքերմանի երկիր:

Հոնի ու տանձի կաթուկը, փոփ զկեռն ու կտողենի կեծուռը բռնել էին Բաղաց անտառները, բայց Կապանա գեղջուկն աշնանային հավաքչության չէր գնում:

Բաղաբերդի երիտասարդ տիրակալը զորահավաք էր հայտարարել ու հաճախակի էր գավառները գնում զորատեսի: Իր նախորդի՝ Գրիգոր Բ Նվազ թագավորի գահակալման տարիներին սելջուկներն ավերել էին Կապան ոստանը, ասպատակել թագավորության տասնյակ վանքեր, բերդեր ու գյուղեր: Իր սեւ գործն էր արել 1139-ի ահեղ երկրաշարժը: Գաղթն ահագնացել էր, երկիրը տկարացել, սակայն սելջուկը դեռ աչք ուներ Կապանա կիրճի վրա, որը Բաղքի կապ-լեռնանցքն էր եւ իր աջակողմ բարձունքին ուներ անսասան Բաղաբերդը:

Մոտակա Բաղաբերդ, Աչաղու, Արավար, Շեկք, Հողար, Եճանան, Իցան, Հիմանդրախտ եւ այլ գյուղերի տարեցներն օրավարձու աշխատանք էին կատարում բերդում: Տաթեւից եւ այլ վայրերից այս սարսափազդու ամրոցը բերված հարստություններն ամբարելու նպատակով, բերդավագի ղեկավարությամբ կառուցում էին նոր պահեստարաններ, ընդլայնում Կկվաքարի ու գետակողմի քարայրները:

Մունետիկները շրջում էին գյուղերում.

– Աթաբեկը մեր թագավորին նեղում է, հինգ տարվա հարկ է ուզում…

– Ի՞նչ հարկ, – ընդդիմանում էին ռամիկները,– երկու տարի չկա՝ Գրհամն ու Գեղավանքն է թալանել: Դա ոչ թե հինգ, այլ տասը տարվան կարժենար: Նախիջեւանի աղն ի՞նչ է, վրան ոսկու գին է դրել…

Միապետության ոսկերիզ խաչվառը փողփողում էր Բաղաբերդի վրա: Պարսպամերձ աշտարակի դիտարանից թագավոր Հասան Սակոյան Գեռաքարեցին փարվել էր Կապանա չնաշխարհիկ ձորաստանին: Բերդաբնակ ձեռնասուն եղնիկները հետեւում էին նրան, եւ մտասույզ միապետը, սպասավորի բերած քրեղանից լավաշն ակամա կտրելով, մոտեցնում էր նրանց դնչիկներին: Արքայական հոգում կրակ կար եւ այն ավելի էր փոթոթում թագուհի Կատային: Մի քանի օր առաջ Նորավանքից Ստեփանոս Մեղրեցի եպիսկոպոսը գաղտնագիր էր ուղարկել, որ աթաբեկը երկու կողմերից՝ Գանձակից ու Նախիջեւանից, մտադիր է ներխուժել Այունիք:

Հասանն օղակված էր: Նրան օրհասական կռիվ էր սպասում:

Երբեմնի աշխարհակալ Մեծ Հայք տերությունը դար ընդ դար բեկորվել էր եւ նրանից Այունյաց աշխարհի երրորդ մասում այս փոքրավուն՝ Բաղքի թագավորությունն էր մնացել:

Սարավոյթի շրթաքարե դղյակում կաշեգիր քարտեզներն ու իր նախորդների հրովարտակները քննելով, թագավորը խորհրդի նստեց իշխանների հետ: Նրանց իրազեկեց Կիլիկիո Ներսես կաթողիկոսի, Անիի, Վայքի իշխանների սուրհանդակների թղթերը, տեղեկացավ բերդերի ամրացման ու զինյալների բաշխման աշխատանքների ընթացքին, կազմավորեց համբարակային ծառայություն:

Նավասարդն անցել, հոռի ամիսն էր սկսել, եւ Սիսական տունը Մայր եկեղեցու օրն էր նշում: Գահակալ եպիսկոպոս Տեր-Ստեփանոս Ֆախր-Էլ Մսեհը (սիրեցյալ Քրիստոսի) գիտեր, որ թագավորը, ընդհանուր իրավիճակից ելնելով, ոչ Տաթեւ, ոչ Նորավանք կարող է ժամանել: Արդ, հոռիի Արեգ օրը Հասան թագավորն ու թագուհի Կատան շքախմբով Վահանավանք գնացին:

Այունյաց Մայր եկեղեցու օրը սահմանել էր Սբ Մեսրոպի աշակերտ եւ գործակից, գահակալ եպիսկոպոս Անանիա Թարգմանիչը, եւ այն յոթ դարից ավելի անընդմեջ նշվում էր ժողովրդական տոնախմբությամբ:

Ձիակառքի մեջ, պատարագին ընդառաջ, ծանր խոհեր էին համակել թագավորին: Փորձելով կռահել առաջիկա իրադարձությունների զարգացումը, բռնվում էր սարսուռ պատճառող կասկածի վրա. «Գուցե՞ վերջին անգամ է Այունիքը տոնում Մայր եկեղեցու օրը»:

Նա սթափվեց թագուհու ձեռքմեկնումից: Թիկնազորը նրանց ուղեկցեց վանքի գավիթ, որտեղ հոգեւոր դասը օվսաննա ձայնեց:

Վահանաձորից մինչեւ Կրկնահարկ եկեղեցին ասեղ գցելու տեղ չկար: Գյուղերից ուխտավորներ էին եկել մատաղացուներով, օրհնություն էին հայցում նորապսակները: Թագավորի մռայլությունն աննկատ չմնաց: Սարեցի ձայնարկու մի տատիկ, քթակալն իջեցնելով, կանչեց.

– Աստուծ պահի թագավերին, մեր կլխան անպակաս նի՜…

Աշխուժությունը ծովացավ ուխտավայրում: Թագավորական զույգը ծունր իջավ Վահան Նախաշինողի մահարձանին: Պատարագիչ Տեր-Սահակ քահանան օրհնաբանեց արքային ու թագավորությունը:

Հավարտ պատարագի, Այունյաց տերն ու իր կողակիցը գեղմնահյուս նոր մույկեր հագան ու անցան նախնյաց դամբարանագավիթը: Սարկավագները խնկարկում էին, իսկ թագավորը հազիվ լսելի աղոթում էր. «Քրիստոս աստված, խոնարհ ծառայիդ արժանի արա մեր նախնյաց փառքին…»:

Դրսում տոնախմբությունը շարունակվում էր: Զոկ գուսանների փանդիռների նվագի տակ, իշխանական խրախճարանի գավթում պար էին բռնել նորակոչիկները:

– Մատենագէտ, – դարձավ թագավորը Տեր-Սահակին,– միաբաններիդ հաճո՞ էր իմ հրովարտակը:

– Վսեմաշո՛ւք, վանահայրն այդ գործով է զբաղված: Բղենո Փղոսկրյա Ավետարանն արդեն զինակիրների ուղեկցությամբ ուղարկել ենք Վայոց ձոր: Մեր սրբությունները բերդ կբերենք տոնավարտին ու կհանձնենք գանձարանապետին: Զանգերը հանելու համար արդեն ժամանել են աճանանցի վարպետները…

– Որքա՞ն ժամանակ է անցել քաղաքի ավերումից:

– Ահա վաթսունյոթ տարի է՝ եկեղեցին խնկարկում է Կապանա նահատակներին: Ով ողջ էր մնացել, բնավորվել է հեռու մի գյուղում: Գավառից շատերը գաղթեցին Վիրք ու Մանքերմանի երկիր: Հենց երկու տարի առաջ Գեղավանեցի Վարդիկը Վայք գնաց ու հետը տարավ գյուղերում եղած իր մերձավորների հինգ ընտանիք: Մոտ քսան տարի առաջ Շլորուտի երկու գյուղերը հեռացան մեր աշխարհից…

– Եվ Ջուրջ իշխանը Շահապոնք գնաց, – նրբանկատ շարունակեց թագավորը, – Բաղքի ազատներն են հեռացողներին օրինակ ծառայում: Ի՞նչ կասեք, մեծափառ իշխաններ:

Մահեւան եւ Համտուն իշխաններն անթաքույց խոժոռությամբ նայեցին արքային:

– Ժամանակները փոխվում են,– դժկամ խոսեց Կովսականի իշխանը,– քաղաքի ավերումից երկու տարի հետո Բղենից Խոսրովիկ իշխանին գերի տարան, իսկ ահա երկու տարի առաջ Գեղավանքի, Գրհամի ու Կաբավաբերդի երեւելիներից շատերը հայրենաթող եղան:

– Նրանք Տիրոջ պատժից չեն խուսափի, նզովյա՛լ է հայրենադավը,– պոռթկաց Տեր-Սահակը:

Բաղացսարի կողմի անտառախիտ ձորում կրահորը բանում էր գիշեր-ցերեկ: Մի քանի աչաղվեցիներ օգնում էին կրագործներին: Իրիկնադեմին, երբ կրաքարի շեղջը հողածածկ էին անում, աչաղվեցի Համազը զրուցում էր եճանանցի Սիմոնի հետ:

– Աթաբեկը Շլորուտի կռվի տարուն մեր գյուղից երկու աղջիկ է տարել: Մի առ ժամանակ հետո նրանց տերերին մի– մի խալաթ է ուղարկել: Աղջիկներից մինն իմ ազգականն էր:

– Դե ասա Ելտկուզները քո խնամին են, էլի՛, – հեգնեց Սիմոնը:

– Հա՛, բա՛, – գոհացավ աչաղվեցին:

– Համադանի Էշ, ձերոնք էլ աղջիկ չունե՞ն, որ տաք, խալաթ առնեք, էսա գալիս են:

– Էդպես մի խոսի, Սիմո՛ն, թուրքն էլ ա մարդ:

Սիմոնը շուրջը նայեց, որ մի բան գտնի, տա Համազի գլխովը, բայց սսկվեց:

Դիմացի լեռնակատարից ղողանջ լսվեց: Գուրզը զարկում էին հսկա պղնձե սինուն: Քիչ անց արձագանքեց Աճեն լեռան զանգը: Լսելի եղան հեռավոր լեռնակատարներից եկող խուլ ղողանջները: Մեկը մեկին իմաց անելով, բարձունքներում բոցկլտացին խարույկները:

Աղջամուղջին գործավորները ուրվականների պես հավաքվեցին քարայրի դռանը:

Զանգն ու խարույկը գուժում էին թշնամու գալուստը:

Կապանա տունը չքնեց:

Մթնժորեքը տեղի տվեց խորհրդավոր գիշերվան: Խուստուփի ետնախորքի վրա բիբլիական լեռնակատարները նմանվեցին դիվական կերպարանքների: Գյուղական եկեղեցիների զանգերը գիշերային տագնապ էին հնչեցնում:

Խավարը ճեղքելով, Կապանա տան կանայք՝ ոմանք բարուրները մեջքներին կապած, զարդեղենը ծոցներն առած, լաչակները հանած, իրար ձայն տալով սարվորների մոտ էին բարձրանում:

… Վախթանգի որդի Հասան թագավորը բազմեց գահավորակին, նրա կողքին տեղ գրավեց թագուհին, ամեն մեծավոր կանգնեց իր տեղում: Կերոնների ձիթահոտից նեղվելով, թագավորը խոսեց իրավիճակի մասին.

– Սուրհանդակները գուժել են Ելտկուզ աթաբեկի հարձակումը: Մեզ վրա գալիս են եւ Գանձակից, եւ Նախիջեւանից: Թշնամու բանակում շատ են վարձկան այլազգիները ու նաեւ՝ ուրացած հայեր: Աթաբեկին հայտնի է, որ այստեղ են Տաթեւի ու մյուս վանքերի հարստությունները եւ մեր թագավորական գանձարանը: Նա մտադիր է պաշարել մեր ոստանը եւ գնալ Դվինի վրա: Վրաստանում ամիրսպասալարն ապստամբել է Գեորգի թագավորի դեմ եւ օգնության ակնկալիք չկա: Անիի Շադդադներից էլ հույս չկա: Մեր կողմից պաշտպանության հրամանները տրված են: Գրադարանը պահված է գետնափոր գաղտնարանում: Համտուն զորապետը թշնամուն կճակատի հագարու գետի կողմում, Մահեւան զորապետը՝ Զվարավանքի: Բերդի կայազորի գլուխ ենք կարգում Սմբատ Վաժունեցուն, ազատագունդը նրան զորավիգ: Գլորքի համար քարհատները բերդում կբանեն գիշեր-ցերեկ…

Խոսք վերցրեց Տեր– Սահակը.

– Բոլոր գյուղերի երիտասարդ մարդիկ բանակում են, ժողովուրդը քահանաների ու տանուտերերի առաջնորդությամբ լեռնաստանի ապաստարաններն է քաշվում: Բայց մենք քիչ ենք թուրքի երեք տասնյակ հազարի դեմ: Ո՞ւր է քաջ խաչենցիների օգնությունը, որին սպասում ենք ամսից ավելի:

Թագավորը չարձագանքեց:

Խոնարհման նշան անելով թագավորին, ներկաներին դիմեց թագուհին.

– Իմ բարեհիշատակ հայրը չորս տարի առաջ, մահվան անկողնում պատգամ խոսեց, որը կարդում եմ բոլորիդ. «Իմ հայր Սենեքերիմ արքան քաջազն էր, բայց դավաճանի միջոցով խաբվեց ու թշնամու ծուղակն ընկավ: Դա թող դաս լինի մեր հետնորդների համար»: Ահա այդ թշնամու սերունդն է գալիս մեզ վրա, հետեւաբար ավելի նենգ է ու դաժան: Իմ արքան թող հրամայի, որ թշնամու հետ երբեք բանակցելու չպիտի գնանք…

Թագավորը գեղագանգուր գլուխը ետ ու առաջ արեց, որ հաստատումի նշան էր:

Թագուհին արքունի գրագրին, որ իր ազգականն էր, հրավիրեց զրույցի:

– Իմ տերը Մանուել կայսրին թուղթ չի՞ ուղարկել:

– Ո՛չ, զարմուհիս: Նա անգամ չի զրուցել Բյուզանդիոնի հյուպատոսի հետ:

– Եվ ոչ էլ՝ ռուսաց իշխանին:

– Մեծ իշխանը Վլադիմիրից գնացել ու գրավել է Մանքերման– Կիեւը: Շաբաթ առաջ սուրհանդակ էր եկել, եւ արքան պատվեց նրան:

Թագուհին փոթորկվում էր: Երկրի կառավարումը, իր հորաքույր Շահանդուխտ թագուհու մահվանից հետո, գրեթե այրերի գործն էր: Թագավորն իրեն մասնակից չէր դարձնում շատ խնդիրների քննարկմանը: Նեղվում էր այն շշուկներից, թե, իբր, Հասանն իրեն դեռ եկվորի նման է պահում: «Քո պապ Սենեքերիմը Աղվանից տնից էր եւ դարձավ Կապանա տան զոհը», – երբեմն հիշեցնում էր Հասանը, եւ Կատան ինչ-որ չարագուշակ բան էր գտնում նրա պահվածքի մեջ:

Կատա Սենեքերիմյանը պահանջեց կառքը եւ տխրադալուկ Կապան քաղաքի միակ բանուկ փողոցով դիմեց դեպի Վահանա ուխտ:

Նրան դիմավորեց տագնապած վանահայրը եւ ուղեկցեց սբ Աստվածածին եկեղեցին, որ կառուցել էին թագուհու հորաքույրեր Շահանդուխտ թագուհին ու օրիորդ Կատան: Բազկատարած մոտե-

ցավ Սուրբ սեղանին ու Տիրամոր պատկերի առջեւ արցունքախեղդ աղոթում էր.

– Հայր մեր, որ հերկինս ես… Երկնաճեմ արքա, մեր պաղատանքն ու խոսքը քեզ ենք առաքում քառասունութ վանքերից ու հազար եկեղեցիներից: Քո կամքով ստեղծվեց ու հզորացավ Բաղքիս թագավորությունը: Դու մեր փառքը հասցրիր մինչեւ Չին ու Մաչին, Կիեւյան Ռուսիա, Հոռոմց երկիր: Աղաչում եմ, մեղմիր քո բարկությունը մեզ վրա: Այն օրհասները, որ թուրքի միջոցով բերեցիր մեզ, բավ են եւ մի տանիր նոր փորձությունների: Գթա՛ մեզ, Քրիստոս աստված, պահիր– պահպանիր Սիսական տան վերջին ապավեն Բաղաբերդը: Դու ես այն անպարտելի դարձրել իր ստեղծման օրվանից, երբ Բաղակ նահապետն ապառաժը մեր նախնյաց համար հանգրվան դարձրեց եւ միայն դու կարող ես մեր հայրենի պատվարը մատնել հեթանոսի ձեռքը…

Ձվարավանքի կողմերից նահանջելով, Մահեւան իշխանն անցավ Տաշտունի լեռնանցքն ու ամրացավ Բեխորոտի ու Վաժունիքի բարձունքներում: Սուրհանդակի միջոցով նա օգնական ուժեր խնդրեց Հասան թագավորից ու մերժում ստացավ: Հեծյալների ազատագրումը Ելտկուզյանների հետ ճակատելու էր գնացել Բղենո կողմերը՝ Համտունին զորավիգ: Մեկօրյա նահանջից հետո Սմբատ Վաժունեցին սելջուկյան բանակի դեմ ճակատամարտեց Կավարտի Կշմատուբ հանդում: Վիրավորվելով, մարտի դաշտը լքեց Համտուն Բաղացին, եւ դա պարտության նախանշանը եղավ:

Կապանա գետն ի վեր ավերելով գյուղերն ու Վահանավանքը, սելջուկները դյուրավ հասան հին Կապանի ավերակներին: Իրենց հետ առած Տանձափարախի խարազնազգեստ կրոնավորներին, մերձիմահ ծեծելով նրանց՝ ստիպում էին ցույց տալ թաքցրած գանձերն ու անասունների մակաղատեղերը:

Առաջապահները Աչաղու գյուղի տափարակում մետաքսափայլ վրանադղյակ հավաքեցին, եւ շուտով այնտեղ հանգրվանեց Շամսադդին Ելտկուզ աթաբեկը:

Ավարից զամբիկներ մորթեցին եւ կրակին անցկացնելով, առաջապահ զորքը երիվարի միսը հոշում էր ու փառք տալիս ալլահին՝ պարգեւած հաջողության համար: Մահապարտ ղուլերի (ստրուկ) ջոկատներին հրաման տրվեց՝ անվարան դեպի բերդը գնալ, մագլցել ապառաժներն ի վեր, ճանկապարան գցել:

– Քանի՞ դար է այդ խաչանախշ բայրաղը փողփողում կալայի վրա, – նվաստացում ապրելով Բաղաբերդի երկնագնա պարիսպներից, հարցրեց աթաբեկը:

– Իմ տիրակալ, շուտով այդ փալասն իր դարերի հետ քո ոտքի տակ կլինի, – զվարճաբանեց պալատական խեղկատակը, – սիսաջանցիներն այնտեղ, ոսկու դեզերի վրա նստած, քո ուղտերի քարավանին են սպասում:

– Քո քաջազարմ որդի Մուհամմադ– Ջահանն ավերել է բարձրի գյուղերն ու մոտեցել բերդին: Գյավուրների Սումբաթ մինբաշու (հազարապետ) հայրենի Վաժունիք գյուղում քարը քարին չի թողել, – շողոմեց հետախուզության միաչքանի սերասկյարը:

Հագարացի թարիխչի պատմաբանը հաճոյացավ աթաբեկին.

– Ալլահի ստվեր, ինչպես հրամանդ է՝ հիմնահատակ ավերում ենք այն գյուղերը, որոնք ավելի շատ կռվողներ են հանել մեր դեմ: Դավթարում արդեն քսանհինգն անց եմ կացրել, խրթին անուններ ունեն՝ Արավար, Շեկք, Բարերվայր, Տագամար, Արուքս, Վարդավանք, Պարքոն, Լերմենի շեն, Բեշ…

Աթաբեկը լսել չէր կամենում: Բերդից ու մոտակա բարձունքներից քարագլորքը շարունակվում էր: Պարսպին մոտեցողների վրա վառվող կուպր ու ձեթ էին թափում: Ժայռաբեկորները դղրդյունով գահավիժում էին՝ մահապարտների դիակները թողնելով քարակարկառների մեջ, հասնում ու զարնվում երբեմնի ծաղկուն քաղաքի լքված շինություններին:

Սարերից քշված տավարն ու ոչխարը սելջուկի ձեռքում էին: Մարդորս ասկյարները դարանակալել էին կապերում ու քարափների վրա:

Գերեզմանախույզներն իրենց սեւ գործն էին անում Վահանավանքում:

Աթաբեկի պահանջով գերիներից մի վարդապետ բերեցին, եւ թարիխչին նրան թելադրեց տիրակալի վերջնագիրը. «Հասան աղա, այս երկիրն ալլահը մեզ է նվիրաբերել: Հրամանս է, որ բացես բերդի դարպասը: Դու Առանի խաչենեցի ես եւ, փեսայանալով Սիսաջանի թագավորին, կնոջդ փոխարեն քեզ թագավոր ես հռչակել: Եթե մեկ օրվա մեջ նվերներով չգաս ինձ մոտ որպես բարեկամ, ուրթերից բերել կտամ քո ժողովրդին ու կմորթոտեմ պարսպի տակ, քո աչքի առջեւ»:

Աչաղվեցի երկու պատանդի հետ սուրհանդակ ասկյարները բարձրացան Կկոց քարի ժայռագլուխը, եւ նետաձիգը, թուղթը կապելով նետին, հասցրեց բերդապահներին:

Աչաղուում իրիկնանում էր, երբ պատասխանը տեղ հասավ: Վարդապետն այն կարդաց թարիխչիին: Իմանալով, որ թագուհու կողմից է, պալատականը պապանձվեց: «Վաչկատուն սելջո՛ւկ, մորեխի պարսի պես բռնել ես աշխարհը եւ ահա յոթ տասնամյակ ասպատակում ես իմ հայրենի տունը, գերեզմանները պղծում: Այս երկիրը Նոյի ժամանակներից մերն է, դու երբեք չես կարող տեր լինել: Հեռացիր, մենք չենք կարող անգութ թշնամուն բարեկամ լինել: Սուլթանի մորը քո հարեմում առնելով, քեզ սուլթան ես կարծում: Շատ սուլթաններ են այս ձորում գտել իրենց մահը, հիմա քո ժամն է հասել»:

Թագուհու քայլը կատաղության հասցրեց տիրակալին: Ձայրագին հոխորտալով, նա ոտնատակ տվեց թարիխչիին եւ հրամայեց՝ վարդապետին կապկպել ու գլուխը խոթել գյուրզաների մահապարկը:

Աթաբեկը նոր բան մտածեց:

Ջառչիների միջոցով հավաքեց աչաղվեցիներին: Գերեցին նաեւ սարը փախած մի քանիսին: Համազին նշանակեց չորբաչի (քրիստոնյաների ջոկապետ): Սիրաշահեց այդ միամիտ մարդկանց՝ ավարից մեկական էշ կամ ընջուղ խոստանալով: Եվ հրամայեց գերի քահանային՝ Աչաղուի եկեղեցում պատարագ անել, իսկ ինքն իր մարդախոշոշ ձեռքը դրեց հնամաշ Ավետարանին ու զարմացրեց ռամիկներին.

– Թող հաշտություն լինի, թող սելջուկն ու հայն այլեւս արյուն չթափեն:

Համոզեց՝ կանանց ուղեկցությամբ բերդ բարձրանալ եւ ավետել հաշտությունը: Ջառչի– մունետիկները հասան բարձունքներին, եւ Կապանա ձորն արձագանքում էր.

– Է հե հեյ, աթաբեկը հաշտություն է ուզում, կռիվը վերջացել է՛…

Բայց դավադիր թուրքը ծածուկ զգուշացրեց սերասկյարներին եւ Բեխորոտի կողմից առաջ շարժվող Ջահան Փահլավանին՝ սպառազենների խմբեր ուղարկել Կկվաքարի կողմերը եւ դարանակալ լինել:

Մոլլայի հետ աչաղվեցի բանագնացներն օրվա երկրորդ կեսին գնացին բերդի արեւելակողմ ձորն ի վեր եւ իրիկնադեմին դարձան դեպի Կկվաքար, որ հարեւանում էր բերդին ու նրա հետ միացած էր կաղնեփայտե հսկա կամուրջով:

Կանայք կողովիկներով միրգ էին տանում բերդապահների համար եւ շտապում ժամ առաջ տեղ հասնել: Կկվաքարի աշտարակից բերդապահները ճանաչեցին նրանց:

– Որդյա՛կ, աթաբեկը հեռանում է, էլ կռիվ չկա, – ձայնեց եկվոր ծերուկը:

– Խաբեական խոսք է ասել, հայրի՛կ, մի՛ հավատա, – մռնչաց վիթխարահասակ բերդապահ զինվորը եւ անվրեպ նետահարեց մոլլային: Բանագնացներն իրար անցան: Կանանց վայնասունն արձագանքեց ձորերում: Աչաղվեցի բերդապահների հորդորով բացեցին դարպասը, որ ներս առնեն յուրայիններին: Թաքստոցներից դուրս եկան ասկյարները եւ քարատակերից գահավիժելով ինչպես հեղեղ, սրամարտելով մտան Կկվաքար: Բերդաքաղաքը շանթահար եղավ: Կայազորի կտրիճների մի խումբ, Սմբատ զորապետի ղեկավարությամբ, մայր բերդից խոյացավ դեպի կամուրջը եւ նետերի տարափի տակ ընդունեց մարտը: Մոտակա սարալանջերից ջահերով թշնամական նոր զորախմբեր էին գալիս: Կամուրջն այրվում էր:

– Հասանը փախչում է՛, – բղավեց մեկը դղյակի դիտաշտարակից:

– Թուլական թագավորին արժանի փեսա է, – այրվող կամրջի վրա հառաչեց Սմբատ Վաժունեցին՝ նետն առնելով կրծքին:

Գիշերային բերդաքաղաքը նման էր շնաճանճի վնասված բույնի: Հասանը հրամայեց թիկնապահներին՝ թագուհուն ու ընտանիքի մյուս անդամներին գաղտնուղիով հասցնել մոտակա Բաղաբերդ գյուղ, որտեղ երիվարներ էին պատրաստել: Կատան հեռանալ չէր կամենում, եւ Հասանը, գրկելով փոքրիկ Խերխանին, ահազդու աղաղակեց.

– Ես սրան որտեղի՞ց մայր գտնեմ:

– Վա՜յ մեզ, վա՜յ մեզ: Հորս թագավորական տունն է ավերվում: Փրկյա մեզ, Քրիստոս աստված, – ողբում եւ առ երկինք պաղատում էր Գրիգոր թագավորի դուստրը:

– Բաղաց իշխաններն են լքում իրենց երկիրը, – թունոտ վրա բերեց Հասանը, – իմ տեղեկություններով սելջուկից փախած Մահեւանը հիմա Շիրակ է հասել, իսկ Համտունը՝ Վայքի Հրաշկաբերդ…

– «Իրենց երկիրը», – ցնցվածի պես մտքում կրկնում էր Կատան: Եվ կանացի հնազանդությամբ նաժիշտի ետեւից գնաց դեպի գաղտնադուռը:

Քարագնաց ու ծերպամուտ ասկյարները մթության մեջ, հրդեհի բոցերի ներքո, արդեն կռվում էին մայր բերդի տարածքում: Գիշերային չարագուշակ ժխորը երբեմն ճեղքում էր թուրքաբարբառ վայնասունը. բաղացի կտրիճները, մթան մեջ որսալով նրանց, պարսպից դուրս՝ անդունդն էին նետում:

Կռվի թեժ պահից ժամ առաջ, առանց յուրայիններին հրաժեշտ տալու, Հասան Խաչենեցին՝ Բաղաց թագավորի խույրը գլխին, պարկեր շալակած երկու ծառայի ուղեկցությամբ դուրս եկավ բերդից: Աքլորականչին Բաղաբերդ գյուղում առավ իր ընտանիքն ու Գեղվաձորով ճողոպրեց իր հայրենի տունը՝ Խաչեն:

Սահմի ամսվա Ձոպաբեր օրը (հոկտ. 18) օրհասական եղավ Բաղաբերդի համար: Սելջուկը տեր եղավ գիշերային բերդին: Նա սրածեց մինչեւ հնազանդեցնելն ու գերի հանձնվածներին փակեց եկեղեցու մեջ:

Վրա հասավ դառն ու դժնդակ ժամանակը:

Բաղաբերդի գիշերահամակ բոցերը ճառագում էին մինչեւ անդնդախոր Կապանա գետի պղտոր կոհակները: Արնահոտ գետից լույսի փայլը հասնում էր Քաշունիքի բարձունքներին: Լեռնածերպերում սսկված գեղջուկ մշակներն ամբողջ գիշեր հետեւում էին բերդաքաղաքի հոգեվարքին, ողբում գերյալ հայրենի եզրաց դառնաղետ ճակատագիրը:

Երբ արփին շողաց Արեւիք լեռնապարից, եւ ժամն էր Շառավիղյալ, աթաբեկը շքախմբով ժամանեց Բաղաբերդ: Իջնելով սեւաթույր նժույգից, ուղղեց կարակուլ ոչխարենին, շուրջառի փեշերն առավ ափերի մեջ, անցավ տապալված դարպասներ ու փնտրելով, հարցական նայեց խազինադար– գանձարանապետին:

Տիրակալին ուղեկցեցին բերդի ժայռափոր պահատունը, որի կապարե կնիքն արդեն հանել էին: Կերոնների լույսի ներքո, խազինադարի կարգադրություններով ոսկեղենն ու ակնեղենը դասավորում էին կաշվե պարկերում՝ դավթարում նշումներ անելով:

– Օ՜, արեւափայլ, ակնազարդ այս ոսկե խաչը Տաթեւի խալիֆայինն էր, այս շողափայլ սպասքը Սանաքյարիմ թագավորինն էր, այս…

– Իսկ այս ի՞նչ դավթարներ են դարակներին: Գյավուրի՞ լեզվով են, թե՞ իմ, – թարիխչիին ընդհատեց Ելտկուզը:

– Իրենց լեզվով են, իրենց սուրբ գրքերն են: Ունեն եւ հույն ու ասորի գիտունների գրքերը, Բալազուրիի եւ ուրիշ մուսուլմանների քիթաբներ՝ թարգմանած իրենց լեզվով: Սա Հուդուդ ալ– Ալամն է, որում կա, թե այս Կապանն ունի ընտիր բամբակ, – բացատրություն տվեց թարիխչին եւ ավելացրեց.

– Տասը հազարի հասնող այս կաշեկույտը չի կարող զորացնել աշխարհատենչ սուլթանիդ: Լավ է՝ այն կրակի ճարակ դարձնենք կամ գետը թափել տանք:

– Օ՜, վեհագույնդ բոլոր մուսուլմանների, – մեջտեղ եկավ վայելչատես մի երիտասարդ, որ պալատական բանաստեղծ էր՝ Նիզամի Գյանջեւին, – որքան հաճո են լսելիքիդ իմ քասիդներն ու գազելները, առավել հաճո է ինձ այս անհավատների նարեկը: Քո ծառան այն կարդում է հենց իրենց լեզվով: Աղաչանքս է՝ մի ընդունիր թարիխչիի առաջարկը: Այս ազգը գրքի խենթ է: Ցիր ու ցան արա այս մատենադարանն աշխարհքի երեսին: Ոսկի առած, քո ոտքն են գալու, որ վերստին գնեն կտակարանները:

Աթաբեկին դուր եկավ բանաստեղծի խորհուրդը եւ հրամայեց կուսակալներին՝ գրքերը բարձել ուղտերին, ով ինչքան կամենում է:

Հազարամյա անխորտակելի բերդաքաղաքը նենգաբար նվաճած առաջին թշնամին զննում էր բերդատարածքի շինությունները, հիանում նրա բացառիկ դիրքով: Արեւելակողմից բերդը տիրական էր Բաղքի վրա, արեւմտակողմից՝ Ձորքի:

Ելտկուզը մոտեցավ կամրջախելի մոտ հավաքվածներին: Սեիդները գլուխ չէին հանում տապալված սրբատաշի վրա պատկերված արեւային ժամացույցից: Թարիխչին, որ ամենագիտունի համբավ ուներ, մեկնաբանեց, որ դա գյավուրների ամենազորավոր խաչքարն է: Տիրականն այլայլվեց: Թարիխչին, որ նրան մեծարելու առիթը բաց չէր թողնում, սիրահոժար խոնարհվեց տիրականի գոտկատեղին եւ, դժկամության չհանդիպելով, վարժ շարժումներով նրան միզեցրեց կարծեցյալ խաչքարի վրա:

– Այս կալայի (բերդի) անունը պետք է մոռացության տրվի, – հոխորտաց տիրականը, – գյավուրն այլեւս չպիտի գլուխ բարձրացնի: Թավրիզից դերվիշներ բերեք, որ այստեղ Ղուրան կարդան, սրբագործեն վայրը եւ այն դարձնեն զեյվա:

Ավարառու գումակի սերասկյարին հրամայեց՝ գերիների միջոցով քանդել դղյակը, եկեղեցին, փուռը, աղյուսի թրծարանը, ապականությամբ լցնել ջրամբարները: Եվ ինչ ավարի չի առնվել՝ վիմագրեր, խաչքարեր, գործիքներ ու ամանեղեն, թափել տվեց երեք կողմի անդունդներն ի վար:

Շամսադդին Ելտկուզը ոսկեբեռ ուղտերի քարավանը հանձնեց զորապետ ավագ որդուն եւ նոր ժամանած իշխան Ալակումին ու պատվիրեց՝ անվնաս հասցնել Նախիջեւան:

Նիզամի Գյանջեւին ավարից Նարեկն իրեն վերցրեց:

Երկու օր անց, երբ բերդամերձ գյուղերի ավարը՝ անասուններ, զենք, կահկարասի ու սննդամթերք, տնօրինել էին, եւ օրն էր Երեզկան, Աչաղուի հոնուտ դաշտում հավաքվեցին հրաժեշտի խնջույքի: Աշուղները տափաստանաբնակի մուղամներ էին կլկլացնում: Իժերն իրենց վրա առնելով, օձախաղացները հիացք էին պատճառում հաղթողներին: Երբ օձահման խայտաճամուկ Նայա վիշապը դրեց աթաբեկի ուսերին, Նախիջեւանի, Համադանի, Թավրիզի ու Գանձակի տիրական Շամսադդին Էլդագյազը փառաբանեց ալլահին, որ իր գահակալման ողջ պատմության մեջ իրեն պարգեւեց ամենաճոխ ավարը՝ Բաղաբերդի հարստությունը:

Արծաթափայլ սինու վրա մատուցեցին մտրուկի խորոված ազդր, տիրականը գոչեց.

– Մեր Մեծությունը երախտիք ունի այս գյուղի նկատմամբ, այստեղ ենք առաջինը մեր արդար հացը կտրում: Ալլահն այս գյուղի միջոցով մեզ օգնեց: Ի՞նչ է այս գյուղի անունը…

– Աչախլի՛, Աչախլի՛, – իրենց հնչաբերումին հարիր, բղավեցին չավուշները:

– Եվ ինչո՞ւ են մնում անհավատ ու անհաղորդ մեր կրոնին, – բազմանշանակ մռլտաց նա, – թող մեր հավատքին դառնան եւ շեն ու հաստատ մնան:

Ելտկուզը շրջվեց դեպի հարճերը: Սերասկյարներն անցան գործի: Գյուղում իրարանցում սկսվեց: Ասկյարներն ընկուզենու տակ հավաքեցին ողջ մնացած տղամարդկանց ու մանչուկներին, գերիներից ջոկեցին աչաղվեցիներին: Ձուռնա-թմբուկի նվագի տակ թլպատողներն առաջ եկան: Սեիդի հրահանգով տկլորացնում էին մեծին ու փոքրին, պառկեց-

նում քուրձի վրա: Հեքիմը, ինչ-որ աղոթք ասելով, ասկյարների դիվական քրքիջի ներքո նշտարն ու եղեգնափողը մոտեցնում էր ընկածի ցայլքին: Թլփատվողը, աղիողորմ վայնասուն բարձրացնելով, ցավից գալարվելով դեպի մոտակա եկեղեցու բակն էր վազում: Երբ Համազին մեյդան բերեցին, նա բղավում էր.

– Երկրորդ անգամ մի՞ արեք, ինձ Կապանա ամռանն են թլփատել…

– Օ՜ տայր ինձ զծուխ ծխանի

Եվ զառաւօտն Նաւասարդի,

Ձվազելն եղանց եւ զվարգելն եղջերուաց, – խաչքարին կրթնաց՝ երգում էր Տեր– Սահակը ավերակ Շլորուտի եկեղեցու գավթում: Մարդակեր գայլերի ոհմակից մազապուրծ՝ գավիթ մտան անտուն ու թափառական երեք կին:

– Աղոթիր մեր փրկության համար, Տեր հայր, մարդիկ գազանի բաժին են դառնում, – խանչխանչ էր գալիս ցնցոտիավոր կինը:

– Թուրքը մարդուս գլուխն է կերել, գայլը՝ երեխայիս, խալան երեսանոցս է չանթել, – մղկտում էր հերարձակ գեղջկուհին:

Քահանան անտարբեր էր: Լաչակով կինը նրան վայրի խնձոր մեկնեց: Չվերցրեց:

– Ո՞ւր է ոսկե լանջախաչդ, որ համբուրում էի, դա է՞լ թուրքին մնաց, – հեգնական խոսեց հերարձակը, – ո՞ւր է մեր աստվածը, տուն ու տեղս են ավերել:

– Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանեաք.

Որպէս օրէն էր թագաւորաց, – շարակնում էր քահանան՝ հայացքը հառած դիմացի Քաշինձորին, որտեղով դանդաղ առաջ էր գնում սելջուկյան գումակը՝ ավարը բարձած գրաստներին: Հետո փարվեց խաչքարին ու ողբում էր հորդաբուխ արցունքներով.

– Ամենատես Երկնավոր, ինչո՞ւ աշխարհի վերջն իմ երկրով ավետեցիր, սելջուկի յաթաղանով հայի վերջին ոստանը բնավեր արեցիր, Այունյաց իշխանական տներն արմատից կտրեցիր, բոլորի ապավեն Բաղաբերդը մատնեցիր հեթանոսին: Մենք խղճահարության եւ կարեկցանքի ենք արժանի, որովհետեւ մեր կորուստն ու ավերածությունն առավել եղան, քան Երուսաղեմինը՝ Նաբուգոդոնոսոր արքայից: Մեզ համակեց վերջին թշվառությունը՝ անդառնալիորեն ու հավիտենապես…

Հավաքած վայրի խնձորն ուտելով, կանայք խղճահար նայում էին քահանային: Իսկ նա, աղոթքը վերջացնելուց հետո, կաշեկազմ Ավետարանը թողեց խաչքարին, դեն նետեց տրեխները եւ արեւախանձ արեգունիով մեկեն դիմեց դեպի ձորը:

– Սա էլ է ցնորվել, – թթու խնձորը չփփացնելով, ասաց լաչակավորը:

Տեր-Սահակն անցավ Ձորքի գետն ու, քարավանին հեռվանց հետեւելով, գնաց նրա ետեւից: Աշնանային ձորի բուրմունքի փոխարեն նրան արբեցրել էր գերության տարվող մատենադարանը, որ ավար դարձած՝ մայր մտնող արեւի հետ անցնում էր Բաղաց սահմանասար լեռնանցքով:

Մատենագետը հասավ լեռնանցք, քարավանը տեսադաշտում էր: Հոգեկան տվայտանքին չդիմանալով, Տեր-Սահակն իր արյունոտված մարմինը թողեց ոսկեդեղին անթառամների լանջին ու հրեշտակի թեւով… հանգաւ ի Քրիստոս:

Ձուռնայի նվագի եւ թմբուկների որոտի տակ Էլդագյազը մտավ Նախիջեւան: Դիմավորեցին գահաժառանգը՝ Մուհամեդ Ջահան Փահլավանը եւ իր մտերիմը՝ Ալակում Օրբելյան իշխանը: Ալակումի բախտի անիվն ակամա էր ամրացված սելջուկյան կառքին: Իր տոհմակիցների ոչնչացման վրիժառությամբ լցված՝ նա անձնուրաց ծառայում էր Ելտկուզյաններին: Վլադիմիր– սուզդալյան ռուսական գունդը, որ ճակատելու էր գալիս սելջուկների դեմ, սուրհանդակի միջոցով Տփխիսում պահելով, Ալակումն արդեն ավանդ էր ներդրել Բաղքի թագավորության կործանման մեջ: Ելտկուզյանները նրան խոստացել էին Ռեյ, Սպահան եւ Ղազվին քաղաքների ամիրայի պաշտոնները եւ տեր եղան իրենց խոսքին:

… Ավարաբեռ ուղտերի քարավանն ուղղվեց դեպի ապարանքի գանձարան, իսկ աթաբեկն իր շքախմբով այցի գնաց դամբարանաթաղ:

– Վարպետաց վարպետ, – դարձավ նա Աճեմ ճարտարապետին, – թե գյավուր մնայիր, երբեք հայտնի չէիր դառնա: Իմ գանձարանը լիքն է, կարող ես սկսել մեր տոհմական դամբարանի կառուցումը:

Աճեմի աչքերը փայլ ստացան եւ արտորնոք աթաբեկի ոտքերն ընկավ:

…Բաղաբերդի ավերումից չորս տարի անց Շամսադդին Ելտկուզը մեռավ ու թաղվեց Աճեմ Նախիջեւանցու կառուցած մեծաշուք դամբարանում: Հետո Նոյյան ոստանում հայտնվեցին Մոմինա խանումի եւ այլ ակնեղեն դամբարաններ:

Իսկ Բաղաբերդն ահա ծխում է ութ դարից ավելի: Կապանա տանն առ այսօր թեւում է թագավորության ժամանակներում ստեղծված ասացվածքը. «Թօրքըն օխնու անա յա»: Երբ մի տեղ ծուխը սովորականից երկար է տեւում, նոր կապանցիներն իրենց նախնիների խոսքն են հիշում.

– Բաղաբերդի ծուխն է:

//

Հիշատակարան

Մի քանի տասնամյակ ասպատակելուց հետո, սելջուկը մեր Կապանա տանն ի վերջո տիրեց 832 տարի առաջ: Մեր նախնյաց թագավորությունը հայոց անկախ միապետություններից վերջինն էր: Այն երկար գոյատևեց մեր բնաշխարհում առկա բնական ամրությունների շնորհիվ:

Թշնամու արշավանքների և ավերածությունների մասին գրել են Ստեփանոս Սյունեցին, Ստեփանոս ֆախր–էլ Մսեհը, Ստեփանոս Օրբելյանը, Վարդան պատմիչը: Մեր օրերն են հասել վերջին Ստեփանոսի և Վարդանի գրքերը, որոնցից էլ քաղել եմ այս ավանդավեպի պատումները:

Անհրաժեշտաբար ուղղակիորեն մեջբերել եմ Ստեփանոս Օրբելյանի, ինչպես նաև պրոֆ. Գր. Գրիգորյանի որոշ բնորոշումներ ու նախադասություններ:

Բաղաբերդը պատկերել եմ գետի աջակողմ բարձունքին, շրջանցելով Ռաֆֆու տեղորոշումը գետի ձախ ափին:

Մտադրվել էի ավանդապատումը գրել Ղափանի խոսվածքով, սակայն հանդիպեցի անհաղթահարելի դժվարությունների: Նախընտրելով գրականը, այնուհանդերձ, չկարողացա խուսափել բարբառաբանությունից, որով, բնականաբար, կապանցի ընթերցողը շահում է:

Պատրաստվեցի 2001 թ. դեկտեմբեր – 2002 թ. հունվար ժամանակահատվածում, մեքենագրեցի հունվարի 26-27-ին, ավարտեցի ժամը 23-ին, Լեռնաձորի դպրոցի իմ ճգնարանում: Կամենայի, որ աշխատանքն ընթերցեին ինձ աշակերտածները, Կապանա իմ մտերիմները:

Բարի հիշեցեք անարժան և մեղուցյալ ուսուցիչ Ռոբերտ Գրիգորյանիս, որ նաև կոչվում եմ Էջանանցի:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»,
№ 30 (271),
15 ԴԵԿՏԵՄԲՐԻ 2012 Թ.

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՎԱՆԴԱՁՐՈՒՅՑՆԵՐ

Ասքապատում. արքան Հին Կապանի ավերակներում է

Քարեղեն սնդուկը, որի մեջ անմատչելի կերպով պահվում էր Բաղակի հռչակավոր քաղաքը, ներկայացնում է մի տխուր, քարեղեն դագաղ, որի մեջ վաղուց արդեն թաղված էր Սյունյաց աշխարհի մեռած մայրաքաղաքը...

Ռաֆֆի

Ավանդապատումները զուգահեռվում են մատենագրությանը: Պատմության հոլովույթում այդ ընթացքը երբեմնակի թուլացել է բնակչության տարհանում-վերաբնակեցումների հետեւանքով, եւ այս դիտարկումը, կարծես, հատկապես Սյունիքի թագավորության շրջանին (970-1170 թթ.) է վերաբերում:

Հին Կապան մայրաքաղաքի ավերակները հազիվ են նշմարվում, աղավաղվել են հայեցի տեղանունները, պատումների մեջ մեկի սխրանքը մեկ ուրիշին են վերագրում, խամրել է հնավայրերի տեղորոշման մտահոգությունը: Անգիտությամբ ակամա ավերում ենք, գայթակղվում ուրանաբեր «սատանայի եղունգ» փնտրելով, արտերկրից մեր հնամենի ոստանին աչք դնողներին իրենց տեղը չենք դնում՝ ինչպես հարկն է...

Ժողբանի (ֆոլկլոր) գիտակների շարքերն են նոսրանում: Տարեցները նժդեհյան ժամանակից անդին շրջանի համար սակավապետ եւ քչախոս են: Դեռ նախորդ դարավերջին կցկտուր պատմում էին մի քահանայի հաղորդածը՝ Դավիթ Բեկը եւ հետագայում Նժդեհը փնտրել են Հին Կապան քաղաքը, որ ամրանան այնտեղ, սակայն տեղորոշները գլուխ չեն հանել: Ի տրիտուր՝ Գարեգին Նժդեհն ապավինել է դիցական Խուստուփին. թերեւս, Սպարապետին հետաքրքրել է նաեւ լեռանվան ստուգաբանությունը, որը ցայժմ վերջնական պարզված չէ (այս մասին՝ առաջիկայում): Ողջի գետն ակոսում է հինավուրց Բաղք գավառը: Ողջանց

Ժայռապատկեր (Կապանի կիրճում), որ ավանդաբար վերագրվում է Սենեքերիմ արքային

անվամբ գյուղ է հիշված Աժդանական-Կապուտջուղի արեւելակողմ ստորոտում, 18-րդ դարում:

Արդ, պարզ է, որ գետանունը հետին շրջանի է: Ըստ պատմիչի՝ գավառի գետերից գլխավորն ավանդաբար կրել է գավառի անունը: Ըստ այդմ՝ վաղնջական ժամանակներում Ողջի գետը Բաղքի գետ կամ Բաղացջուր է կոչվել: Այս վերջինը, ի դեպ, պահպանվել է գետի աջակողմ վտակի վրա, որը, հոսելով Արջաձոր-Թունիս ձորաստանից, Ձագիկձոր գյուղում (իմա՝ Մուսալլամ) խառնվում է Ողջիին: Ռաֆֆին Ողջի գետը Հալիձորի գետ է անվանել, թեպետ նրա այցելության ժամանակ (1881թ.) գետը ներկայիս Կապանի տեղում գտնվող Հղորա գյուղի անվամբ նաեւ կոչվում էր Հղորա գետ, ըստ այլազգիների՝ Ուղուրչայ:

Ստ. Օրբելյանի ժամանակներում, բնականաբար, Բաղացջուրը վերակոչվել էր Կապանա գետ (տեղական խոսվածքում՝ Ղափանա: Հմմտ.՝ Ձորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, եւ այժմ կոչվում է Կապան: Օրբ., Գ): Նկատենք, որ Ձորքը հին Բաղքից է առանձնացել որպես առանձին գավառ:

Ողջի գետի աջակողմ լեռնապարը երկանուն է հիշված՝ Բաղաց եւ Արեւիքի կամ Մեղրու լեռնաշղթա, որի ամենաբարձր գագաթը Բաղացսարն է: Երկմտելու չէ, որ նախընտրելին Բաղաց լեռնաշղթա անվանումն է: Բաղացսարից հյուսիս-արեւմուտք «Մարդ ու կնիկ քար» հորջորջմամբ լեռնաբազուկն է, որի վրա պահպանվել են բերդաքաղաքի ավերակներ, ըստ իս՝ Բաղաբերդը: Տարածքը մոտ 3 հազար քառ.մ է, գտնվում է եռակողմ անդնդախոր ձորերի միջեւ, կառույցներում ունի ոչ ուղղանկյունաձեւ՝ քառակուսի աղյուսներ, ջրհոր, պահակատուն: Գետահովտից բերդ տանող կորսված ճանապարհը կռահելը դյուրին է, հատկապես՝ Գիրաթաղ գյուղից գետի աջակողմ բարձունքը դիտելիս:

Ընթերցողի պատկերացրած այս բնաձորում՝ գետի աջ ու ձախ բարձունքներում, ամենուրեք բերդավերակներ են, որոնք ժամանակին պատվարել են հին Կապանը: Կռահելու է, որ կապան (իմա՝ կիրճ ու լեռնանցք) համարվող տեղանքը Բերդարանքն է կամ Բերդամեջը, ինչպես կոչում են տարեց մարդիկ: Այն ձգվում է Դավիթբեկ ավանից (նաեւ՝ Անդոկավան) մինչեւ Ներքին Ջրախոր (Ջղախոռ)՝ «Քարավան» կոչվող հյուրատունը, որին ակներեւ երիզում է հին պարսպի մի հատվածը:

Գիրաթաղջրի գետաբերանի կամրջից դեպի Տանձուն լենջ ձգվող ճանապարհի աջ մասում հին Կապանի կարեւորագույն կառույցներից մեկն էր, որի պարսպափակ ավերակներն ու պաշտամունքային տունը հստակ նշմարվում են: Այս կառույցը սխալմամբ Բաղակուբար են կոչում: Խորհրդային ժամանակներում նախկին գետամերձ ճանապարհին անց են կացրել կառույցի դարավանդի միջով:

Այս վայրերը հիշարժան-պատմական են, որովհետեւ գտնվում են Բաղաբերդի ստորոտում: Ողջի գետի աջակողմ վտակը, որն ունի բնահարմար լողավազան, եւ որի վերնագավառում պահպանվել են սանդղաշար ճանապարհի ոլորանները, բնականաբար, Կապանա ձորն է: Այդ տեղանքում նշմարվում են արեւելակողմ ջրանցքի աղուրը, գետներես դամբարաններ, շինությունների ավերակներ: Ողջի գետի եւ Կապանա ձորի կցվանքատեղից հեռու չէ բարբառային հնչմամբ «Սուրուն կապ» լեռնանցքը, որտեղով անցնում էր մեր կարմիր նախնիների կառուցած Ղափան-Քաջարան ինքնատիպ ճանապարհը: Քանի որ այս վայրը նախադուռ էր Ձորք գավառի համար, ապա կռահելի է, որ կապի անունը Ձորքի կապ կամ Ձորոց կապ հնագույն անվան աղավաղված ձեւն է (կան եւ այլ ժող. մեկնություններ՝ Սորուն կապ-հոսող, գահավիժող իմաստով, Սյուրի կամ Սերունան տիկնոջ անվան կապ եւ այլն):

Կապան-կիրճի հարակից բարձունքում քանքարավոր արվեստագետը՝ բարեհիշատակ Մարատ Նուրիջանյանը, տեղադրել է բնության գաղտնիքների բանալին մարդկանց բերող արջի ձուլարձանը, որի ձախակողմում՝ գետի աջեզրին՝ ժայռի վրա, ծիրանի հագած այրի հարթաքանդակ կա՝ առլեցուն տիրականությամբ, վնասված (հետագայում) երկու ձեռքերն առաջ պարզած: Ըստ տեղական մի ավանդապատմաման՝ մոտ երկու մետրանոց այդ պատկերը Սյունիքի թագավորինն է: Հրաշքով պահպանված այդ պատմական հուշարձանն ուսումնասիրել է արվեստագետ-մանկավարժ Լեռնիկ Առաքելյանը, հարթաքանդակի եզրային տարածքում ի հայտ բերել Ավետարանի, աղավնու պատկերներ: Կարծիք է հայտնել, որ պարզված երկու ձեռքերի վրա միջնադարյան հեղինակը տեղադրել էր արքայական քարակերտ սուրը՝ պատյանով: Ըստ Առաքելյանի՝ հարթաքանդակը հարյուրամյակների հնություն ունի: Հարկավ, նման բարձրարժեք ստեղծագործությունը պատշաճում է թագավորական ժամանակներին, երբ կար պետական հովանավորություն:

Թերթենք Հայր Ստեփանոսի «Հիշատակաց մատյանը»: Պատմիչը ԾԹ գլխում նկարագրել է, թե ինչպես 1094թ. դավադրության զոհ դարձավ Սյունիքի թագավոր Սենեքերիմ Սեւադյանը. «Պարտավի, Առանի ու Գանձակի ամիրան բազմամարդ զորքերով ելավ-եկավ պատերազմելու Սենեքերիմի դեմ: Սենեքերիմն, այդ իմանալով, նահանգի ամբողջ բնակչությանն ամրացրեց անառիկ ամրոցներում: Եվ ապա անիծյալ ամիրան, գալով ու տեսնելով, որ անհնարին է մարդկանց ուժով հաղթահարելը, անեցի իշխան Գրիգորին, որն ինչ-որ պատճառով իր մոտ էր գտնվում, ուղարկեց Սենեքերիմ արքայի մոտ՝ ասելով. «Երդմամբ համոզիր նրան, որ գա ինձ մոտ, միմյանց հետ բարեկամանանք, եւ իրեն մեծամեծ պարգեւներով հետ կուղարկեմ, իսկ եթե չհամաձայնեցնես, այդ դեպքում գլուխդ կկտրեմ»: Ապա Գրիգորն ընթացավ այն չար ճանապարհով. մտնելով Սենեքերիմի մոտ՝ մեծամեծ երդումներով համաձայնեցրեց նրան՝ գալու ամիրայի մոտ: Եվ նրանք միասին եկան: Չարաթույն գազանը, Սենեքերիմին տեսնելով, իր պայմանը դրժեց, մռլտոցով հարձակվելով թագավորի վրա՝ սպանեց նրան, իսկ ինքն անցավ-գնաց իր աշխարհը»:

Սենեքերիմյան դարում մոլեգնում էր աղանդավորների թոնդրակյան շարժումը: Անհավատներն ավերում էին վանքեր ու եկեղեցիներ: Կապանատանը հայտնի էր աղանդասերների առաջնորդ Սմբատ Տինիքցին, ում զինավառ դուստր Սյունեն անգամ ընդդիմանում էր թագավորին: Սենեքերիմ արքան, սելջուկյան վտանգը մեղմելու համար, աղանդավորների դեմ խստագույն պատիժներ կիրառելու հավակնություն չուներ: Արտաքին թշնամուն դիմակայելու համար նա անգամ զինում էր աղանդավորներին: Արքան սուր էր նվիրել քաջակորով Սյունեին (այս դյուցազնուհու անվամբ է Աղջկաբերդը՝ Շհարջիկից վերեւ, որ այլազգիները կոչում էին Կզկալա):

Դարաշրջանի իրադարձությունները վիպել է Ս.Ումառյանը: Վիպական մի տեսարանում Կապանա տան 11-րդ դարի հերոսուհի Սյունեն հայտնվում է դդյակամերձ հրապարակի պարսպի վրա. «Ահա այն սուրը, որ պիտի կտրեր իմ գլուխը, հայոց բարի թագավորը նվիրեց ինձ...»:

Արքայի դեմ կազմակերպված դավադրությունը հին Կապանում էր, Բաղաբերդի պարիսպներից հեռու, եւ Սյունեն անհիրազեկ էր այդ ամենին: Ըստ վիպագրի՝ «Էմիր Փատլունը կատաղությունից աքլորի պես վիզը երկարեց, սուրը մերկացրած՝ բղավելով հարձակվեց Սենեքերիմ թագավորի վրա ու խոցեց նրա սիրտը»:

... Խորհենք այս ասքապատումի ելեւէջներով: Երախտապարտ ժամանակակիցները, թերեւս Սենեքերիմին հաջորդած որդու՝ Գրիգոր թագավորի կամեցողությամբ պատրաստեցին անդնդախոր ձորի գետեզրի ժայռապատկերը, որ ավանդաբար վերագրվում է Սենեքերիմ արքային, ով սուր էր դնում ժողովրդի ձեռքին՝ մեր հինավուրց տունը ներխուժած թշնամուն սաստելու համար:

Ինը դար շարունակ արքան ողջունում ու պատգամում է սերունդներին:

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»,
№ 12 (231), 30 ՀՈՒՆԻՍԻ 2011 Թ.

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՎԱՆԴԱՁՐՈՒՅՑՆԵՐ

Ողբ ի Ս. Կաթուղիկէն (հատված Ստեփանոս Օրբելյանի համանուն քնարական-էպիկական պոեմից)

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐՊԷԼԵԱՆԻ

ՈՂԲ

Ի Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷՆ

Բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով

Հրատարակեց

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

Սուգ տուին ճանապարհք
Սիոնի. Երեմիա, Ա. Դ.

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսիսի Վարդանեան.

1885

36

Ժ.Բ.

Իսկ ի զօրանալ Իսմայէլին
Սրոյ ձեռին հագարացոցին
Եղեալ երկփեղկ տունս Արամին
Զեռամբ Ցուսփալ անիծելոյն,
Ձեղքեալ յերկուս թագաւորին
Բագրատունեացն և Արծրունին,
Գագիկ որդին այն Դեբենկին
Կապեալ իւր թագ գէմ Սմբատին[20].
Որ և կորուստ եղև քնաւին
Հայոց ցեղիս բոլորովին։
Աթոռք բազումք անկանէին.
Տունք և ապարանք կործանէին.

37

Իշխանք անհետ կորնչէին.
Ազգօք իւրեանց ջնջեալ հեղձին.
Ազատարեարն ի բաց խլին.
Նման ծխոյ սպառէին.
Եկեղեցիք քանդեալ լինին.
Եւ յաւարի հարեալք գերին.
Գեղք և տանք աւերէին.
Քաղաքք և բերդք տապալին[21]։

Ժ.Գ.

Բայց միւս ևս այլ մէկ ջահ լուցին
Ի տան Բագրատայ Սիսականին
Սմբատ սեպուհ քաջազարմին.[22]
Ի Հայկազանցն այն առաջին
Աջով բազուկք Հայոց ազգին
Բարձր և հզօր անպարտելին
Թագաւորեալք թագ կապեցին
Ուժգին և խրոխտք ընդդէմ չարին։

38

Աւուրքք բազմօք ի յետ անցին[23]
Ընդ թագաւորս Բագրատունեացն.
Հարիւր և քսան ամք յաւելին
Վասն ամբաւթեան այնմ աշխարհին.
Որոց վերջին Անէքարիմ[24]
Նաև Գրիգոր որդի նորին։
Ապա և զայս ի բաց բարձին
Ի ժամանակս Եղակուզին
Ազգն անիծեալ և պարսկային,
Որք հրով գաշխարհս տոչորեցին
Ի վեց հարիւր մեր թուականին
Եւ տասնեւհինգ յաւելուածին[25]։

Ժ.Դ.

Ահա՛ սոքա այսպէս անցին.
Բնաւին ի բաց եղծեալ գնացին.
Որպէս զտաւերք այլ չերևին.
Նման երազոյ կարծեօք թուին։

Որպէս ծաղիկք ամարայնոյն
Արևակէզ թարշամեցին.
Որպէս սազարթք վարսեալ ծառին
Խորշակահար ցամաքեցին։
Որպէս զանտառ Լիբանանին
Զարդն և զոսան և զնոճառին
Տապարահատ կործանեցին
Սուրք[26] անխնայ Իսմայելին։
Արդ ոչ ևս է, ոչ երևին.
Անէացեալք նման նոսրին.
Միայն այրի գիս ասա թողին.
Որպէս զոչինչ ի բաց լքին։
Արդ մնացեալ յանվայր գաչաին
Զերդ զգազան անապատին[27]
Զաչուերս ածեմ կոգկոդագին,
Զայն արձակեմ ողորմագին։

ԹԱՎԱՄԱՄԱՅՈՒ՝ ՄԵԾ ՀՈՑԻ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍ ՀԱՅԿԱՆ ԳԱՎԱՌՆԵՐ

ԹԱՎԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵԾ ՀՈՑԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԲԵՐԴԵՐԻՑ ՄԻ ՔԱՆԻՍԸ

ՀԱԲԱՆԴԻ ԿԱՄ ՁԱԳԵՁՈՐԻ ԲԵՐԴ

ԲՂԵՆՈ ԲԵՐԴ

ԹԱՎԱՄԱՄԱՅՈՒ՝ ՄԵԾ ՀՈՑԻ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՈՒՆՔԻՑ ՄԻ ՔԱՆԻՍ

ՍՅՈՒՆՅԱՑ ԲԵՐԴԻ ԱՎԵՐԱԿՆԵՐ



ԿԱՊՈՒՆ. ԱՄԵՆՈՐԸՆ ԶՈՒ ՆՈՐԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՀԻՇԵՐԻ ՄԵՋ ԱՄԵՆԱՀԻՆԸ

Լուսանկարները՝ Նվեր Զեյայի

Լուսանկարները՝ Նվեր Զելյայի

ԿԱՊԱՆ. ԱՄԵՆԱՆՈՐԸ ԴՈՒ ՆՈՐԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՀՆԵՐԻ ՄԵՋ ԱՄԵՆԱՀԻՆԸ

Լուսանկարը՝ Նվեր Զեյայի



Լուսանկարները՝ Նվեր Զեյայի

ԿԱՊԱՆ. ԱՄԵՆԱՆՈՐԸ ԴՈՒ ՆՈՐԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՀՆԵՐԻ ՄԵՋ ԱՄԵՆԱՀԻՆԸ

Իմ Կապան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՍՔԸ՝ ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Սյունյաց սեզ լեռների գրկում
Չքնաղ Կապանն է վեր խոյանում՝
Ժայռերը անտառներ հագած,
Հսկա Խուստուփ սարին թիկնած,
Ծաղիկների փայլից շիկնած:
Ուր էլ գնամ միշտ հետ կգամ
Իմ մանկության դու՛ օթևան,
Երջանկության իմ կյանքն ես դու:

Ի՛մ Կապան, դու Սյունիքի պարծանք ու սուրբ մատյան,
Իմ Կապան, քաղաք իմ հերոսության, փառքի աղբյուր անսպառ:
Միշտ հիշենք Դավիթ-Բեկին, որ կյանքն իր զոհեց հանուն ազգի
Եվ լինենք պատրաստ մի նոր սխրանքի, Կապա՛ն, քո դրոշի առաջ:

Չքնաղ Կապան դու միշտ կապրես
Երջանկության ու բերկրանքի մեջ,
Քանզի գործերն են քո բարի,
Նվաճումներդ՝ պանծալի:
Ձավակներդ՝ կամքով արի,
Մի անաղարտ երգ են սիրո,
Երգ՝ շինարար ու բերկրալի,
Կապան քաղա՛ք, Կապան քաղա՛ք:

Մասիսի ու Սյունիքի պարծանք ու սուրբ մատյան,
Ի՛մ Կապան, քաղաք իմ հերոսության, փառքի աղբյուր անսպառ,
Միշտ հիշենք Դավիթ-Բեկին, որ կյանքն իր զոհեց հանուն ազգի
Եվ լինենք պատրաստ մի նոր սխրանքի, Կապա՛ն, քո դրոշի առաջ:

Լուսանկարը՝ Նվեր Զեյայի

Լոռու մարզ, Ստեփանավան

Կապուտջուղ. լեռան գագաթը երկնագնա սլացքով հսկում է ողջ Սյունյաց աշխարհը: Այնտեղից երևացող բոլոր հողերը մերն են, թեպետ արևմտակողմում ու հեռավոր արևելակողմում դա չիմանալու են տալիս: Ասենք՝ պատմական ժամանակը... Մեր սուրը շողացել է Կովսականն ու Քաշունիքը երիզող Արաքսի ափին: Եվ կարծես ժամանակավրեպ չէ, որ Նախիջևանի դաշտավայրում՝ Արաքսի ափին, պար բռնենք ազգովի...

Ռոբերտ Էջանանցի (Գրիգորյան)